

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2012 թվականի  
սեպտեմբերի 6-ի N 1139 - Ն որոշման

Տրանսպորտի և կապի  
նախարարություն ՀՀՃՄՆԾ  
ՊՈԱԿ



**Հայաստանի Հանրապետություն**

Ասիական զարգացման բանկ  
Վարկ N 2561-ARM  
“Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք” ներդրումային ծրագիր  
Տրանշ 2 (Աշտարակ- Թալին)

Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր ՀՕՏՕ

07 Սեպտեմբերի 2012

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ.....	9
Ա. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	16
I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	16
II. ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՊԱՏՍՈՒԹՅՈՒՆԸ.....	16
III. ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ 18	
IV. ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	
V. ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....	19
VI. ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ.....	19
VII. ՄԱՐԴԱՀԱՍՄԱՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՍԵՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ.....	19
Բ. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴԱՀԱՍՄԱՐ 20	
I. ԸՆԴՀԱՆՈՒՐ.....	20
II. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	20
III. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	21
1. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԻ ՎՐԱ.....	21
2. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ.....	24
3. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿԱԲՈՒՑՄԵՐԻ ԵՎ ԾԱՌԵՐԻ ՎՐԱ.....	25
4. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԻԶՆԵՍԻ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ.....	27
5. ԱԵՏՏ ՄԱՐԴԱՀԱՍՄԱՐ.....	28
Գ. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ- ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	33
I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	33
II. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱԵՏՏ) ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	33
Դ. ՕՐԵՆՄԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	42
I. ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԸ 42	
II. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՐԿԱԴԻՐ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԱԶԲ ԴՐՈՒՑԹՆԵՐԸ.....	43
III. ՀՕՏ ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՈՒ ԱԶԲ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՍԱՏՈՒԹՅՈՒՆ.....	43
IV. ԲՏԳ-ի ՀԱՍՄԱՐ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀՕՏԸ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	44
Ե. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ 46	
I. ԸՆԴՀԱՆՈՒՐ.....	46
II. ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ.....	50
III. ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ.....	51
IV. ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻԱՎՈՐԻ ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	53
V. ՀԱՐԿԱԴԻՐ ՕՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ.....	54
Զ. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԸ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ	
57	

I. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ .....	57
II. ՀՕՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ .....	60
Է. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ .....	61
Ը. ԲՈՂՈՔՆԵՐ ԵՎ ԴԺԳՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	65
Թ. ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԸ .....	68
I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	68
II. ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼ .....	68
III. ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼԸ .....	68
IV. ԳՆԱՀԱՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ .....	70
V. ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑԸ .....	70
Ժ. ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԲՅՈՒՋԵՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ .....	72
I. ԸՆԴՀԱՆՈՒՐ .....	72
II. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ .....	72
III. ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ .....	81
IV. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՂԻՆԵՐ .....	83
V. ԾԱԽՍԵՐԻ ԱՍՓՈՓԱԳԻՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ .....	83
Ի. ՍՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ .....	85
I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	85
II. ՆԵՐՔԻՆ ՍՈՆԻՏՈՐԻՆԳ .....	85
III. ԱՐՏԱՔԻՆ ՍՈՆԻՏՈՐԻՆԳ .....	86

Հավելված Ա1. Շինության, բիզնեսի և հողի նկարագրության արձանագրություններ  
88

Հավելված Բ1. ԱԵԱ-ների մանրամասն կորուստները .....	105
Հավելված Գ1. Սոցիալ-տնտեսական հետազոտության մեթոդաբանություն .....	110
Հավելված Գ2. Սոցիալ-տնտեսական հետազոտության հարցաշարը .....	112
Հավելված Ե1. Գնահատման մեթոդաբանություն .....	122
Հավելված Ձ1. Հանրային լսումների արձանագրություններ .....	144
Հավելված Ձ2. Ծրագրի տեղեկատվական բրոշյուր .....	172
Հավելված Է1. Իրականացնող թիմի պարտականությունների շրջանակը .....	193
Հավելված Թ1. ԱԵԱ-ի հետ պայմանագրի և համաձայնագրի օրինակ .....	198

Հավելված Ժ1. Բողոքների առարկա դարձած հողակտորների և գույքի գնահատման ուսումնասիրության ստուգման հաշվետվություն .....

Հավելված Ժ2. ԾԻԿ-ի փորձագետի եզրակացությունը .....

Հավելված Ի 1. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրան2-2 (Աշտարակ-Թալին) ճանապարհահատվածի համար հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի լրացում՝ Աշտարակ-Թալին ճանապարհահատվածի կմ 40+000-կմ 47+400 հատվածում (Կոշ, Շամիրամ համայնքներ) առկա հաղորդակցուղիների տեղափոխման արդյունքում ազդակիր հողերի համար .....	243
---	-----

(բովանդակությունը լրաց. 05.11.20 N 1779-Ն )

## ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. Ազդեցությունների և ԱԵՏՏ-ների/ԱԵԱ-ների մարդահամարի ամփոփագիր

Աղյուսակ 2. Իրավունքների մատրիցան

Աղյուսակ Ա1. Ծրագրային տարածքում ազդեցության ենթակա հողակտորները

Աղյուսակ Բ1. Հողի կրած ազդեցությունն ըստ հողի տեսակի և հողի զբաղեցման կարգավիճակի

Աղյուսակ Բ2. Օտարման ենթակա շենքեր և շինություններ

Աղյուսակ Բ3. Վերաբնակեցվող ԱԵՏՏ-ների մանրամասները

Աղյուսակ Բ4. Հիմնական մշակաբույսերի կորուստը

Աղյուսակ Բ5. Մրգատու ծառերի և նորատունկերի կորուստը

Աղյուսակ Բ6. Ազդեցության ենթակա փայտանյութ ծառեր

Աղյուսակ Բ7. Ազդեցության ենթակա խաղողի այգիներ՝ ըստ գծամետրի և օտարվող տարածքի

Աղյուսակ Բ8. Բիզնեսի կորուստներ, չափը և հարկային կարգավիճակը

Աղյուսակ Բ9. Զբաղվածության կորուստ

Աղյուսակ Բ10. ԱԵՏՏ և ԱԵԱ վերաբերյալ մանրամասներն ըստ կատեգորիայի

Աղյուսակ Բ11. ԱԵՏՏ-ների քանակն ըստ ազդեցության աստիճանի

Աղյուսակ Բ12. Խոցելի ԱԵՏՏ-ներ

Աղյուսակ Բ13. ԱԵՏՏ-ների էթնիկ ծագումը

Աղյուսակ Բ14. ԱԵՏՏ-ներն ու ԱԵԱ-ներն ըստ սեռի

Աղյուսակ Բ15. Ազդեցությունների և ԱԵՏՏ/ԱԵԱ-ների մարդահամարի ամփոփում

Աղյուսակ Գ1. ԱԵՏՏ գլխավորի տարիքն ըստ սեռի

Աղյուսակ Գ2. ԱԵԱ-ների տարիքային դասակարգումը

Աղյուսակ Գ3. ԱԵՏՏ-ների գլխավորների կրթությունն ըստ սեռի

Աղյուսակ Գ4. ԱԵՏՏ անդամների կրթությունն ըստ սեռի

Աղյուսակ Գ5. ԱԵՏՏ գլխավորների զբաղվածության կարգավիճակն ըստ սեռի

Աղյուսակ Գ6. ԱԵՏՏ անդամների զբաղվածության կարգավիճակը՝ ըստ սեռի և տոկոսի

Աղյուսակ Գ7. Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական գործունեությունից ստացվող մշին եկամուտը

Աղյուսակ Գ8. Հողագործական և անասնապահական գործունեությունից ստացված միջին եկամուտը

Աղյուսակ Գ9. ԱԵՏՏ տեսակն ըստ աղքատության մակարդակի

Աղյուսակ Գ10. Պարտք ունեցող ԱԵՏՏ-ները՝ ըստ պարտքի աղբյուրի (տեսակի) և գումարի չափի

Աղյուսակ Դ1. Տարաբնակեցման օրենքների և կանոնակարգերի համեմատություն

Աղյուսակ Ե1. Իրավունքների մատրիցան

Աղյուսակ Ե2. Առգրավման գործերի ներկա կարգավիճակը

Աղյուսակ Զ1. Հանդիպումների մասնակիցները

Աղյուսակ Զ2. ՀԼ-ների ընթացքում քննարկված խնդիրները

Աղյուսակ Զ3. Բարձրացված և քննարկված մտահոգությունները

Աղյուսակ Թ1. ՀՕՏԾ-ի իրականացման ժամանակացույց

Աղյուսակ Ժ1. Փոխհատուցում մասնավոր, համայնքային և պետական հողերի համար ըստ տեսակի

Աղյուսակ Ժ2. Վարձակալությունների փոխհատուցումը

Աղյուսակ Ժ3. Շենքերի/ Շինությունների փոխհատուցումը

Աղյուսակ Ժ4. Մշակաբույսերի փոխհատուցումը

Աղյուսակ Ժ5. Մրգատու ծառերի փոխհատուցում, նորատունկեր և դեռ ոչ բերքատու ծառեր

Աղյուսակ Ժ6. Մրգատու ծառերի փոխհատուցումը

Աղյուսակ Ժ7. Մրգատու ծառերի ընդհանուր փոխհատուցում

Աղյուսակ Ժ8. ԱԵԱ-ներ կարգավիճակին համապատասխան մեկ տարվա բերքի փոխհատուցում

Աղյուսակ Ժ9. Ազդեցության ենթակա նորատունկ, միջին տարիքի և հասունացած փայտանյութ ծառերը

Աղյուսակ Ժ10. Խաղողի այգիների փոխհատուցումն ըստ բերքատվության և օժանդակ կառույցի արժեքի

Աղյուսակ Ժ11. ԱԵԱ-ներ կարգավիճակին համապատասխան մեկ տարվա բերքի փոխհատուցում

Աղյուսակ Ժ12. Բիզնեսների կորուստների փոխհատուցումը

Աղյուսակ Ժ13. Աշխատատեղի կորստի փոխհատուցում

Աղյուսակ Ժ14. Խիստ ազդեցության ենթակա ԱԵՏՏ-ներ

Աղյուսակ Ժ15. Փոխհատուցումը սոցիալապես խոցելի անձանց համար

Աղյուսակ Ժ16. Տրանսպորտային ծախսերը և կենսապահովման նպաստ

Աղյուսակ Ժ17. Ամփոփ բյուջեի ծախսերը

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԱԵՏՏ	Ազդեցության ենթակա տնային տնտեսություն
ԱԵՏՏՂ	Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների ղեկավարներ
ՀՀ դրամ	Հայաստանի Հանրապետության դրամ
ԱԵԱ	Ազդեցության ենթակա անձ
ԱՄ	Ազդեցության միջանցք
ՄՉՀ	Մանրամասն չափագրման հետազոտություն
ՄՆ	Մանրամասն նախագիծ
ԻԳ	Իրականացնող գործակալություն
ԻՍ	Իրավունքների մատրիցան
ՖԽՔ	Ֆոկլուս խմբային քննարկում
ՀՀԿ	Հայաստանի Հանրապետության կառավարություն
ԲԼԽ	Բողոքների լուծման խումբ
ՏՏՂ	Տնային տնտեսության ղեկավար
ԿԻՀ	Կենսապայմանների ինտեգրված հետազոտություն
ԱՄԳ	Անկախ մոնիտորինգի գործակալություն
ՏԲ	Տեղաբնիկներ
ԻԹ	Իրականացնող թիմ
ՀՕՏ	Հողի օտարում և տարաբնակեցում
ՀՕՏԾ	Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակ
ՀՕՏԾ	Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՄնԳ	Մոնիտորինգ և գնահատում
ԲՖԳ	Բազմափուլային ֆինանսավորման գործիք
ՏԿՆ	Տրանսպորտի և կապի նախարարություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀՃՄՆԾ	“Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք” ներդրումային ծրագիր
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ՀԼ	Հանրային լսումներ
ԾԿԽ	Ծրագրի կառավարման խորհուրդ
ԾԻԿ	Ծրագրի իրականացման կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՏԾ	Տարաբնակեցման ծրագիր
ԱԳԿՊՏ	Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե
ՍՏՀ	Սոցիալ-տնտեսական հետազոտություն
ՍՊՎԲԲ	Սոցիալական պաշտպանության, վերաբնակեցման և բնապահպանական բաժին
ԱՔՀ	Անվտանգության քաղաքականության հայտարարագիր
ՍԳՎՊ-16	Սոցիալական գիտությունների վիճակագրական փաթեթ 16
Տ2	ՀՀՃՄՆԾ-ի Տրանշ 2-ը

**ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ**

<b>Ազդեցության ենթակա տնային տնտեսություն (ԱԵՏՏ)</b>	Ազդեցության ենթակա տնային տնտեսությունը որպես ամբողջական մաս: ԱԵՏՏ-ն գործում է որպես մեկ տնտեսական և ընտանեկան միավոր և կարող է բաղկացած լինել մեկ անձից, նույնիսկ ընտանիքից կամ ընդլայնված ընտանիքից: Դա փոխհատուցում ստացող/վերականգնման ենթակա կարևորագույն միավոր է:
<b>Ազդեցության ենթակա անձ /մարդիկ (ԱԵԱ)</b>	Ցանկացած անձ (անհատ) որը Ծրագրի իրականացման հետ կապված փոփոխությունների պատճառով ազդեցության է ենթարկվում հողի, ջրի, բնական պաշարների օգտագործման առումով, կամ եկամտի կորստի առումով:
<b>Փոխհատուցում</b>	Կանխիկով, կամ այլ կերպ կատարվող վճարում՝ օտարվող ակտիվների արժեքի դիմաց:
<b>Գերակա հանրային շահ</b>	Կառավարության կողմից իրականացվող կարգավորող միջոցառում հողը պետական սեփականություն դարձնելու համար:
<b>Իրավասություն</b>	Ազդեցության ենթակա անձանց կրած կորուստների բնույթով պայմանավորված միջոցառումների շրջանակ՝ ներառյալ փոխհատուցումը, եկամտի վերականգնումը, օժանդակությունը վերաբնակեցմանը, եկամտի փոխհատուցմանը և տեղափոխմանը, որն ապահովում է վերջիններիս տրամադրումը ԱԵԱ-ներին իրենց տնտեսական և սոցիալական բազան վերականգնելու համար:
<b>Օտարում</b>	Սեփականության իրավունքները վերցնելու կամ դրանք փոխելու կառավարության գործողությունը՝ Գերակա հանրային շահ ճանաչելու մասին օրենքի համաձայն:
<b>Հյուրընկալող բնակչություն</b>	Համայնք, որը տեղակայված է այն տարածքի հարևանությամբ, որտեղ Ծրագրի շահառուները կամավոր կտարաբնակեցվեն Ծրագրի շրջանակներում:
<b>Տեղաբնիկներ (S)</b>	ԱԶԲ-ի Տեղաբնիկների վերաբերյալ քաղաքականության շրջանակներում կիրառվող «Տեղաբնիկ մարդիկ» տերմինը ենթադրում է ընդհանրական մի հասկացություն, որը դյուրին չէ մեկ բառով նկարագրելը: Ազգային/էթնիկ փոքրամասնություն տերմինը մեկն է այն տերմիններից, որը վերաբերվում է ԱԶԲ քաղաքականության շրջանակներում ներկայացվող «տեղաբնիկ մարդիկ» հասկացությանը: Մյուս նմանօրինակ տերմիններն են՝ «մշակութային փոքրամասնություններ», «տեղաբնիկ մշակութային համայնքներ», «ցեղեր» «սոցիալապես խոցելի ցեղեր», «բնիկներ» և «աբորիգեններ»: Ընդունված կամ նախընտրելի տերմինները կամ սահմանումները տարբեր երկրներում տարբեր են: «Տեղաբնիկներ» տերմինը օգտագործվում է ՄԱԿ-ի փաստաթղթերում և ԱԶԲ-ի կողմից կիրառվում է միայն հարմարության տեսանկյունից: Հայաստանում ավելի կիրառելի է «ազգային փոքրամասնություն» տերմինը: Այդ իմաստով ԱԶԲ քաղաքականության շրջանակներում «տեղաբնիկներ» հասկացության համապատասխանության համար «ազգային փոքրամասնությունը»-ը պետք է համարվի « <i>ազգաբնակչության այն մասը, որն իր սոցիալական և մշակութային ինքնությամբ տարբերվում է գերակայող, հիմնական հասարակությունից, ինչի պատճառով զարգացման ընթացքում նրանք հավակնում են լինել խոցելի</i> »:
<b>Չձևակերպված օգտագործող</b>	ԱԵԱ-ն, որն օգտագործում է ազդեցության ենթակա հողակտորը կամ ակտիվը սեփականատիրոջ բացակայության դեպքում կամ համայնքի հետ չձևակերպված/բանավոր համաձայնության հիման վրա, ինչը գրավոր հաստատված է համայնքի ղեկավարի կողմից:

<b>Հողի օտարում</b>	Գործընթաց է, որի միջոցով պետական գործակալությունը փոխհատուցման դիմաց հարկադրում է անձին օտարել պետությանը սեփականության իրավունքով հանրային կարիքների համար իրեն պատկանող ամբողջ հողը կամ դրա մի մասը:
<b>Մարզ-Համայնք</b>	Հայաստանը բաժանված է 10 մարզի: Մարզի գործադիր կառավարման ղեկավարը մարզպետն է, որը նշանակվում է կառավարության կողմից: Մարզերից յուրաքանչյուրը բաժանված է համայնքների, որոնք կառավարվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից և կարող են բաղկացած լինել մեկ կամ մի քանի բնակավայրերից: Բնակավայրերը դասակարգվում են քաղաքների և գյուղերի: 2007թ. դրությամբ ՀՀ-ն ունի 915 համայնք (որից 49-ը՝ քաղաքային և 866-ը՝ գյուղական): Երևանը նախկին մարզային կարգավիճակի փոխարեն, այժմ ունի համայնքի կարգավիճակ և ընտրված քաղաքապետ:
<b>Վերականգնում</b>	Ոչ կամավոր տարաբնակեցման քաղաքականության շրջանակներում նախաձեռնվող փոխհատուցման միջոցառումներ, որոնք այլ են, քան օտարված ակտիվների փոխարինման արժեքի վճարումը:
<b>Վերաբնակեցում</b>	ԱԵԱ-ների կամ ԱԵՏՏ-ների ֆիզիկական տեղափոխում իրենց մինչ Ծրագիրն իրականացնելը բնակավայրից, որը պահանջում է կացության կամ ակտիվների վերակառուցումը այլ վայրում:
<b>Վերաբնակեցման արժեք</b>	Արժեք, որը պարտադիր պետք է փոխարինի ազդեցությանը ենթակա ակտիվը/առարկան նույն արժեքը և որակը ունեցող համարժեք ակտիվով առանց գործարքային և այլ ծախսերի: Վերաբնակեցման արժեքը կարող է որոշվել տարբեր եղանակներով ելնելով ազդեցությանը ենթակա առարկայի տեսակից և ծրագրում գործող պայմաններից հետևյալ կերպ. ա) հող՝ գործող շուկայական գինը, որը որոշվել է հողի հետ կապված գործարքների հետազոտության հիման վրա, կամ, եթե հողի շուկան բացակայում է, ազդեցությանը ենթակա հողակտորի մթերատու արժեքը/վերականգնման գինը; բ) շենքեր՝ ազդեցությանը ենթակա շենքի ամբողջական վերականգնման գինը, ներառյալ շինարարական նյութերը, բանվորական ուժը և տրանսպորտային ծախսերը առանց ամորտիզացիոն/փրկված նյութերի; գ) մշակաբույսեր՝ գործող շուկայական գինը և դ) ծառեր՝ շուկայական գործակցով եկամտի կորուստներ (բերքատու/փայտանյութ հանդիսացող ծառեր) և վերականգնման գինը (ոչ բերքատու ծառեր/նորատունկեր):
<b>Տարաբնակեցում</b>	Ծրագրի իրականացման արդյունքում ԱԵԱ-ների սեփականության և/կամ կենսամակարդակի վրա բացասական ազդեցությունը մեղմացնելու համար նախատեսված բոլոր միջոցառումները, ներառյալ՝ փոխհատուցում, վերաբնակեցում (անհրաժեշտության դեպքում) և վնասված/քանդված ենթակառուցվածքների և սարքավորումների վերականգնում:
<b>Տարաբնակեցման պլան/ծրագիր</b>	Գործողությունների ժամանակացույց՝ տարաբնակեցման ռազմավարությունը, նպատակները, իրավունքները, գործողությունները, պարտավորությունները, մոնիտորինգը և գնահատումը հասակեցնող բյուջեի բաշխմամբ:
<b>Խոցելի ԱԵՏՏ-ներ</b>	Խոցելի են համարվում հետևյալ ԱԵՏՏ-ները. ա) աղքատ ԱԵՏՏ-ներ, որոնք գրանցված են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ընտանեկան նպաստի համակարգում; բ) ԱԵՏՏ, որը ղեկավարվում է կնոջ կողմից առանց եկումուտ ունեցող ԱԵՏՏ այլ անդամի, կամ գ) ԱԵՏՏ, որը ղեկավարվում է տարեց թոշակառուի կողմից առանց եկումուտ ունեցող ԱԵՏՏ այլ անդամի:



## ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

### Ծրագրի պատմությունը

1. Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) տրամադրեց Հայաստանի Հանրապետության կառավարությանը (ՀՀ կառավարություն) Բազմափուլային ֆինանսավորման գործիք (ԲՖԳ) “Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք” ներդրումային ծրագիրը (ՀՀՃՄՆԾ) ֆինանսավորելու համար: Սկզբնական փուլը, որը ներառում է Արարատից դեպի Երևան, Աշտարակ, Թալին և Գյումրի մայրուղին, բաժանվել է երկու Ծրագրերի: Տվյալ Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏՕ) առարկան 42 կմ երկարությամբ Աշտարակից դեպի Թալին ճանապարհն է (կմ 29+600 - 71+500)՝ Մ1 միջպետական մայրուղու հատվածը, որն անվանվել է որպես Տրանշ 2 (Տ2) այսուհետ՝ Ծրագիր:

2. Սույն ՀՕՏՕ-ն պատրաստվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (ՏԿՆ) ՀՀՃՄՆԾ-ի Իրականացնող գործակալության (ԻԳ) կողմից: Տ2 Ծրագրի շրջանակներում իրականացվելու է գոյություն ունեցող 2 երթուղիների գոտիով Մ1 մայրուղու բարելավումը՝ դարձնելով այն միջազգային չափանիշներին համապատասխան 4 երթուղիների գոտիով 1-ին կարգի ճանապարհ: Հիմնականում նոր ծրագրի ճանապարհն անցնում է գոյություն ունեցող ճանապարհով ընդհանուր բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով, սակայն ներառում է նաև համայնքները շրջանցող նոր ճանապարհներ շինարարության համար մինչ օրս երբեք չօգտագործված տարածքներով: Այդ գործողությունը պահանջում է համաձայն ԱԶԲ-ի ուղեցույցի<sup>1</sup> որպես “կարգ Ա” դասակարգված 200-ից ավել խիստ ազդեցության ենթարկված ԱԵԱ-ների հողի օտարում և տարաբնակեցում (ՀՕՏ):

### ՀՕՏՕ-ի պատրաստում

3. ՀՕՏՕ-ն գնահատում է Տ2 Ծրագրի ազդեցությունը և մանրամասնում է իրականացման պլանը անհրաժեշտ փոխհատուցման/վերականգնման միջոցառումների համար: ՀՕՏՕ-ի պատրաստումը հիմնված է Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքների/կանոնակարգերի, 2009թ. ԱԶԲ-ի Անվտանգության քաղաքականության հայտարարագրի (ԱՔՀ) և Ծրագրի Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակի (ՀՕՏԾ) վրա: Այն ներառել է՝ 1) Մանրամասն չափագրման հետազոտություն (ՄՉՀ), որը ներառում էր ազդեցությանը ենթակա հողակտորների/շենքերի/շինությունների և այլ գույքի ճշգրիտ նկարագրությունը/չափագրումը; 2) Ազդեցությանը ենթակա բոլոր անձանց (ԱԵԱ-ների) և տնային տնտեսությունների մարդահամարը; 3) ԱԵՏՏ-ների սցիալ-տնտեսական հետազոտությունը (ՄՏՀ); 4) ազդեցությանը ենթակա գույքի մանրամասն գնահատման հետազոտությունը և 5) ԱԵԱ-ների և համայնքների ղեկավարների հետ խորհրդատվություններ:

### Ծրագրի իրականացման փուլում ՀՕՏ-ին վերաբերվող պայմանները

4. ԱՔՀ-ի պահանջների և գործողությունների սահմանված կարգի համաձայն՝ ԲՖԳ-ի և յուրաքանչյուր տրանշի հաստատումը/իրականացումը հիմնված կլինի հետևյալ պայմանների վրա.

- **ԲՖԳ/Առաջին տրանշի գնահատում.** Գնահատումը պայմանավորված է հետևյալով ա) ԱԶԲ-ի և կառավարության համար ընդունելի ձևաչափով և բովանդակությամբ ամբողջ ԲՖԳ-ի համար ՀՕՏԾ-ի պատրաստում/ներկայացում; բ) Աղքատության և սցիալական

---

<sup>1</sup> Համաձայն ԱԶԲ Գործառնական ձեռնարկի՝ Ջ1/Գ2 (2009թ.) Ծրագիրը դասակարգվում է որպես Ա կարգի ծրագիր, եթե զգալի ազդեցություններից տուժում է ավելի քան 200 մարդ (վերաբնակեցման կամ արդյունավետ ակտիվների 10%-ից ավելի կորուստ): Ծրագիրը կդասակարգվի որպես Բ կարգի ծրագիր, եթե զգալի ազդեցություններ է կրում 200-ից քիչ մարդ: Գ կարգի ծրագրերի դեպքում ՀՕՏ ազդեցություններ չեն առաջանում:

նախնական գնահատում (ԱՄՆԳ) և գ) ԱԶԲ-ի և կառավարության համար ընդունելի ՀՕՏՕ-ների պատրաստում/ներկայացում ՀՀՃՄՆԾ-ի յուրաքանչյուր տրանշի համար, որը պահանջում է ՀՕՏ;

- **Պարբերական ֆինանսավորման հայտի հաստատում հետագա տրանշների համար.** պայմանավորված է հետևյալով՝ ա) ՀՕՏ-ի վերանայում/փոփոխում/ներկայացում, և բ) ՀՀՃՄՆԾ-ի այն յուրաքանչյուր տրանշի համար, որն ունի ՀՕՏ, պատրաստել/ներկայացնել ՀՕՏՕ-ներ ԱԶԲ-ի և կառավարության համար ընդունելի ձևաչափով և բովանդակությամբ, ինչպես նաև փոփոխված ՀՕՏ-ին համահունչ;
- **Տրանշ 2 պայմանագրի իրականացման ձևաչափը.** պայմանավորված է հետևյալով՝ ա) ՀՕՏՕ-ի վերջնականացում որպես իրականացմանը պատրաստ փաստաթղթի և դրա ներկայացումը; և բ) մոբիլիզացմանը պատրաստ Անկախ մոնիտորինգի գործակալության (ԱՄԳ) վարձում:
- **Բուն շինարարական աշխատանքների մեկնարկը.** պայմանավորված է համապատասխան ՀՕՏՕ-ի ամբողջական իրականացմամբ (փոխհատուցման/վերականգնման ամբողջական տրամադրում), ինչը արձանագրված կլինի ԱԶԲի համար ընդունելի ԱՄԳ-ի կողմից պատրաստված Համապատասխանության հաշվետվությունում:

### **Ծրագրի ազդեցությունների ամփոփագիրը**

5. Ծրագրի շրջանակներում ազդեցությանը ենթարկվում են 838 հողակտորներ որոնցից.

- 477 ազդեցության ենթակա տնային տնտեսություններ սեփականություն հանդիսացող 484 մասնավոր հողակտոր,
- 16 համայնքների սեփականություն հանդիսացող 352 համայնքային հողակտորներ,
- 2 հողակտորներ, որոնք հանդիսանում են ՀՀ սեփականություն:

6. Որոշ մասնավոր և համայնքային հողակտորները տրված են վարձակալության կամ եկամուտ ստանալու իրավունքով ազատ օգտագործման (ուզուֆրուկտ) երրորդ կողմի օգտագործողների համար: Երրորդ կողմի օգտագործողները հետևյալն են.

- Համայնքային հողակտորների 14 ձևակերպված վարձակալներ,
- Մասնավոր հողակտորների 23 չձևակերպված վարձակալներ և
- Համայնքային հողակտորների 4 չձևակերպված վարձակալներ:

7. Ծրագրի շրջանակներում պահանջվում է 1,734,144 մ<sup>2</sup> հողի օտարում: Դրանցից 746 հողակտոր (1,643,777 մ<sup>2</sup>) օգտագործվում են գյուղատնտեսական նպատակներով, իսկ 92 (90,547մ<sup>2</sup>)՝ ոչ գյուղատնտեսական (83 բնակելի և 9 արտադրական նշանակության հողակտոր): Գյուղատնտեսական նշանակության հողերը ներառում են. 297 ռոռզվող վարելահող (432,183 մ<sup>2</sup>); 34 չռոռզվող վարելահող (83,393 մ<sup>2</sup>); 2 խոտհարք (560 մ<sup>2</sup>); 98 պտղատու այգիներ (101,464 մ<sup>2</sup>); 10 խաղողի այգիներ (19,446 մ<sup>2</sup>); 108 արոտավայրեր (718, 071 մ<sup>2</sup>) և 197 այլ գյուղատնտեսական նշանակության հողակտորներ (գյուղական ճանապարհներ, գետի հուններ, այն հողակտորները, որոնք կարող են օգտագործվել, բայց չեն օգտագործվում) (288,480 մ<sup>2</sup>).

8. Ազդեցությանը կենթարկվեն ընդհանուր առմամբ 28 շենքեր, որոնց մակերեսը կազմում է 2,699 մ<sup>2</sup> (2 բնակելի և 26 ոչ բնակելի շենքեր): 2 բնակելի շենքերի սեփականատերերը պետք է վերաբնակեցվեն:

9. Ծրագրային տարածքի հիմնական մշակաբույսերը հացահատիկայիններն են, հիմնականում ցորենը և գարին; ազդեցության ենթակա ընդհանուր տարածքը կազմում է 219,566 մ<sup>2</sup>: Դրանցից ազդեցությանը կենթարկվեն 4,378 մրգատու և 1,555 փայտանյութ տվող ծառեր: Ազդեցությանը ենթարկվող խաղողի այգիների մակերեսը կազմում է 6,485 գծամետր:

10. Ազդեցությանը ենթարկվում են 7 բիզնեսներ (6-ը՝ մշտապես): Ազդեցությանը ենթարկվող աշխատողները 19-ն են:

11. Ընդամենը ազդեցությանը ենթարկվում են 536 ԱԵՏՏ-ներ (առանց կրկնահաշվարկի) և 2,263

ԱԵԱ-ներ, ներառյալ՝ հողի/շենքերի սեփականատերերը, վարձակալները, ինչպես նաև մասնավոր և համայնքային հողակտորների չձևակերպված օգտագործողները: Ծրագրի իրականացման ընթացքում ազդեցությանը կենթարկվեն 94 խոցելի ԱԵՏՏ-ներ, ներառյալ կին և/կամ տարեց ՏՏ ղեկավարներ և աղքատ ԱԵՏՏ-ներ: Ծրագիրը խիստ ազդեցություն կունենա 326 ԱԵՏՏ-ների վրա, ներառյալ վերաբնակեցման ենթակա 2 ԱԵԱ-ներ:

12. Ծրագրի իրականացման արդյունքում չեն ակնկալվում ազդեցություններ տեղաբնիկ (ՏԲ) ժողովրդի վրա: Տեղաբնիկ ժողովրդի վրա ազդեցությունների գնահատումը իրականացվել է համաձայն Տեղաբնիկ ժողովրդի վերաբերյալ ԱԶԲ քաղաքականության (1998): Ծրագիրը հիմնականում կազդի էթնիկ հայ ազգաբնակչության վրա: Տրանշ 2 Ծրագրի շրջանակներում ԱԵՏՏ-ների միայն 5 տոկոս են կազմում էթնիկ փոքրամասնությունները (եզդիներ), որոնք լավ ինտեգրված են հայ հասարակության մեջ:

**Աղյուսակ 1. Ազդեցությունների և ԱԵՏՏ-ների/ԱԵԱ-ների մարդահամարի ամփոփագիր**

Ազդեցության տեսակը	Հողակտորներ / միավորներ	ԱԵՏՏ-ներ	Մակերես, մ <sup>2</sup>	Մեկնաբանություն/ միավորի նկարագրություն
<b>Ա. Հող</b>				
Ա1. Գյուղատնտեսական (մասնավոր հող)	449	441	619,594	Նույն ԱԵՏՏ ունի ավելի քան 1 հողակտոր
Ա2. Գյուղատնտեսական (համայնքային հող)	296	16	1,022,270	Մեփականատերը տեղական իշխանությունն
Ա3. Բնակելի/արդյունաբերական (մասնավոր հող)	35	36	27,588	Մեկ բնակելի հողակտորը պատկանում է 2 ընտանիքի
Ա4. Բնակելի/արդյունաբերական (համայնքային հող)	56	10	61,152	Մեփականատերը տեղական իշխանությունն
Ա5. Պետական	2	0	3,540	
<b>Միջանկյալ ընդհանուրը (Ա)</b>	<b>838</b>	<b>493</b>	<b>1,734,144</b>	
<b>Բ. Շինություններ</b>				
Բ1. Բնակելի	2	2	3,693	
Բ2. Ոչ բնակելի	11	11	44,031	
<b>Միջանկյալ ընդհանուրը (Բ)</b>	<b>13</b>	<b>13</b>	<b>47,724</b>	
<b>Գ. Միամյա մշակաբույսեր</b>	174	198	219,566	ԱԵՏՏ-ների քանակն ավելի է, քանի որ նույն հողակտորը պատկանում է մի քանի ընտանիքների:
<b>Դ. Բերքատու ծառեր</b>	110	128	4,378 (միավոր)	
<b>Ե. Փայտանյութ տվող ծառեր</b>	40	40	1,555 (միավոր)	
<b>Զ. Բիզնեսի/եկամտի կորուստներ</b>				
Զ1. Ժամանակավոր կորուստներ կրող հարկային հայտարարագիր ներկայացրած	5	5	2Կ	Բիզնեսների քանակը
Զ2. Մշտական կորուստներ կրող հարկային հայտարարագիր ներկայացրած	1	1	2Կ	

Է3. Մշտական կորուստներ կրող հարկային հայտարարագրի չներկայացրած	1	1	ՉԿ	
<b>Միջանկյալ ընդհանուրը (Է)</b>	<b>7</b>	<b>7</b>	<b>ՉԿ</b>	
<b>Ը. Աշխատատեղի կորուստ</b>	<b>19</b>	<b>19</b>	<b>ՉԿ</b>	
<b>Թ. Վարձակալներ/ չգրանցված վարձակալներ</b>				
Թ1. Վարձակալություն (համայնքային հող)	14	13	57,940	ԱԵՏՏ քանակը պակաս է հողակտորների քանակից, քանի որ նույն ԱԵԱ միաժամանակ ունի 2 տարբեր հողակտորների վարձակալություն:
Թ2. Ուզուֆրուկտ օգտագործող (մասնավոր հող)	23	23	21,776	

Ազդեցության տեսակը	Հողակտորներ / միավորներ	ԱԵՏ S-ներ	Մակերես, մ <sup>2</sup>	Մեկնաբանություն / միավորի նկարագրություն
Թ3. Ուզուֆրուկտ օգտագործող (համայնքային հող)	4	4	29,543	
<b>Ժ. Խոցելի/խիստ ազդեցության ենթակա տնային տնտեսություններ</b>				
Ժ1. Խոցելի ԱԵՏՏ-ներ	ՉԿ	94	ՉԿ	
Ժ2. Խիստ ազդեցության ենթակա ՏՏ-ներ	ՉԿ	326	ՉԿ	
<b>Ի. Ընդհանուր ԱԵՏՏ-ներ</b>	ՉԿ	<b>536</b>	ՉԿ	Առանց
<b>Լ. Ընդհանուր ԱԵԱ-ներ</b>	ՉԿ	<b>552</b>	ՉԿ	Առանց

**Փոխհատուցման իրավասություններ և իրավունքներ**

13. ԲՏԳ ՀՕՏԾ-ն հիմնված է 2009թ. ԱՔՀ-ի պահանջների և ՀՀ օրենսդրության վրա: ԱԵԱ-ները, որոնք իրավասու են ստանալ փոխհատուցում, կամ նվազագույնը վերականգնում, դասակարգված են հետևյալ կերպ. 1) իրենց հողատարածքը կորցնող ԱԵԱ-ները՝ գրանցված սեփականության իրավունքով կամ առանց նման իրավունքի գրանցման, օրինականացմանը ենթակա ԱԵԱ-ներ, կամ առանց իրավական կարգավիճակի ԱԵԱ-ներ; 2) գրանցված կամ չգրանցված վարձակալները և բնավարձակալները; 3) հողին կից շենքերի, մշակաբույսերի, բույսերի, կամ այլ օբյեկտների սեփականատերերը; և 4) բիզնեսը, եկամուտը և աշխատավարձը կորցնող ԱԵԱ-ներ (Իրավունքների մատրիցան բերված է ստորև): Ծրագրի շրջանակներում իրականացվող ՀՕՏ առաջադրանքները պետք է կատարվեն համաձայն փոխհատուցման իրավասությունների և իրավունքների շրջանակի, համապատասխան ՀՀ օրենսդրությանը և կանոնակարգերի, ԱԶԲ-ի համապատասխան քաղաքականությունների, ինչպես նաև ՀՀԾՄՆԾ ՀՕՏԾ-ի: Փոխհատուցման իրավասությունը սահմանափակվում է Տ2 Ծրագրի համար նշանակված կասեցման օրով՝ 2011թ. հունիսի 17-ով, երբ սկսվել է ՄՉՀ:

**Աղյուսակ 2: Իրավունքների մատրիցան<sup>2</sup>**

Կորստի տեսակը	Կիրառությունը	ԱԵԱ-ների սահմանումը	Փոխհատուցման իրավունքները
1. Գյուղատնտեսական հողերի կորուստ	ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են գյուղատնտեսական հողերը անկախ ազդեցության աստիճանից	Սեփականատեր լիարժեք գրանցումով	Փոխհատուցում՝ փոխարինման արժեք +15%՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/: Հողի շուկայի բացակայության դեպքում փոխհատուցումը կիրականացվի հիմք ընդունելով հողի տարեկան արտադրողականությունը՝ հաշվարկված տարիների այն բավարար քանակով, որը կապահովի ԱԵՏՏ-ի կորցրած հողի դիմաց վերականգնումը:
		Օրինականացման ենթակա սեփականատերեր	Օրինականացման ենթակա ԱԵԱ-ները կօրինականացվեն և կփոխհատուցվեն վերոնշյալ ձևով:

		Վարձակալ (համայնք, պետություն)	Վարձակալը պետք է ստանա փոխհատուցում որպես լիարժեք սեփականատեր՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/ կամ նրան պետք է տրվի նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ, ապա, ելնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից, նա պետք է ստանա ազդեցության ենթակա հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/՝ գումարած 15%՝ –ին համարժեք փոխհատուցում հետևյալ մասնաբաժիններով՝ մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%; 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%; 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%; 4) 25 և ավել տարի՝ հողի արժեքի 25%
		Օրինական կարգավիճակ ստանալու ոչ ենթակա սեփականատեր	Այս ԱԵՏՏ-ները կստանան վերականգնման նպաստ ազդեցության ենթարկված հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/՝ հողօգտագործման անցած տարիների հաշվարկով. 1) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%; 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14% ; 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%; 4) 25 և ավել տարի՝ հողի արժեքի 25%:
<b>2. Ոչ գյուղատնտեսական հողերի կորուստ</b>	ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են իրենց առևտրային նշանակության կամ բնակելի հողերը	Սեփականատեր լիարժեք գրանցումով	Փոխհատուցում՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/+15%, կամ փոխանակում ԱԵՏՏ համար ընդունելի մեկ այլ հողակտորով:
		Օրինականացման ենթակա սեփականատեր	Փոխհատուցումը կիրականացվի վերը նշված ձևով:

2 [http://www2.adb.org/Documents/Resettlement\\_Plans/ARM/42145/42145-03-arm-rf-draft.pdf](http://www2.adb.org/Documents/Resettlement_Plans/ARM/42145/42145-03-arm-rf-draft.pdf)

Կորստի տեսակը	Կիրառությունը	ԱԵԱ-ների սահմանումը	Փոխհատուցման իրավունքները
		Վարձակալ (համայնք, պետություն)	Այս ԱԵԱ-ները կփոխհատուցվեն որպես լիարժեք սեփականատերեր ազդեցության ենթակա հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/ կամ կտրվի նոր վարձակալություն: Եթե սա հնարավոր չէ, ապա նրանք կստանան ազդեցության ենթակա հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/ գումարած 15%” –ին համարժեք փոխհատուցում հետևյալ մասնաբաժիններով՝ 1) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%; 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14% ; 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%; 4) >25տարի՝ հողի արժեքի 25%:
		Օրինական կարգավիճակ ստանալու ոչ ենթակա ԱԵԱ	Այս ԱԵԱ-ները կստանան վերականգնման նպաստ ազդեցության ենթարկված հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/՝ հողօգտագործման անցած տարիների հաշվարկով. 1)մինչև1 տարի՝ հողի արժեքի 5%; 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14% ; 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%; 4) 25 և ավել տարի՝ հողի արժեքի 25%:
3. Բնակելի շինություններ		Բոլոր ԱԵՏՏ-ները անկախ իրավական կարգավիճակից	Շինության կորստի դեպքում՝ փոխհատուցման փոխարինման արժեքը + 15% չափով առանց ամորտիզացիոն մասնահատումների, գործարքային ծախսերի և փրկված նյութերի: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի, ինչպես նաև շինության վերանորոգման համար:
		Վերաբնակեցված վարձակալ	Տեղափոխության և էական ազդեցություն կրելու նպաստ՝ նշված սույն աղյուսակի ստորև բերված 9 և 10 կետերում:
4.Ոչ բնակելի շինություններ/ գույք		Իրավական գրանցման կարգավիճակ ունեցող ԱԵՏՏ	Շինության կորստի դեպքում՝ փոխհատուցման փոխարինման արժեքը + 15% չափով առանց ամորտիզացիոն մասնահատումների, գործարքային ծախսերի և փրկված նյութերի: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի, ինչպես նաև շինության վերանորոգման համար:
		Ինքնակամ կառույց իրականացրած քաղաքացիներ կամ իրավաբանական անձ հանդիսացող ԱԵԱ-ներ, որոնք հանդիսանում են հողամասի սեփականատեր	Ինքնակամ կառույցի կորստի դեպքում՝ դրամական փոխհատուցում՝ ինքնակամ կառույցի փոխարինման ամբողջ արժեքի չափով (ոչ պակաս, քան շուկայական արժեքը)՝ առանց 15% հավելավճարի
		Համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասի վրա	Համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնակամ կառույց իրականացրած ԱԵԱ-ին կտրամադրվի վերականգնման օժանդակություն ինքնակամ կառույցի փոխարինման արժեքի չափով՝ հանած



		առկա ինքնակամ կառույց	օրինականացման ծախսերը:
		Վերաբնակեցված վարձակալ	Վերաբնակեցման և էական ազդեցություն կրելու նպատակով՝ սույն աղյուսակի ստորև բերված 9 և 10 կետերում:
<b>5.Շինարարության սեփականության միջոցների կորուստ</b>	Համայնքային/հանրային գույք	Համայնք/Պետություն	Կորցրած շինության վերականգնում համայնքի հետ խորհրդակցության պայմաններում և վերջինիս գործառույթների վերականգնում:
<b>6. Մշակարարության կորուստ</b>	Ազդեցության ենթակա բերքի զանգված	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական կարգավիճակից (ներառյալ՝ օրինականացման ենթակա սեփականատերերը և բնակիչները, որոնք չունեն կացության կարգավիճակ)	Բերքի փոխհատուցում հաշվարկված շուկայական գներով՝ ակնկալվող համախառն բերքի համար:
<b>7. Ծառերի կորուստ</b>	Ազդեցության ենթակա ծառեր	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական կարգավիճակից (ներառյալ՝ օրինականացման ենթակա սեփականատերերը և բնակիչները, որոնք չունեն կացության կարգավիճակ)	Շուկայական գներով հշվարկված՝ բերքի արժեքի դրամական փոխհատուցում՝ հիմնված ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության վրա:
<b>8. Բիզնեսի կամ գրառվածության կորուստ</b>	Բիզնեսի /գրառվածություն կորուստ	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական կարգավիճակից (ներառյալ՝ օրինականացման ենթակա սեփականատերերը և բնակիչները, որոնք չունեն կացության կարգավիճակ)	<b>Բիզնեսի սեփականատեր</b> . Հարկային հայտարարագրով բիզնեսի դեպքում ա) (մշտական ազդեցության դեպքում) փոխհատուցում տարեկան զուտ եկամտի չափով; բ) (ժամանակավոր ազդեցության դեպքում) զուտ եկամտի փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության ընդհատման մինչև 1 տարի ժամանակահատվածի համար: Հայտարարագրի բացակայության դեպքում ա) (մշտական ազդեցության դեպքում) ԱԵՏՏ-ը կստանա վերականգնման նպատակով ամսական պաշտոնական նվազագույն աշխատավարձի 1 տարվա չափով + փոխհատուցում՝ պետական գրանցման վճարների և թույլտվությունների համար, եթե այդպիսիք կան:

			<p>բ) (ժամանակավոր ազդեցության դեպքում) վերականգնման նպատակով ամսական պաշտոնական նվազագույն աշխատավարձի չափով ձեռնարկատիրական գործունեության ընդհատվող ամիսների հաշվարկով` մինչև 1 տարի:</p> <p><b>Մշտական աշխատողներ</b> - Աշխատանքի մշտական կորստի դեպքում վեց ամսվա կորցրած ամսական միջին աշխատավարձի չափով գումարի</p>
--	--	--	--

Կորստի տեսակը	Գիրառությունը	ԱԵԱ-ների սահմանումը	Փոխհատուցման իրավունքները
			միանվագ տրամադրում; բ) Աշխատանքի ժամանակավոր կորստի դեպքում մինչև վեց ամիս ամսական միջին աշխատավարձի չափով գումարի տրամադրում՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամիսների հաշվարկով:
<b>9. Օժանդակություն խիստ ազդեցությունների դեպքում</b>	Գյուղատնտեսական եկամտի 10 ն ավել տոկոսի կորուստ ունեցող կամ վերաբնակեցման ենթակա ԱԵՏՏ	Խիստ ազդեցության ենթարկված բոլոր ԱԵՏՏ, ներառյալ կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները	1) Ազդեցության ենթակա գյուղատնտեսական հողի մեկ լրացուցիչ տարվա բերքի չափով փոխհատուցում ԱԵԱ-ին գյուղատնտեսական եկամտի կորստի դիմաց կամ (վերաբնակեցվողների համար)  2) 6 ամսվա վերականգնման նպաստ վերաբնակեցված ԱԵՏՏ-ներին նվազագույն աշխատավարձի 3 չափով:
<b>10. Վերաբնակեցման նպաստ</b>	Տրանսպորտային /տեղափոխության ծախսեր	Վերաբնակեցված բոլոր ԱԵՏՏ-ները, ներառյալ՝ վարձակալները	Տրանսպորտային և մեկ ամսվա կենսապահովման ծախսերը հոգալու համար բավարար գումարների տրամադրում:
<b>11. Օժանդակություն խոցելի ԱԵԱ-ներին</b>		Աղքատության սահմանագծից ցածր գրանցված և/կամ կանանց, և/կամ տարեցանձանց կողմից ղեկավարվող ԱԵՏՏ	6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով դրամական օժանդակության տրամադրում և Ծրագրի իրականացման հետ կապված աշխատատեղերի համար ընտրություն կատարելիս այս անձանց պետք է առաջնահերթություն տալ:
<b>12. Ժամանակավոր ազդեցություն</b>		Բոլոր ԱԵՏՏ-ները	Պատշաճ վարձակալություն և վերականգնման աջակցություն կտրամադրվի ժամանակավոր ազդեցություն կրող գույքի/սեփականության համար:
<b>13. ՀՕՏ չնախատեսված ազդեցություններ, եթե այդպիսիք լինեն</b>			Ծրագրի իրականացման ընթացքում ՏԿՆ –ը կանդրադառնա ՀՕՎ չնախատեսված ազդեցություններին և կհոգա դրանց հետ կապված փոխհատուցումը, ըստ վերոհիշյալ պայմանների:

(13-րդ կետը խմբ., լրաց. 29.06.17 N 752-Ն)

**Բողոքների լուծում**

14. Բողոքների լուծման խումբը (ԲԼԽ) պետք է ստեղծվի ՀՕՏՕ իրականացումից առաջ՝ երաշխավորելով հողի կամ այլ գույքի փոխհատուցման արդյունքում առաջացած որոշումների,

գործունեության կամ գործողության վերաբերյալ ԱԵԱ-ների բողոքարկումը: ԱԵԱ-ները պետք է տեղեկացված լինեն իրենց բողոքները ԲԼԽ-ին կամ այլ հանրային իշխանություններին ուղղելու իրավունքների և ընթացակարգերի մասին:

### **Հանրային լուսմներ և տեղեկատվության հրապարակում**

15. ԱԵԱ-ները ոչ պաշտոնապես և պաշտոնապես տեղեկացվել են, ինչպես նաև նրանց տրվել է խորհրդատվություն: Ոչ պաշտոնական խորհրդատվությունը տրամադրվել է ԾԻԿ-ի և Խորհրդատուների հետազոտողների, մասնագետների և ղեկավարների կողմից համայնքներ բազմաթիվ այցելությունների ընթացքում: Պաշտոնական խորհրդատվությունը տրվել է գրավոր հայտարարությունների և յուրաքանչյուր ազդեցությանը ենթակա համայնքում հանդիպումների միջոցով: Հանրային լուսմների (ՀԼ) վերջին փուլի հանդիպումներին մասնակցեց ԱԵՏՏ-ների 235 ներկայացուցիչ: Այսպիսով, ԱԵՏՏ-ների մոտ 50%-ը մասնակցել է հանրային խորհրդատվություններին: Ամբողջական ՀՕՏՕ-ի օրինակը հասանելի կլինի ՏԿՆ-ի գրասենյակում: Տեղեկատվական թերթիկը ՀՕՏՕ-ի ամփոփմամբ հայերեն լեզվով կտրամադրվի ԱԵԱ-ներին տեղական մակարդակով, ինչպես նաև կտրամադրվի յուրաքանչյուր ԱԵԱ-ին պահանջի դեպքում: ՀՕՏՕ-ի օրինակը տեղադրված է նաև ԱԶԲ-ի կայքէջում:

### **ՀՕՏՕ-ի ծախսեր**

16. ՀՕՏՕ-ի իրականացումը կտևի մեկ տարի: Տրանշ 2 Ծրագրի համար ՀՕՏ ծախսերը,

---

3 Նվազագույն աշխատավարձը – ՀՀ օրենքը “Նվազագույն ամսական աշխատավարձի” մասին, դեկտեմբերի 17, 2003, հոդված 1, վերանայված՝ 2010թ. դեկտեմբերին, ՀՕ-164՝ նվազագույն աշխատավարձը սահմանելով 32,500 ՀՀ դրամ:

ներառյալ՝ փոխհատուցումը, վերականգնման նպաստները, ինչպես նաև ՀՕՏ-ի իրականացման վարչական և չնախատեսված ծախսերը կազմում է 2,304,484,560ՀՀ դրամ, որը համարժեք է մոտ 5,620,694 ԱՄՆ դոլարին:

### **Մոնիտորինգ**

17. ՀՕՏ-ի իրականացումը կվերահսկվի ԾԻԿ-ի կողմից ներքին կարգով՝ ներկայացնելով ԱԶԲ-ին եռամսյակային իրականացման հաշվետվություններ: Արտաքին մոնիտորինգը կվստահվի Անկախ մոնիտորինգի գործակալությունը (ԱՄԳ), որը վարձվել է ԾԻԿ-ի կողմից 2011 թվականին և կմոբիլիզացվի ՀՕՏ-ի իրականացման հետ միասին: ԱՄԳ-ն մանրմասնորեն կվերահսկի ՀՕՏ-ի իրականացումը և կարձանագրի բացահայտումները Համապատասխանության հաշվետվության մեջ, որը պետք է ընդունվի ԱԶԲ-ի կողմից որպես պայման բուն շինարարական աշխատանքները սկսելու համար: ԱՄԳ-ն կիրականացնի նաև ՀՕՏ ծրագրի հետ-իրականացման գնահատում ՀՕՏ-ի իրականացման ավարտից մեկ տարի հետո:

## Ա. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

18. Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) Հայաստանի Հանրապետության կառավարությանը (ՀՀ կառավարություն) տրամադրեց Բազմափուլային ֆինանսավորման գործիք (ԲՖԳ) “Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք” ներդրումային ծրագիրը (ՀՀՃՄՆԾ) ֆինանսավորելու համար: Տրանշ 2-ի նպատակն է կառուցել Աշտարակից մինչև Թալին մոտ 42 կիլոմետրանոց հատվածում (կմ 29+600 – 71+500) գոյություն ունեցող Մ1 մայրուղու երկայնքով միջազգային չափանիշներին համապատասխան ճանապարհ, որը բաղկացած կլինի հանդիպակաց ուղղություններով 2 երթևեկելի մասերից, բաժանիչ գոտիով, յուրաքանչյուրը՝ 2 երթևեկության գոտիներով:

19. Սույն ՀՕՏՕ-ն պատրաստվել է Տրանշ 2 Ծրագրի համար: Այն փոխարինում է Տրանշի Պարբերական ֆինանսավորման հայտը (ՊՖՀ) հաստատելու համար 2009թ. նոյեմբերին պատրաստված ՀՕՏՕ-ի նախնական տարբերակը և ներկայացնում է մանրամասն նախագծի հիման վրա ազդեցությունների վերջնական ցանկը և արժեքը: Միջազգային “լավագույն փորձի” կիրառման համաձայն՝ նախագծի փուլում նախընտրություն է տրվել հողի օտարման և տարաբնակեցման (ՀՕՏ) ազդեցությունները նվազեցնող տարբերակներին: Սույն ՀՕՏՕ-ն համահունչ է ՀՀ համապատասխան օրենքներին, ինչպես նաև ԱՔՀ-ի, ԱԶԲ-ի 4 ” և ՀՀ կառավարության 5 կողմից հաստատված փոփոխված ՀՕՏ Շրջանակի (ՀՕՏՇ) հետ: ՀՀ կառավարությունը կհաստատի սույն ՀՕՏՕ-ն ԱԶԲ-ի և ՏԿՆ-ի հաստատելուց հետո:

### II. ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

20. Տրանշ 2 (Տ2) Ծրագիրը սկսվում է Աշտարակում կմ 29+600-ում և վերջանում է Թալինի մոտ կմ 71+500-ում: Տ2 Ծրագիրը կբարելավի գոյություն ունեցող 2 երթևեկելի գոտիներով ճանապարհը՝ վերակառուցելով 4 երթևեկելի գոտիներով բաժանիչ գոտիով 41.9կմ ամբողջ երկարությամբ ճանապարհ: Կկառուցվեն երկու շրջանցիկ ճանապարհներ. մեկը Ագարակում՝ կմ 29+934-ից մինչև կմ 32+600-ը և Ուջանում՝ կմ 36+600-ից մինչև կմ 40+300-ը: Տ2 Ծրագիրը կունենա նաև նոր ծրագիծ (8.95կմ երկարությամբ) Կաթնաղբյուրում սկսած կմ 59+950-ից մինչև կմ 68+900-ը, որը կանցնի գոյություն ունեցող մայրուղու ձախ կողմում և կմիանա գոյություն ունեցող ծրագծին Թալինի մոտ: Ընդհանուր առմամբ, նախագծում կան երեք շեղումներ գոյություն ունեցող ճանապարհի ծրագծից. մեկական՝ Ագարակում և Ուջանում, որոնց նպատակն է բարելավել երթևեկության անվտանգությունը համայնքներում տեղափոխելով արագընթաց երթևեկությունը գոյություն ունեցող ճանապարհից, և մյուսը՝ Կաթնաղբյուր համայնքի մոտ Ջաքարի Բերդ խոցելի հնագիտական վայրը շրջանցելու նպատակով:

4 [http://www2.adb.org/Documents/Resettlement Plans/ARM/42145/42145-03-arm-rf-draft.pdf](http://www2.adb.org/Documents/Resettlement%20Plans/ARM/42145/42145-03-arm-rf-draft.pdf)

5 N 961-Ն Կառավարության որոշում /14.07.2011/, N 1274-Ն Կառավարության որոշման փոփոխություններ /16.09.2010/ <https://www.e-gov.am/gov-decrees/item/19866/>

## Քարտեզ Ա1 Տրանշ 2 Ծրագրի տեղակայվածությունը



21. Ընդհանուր առմամբ, նախատեսվում են 8 ստորգետնյա անցումներ հետիոտների և ընտանի կենդանիների համար 3.0մ բարձրությամբ x 5.0մ լայնությամբ չափերով և 10 ստորգետնյա անցումներ գյուղատնտեսական տեխնիկայի համար 4.5մ բարձրությամբ x 6.0մ լայնությամբ չափերով: Ինը տարամակարդակ փոխհատումները ապահովում են կապը մայրուղու, տեղական ճանապարհների և համայնքների միջև: Փոխհատումներից երեքը կամուրջներ են, իսկ մնացած վեցը՝ ստորգետնյա անցումներ: Ծրագրային մայրուղու երկայնքով յուրաքանչյուր տարանջատված փոխհատման համար նախատեսված է էլեկտրական լուսավորություն 250մ երկարությամբ մուտքի իջատեղերից սկսած մինչև փոխհատումը և փոխհատումից 250մ երկարությամբ մինչև ելքի իջատեղը: Ապահովված է նաև ճանապարհային գծանշում և ազդանշանային համակարգ տեղական ստանդարտներին համապատասխան, սակայն, որտեղ անհրաժեշտ է լրացված միջազգային ստանդարտներով: Ճանապարհային անվտանգության տարրերը և սկզբունքները նախագծում ևս ներառվեցին:

22. Ճանապարհի ծրագիծն անցնում է 15 գյուղերի և 1 քաղաքի միջով՝ ազդեցության ենթարկելով 838 հողակտոր և օտարելով 3,230,976 մ<sup>2</sup> հող (ազդեցության ենթակա հողակտորների թիվն ըստ համայնքների տրված է ստորև Աղյուսակ Ա1-ում): Ազդեցության կենթարկվեն 536 ԱԵՏՏ- ներ (ներառյալ սեփականատերերին, վարձակալներին և չգրանցված վարձակալներին), որոնցից 326-ը կենթարկվեն խիստ ազդեցության (324 կորցնեն գյուղատնտեսական հողի 10%-ից ավելին և 2-ը կվերաբնակեցվեն: Ուստի, S2 Ծրագիրը դասակարգվել է որպես Ա<sup>6</sup> կարգի ծրագիր ԱԶԲ-ի Գործառնական ձեռնարկի (ԳՁ) Ձ1/ԳՁ (2009) կետին համաձայն, ինչը նշանակում է Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի անհրաժեշտությունը:

### Աղյուսակ Ա1. Ծրագրային տարածքում ազդեցության ենթակա հողակտորները

N	Համայնք	Հողակտորների քանակը
<b>Աշտարակի տարածաշրջան</b>		
1	Ոսկեվազ	32
2	Աղձք	32
3	Փարպի	17
4	Կոշ	121

6 Համաձայն ԱԶԲ Գործառնական ձեռնարկի՝ Ձ1/ԳՁ (2009թ.) Ծրագիրը դասակարգվում է որպես Ա

կարգի ծրագիր, եթե զգալի ազդեցություններից տուժում է ավելի քան 200 մարդ (վերաբնակեցման կամ արդյունավետ ակտիվների 10%-ից ավելի կորուստ): Ծրագիրը կդասակարգվի որպես Բ կարգի ծրագիր, եթե զգալի ազդեցություններ է կրում 200-ից քիչ մարդ: Գ կարգի ծրագրերի դեպքում ՀՕՏ ազդեցություններ չեն առաջանում:



N	Համայնք	Հողակտորների քանակը
5	Արուճ	47
6	Շամիրամ	50
7	Ագարակ	98
8	Ուջան	148
9	Դավթաշեն	30
<b>Թալինի տարածաշրջան</b>		
10	Եղնիկ	19
11	Ներքին Սասնաշեն	15
12	Վերին Սասնաշեն	7
13	Կաքավաձոր	50
14	Ներքին Բազմաբերդ	71
15	Կաթնաղբյուր	41
16	Թալին	60
	<b>Ընդամենը</b>	<b>838</b>

22.1. Ծրագրի շրջանակներում վերակառուցվող Աշտարակ-Թալին կմ 29+600ից մինչև կմ 71+500 ճանապարհահատվածի վրա առկա են հաղորդակցուղիներ՝ կապի մալուխներ, գազատարեր, էլեկտրական օդային գծեր և ջրամատակարարման խողովակներ, որոնք խոչընդոտում են ճանապարհահատվածի շինարարական աշխատանքներին, ուստի ենթակա են տեղափոխման: Նախագծային փաստաթղթերի համաձայն տեղափոխվող հաղորդակցուղիները ենթակա են տեղադրման այլ անձանց սեփականությունը հանդիսացող հողամասերի տարածքներում, ինչի արդյունքում տվյալ տարածքները ծրագրի կարիքների համար ճանաչվել են հանրության գերակա շահ: Նշվածով պայմանավորված՝ ղեկավարվելով Ասիական զարգացման բանկի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության հայտարարագրի (ԱՄՔՀ 2009) և օրենսդրական ու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի պահանջներով մշակվել է «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ-2 (Աշտարակ-Թալին) ճանապարհահատվածի համար հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի լրացում՝ Աշտարակ-Թալին ճանապարհահատվածի կմ 40+000-ին մինչև կմ 47+400 հատվածում (Կոշ, Շամիրամ համայնքներ) առկա հաղորդակցուղիների տեղափոխման արդյունքում ազդակիր հողերի համար՝ համաձայն Ի1 հավելվածի:

*(ծրագիրը լրաց. 05.11.20 N 1779-Ն)*

### III. ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

23. Սույն ՀՕՏԾ-ն հիմնված է Տրանշ 2 Ծրագրի մանրամասն նախագծի (ՄՆ) վրա, վերջնական է և պատրաստ իրականացման համար: Սույն վերջնական և իրականացման համար պատրաստ ՀՕՏԾ-ն ներառում է.

- i. ԱԵԱ-ների մարդահամար և կորուստների գույքագրում;
- ii. Հողերի/շենքերի/շինությունների և այլ ակտիվների չափագրումը, նկարագրումն ու գնահատումը;
- iii. ԱԵԱ-ների հետ Հանրային լսումների գործընթացի և արդյունքների նկարագրումը;
- iv. Օտարման գործընթացի և պայմանների նկարագրությունը;
- v. Ամբողջական փոխհատուցման բյուջեն բոլոր տեսակի կորուստների համար:

#### IV. ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

24. ՀՕՏԾ-ի նպատակն է բացահայտել Տրանշ 2 Ծրագրի մայրուղու կառուցման հետևանքով ազդեցության ենթարկվող անձանց և գնահատել պատճառվող վնասի չափը (ինչ տեսակի կորուստ է և դրա արժեքը), ինչպես են այդ անձինք փոխհատուցվելու և ապահովել այնպիսի իրավիճակ, որ այդ անձինք չենթարկվեն Ծրագրի բացասական ազդեցությանը կամ չհայտնվեն ավելի վատ վիճակում քան «առանց Ծրագրի իրականացման» տարբերակում: Բոլոր դեպքերում, ընդհանուր նպատակն է առնվազն վերականգնել ԱԵԱ-ների նախկին կենսամակարդակը: ՀՕՏԾ-ի առաջնային նպատակն է փոխհատուցման, տարաբնակեցման և վերականգնման համար ներկայացնել անհրաժեշտ մանրամասները՝ սահմանելով 1) ԱԵԱ-ների պրոֆիլները 2) կորստի չափերը և

ծրագրի ազդեցությունը 3) տեղեկատվության հրապարակումը, խորհրդատվությունը և մասնակցությունը 4) փոխհատուցումների վճարման և վերականգնման քաղաքականությունը և շրջանակները 5) բողոքների և դժգոհությունների լուծման մեխանիզմը 6) տարաբնակեցման բյուջեն և ֆինանսավորման պլանը, ներառյալ՝ կորցրած ակտիվների, վերաբնակեցման և վերականգնման գնահատումը և փոխհատուցման չափը, 7) տարաբնակեցման ծրագրի իրականացման համար ինստիտուցիոնալ շրջանակը և 8) իրականացման պլանների մոնիտորինգը:

## V. ՀՈՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

25. ԱԶԲ-ի կողմից ստեղծված գործառնական փորձի վրա հիմնված ԱԶՀ-ի և ԲՖԳ-ի գործընթացի պահանջներն համաձայն՝ սույն Ծրագրի Տրանշ 2-ի իրականացման հաստատումը պայմանավորված է հետևյալով.

- **ԲՖԳ/Առաջին տրանշի գնահատում.** Գնահատումը պայմանավորված է հետևյալով ա) ԱԶԲ-ի և Կառավարության համար ընդունելի ձևաչափով և բովանդակությամբ ամբողջ ԲՖԳ-ի համար ՀՕՏԾ-ի պատրաստում/ներկայացում; բ) Աղքատության և սոցիալական նախնական գնահատում (ԱՄՆԳ) և գ) ԱԶԲ-ի և Կառավարության համար ընդունելի ՀՕՏԾ- ների պատրաստում/ներկայացում ՀՀՃՄՆԾ-ի յուրաքանչյուր տրանշի համար, որը պահանջում է ՀՕՏ;
- **Պարբերական ֆինանսավորման հայտի հաստատում հետագա տրանշների համար.** պայմանավորված է հետևյալով՝ ա) ՀՕՏԾ-ի վերանայում/փոփոխում/ներկայացում, և բ) ՀՀՃՄՆԾ-ի այն յուրաքանչյուր տրանշի համար, որն ունի ՀՕՏ, պատրաստել/ներկայացնել ՀՕՏԾ-ներ ԱԶԲ-ի և կառավարության համար ընդունելի ձևաչափով և բովանդակությամբ, ինչպես նաև փոփոխված ՀՕՏԾ-ին համահունչ;
- **Տրանշ 2 պայմանագրի իրականացման ձևաչափը** պայմանավորված է հետևյալով՝ ա) ՀՕՏԾ-ի ավարտում իրականացմանը պատրաստ փաստաթղթի ձևաչափով և դրա ներկայացումը; և բ) մոբիլիզացմանը պատրաստ Անկախ մոնիտորինգի գործակալության (ԱՄԳ) վարձում:
- **Բուն շինարարական աշխատանքների մեկնարկը.** պայմանավորված է համապատասխան ՀՕՏԾ-ի ամբողջական իրականացմամբ (փոխհատուցման/վերականգնման ամբողջական տրամադրում), ինչը արձանագրված կլինի ԱԶԲ-ի համար ընդունելի ԱՄԳ-ի կողմից պատրաստված Համապատասխանության հաշվետվությունում:

## VI. ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

26. Ամփոփ ՀՕՏԾ-ն թարգմանվել է հայերեն և ներկայացվել է ԱԵԱ-ներին: Ամբողջական ՀՕՏԾ-ի օրինակը ԱԵԱ-ները կարող են ստանալ տեղական ինքնակառավարման մարմինների կամ մարզային ադմինիստրացիայի գրասենյակներում: ՀՕՏԾ-ի ամբողջական տարբերակը անգլերեն և հայերեն լեզուներով տեղադրված է ՏԿԼ-ի և ԱԶԲ-ի ինտերնետային կայքէջերում (Տես Հավելված 1-ը):

## VII. ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՍԵՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ

27. Ազդեցությունների վերջնական գնահատումը՝ մոտ 80% ԱԵՏՏ-ների ԱԵԱ մարդահամարը և սոցիալ-տնտեսական հետազոտությունը (ՄՏՀ) սկսվել է 2011թ հունիսի 17-ին և ավարտվել նոյեմբեր ամսին: Տրանշ 2 Ծրագրի ՀՕՏԾ-ի ազդեցության ենթակա անձանց իրավունքների կասեցման ամսաթիվն 2011թ. հունիսի 17-ն է:

**Բ. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՆԱՅԻՆ  
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ**

28. Այս գլուխը ներկայացնում է Աշտարակ-Գյումրի մայրուղու Աշտարակ-Թալին հատվածի երկայնքով առկա տասնվեց (16) համայնքների վրա վերջնական ազդեցությունների մանրամասն քանակական հաշվարկը: Բոլոր այս համայնքները տեղակայված են Արագածոտնի մարզի վարչական տարածքում:

**II. ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

29. Ճանապարհի վերջնական ծրագիծը հաստատվեց 2011թ. օգոստոսին և ընդգրկում է ծրագծի որոշ փոփոխություններ: Ըստ ծրագծի որոշվեցին ազդեցության ենթակա 16 գյուղերը: ՀՀ կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն (ԱԳԿՊԿ) տրամադրեց թվային կադաստրային քարտեզները: Այս թվային քարտեզների վրա նշված է ճանապարհի ծրագիծը, ըստ որի կորոշվի հողերի լոտերի քանակը և նրանց սահմանները: Մա այնուհետև ստուգվել է տեղամասում: Այս կադաստրային հետազոտությունը հիմք է հանդիսացել ազդեցությունների գնահատման, ԱԵԱ-ների մարդահամարի և մոդելային Սոցիալ-տնտեսական հետազոտության (ՄՏՀ) նախաձեռնման համար:

30. Անկախ գործակալության կողմից 2010 – 2011թթ.<sup>7</sup> իրականացվել է ազդեցությունների գնահատման հետազոտություն, չափագրման և գնահատման հետազոտություն: ԾԻԿ-ի կողմից մշակվեց հետազոտության մեթոդոլոգիան/գործիքները հողի, շինությունների և բիզնեսների համար, ինչպես նաև պատրաստվեցին յուրաքանչյուր ԱԵԱ-ի ազդեցության ենթակա գույքի նկարագրական արձանագրությունները: Դրանք հաստատվեցին Կառավարության N 1275, 16.09.2010 որոշումով “Հյուս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի” համար, որը հիմնված էր պետության համար առաջնահերթ կարևորության ծրագրերի վերաբերյալ ՀՀ օրենսդրության դրույթների վրա (տես Հավելված A1): Հետազոտությունը ներառում էր հետևյալ քայլերը. 1) հողի հետազոտողների հմուտ խմբի կողմից օտարման ենթակա հողակտորների չափագրում, ֆիքսում, սահմանագծում և նույնի ստուգում կադաստրային քարտեզների վրա հողի սեփականատիրոջ և համայնքային իշխանությունների ներկայությամբ; 2) գյուղատնտեսների և գնահատման մասնագետների կողմից հողակտորների և մշակաբույսերի/ծառերի նկարագրություն; 3) գնահատման մասնագետների կողմից շենքերի/շինությունների, անշարժ գույքի նկարագրում; 4) արտոնագրված գնահատողների կողմից օտարման ենթակա ակտիվների վերաբերյալ գնահատման մանրամասն հաշվետվությունների պատրաստում; 5) միաժամանակ վերապատրաստված դաշտային աշխատողների խումբը համայնքներում իրականացրեց ազդեցության ենթակա տնային տնտեսությունների ՄՏՀ: Լրացուցիչ, հավաքվեցին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ԱԵԱ-ների փաթեթները համալրելու համար: Մի շարք միջոցառումներ են նախաձեռնվել տվյալների որակն ապահովելու համար: Դրանք ներառում են՝ 1) ուսումնասիրություն անցկացնող թիմի վերապատրաստում; 2) գրասենյակում 25% հարցաշարերի ճշգրտում և որակի ստուգում, 3) տվյալների խաչաձև ստուգում ԱԵԱ-ների հետ հեռախոսազանգերի միջոցով, 4) կրկնակի այցելությունների միջոցով անհամապատասխանությունների ճշգրտում:

31. Նախագծային խորհրդատուն, խորհրդակցելով ԾԻԿ-ի հետ, նախաձեռնեց Ռոբուստ մեթոդով լրացված հարցաթերթիկների ճշգրտման/ստուգման գործընթացը. i) ընտրվեց ավարտված

<sup>7</sup> Այդ ժամանակ Կառավարությունն արդեն 2009թ. օգոստոսի N 968-Ա որոշումով սառեցրել էր “Հյուս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի” շրջանակում համայնքային հողերի ցանկացած բարելավում և գործարք:

փաթեթների 25%-ը և գույքը ստուգվեց՝ համեմատելով արձանագրությունների նկարագրությունների և գնահատված գույքի հետ, ինչպես նաև ՀՀ կառավարության N 977-Ն, 23.06.2011թ. որոշմանը կցված գույքի ցուցակի հետ՝ ըստ լոտի/կողի և գույքի սեփականատիրոջ անվան; ii) այնուհետև ստուգվեց վերջիններիս ամբողջականությունը (գնահատման հաշվետվությունները, արձանագրությունների առկայությունը, քարտեզները, սոցիալական հարցաթերթիկները); iii) ստուգված հարցաթերթերի 50%-ը ստուգվեց հեռախոսազանգերի միջոցով; iv) ի հայտ եկած անհամապատասխանություններն ու խնդիրները գրանցվեցին և հանձնվեցին ԾԻԿ-ին գնահատող կազմակերպության կողմից ուղղման համար:

32. Երբ բոլոր արձանագրությունները վերանայվեցին Ճշգրտման հաշվետվությունների հիման վրա, սկսվեց հողի/շինությունների/բիզնեսի ստորագրման գործընթացը: Նախագծման խորհրդատուի չորս դաշտային աշխատակիցներ և ԾԻԿ-ի երկու ներկայացուցիչներ իրականացրեցին դաշտային այցելություններ ԱԵԱ-ների կողմից արձանագրությունների ստորագրման նպատակով: ԱԵԱ-ներին հնարավորություն տրվեց մինչ ստորագրելը ստուգել արձանագրության տվյալները: Որոշ ԱԵԱ-ներ, ովքեր գոհ չէին չափագրման արդյունքներից, մերժեցին ստորագրել: Դաշտում նախաձեռնվեցին մի շարք վերաչափագրումներ, ստուգումներ, այնուհետև տեղի ունեցան բանակցություններ ԱԵԱ-ների հետ, որին հետևեց արձանագրությունների ստորագրումը: Արդյունքում 9 արձանագրություններ մնացին չստորագրված<sup>8</sup>:

### III. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

#### 1. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԻ ՎՐԱ

##### 1.1 Ներածություն

33. Ծրագրի արդյունքում կօտարվեն 838 հողակտորներ, որոնք ընդհանուր առմամբ զբաղեցնում են 1,734,144 մ<sup>2</sup> տարածք, ներառյալ՝ ուղղակի և անուղղակի ազդեցությունները<sup>9</sup>: Քանի որ Ծրագիրը գծային ազդեցություն ունի պայմանավորված ճանապարհի լայնացման հետ, ազդեցություն են կրում ազդեցության ենթակա հողակտորների միայն փոքր մասնաբաժինները: Հողակտորի ազդեցության ենթակա մասը միջինում կազմում է 2069 քառ.մ (ներառյալ ուղղակի և անուղղակի ազդեցությունները)՝ 79,583 քառ.մ առավելագույն և 0.05 քառ.մ նվազագույն չափերով:

##### 1.2. Ազդեցության ենթակա հողի զբաղեցման իրավական կարգավիճակը

34. Բոլոր ազդեցության ենթակա հողակտորներն օրինական են և գրանցված են ԱԳԿՊՏ-ում: Ազդեցության ենթակա օրինական հողերի տեսակներն են.

1. **Մասնավոր սեփականություն.** ընդամենը 484 հողակտորներ (449-ը գյուղատնտեսական, 35-ը՝ ոչ գյուղատնտեսական), որոնք զբաղեցնում են 647,182 մ<sup>2</sup> տարածք: Այս հողակտորներից 23-ը ուզուֆրուկտով տրվել են սեփականատերերի բարեկամներին (մասնավոր հողերի ձևակերպված օգտագործողներ), մինչդեռ սրանք հեռու են ծրագրային տարածքից:

---

8 Այս բոլոր 14 դեպքերն էլ բռնագրավման ենթակա հողակտորներից են: Մանրամասները տես Գլուխ E-ի՝ «Բռնագրավման պայմանները», IV կետում

9 Համաձայն ՀՀ օրենսդրության՝ ԱԵԱ-ներն իրավունք ունեն դիմելու օտարման ենթակա հողին սահմանակից հողի օտարման պահանջով: ԱԵԱ-ների կողմից նման պահանջի պատճառներն են. (1) մնացած հողը դառնում է անկենսունակ և մշակելու համար անպիտան; (2) ճանապարհի ծրագիծը կիսում է հողը, հետևաբար, նվազում է մուտքն ու շարժը, ինչպես նաև նվազեցնում ինտենսիվ մշակման շրջանակը, քանի որ հողը բաժանվում է հողակտորների, որոնք զգալիորեն փոքր են չափերով; (3) անասնակերի աճեցման և արոտավայրերի կրճատված տարածքը, (4) մրգատու

այգիներում նորատունկերի ոչնչացումը, ինչը երկար տարիներ կպահանջի նորատունկեր աճեցնելու համար, եթե տնկվեն նորերը, և (5) որոշ մարդիկ չեն օգտագործում հողը և ունեն շատ ցածր եկամուտ գյուղատնտեսությունից, ուստի կարծում են, որ լավ հնարավորություն է ընձեռվում դրանից ազատվելու համար: Համայնքային հողակտորների պարագայում չկա որևէ անուղղակի ազդեցություն: Մասնավոր հողերի դեպքում հարկ կլինի օտարել 145 923 մ<sup>2</sup> ավել, (29.4% ավելի, քան փաստացիորեն անհրաժեշտ է):

2. **Համայնքային հողեր.** ընդամենը 352 հողակտորներ, որոնք զբաղեցնում են 1,083,422 մ<sup>2</sup> տարածք: Այնուհետև, այս հողերը ենթարժանված են. ա) 334 հողակտորներ, որոնք անմիջապես կառավարվում են Տեղական ինքնակառավարման մարմինների ՏԻՄ (ՏԻՄ) կողմից և օգտագործվում են որպես արոտավայրեր, հանրային հանգստի վայրեր, գյուղական ճանապարհներ կամ հետագա օգտագործման նպատակով, բ) 14 հողակտորներ օրինականորեն վարձակալության են տրված մասնավոր ԱԵԱ-ներին և գ) 4 հողակտորներ չձևակերպված հիմունքներով, անվճար և կարճաժամկետ օգտագործման համար տրվել են մասնավոր ԱԵՏՏ-ների (համայնքային հողերի չձևակերպված օգտագործողներ):
3. **Պետական հողեր.** ընդամենը 2 հողակտոր՝ ընդհանուր 3,540 մ<sup>2</sup> տարածքով: Մեկ հողակտորը չի օգտագործվում, իսկ մյուսն օգտագործվում է պոմպակայանի համար:

### 1.3 Հողերի կորուստն ըստ տեսակի

35. 838 ազդեցության ենթակա հողակտորներից 746-ը (1,643,597 մ<sup>2</sup>) գյուղատնտեսական նշանակության հողեր են, և 92-ը (90,547 մ<sup>2</sup>)՝ ոչ գյուղատնտեսական (83 բնակելի և 9 արդյունաբերական): Գյուղատնտեսական հողերի կորուստները բաժանվում են 7 տեսակի. ա) ռոտզելի վարելահողեր; բ) ոչ ռոտզելի վարելահողեր; գ) խոտհարք; դ) մրգատու այգիներ; ե) խաղողի այգիներ; զ) արոտավայր և է) “գյուղատնտեսական այլ հողեր”: Հողի այս վերջին տեսակը պաշտոնապես դասակարգված է հողերի ՀՀ կադաստրային դասակարգմամբ և նշանակում է հող, որը պիտանի է գյուղատնտեսության համար, սակայն չի օգտագործվում, կամ օգտագործվում է որպես իջատեղեր/մոտք դեպի ճանապարհ, ջրահեռացման առուների կամ որպես արոտավայր համայնքի որոշ անդամների համար: Ոչ գյուղատնտեսական հողերի կորուստը բաժանվում է 2՝ տեսակի՝ ա) արդյունաբերական և բ) բնակելի: “Բնակելին” ներառում է 2 հիմնական հողերի տեսակ՝ ա) բնակելի տարածք/տնամերձ և բ) տարածք հանրային շինարարության համար: Տեսակ ա)-ն նախատեսված է անհատական բնակելի շենքերի և դրա օժանդակ շինությունների համար, իսկ բ)-ն բնակչության սոցիալական կարիքների համար շենքերի կառուցման համար: Այս շենքերի սեփականատերերը կարող են հանդիսանալ պետությունը, մասնավոր անձինք կամ հասարակական կազմակերպությունները (ՀԿ-ները):

- **Ազդեցությունը գյուղատնտեսական հողերի վրա**

36. Ծրագրի արդյունքում ազդեցության կենթարկի 1,643,597մ<sup>2</sup> գյուղատնտեսական հողեր (746 հողակտոր) հետևյալ ենթարժանումով. ա) 329 հողակտոր (515,575 մ<sup>2</sup>) վարելահող (432,183մ<sup>2</sup>/297 հողակտոր՝ ռոտզելի և 83,393մ<sup>2</sup>/32 հողակտոր՝ ոչ ռոտզելի); բ) խոտհարք՝ 560մ<sup>2</sup> /2հողակտոր, գ) մրգատու այգիներ՝ 101,464 մ<sup>2</sup>/98 հողակտոր; դ) խաղողի այգիներ՝ 19,446 մ<sup>2</sup>/ 10; ե) արոտավայրեր՝ 718,071 մ<sup>2</sup>/108, գ) գյուղատնտեսական այլ հողեր՝ 288,480 մ<sup>2</sup> /197: (Մանրամասները՝ Աղյուսակ Բ1-ում)

Աղյուսակ F1. Հողի կրած ազդեցությունն ըստ հողի տեսակի և հողի զբաղեցման կարգավիճակի

Հողի տեսակը	Մասնավոր /սեփականության վկայական ու հողեր		Համայնքային հողեր								Պետական հողեր		Ընդամենը	
			Անմիջական տիրապետման		Վարձակալված		Զձևակերպված օգտագործողի կողմից օգտագործվող		Ընդհանուր համայնքային հողերը					
			քանակը	Տարածքը (մ <sup>2</sup> )	քանակը	Տարածքը (մ <sup>2</sup> )	քանակը	Տարածքը (մ <sup>2</sup> )	քանակը	Տարածքը (մ <sup>2</sup> )				
<b>A. Գյուղատնտեսական</b>														
Ոռոգելի վարելահողեր	286	393,454	8	26,209	1	4,043	2	8,477	11	38,729	0	0	297	432,183
Ոչ ոռոգելի վարելահողեր	27	52,112	6	5,889	1	25,392	0	0	7	31,281	0	0	34	83,393
Խոտհարք	2	560	0	0	0	0	0	0	0	0	0	0	2	560
Մրգատու այգիներ	97	100,873	0	0	1	591	0	0	1	591	0	0	98	101,464
Խաղողի այգիներ	9	17,673	0	0	1	1,773	0	0	1	1,773	0	0	10	19,446
Արոտավայրեր	22	45,627	85	670,808	1	1,636	0	0	86	672,444	0	0	108	718,071
Գյուղատնտեսական այլ	6	9,295	181	236,405	7	19,981	2	21,066	190	277,452	1	1,733	197	288,480
<b>Ենթարևութիան ուր A</b>	<b>449</b>	<b>619,594</b>	<b>280</b>	<b>939,311</b>	<b>12</b>	<b>53,416</b>	<b>4</b>	<b>29,543</b>	<b>296</b>	<b>1,022,270</b>	<b>1</b>	<b>1,733</b>	<b>746</b>	<b>1,643,597</b>
<b>B. Ոչ գյուղատնտեսական</b>														
Բնակելի	31	22,249	51	43,767	1	13	0	0	52	43,897	0	0	83	66,146
Արտադրական	4	5,339	3	12,861	1	4,394	0	0	4	17,255	1	1,807	9	24,401
<b>Ենթարևութիան ուր B</b>	<b>35</b>	<b>27,588</b>	<b>54</b>	<b>56,628</b>	<b>2</b>	<b>4,524</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>56</b>	<b>61,152</b>	<b>1</b>	<b>1,807</b>	<b>92</b>	<b>90,547</b>
<b>Ընդհանուրը</b>	<b>484</b>	<b>647,182</b>	<b>334</b>	<b>995,939</b>	<b>14</b>	<b>57,940</b>	<b>4</b>	<b>29,543</b>	<b>352</b>	<b>1,083,422</b>	<b>2</b>	<b>3,540</b>	<b>838</b>	<b>1,734,144</b>

• Ազդեցությունը ոչ գյուղատնտեսական հողերի վրա

37. Ծրագիրն ազդեցության կենթարկի 90,547 մ<sup>2</sup>/92 ոչ գյուղատնտեսական հողակտորներ (83 բնակելի և 9 արտադրական հողեր): Ազդեցության ենթակա 9 արտադրական հողակտորները գտնվում են Կաքավաձոր (1), Դավթաշեն (1), Փարպի (1), Կոշ (3), Ուջան (1) և Աղձք (2) համայնքներում: Ընդհանուր 645,699մ<sup>2</sup> –ուց կօտարվի միայն 24,401մ<sup>2</sup>: Իրենց օգտագործման առումով դրանք հիմնական ազդեցություն չեն կրի: Միայն մեկ հողակտոր Ուջանում, որն օգտագործվում է բիզնեսի նպատակով, կկրի եկամտային ազդեցություն: Մնացած արտադրական հողերը չեն օգտագործվում:

1.4. Կալանքի տակ գտնվող մասնավոր հողեր և հարկադիր օտարում պահանջող հողեր



- **Կալանքի տակ գտնվող մասնավոր հողեր**

38. Ծրագրի կողմից օտարման ենթակա մասնավոր հողերի մեջ 8 ընդամենը 7,265 մ<sup>2</sup> ազդեցության ենթակա տարածքով հանդիսանում են կալանքի տակ գտնվող սեփականություններ, որոնք սեփականատերերի կողմից օգտագործվել են որպես գրավի առարկա բանկից ստացված վարկի դիմաց: Բանկերի հետ համաձայնեցվել է, որ այդ հողակտորների դիմաց փոխհատուցումը ամբողջությամբ կվճարվի նրանց սեփականատերերին ԻԳ, բանկերի և սեփականատերերի հետ պայմանագրերի ստորագրումից հետո: [ տես Հավելված Ա1].

- **Բռնագրավվող հողակտորները**

39. Ընդհանուր առմամբ հողը կորցնող 91 ԱԵՏՏ-ներ կբռնագրավվեն: Դրանք ընդգրկում են ա) ԱԵԱ-ներ, ովքեր մահացել են և ժառանգները չեն հայտնաբերվել ( 31 բ), ԱԵԱ-ներ, ովքեր ապրում են ՀՀ-ից դուրս (32) և նրանց հետ կապ չի հաստատվել, կամ նրանք, ովքեր որևէ մեկին չեն լիազորել

իրենց հասանելիք փոխհատուցումը ստանալու համար; գ)անհայտ սեփականատերեր (19); դ) ԱԵԱ-ներ, ովքեր մերժել են ստորագրել արձանագրությունները (9) և/կամ պայմանագրերի նախնական տարբերակները մի քանի բանակցություններից հետո և ԻԳ կողմից ԱԵԱ-ներին շուկայական դրույքաչափերի գնահատման հետազոտության արդյունքների վերաբերյալ փաստաթղթային ապացույցի տրամադրումից հետո:

## 2. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

### 2.1. Ազդեցությանը ենթակա հողերի շենքերը և շինությունները

40. Ծրագրի արդյունքում կօտարվեն 28 շենքեր/շինություններ (ներառյալ՝ 1 պարիսպ), որոնցից երկուսը բնակելի են և 26-ը՝ ոչ բնակելի: Ծրագրի ազդեցության միջանցքում առկա շենքերն ու շինություններն ընդգրկում են 2698.9 մ<sup>2</sup> + 70 զծամետր (պատ), ինչպես ներկայացված է Աղյուսակ B2-ում ստորև: Երկու բնակելի տների սեփականատերերը կվերաբնակեցվեն:

Աղյուսակ F2. Օտարման ենթակա շենքեր և շինություններ

Շինության տեսակը	Շինությունների քանակը	Շինություններ	
		մ <sup>2</sup>	մետր
<b>I. Բնակելի</b>			
Քարե՝ բետոնե նկուղով	2	174	-
<b>II. Ոչ բնակելի</b>			
Քարե՝ բետոնե նկուղով	20	2,167.5	-
Քարից և թեթև մետաղով՝ բետոնե նկուղով	1	8	-
Մետաղական՝ բետոնե նկուղով	4	349.4	-
Պատ (զծամետր)	1	-	70
<i>Ենթաընդհանուր II.</i>	<i>26</i>	<i>2,524.9</i>	<i>70</i>
<b>Ընդամենը (I+II)</b>	<b>28</b>	<b>2698.9</b>	<b>70</b>

### 2.2. Վերաբնակեցման պահանջները և մոտեցումը

41. Երկու ԱԵՏՏ-ներ, որոնք կվերաբնակեցվեն, Կոշ համայնքից են: Երկու ԱԵՏՏ-ներից ընդհանուր առմամբ կօտարվի 3693 մ<sup>2</sup> հողատարածք 10 (1999մ<sup>2</sup> և 1694մ<sup>2</sup>՝ համապատասխանաբար) և 174 մ<sup>2</sup> շինություններ (70մ<sup>2</sup> և 104մ<sup>2</sup>՝ համապատասխանաբար)<sup>11</sup>:

42. Սույն Ծրագրի ներքո, հիմնվելով վերաբնակեցման քաղաքականության վրա, վերաբնակեցման պլան կամ հողի փոխարինման պլան չի մշակվի: Վերաբնակեցվողները կինքնավերաբնակեցվեն և, ի լրումն իրենց ազդեցության ենթակա գույքի լիարժեք

10 Այս հողի վրա ազդեցությունը ներառված է Աղյուսակ F1-ում

11 ԱԵԱ-ների հետ խորհրդակցությունների ընթացքում հաստատվեց, որ ԱԵԱ-ները կօգտագործեն վերաբնակեցման երկու տարբեր ռազմավարություններ: Մի դեպքում՝ այս պահի դրությամբ մեկը

կտեղափոխվի և կբնակվի բարեկամների հետ (հողն օտարվում է ամբողջությամբ), մյուս դեպքում ԱԵԱն պլանավորում է կառուցել նոր տուն մնացած հողատարածքի վրա (1007մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով)՝ օգտագործելով փոխհատուցման գումարը, սակայն այդ ժամանակահատվածում նրանք կապրեն իրենց պատկանող մեկ այլ մշտական տանը:

փոխհատուցման, նրանք կստանան վերաբնակեցման հատուկ օժանդակություն կանխիկով, որը կբավարարի տրանսպորտային ծախսերի համար + 1 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով գումար կենսապահովման ծախսերը հոգալու համար, քանի որ վերաբնակեցվողները նաև խիստ ազդեցության ենթակա ԱԵՏՏ-ներ են: Կտրվի նաև կենսապահովման նպաստ 6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով:

**Աղյուսակ Բ3. Վերաբնակեցվող ԱԵՏՏ-ների մանրամասները**

ԱԵՏՏ քանակը	Կորստի նկարագրությունը	Վերաբնակեցում	Փոխհատուցման մանրամասները	Տրամադրվող օժանդակությունը	Վերաբնակեցման ժամանակը
2	Վերաբնակեցվող ԱԵՏ-ներ	Ինքնավերաբնակեցում	Փոխհատուցում ազդեցության ենթակա բոլոր ակտիվների դիմաց իրենց փոխարինման արժեքով	- 1 վերականգնման նպաստ 6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով (որպես խոցելի ԱԵՏՏ-ներ); - 1 վերականգնման նպաստ տրանսպորտային ծախսերի համար և կենսապահովման ծախսերը հոգալու համար գումար մեկ ամսվա նվազագույն աշխատավարձի չափով՝ որպես վերաբնակեցվող	Պայմանագիրը ստորագրելուց հետո 14 օրվա ընթացքում

**3. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿԱԲՈՒՑՄԵՐԻ ԵՎ ԾԱՌԵՐԻ ՎՐԱ**

**3.1 Մշակաբույսերը**

43. Ծրագրային տարածքում մշակվող հիմնական մշակաբույսերն են ցորենը, գարին և առվույտը: Փաստացի ազդեցության ենթարկվող տարածքը կազմում է 219,566 մ<sup>2</sup>, իսկ ընդհանուր արտադրողականության կորուստը 99,235կգ: Վճռորոշ ազդեցությունն այն է, որ մարդիկ նաև սպառում են այս արտադրանքի որոշ մասը ընտանիքին կերակրելու նպատակով և այժմ ստիպված են լինելու փոխարինել սննդի այս աղբյուրը շուկայից գնված սննդով:

**Աղյուսակ Բ4. Հիմնական մշակաբույսերի կորուստը**

Տեսակը	Ազդեցության ենթակա տարածքը	Բերք (կգ/մ <sup>2</sup> )	Ընդհանուր կորուստները (կգ)
1. Ցորեն	50 179	0,29	14 635
2. Գարի	89 267	0,27	24 133
3. Առվույտ	67 998	0,73	49 740
4. Կորնզան	4 646	0,70	3 252
5. Կարտոֆիլ	200	2,00	400
6. Լոլիկ	1 056	2,40	2 533
7. Սմբուկ	500	2,10	1 050
8. Բանջարեղեն	300	2,20	660
9. Լոբի	300	2,60	780
10. Ելակ	5 110	0,40	2 044

11. Հարարք	10	0,80	8
<b>Ընդամենը</b>	<b>219</b>	<b>-</b>	<b>99,235</b>
	<b>566</b>		

### 3.2 Ծառերը

44. Ծրագրի ազդեցության միջանցքում առկա են 17 տեսակի մրգատու ծառեր: Սրանից 1572-ը դեղձի ծառեր են, որին հետևում են 1099 ծիրանենիները և 903 խնձորենիները, որոնք ազդեցության կենթարկվեն օտարման արդյունքում և որոնք հանդիսանում են բոլոր ծառերի հիմնական մասը (82%<sup>12</sup>): Ավելի քան 500 նորատուններ նույնպես ազդեցության կենթարկվեն

**Աղյուսակ Բ5. Մրգատու ծառերի և նորատունների կորուստը**

Տեսակը	Նորատուն կ	Բերքատու ւ	Մեծահասակ, սակայն ոչ բերքատու	Ազդեցության ենթակա ընդհանուր ծառերի թիվը
1. Խնձորենի	199	651	49	899
2. Տանձենի	52	49	7	108
3. Ծիրանենի	21	1062	16	1099
4. Դեղձենի	85	1475	12	1572
5. Ընկուզենի	67	132	16	215
6. Բալենի	12	60	0	72
7. Կեռասենի	25	32	2	59
8. Սալորենի	65	85	0	150
9. Սերկևիլ	20	96	0	116
10. Թթենի	0	20	0	20
11. Մասրենի	0	11	0	11
12. Մոշ	0	1	0	1
13. Նուշ	0	1	0	1
14. Նոենի	3	4	0	7
15. Սև սալոր	0	1	0	1
16. Տխիլ	9	17	0	26
17. Փշատենի	0	17	0	17
<b>Ընդամենը</b>	<b>558</b>	<b>3714</b>	<b>106</b>	<b>4378</b>

45. Ծրագրի արդյունքում ազդեցության կենթարկվեն 6 տեսակի փայտանյութ ծառեր և ավելի քան 1555 ծառ՝ Ծրագրի ազդեցության միջանցքում:

**Աղյուսակ Բ6. Ազդեցության ենթակա փայտանյութ ծառեր**

Տեսակը	Նորատուն կ	Միջի ն	Մե ծ	Ազդեցության ենթակա ընդհանուր ծառերը
Բարդի	737	17	13	767
Ուռենի	4	56	51	111

12 Ազդեցության ենթակա օտարվող ծառերը հիմնականում գտնվում են Ագարակում, Ուջանում, Ոսկեվազում, Կոշում, Արուճում և Աղձքում:

Տեսակը	Նորաստու կ	Միջի ն	Մե ծ	Ազդեցության ենթակա ընդհանուր ծառերը
Թեղի	108	471	23	602
Դեկորատիվ	3	33	3	39
Տույա	4	5	3	12
Վայրի խաղող	0	24	0	24
Վարդի թփեր	0	10	0	10
<b>Ընդամենը</b>	<b>856</b>	<b>606</b>	<b>93</b>	<b>1555</b>

46. Ի լրումն, ազդեցության կենթարկվեն 19,506 մ<sup>2</sup> խաղողի այգիներ և 6,485 գծամետր օժանդակ կառույցներ:

**Աղյուսակ Բ7. Ազդեցության ենթակա խաղողի այգիներ՝ ըստ գծամետրի և օտարվող տարածքի**

Գույք ը	Գծամետր	մ <sup>2</sup>
Խաղողի այգիներ (մ <sup>2</sup> )	6,485	19,506

**4. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԻԶՆԵՍԻ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ**

47. Ծրագրի արդյունքում ազդեցության ենթակա յոթ բիզնեսներից վեցը օրինականորեն գրանցված են և ունեն հարկային հայտարարագրեր, մինչդեռ մեկը օրինականորեն գրանցված է, սակայն չունի հարկային հայտարարագիր: Մեկ (1) բիզնես ենթակա է ժամանակավոր ազդեցության շինարարության ընթացքում (6 ամսվա ազդեցության), իսկ 6 բիզնեսներ կկրեն մշտական ազդեցություն: Բիզնեսի վրա ազդեցության չափը, համաձայն հարկային հայտարարագրի, ամփոփված է Աղյուսակ Բ8-ում:

**Աղյուսակ Բ8. Բիզնեսի կորուստներ. չափը և հարկային կարգավիճակը**

Բիզնեսի տեսակը	Մշտական ազդեցություն		Ժամանակավոր ազդեցություն ( ճամիս)	
	Առանց հարկային հայտարարագրի	Հարկային հայտարարագրով	Առանց հարկային հայտարարագրի	Հարկային հայտարարագրով
Վուլկանացման կետ	1	0	0	0
Վառելանյութի առևտուր	0	1	0	0
Մնդի մանրածախ առևտուր և գազայցակայան	0	1	0	0
Մնդի մանրածախ առևտուր	0	1	0	0
Վառելանյութի առևտուր, ավտոտեխսպասարկման /լվացման կետ, սննդի առևտուր	0	1	0	0



Սերմված գազի լցակայան	0	1	0	0
Հանրային սննդի կետ	0	0	0	1
<b>Ընդամենը</b>	1	5	0	1

48. **Զբաղվածության կորուստ:** Տասնութ աշխատողներ մշտական կկորցնեն իրենց աշխատանքները և մեկ աշխատող կկրի ժամանակավոր ազդեցություն շինարարության ընթացքում իր գործատուի սննդամատակարարման բիզնեսի կրած ժամանակավոր ազդեցության հետևանքով:

**Աղյուսակ Բ9. Զբաղվածության կորուստ**

Համայնքը	Աշխատողների քանակը		Ընդամենը
	Մշտական	Ժամանակավոր (6 ամիս)	
Կոշ	1	1	2
Թալին	11	-	11
Փարպի	6	-	6
<b>Ընդամենը</b>	<b>18</b>	<b>1</b>	<b>19</b>

**5. ԱԵՏՏ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ**

**5.1. ԱԵՏՏ/ԱԵԱ մարդահամար**

49. ԱԵՏՏ-ների քանակը 552 է, ներառյալ 16 համայնքներ: ԱԵԱ-ների քանակը (ֆիզիկական անիձինք) 2263 է: ԱԵՏՏ/ԱԵԱ վերաբերյալ մանրամասները ըստ ազդեցության կատեգորիայի և կրկնակի/առանց կրկնակի հաշվարկի ներկայացված են ստորև բերված Աղյուսակ Բ10-ում:

**Աղյուսակ Բ10. ԱԵՏՏ և ԱԵԱ վերաբերյալ մանրամասներն ըստ կատեգորիայի**

ԱԵԱ կատեգորիան	ԱԵՏՏ-ների քանակը		ԱԵԱ-ների զուտ քանակը	Նշումներ
	x ազդեցության տեսակը	Բացարձակ (Առանց կրկնակի հաշվարկի)		
<b>A. Հողեր</b>				
A1. Գյուղատնտեսական հողերի սեփականատերերը (մասնավոր հողեր)	493	441	1,909	Քանի որ 1 ԱԵՏՏ կարող է ունենալ մի քանի հողակտորներ, նրան ց քանակը առանց կրկնահաշվարկի մնակա է: Քանի որ 2 ընտանիք կարող են հանդիսանալ միևնույն հողակտորի սեփականատեր, ԱԵՏՏ – ների քանակը կարող է ավելին լինել հողակտորների քանակից:
A2. Գյուղատնտեսական հողերի սեփականատերերը (համայնքային հողեր)	0	0	0	Տեղական իշխանություն

A4. Բնակելի/արտադրական հողեր (մասնավոր հողեր)	38	36	114	Քանի որ 1 ԱԵՏՏ կարող է ունենալ մի քանի հողակտորներ, նրան ց քանակը առան ց կրկնահաշվարկի պակաս է: Քանի որ 2 ընտանիք կարող են հանդիսանալ միևնույն հողակտորի սեփականատեր, ԱԵՏՏ – ների քանակը կարող է ավելին լինել հողակտորների քանակից:
A4. Բնակելի/արտադրական հողեր (համայնքային հողեր)	0	0	0	Տեղական իշխանություն
A.5. Պետական հողեր	0	0	0	
<b>Ենթաընդհանուր (A)</b>	<b>531</b>	<b>477</b>	<b>2,023</b>	

ԱԵԱ կատեգորիան	ԱԵՏՏ-ների քանակը		ԱԵԱ-ների զուտ քանակը	Նշումներ
	x ազդեցության տեսակը	Բացարձակ (Առանց կրկնակի հաշվարկի)		
<b>Բ. Վարձակալներ/չձևակերպված օգտագործողներ</b>				
B1. Վարձակալում (համայնքային հողեր)	14	13	57	
B2. Համայնքային հողերի չձևակերպված օգտագործողներ	4	4	21	
B.3 Մասնավոր հողերի չձևակերպված օգտագործողներ	23	23	95	
<b>Ենթաընդհանուր (B)</b>	<b>41</b>	<b>40</b>	<b>173</b>	
<b>Կ. Մշակաբույսեր/ծառեր</b>				
C1. Տարեկան մշակաբույսեր	216	198	822	Ներառվ է A և B ած բաժիններում
C2. Մրգատու ծառեր	139	128	621	Ներառվ է A և B ած բաժիններում
C3. Փայտանյութ ծառեր	40	40	108	Ներառվ է A և B ած բաժիններում
<b>Ենթաընդհանուր (C)</b>	<b>369</b>	<b>387</b>	<b>1435</b>	Առանց կրկնահաշվարկի
<b>Դ. Շինություններ</b>				
D.1 Բնակելի	2	2	9	Ներառված է A բաժնում
D.2 Ոչ բնակելի	11	11	44	Ներառված է A բաժնում
<b>Ենթաընդհանուր (D)</b>	<b>13</b>	<b>13</b>	<b>53</b>	Ներառված է A բաժնում
<b>Ե. Բիզնեսի/եկամտի կորուստներ</b>				
E1. Ժամանակավոր կորուստներ հարկային հայտարարագրով	5	5	21	Ներառված է A բաժնում
E2. Մշտական կորուստներ հարկային հայտարարագրով	1	1	5	Ներառված է A բաժնում
E3. Մշտական կորուստներ առանց հարկային հայտարարագրի	1	1	4	Ներառված է A բաժնում
E4. Վարձու բանվորներ / աշխատողներ	19	19	67	
<b>Ենթաընդհանուր (E)</b>	<b>26</b>	<b>26</b>	<b>67</b>	
<b>Բ. Խոցելի/խիստ ազդեցության ենթակա</b>				
F.1 Խոցելի	103	94	422	Ներառվ է A և B ած բաժիններում
F2 Խիստ ազդեցության ենթակա	326	326	1,310	Ներառվ է A և B ած բաժիններում

G. Ընդամենը (A+B+C+D+E)	943	552	2,263	Առանց կրկնահաշվարկի
-------------------------	-----	-----	-------	---------------------

### 5.2 Խիստ ազդեցության ենթակա տնային տնտեսություններ

50. Ընդհանուր առմամբ 326 ԱԵՏՏ-ներ ենթակա են խիստ ազդեցության՝ կորցնելով գյուղատնտեսական հողերի ավելի քան 10%-ը կամ որոնց համար պահանջվում է վերաբնակեցում:

#### Աղյուսակ Բ11. ԱԵՏՏ-ների քանակն ըստ ազդեցության աստիճանի

Ազդեցության աստիճանը	No
Խիստ ազդեցության ենթակա ՏՏ-ներ, որոնք կորցնում են գյուղատնտեսական հողերի ավելի քան 10%-ը	324
Վերաբնակեցվող խիստ ազդեցության ենթակա ՏՏ-ներ	2
Ընդամենը	326

### 5.3 Խոցելի ԱԵՏՏ-ներ

51. 54 ԱԵՏՏ-ներ կփոխհատուցվեն որպես խոցելի և աղքատ ԱԵՏՏ-ներ, քանի որ նրանք

գրանցված են Հնտանեկան նպաստի համակարգում<sup>13</sup>: Նաև, 49 ԱԵՏՏ-ներ կփոխհատուցվեն որպես կանանց և տարեցների կողմից ղեկավարվող ընտանիքներ: Քանի որ 9 ԱԵՏՏ-ները և՛ միայնակ կնոջ և՛ տարեցների կողմից ղեկավարվող ԱԵՏՏներ են, ընդհանուրը կազմում է 94 խոցելի ԱԵՏՏ:

**Աղյուսակ Բ12. Խոցելի ԱԵՏՏ-ներ**

Տեսակը	Քանակը
Աղքատ ԱԵՏՏ-ներ* <sup>14</sup>	54
Կանանց և տարեցների կողմից ղեկավարվող ՏՏ-ներ	49
<b>Ընդհանուր խոցելի ԱԵՏՏ-ները առանց կրկնահաշվարկի</b>	<b>94</b>
<i>Նշում* ԸՆՀ-ում գրանցված ԱԵՏՏ-ները</i>	

#### 5.4 Ազդեցությունը տեղաբնիկների վրա

52. Ծրագրային տարածքում առկա չեն տեղաբնիկ խմբեր՝ համաձայն ԱԶԲ համապատասխան քաղաքականության սահմանման: ԱԵՏՏ-ների 95 %-ը հայեր են, իսկ 5 %-ը եզդիներ [Աղյուսակ Բ13]: Եզդիները կրոնական փոքրամասնություն են և կազմում են Հայաստանի ընդհանուր բնակչության 1.3%-ը: Նրանք լիովին ընդգրկված են Հայաստանի ինստիտուցիոնալ, մշակութային և տնտեսական գործունեության մեջ և չեն կարող դասակարգվել որպես տեղաբնիկներ՝ համաձայն տեղաբնիկների վերաբերյալ ԱԶԲ-ի քաղաքականության: Ուստի, ԱԶԲ այս քաղաքականությունը չի կիրառվում:

**Աղյուսակ Բ13. ԱԵՏՏ-ների էթնիկ ծագումը**

Էթնիկ ծագումը	ԱԵՏՏ-ներ
Հայեր	2171
Եզդիներ	92
<b>Ընդամենը</b>	<b>2263</b>

#### 5.5 ԱԵԱ-ների սեռը

53. ԱԵԱ-ների մեջ 1151 տղամարդիկ են, իսկ 1112 կանայք [Աղյուսակ Գ2]:

**Աղյուսակ Բ14. ԱԵՏՏ-ներն ու ԱԵԱ-ներն ըստ սեռի**

Ընդհանուր ԱԵՏՏ-ները	Տղամարդ ԱԵԱ-ներ	Կին ԱԵԱ-ներ	Ընդհանուր ԱԵԱ-ները
536	1151	1112	2263

### 5. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱԵՏՏ/ԱԵԱ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

54. Ստորև բերված Աղյուսակ Բ15-ն ամփոփում է ազդեցությունները և ԱԵՏՏ/ԱԵԱ-ների թվերը:

<sup>13</sup> Ամենախոշոր պետական սոցիալական աջակցության ծրագիրը Հայաստանում, որը գործում է 1999 թվականից:

<sup>14</sup> Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տրամադրել է տեղեկատվություն աղքատ ԱԵՏՏ-ների վերաբերյալ: Լրացուցիչ, ԾԻԿ-ը ՄՏՀ միջոցով հավաքագրել է տեղեկատվություն ԱԵՏՏ-ների սոցիալական վիճակի վերաբերյալ և հետազոտության ընթացքում առանձնացված աղքատ ԱԵՏՏ-ների ցուցակը ներկայացրել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն տեղեկատվությունը ստուգելու և հնարավորության

դեպքում որոշ ԱԵՏՏ-ների ԸՆՀ-ում ընդգրկելու համար: Վերջնական թվերը ներկայացված են Աղյուսակ Բ15-ում:

Աղյուսակ F15. Ազդեցությունների և ԱԵՏՏ/ԱԵԱ-ների մարդահամարի ամփոփում

Ազդեցության կատեգորիան	Հողակտորներ/միավորներ	ԱԵՏՏ-ներ	Տարածքը մ <sup>2</sup>	Մեկնաբանություն/ միավորի նկարագրություն
<b>A. Հողեր</b>				
A1. Գյուղատնտեսական (մասնավոր հողեր)	449	441	619,594	Մինույն ԱԵՏՏ ունի ավելի քան 1 հողակտոր
A2. Գյուղատնտեսական (համայնքային հողեր)	296	16	1,022,270	Սեփականատերը տեղական իշխանությունն է
A3. Բնակելի/արտադրական (մասնավոր հողեր)	35	36	27,588	Մեկ բնակելի հողի սեփականատերերն 2 ընտանիքներ են
A4. Բնակելի/արտադրական (համայնքային հողեր)	56	10	61,152	Սեփականատերը տեղական իշխանությունն է
A5. Պետական	2	0	3,540	
<b>Ենթաընդհանուր (A)</b>	<b>838</b>	<b>493</b>	<b>1,734,144</b>	
<b>B. Շինություններ</b>				
B1. Բնակելի	2	2	3,693	
B2. Ոչ բնակելի	11	11	44,031	
<b>Ենթաընդհանուր (B)</b>	<b>13</b>	<b>13</b>	<b>47,724</b>	
<b>C. Տարեկան մշակաբույսեր</b>	174	198	219,566	ԱԵՏՏ-ների քանակը ավելին է քան հողակտորներինը, քանի որ նույն հողակտորը պատկանում է մի քանի ընտանիքների:
<b>D. Մրգատու ծառեր</b>	110	128	4,378 (միավորներ)	
<b>E. Փայտանյութ ծառեր</b>	40	40	1,555 (միավորներ)	
<b>F. Բիզնեսի/եկամտի կորուստներ</b>				
F1. Ժամանակավոր կորուստներ հարկային հայտարարագրով	5	5	չ/կ	Բիզնեսների քանակը
F2. Մշտական կորուստներ հարկային հայտարարագրով	1	1	չ/կ	
F3. Մշտական կորուստներ առանց հարկային հայտարարագրի	1	1	չ/կ	
<b>Ենթաընդհանուր (F)</b>	<b>7</b>	<b>7</b>	<b>չ/կ</b>	



<b>G. Աշխատանքի կորուստ</b>	19	19	չ/կ	Աշխատողների քանակը
<b>Ի. Վարձակալներ/ Չձևակերպված օգտագործողներ</b>				
H1. Վարձակալում (համայնքային հողեր)	14	13	57,940	ԱԵՏՏ քանակը պակաս է հողակտորների քանակից, քանի որ նույն ԱԵԱ միաժամանակ ունի 2 տարբեր հողակտորների վարձակալություն:
H2. Ուզուֆրուկտ օգտագործող (մասնավոր հողեր)	23	23	21,776	
H3. Ուզուֆրուկտ օգտագործող (համայնքային հողեր)	4	4	29,543	

Ազդեցության կատեգորիան	Հողակ տ որներ/ միավոր ներ	ԱԵՏՏ - ներ	Տարածք ը մ <sup>2</sup>	Մեկնաբանությու ն/ միավորի նկարագրություն
<b>I. Խոցելի/Խիստ ազդեցության ենթակա ՏՏ-ներ</b>				
I1. Խոցելի ԱԵՏՏ	չ/կ	94	չ/կ	
I2. Խիստ ազդեցության ենթակա ԱԵՏՏ-ներ	չ/կ	326	չ/կ	
<b>J. Ընդհանուր ԱԵՏՏ-ները</b>	չ/կ	<b>536</b>	չ/կ	Առանց կրկնահաշվարկի
<b>K. Ընդհանուր ԱԵՏՏ-ները ներառյալ համայնքները</b>	չ/կ	<b>552</b>	չ/կ	Առանց կրկնահաշվարկի

**Գ. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

**I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

55. Սոցիալ-տնտեսական հետազոտության (ՄՏՀ) հիմնական նպատակն է ապահովել ազդեցության ենթակա բնակչության և համայնքների սոցիալ-տնտեսական գլխավոր առանձնահատկությունների՝ կրթական մակարդակի, ապրուստի միջոցների, եկամտի աղբյուրների, աղքատության/եկամտի մակարդակների, տան տեսակի և հողի սեփականության ձևի նկարագրությունը: ՄՏՀ-ն, որպես հիմք ՀՕՏԾ բյուջեի պատրաստման համար, նաև առանձնացրել է խոցելի և ռիսկային խմբերը, որոնք լրացուցիչ օժանդակության կարիք ունեն<sup>15</sup>:

56. Մանրամասն չափազանց հետազոտությունը (ՄՉՀ), որը ներառում է ազդեցության ենթակա տնային տնտեսությունները (527 ԱԵՏՏ) 100%-ով, իրականացվել է ԾԻԿ-ի կողմից նշանակված Խորհրդատուի (Մար-Մոս ՄՊԸ) միջոցով: Մինևույն գործակալության կողմից լրացուցիչ իրականացվեց Սոցիալ-տնտեսական հետազոտության (ՄՏՀ) Ծրագրի Ազդեցության միջանցքի (ԱՄ) բոլոր 16 համայնքներում: ՄՏՀ-ն ընդգրկում է բոլոր ազդեցության ենթակա ՏՏ-ների 77,9%-ը (413 ԱԵՏՏ-ներ): Ստորև բերված աղյուսակի տվյալներն արտացոլում են 413 ԱԵՏՏ-ների անդամների հետազոտությունը (1,799 ԱԵԱ-ներ): Սոցիալ-տնտեսական խնդիրների վերաբերյալ ամենատեղեկացված ԱԵՏՏ անդամը ընտրվեց որպես հարցումների պատասխանող [Հավելված C1. Սոցիալ-տնտեսական հետազոտության մեթոդալոգիայի հաշվետվություն]:

57. Հետազոտության հարցումներն իրականացվեցին օգտագործելով ՏՏ հետազոտության հարցաշար և տեղեկությունները հավաքագրվեցին վերապատրաստված հարցազրույցավարների կողմից, որոնք մեծ փորձ ունեին անցկացնելու ստանդարտացված առերես հարցազրույցներ Հայաստանի գյուղական վայրերում [Հավելված Գ2. Սոցիալ-տնտեսական հետազոտության հարցաշար]:

**II. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱԵՏՏ) ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

**1. ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱԶՄԸ**

58. Հետազոտության ենթարկված 413 ԱԵՏՏ-ներն ընդգրկում են 1799 անձ՝ 893 տղամարդ (49.6 %) և 906 կին (50.4 %): ԱԵՏՏ-ն միջինում կազմված է 4.3 անձից՝ 2.64 տղամարդ և 2.74 կին:

**2. ԱԵՏՏ գլխավորների տարիքը**

59. Տնային տնտեսությունները ղեկավարողների մեծամասնությունը (26.9%) 46-55 տարիքային խմբում են, որին հետևում են տարեցների՝ 66 տարեկան և բարձր տարիքային խմբի անձանց կողմից ղեկավարվող ՏՏ-ները (23.7%), որոնց մեջ կանայք կազմում են 53.1%: 21-65 տարիքային խմբում մոտ 46.9%-ում ղեկավարում են կանայք, իսկ 85.2%-ում ղեկավարում են տղամարդիկ, ինչը ցույց է տալիս տվյալ տարածաշրջանում տղամարդկանց աշխատանքային զբաղվածության ավելի բարձր մակարդակը կանանց համեմատությամբ: Ընտանիքների գլխավորումը հիմնականում ասոցացվում է Հայաստանի գյուղական համայնքներին բնորոշ մշակութային առանձնահատկությունների հետ: Այս դեպքում ընտանիքի գլխավորը համարվում է ընտանիքի տարեց անդամը՝ անկախ եկամուտ վաստակելու գործընթացին նրա ունեցած մասնակցությունից:

<sup>15</sup> Մանրամասները ներկայացված են Գլուխ Բ-ում՝ Ազդեցությունների գնահատումը:

**Աղյուսակ Գ1. ԱԵՏՏ գլխավորի տարիքն ըստ սեռի**

Տարիքային խումբը	ԱԵՏՏ տղամարդու գլխավորությամբ		ԱԵՏՏ կնոջ գլխավորությամբ		Ընդամենը	
	No	%	No	%	No	Տոկոս
21-35	46	14.5	5	5.2	51	12.3
36-45	77	24.3	12	12.5	89	21.5
46-55	96	30.3	15	15.6	111	26.9
56-65	51	16.1	13	13.5	64	15.5
66+	47	14.8	51	53.1	98	23.7
<b>Ընդամենը</b>	<b>317</b>	<b>100.0</b>	<b>96</b>	<b>100.0</b>	<b>413</b>	<b>100.0</b>

60. Ստորև բերված Աղյուսակ Գ2-ը ցույց է տալիս ԱԵԱ-ների ընդհանուր քանակը՝ ըստ տարիքային խմբերի և սեռի: Բաշխվածությունը քիչ թե շատ միջինացված է սեռերի միջև տարիքային խմբերի մեծամասնությունում: Բացառություն են կազմում 6-15 և 36-45 տարիքային խմբերը, որտեղ արական սեռի ներկայացուցիչներն ավելի մեծ թիվ են կազմում (16.5% և 15.2%՝ համապատասխանաբար), քան իգական սեռի ներկայացուցիչները (13.8% և 12.7%՝ համապատասխանաբար), իսկ 66 և բարձր տարիքային խմբում կանայք ավելի մեծ թիվ են կազմում (10.2%), քան տղամարդիկ (5.8%): Ազդեցության ենթակա տնային տնտեսություններում կախյալ բնակչության խմբում կանայք մեծամասնություն են կազմում:

**Աղյուսակ Գ2. ԱԵԱ-ների տարիքային դասակարգումը**

Տարիքային խմբերը	Արական		Իգական		Ընդամենը	
	No	%	No	%	No	Տոկոս
0-5	74	8.3	81	8.9	155	8.6
6-15	147	16.5	125	13.8	272	15.1
16-24	159	17.8	157	17.3	316	17.6
25-35	151	16.9	158	17.4	309	17.2
36-45	136	15.2	115	12.7	251	14.0
46-55	118	13.2	122	13.5	240	13.3
56-65	56	6.3	56	6.2	112	6.2
66 +	52	5.8	92	10.2	144	8.0
<b>Ընդամենը</b>	<b>893</b>	<b>100.0</b>	<b>906</b>	<b>100.0</b>	<b>1.799</b>	<b>100.0</b>

**3. ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ**

61. Ընդհանուր կրթական մակարդակը բավականին բարձր է ազդեցության ենթակա տնային տնտեսությունները ղեկավարող անձանց շրջանում: Բոլոր տղամարդիկ կրթված են և միայն մեկ կին էր, որ կրթված չէր: ԱԵՏՏ գլխավորների մեծամասնությունն ուներ միջնակարգ (51.8%) և միջնակարգ մասնագիտացված կրթություն (20.3%), որոնց հետևում են 17.2% կազմող բարձրագույն կրթություն ունեցող ՏՏ գլխավորները: ՏՏ գլխավորների շրջանում միջնակարգ կրթություն ունեցողներն ավելի շատ են տղամարդկանց (53.3%), քան կանանց մեջ (46.9%): Կանայք համեմատաբար ավելի շատ են (12.5%)՝ «թերի միջնակարգ կրթություն» կատեգորիայում, քան տղամարդիկ (4.1%): Բարձրագույն կրթություն ստացած ԱԵՏՏ գլխավորները կազմում են 18.9%՝ համեմատած 11.5% կազմող կանանց հետ: Ոչ մի ԱԵՏՏ չունի հետբուհական որակավորում: Մանրամասնությունները ներկայացված են Աղյուսակ Գ3-ում:

Աղյուսակ Գ3. ԱԵՏՏ-ների գլխավորների կրթությունն ըստ սեռի

Կրթական մակարդակը	ԱԵՏՏ տղամարդ գլխավորներ		ԱԵՏՏ կին գլխավորներ		Ընդհանուր ԱԵՏՏ գլխավորները	
	No	%	No	%	No	Տոկոս
Միջնակարգ	169	53.3	45	46.9	214	51.8
Միջնակարգ	66	20.8	18	18.8	84	20.3
Բարձրագույն	60	18.9	11	11.5	71	17.2
Թերի միջնակարգ	13	4.1	12	12.5	25	6.1
Տարրական	3	0.9	8	8.3	11	2.7
Թերի բարձրագույն	6	1.9	1	1.0	7	1.7
Կրթություն չստացած	0	0.0	1	1.0	1	0.2
Հետբուհական	0	0.0	0	0.0	0	0.0
<b>Ընդամենը</b>	<b>317</b>	<b>100.0</b>	<b>96</b>	<b>100.0</b>	<b>413</b>	<b>100.0</b>

62. 1799 ԱԵԱ-ներից 36%-ն ունեն միջնակարգ կրթություն, 13.5%-ը՝ լրացուցիչ մասնագիտական կրթություն, 13.7%-ը՝ բարձրագույն կրթություն: Միջնակարգ և բարձրագույն կրթության կատեգորիաներում տղամարդկանց և կանանց ցուցանիշների հարաբերակցությունը ցույց է տալիս գրեթե հավասար համամասնություն: Միջնակարգ մասնագիտական կատեգորիայում կանայք ունեն ավելի լավ ցուցանիշ՝ 16%, մինչդեռ տղամարդիկ՝ 11%: «Թերի միջնակարգ» կրթության կատեգորիայում տղամարդիկ կազմում են 15.7%, իսկ կանայք՝ 12.4%: Տվյալ համայնքներում մինչև 6 տարեկան երեխաները այս կատեգորիայում մեծ թիվ են կազմում՝ 156 (8.7%), աղջիկները՝ 9.1% , տղաները՝ 8.3%:

Աղյուսակ Գ4. ԱԵՏՏ անդամների կրթությունն ըստ սեռի

Կրթական մակարդակը	Արական		Իգական		Ընդհանուր	
	No	%	No	%	No	Տոկոս
Միջնակարգ	338	37.8	310	34.2	648	36.0
Միջնակարգ մասնագիտական	98	11.0	145	16.0	243	13.5
Բարձրագույն	124	13.9	123	13.6	247	13.7
Թերի միջնակարգ	140	15.7	112	12.4	252	14.0
Տարրական	73	8.2	85	9.4	158	8.8
Թերի բարձրագույն	44	4.9	44	4.9	88	4.9
Կրթություն չստացած	1	0.1	5	0.6	6	0.3
Հետբուհական	1	0.1	0	0.0	1	0.1
Կիրառելի չէ (մինչև 6 տարեկան)	74	8.3	82	9.1	156	8.7
<b>Ընդամենը</b>	<b>893</b>	<b>100.0</b>	<b>906</b>	<b>100.0</b>	<b>1,799</b>	<b>100.0</b>

#### 4. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

63. ԱԵՏՏ-ների գլխավորների մոտ 80%-ն ունի աշխատանք: Տղամարդկանց աշխատանքային զբաղվածությունն ավելի մեծ թիվ է կազմում (66%), քան կանանցը (13.6%): Այս կատեգորիայում կենսաթոշակառու կանանց և տղամարդկանց տոկոսային հարաբերությունը գրեթե նույնն է: Չի աշխատում և աշխատանք չի փնտրում ԱԵՏՏ գլխավորների փոքր մասը (8, 1.9%), իսկ մոտ 25-ը (6.1%) փնտրում է աշխատանք: Հարցվածներից երկուսը մերժեցին պատասխանել:

**Աղյուսակ Գ5. ԱԵՏՏ գլխավորների զբաղվածության կարգավիճակն ըստ սեռի**

Զբաղվածության կարգավիճակը	ԱԵՏՏ տղամարդ		ԱԵՏՏ կին		Ընդհանուր	
	No	%	No	%	No	%
Զբաղված	271	65.9	56	13.6	327	79.6
Կենսաթոշակառու	60	14.6	57	13.9	117	28.5
Անգործ են և աշխատանք չեն փնտրում <sup>16</sup>	5	1.2	3	0.7	8	1.9
Գործազուրկ են և փնտրում են	21	5.1	4	1	25	6.1
<b>Ընդհանուր ԱԵՏՏ-ները</b>	<b>315</b>	<b>76.6</b>	<b>96</b>	<b>23.4</b>	<b>411</b>	<b>100.0</b>
<i>Նշում. Երկու ԱԵՏՏ-ում հարցվածները մերժեցին պատասխանել զբաղվածությանը վերաբերվող հարցին:</i>						

64. Ընտանիքի այլ անդամների շրջանում ավելի քան 51%-ն ուներ աշխատանք և տղամարդկանց ու կանանց զբաղվածության համամասնությունը գրեթե հավասար էր (505, 28% և 413, 23%՝ համապատասխանաբար): Մեծ թվով կենսաթոշակառուներ (181, 10%), որտեղ կանայք (112, 6.2%) ավելի մեծ թիվ են կազմում, քան տղամարդիկ (69, 3.85%), ընտանիքի եկամտին օժանդակում են իրենց կենսաթոշակով: Մեծ թվով կանայք տնային տնտեսուհիներ են (104, 5.8%), որոնք հիմնականում զբաղվում են կենցաղային աշխատանքով: Մոտ 7% (126) ընտանիքի անդամները փնտրում են աշխատանք և այստեղ տղամարդկանց և կանանց թիվը գրեթե հավասար է (60, 3.3% և 66, 3.7%՝ համապատասխանաբար): ՏՏ չորս անդամներ մերժեցին պատասխանել:

**Աղյուսակ Գ6. ԱԵՏՏ անդամների զբաղվածության կարգավիճակը՝ ըստ սեռի և տոկոսի**

Զբաղվածության կարգավիճակը	ԱԵՏՏ տղամարդ		ԱԵՏՏ կին		Ընդհանուր	
	գլխավորներ		գլխավորներ			
	No	%	No	%	No	%
Զբաղված	505	28.1%	413	23.0%	918	51.1%
Կենսաթոշակառու	69	3.8%	112	6.2%	181	10.1%
Անգործ են և աշխատանք չեն	202	11.3%	195	10.9%	397	22.1%
Գործազուրկ են և փնտրում են	18	1.0%	104	5.8%	122	6.8%
Զբաղված	60	3.3%	66	3.7%	126	7.0%
Զինձառայող	31	1.7%	0	0.0%	31	1.7%
Կիրառելի չէ <sup>18</sup> 0 – 6 տարեկան	76	4.2%	83	4.6%	159	8.9%
<b>Ընդհանուր ԱԵՏՏ-ները</b>	<b>891</b>	<b>49.6%</b>	<b>904</b>	<b>50.4%</b>	<b>1795</b>	<b>100.0%</b>
<i>Նշում. ԱԵՏՏ 4 անդամներ մերժեցին պատասխանել:</i>						

**5. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՌԻ ԱՅԼ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ<sup>19</sup>**

65. 2010թ. կեսերին անցկացված USZ-ն ցույց տվեց գործող հաղորդողիների առկայությունը: Էլեկտրականությունն ու հեռախոսակապը, հատկապես բջջային հեռախոսները հասանելի են բոլորի համար: ՏՏ-ների կեսից ավելին ունի բնական գազի մատակարարում: ՏՏ-ների 75%-ից ավելին ունի խմելու ջուր: Որոշ բողոքներ եղան ջրի ոչ մշտական մատակարարման վերաբերյալ: ՏՏ-ների կեսից ավելին ապահովված չէ ջեռուցման համակարգով, տաք ջրով և կոյուղով:

66. ԱԵՏՏ-ների մեծամասնությունն ապրում է սեփականաշնորհված առանձնատներում, որոշ մասը պետական բազմաբնակարան շենքերում, մի քանիսն իրենց ընկերների և բարեկամների հետ,

<sup>16</sup> Հիմնականում տնային տնտեսուհիները և 18 տարեկանից բարձր երեխաները, ովքեր ապրում են ծնողների հետ և աշխատանք չեն փնտրում:

<sup>17</sup> Հիմնականում տնային տնտեսուհիները և 18 տարեկանից բարձր երեխաները, ովքեր ապրում են ծնողների հետ և աշխատանք չեն փնտրում:

<sup>18</sup> 0 – 6 տարեկան երեխաներ, հաշմանդամ և ֆիզիկապես անաշխատունակ մարդիկ

<sup>19</sup> Գլուխ C-ի 5 և 6 ենթագլուխների տեղեկատվությունը վերցված է նախկին Միջանկյալ ՀՕՏՕ հաշվետվությունից (ՀՕՏՕ Հ-Հ, 2010թ. օգոստոս): Վերջինի ազդեցության ենթակա տարածքները

գրեթե նույնն են, ինչպես փոփոխված ջրագծի նախագծի շրջանակներում:

իսկ որոշ մասն ապրում է վարձակալված բնակարաններում:

67. Պատասխանողների կեսից ավելին իրենց բնակարանային պայմանները գնահատեցին բավարար, մինչդեռ SS-ների զգալի տոկոսն իրենց բնակարանային պայմանները գնահատեցին ոչ բավարար:

## **6. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ**

### **6.1 Կրթական ծառայություններ**

68. Ընդհանուր առմամբ կրթական ծառայությունը հասանելի է հետազոտության ենթարկված բոլոր համայնքներում, և հեռավորությունը մինչև մոտակա միջնակարգ դպրոցը 7-25 կմ է: Պատասխանողների մեծամասնությունը հիմնականում բավարարված է մատուցվող կրթական ծառայության որակից:

### **6.1 Առողջապահական ծառայություններ**

69. Առաջին բուժօգնության ծառայությունները/ամբուլատոր բուժ. հիմնարկները հասանելի են հետազոտության ենթարկված բոլոր համայնքներում: Այնուամենայնիվ, հիվանդանոցները/կլինիկաները գործում են հիմնականում քաղաքային համայնքներում և գյուղական համայնքներից հեռավորությունը մինչև մոտակա հիվանդանոցը տատանվում է 7-ից մինչև 28 կմ: Պատասխանողները նշեցին, որ նրանք խուսափում են այցելել բժիշկներին հիմնականում ֆինանսական դժվարությունների պատճառով: Հետևաբար, SS-ները գերադասում են այցելել պետական հաստատություններ, քանի որ ընդհանուր առմամբ նրանց գոհունակության մակարդակը բավականին ցածր է:

## **7. ԿԵՆՍԱԿԱՆԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ԵԿԱՄՏԻ ԱՂԲՅՈՒՐԸ**

70. Գյուղատնտեսությունը, ինչպես նաև անասնապահությունը կարևոր դեր ունեն ԱԵՏՏ-ների ապրուստի ապահովման գործում՝ աշխատանքով ապահովելու միջոցով լուծելով գործազրկության հետ կապված խնդիրը: Հետևաբար, գյուղատնտեսությունից և անասնապահությունից ստացվող եկամտի նույնիսկ փոքր անկումը հավանաբար բացասականորեն կանդրադառնա նրանց կյանքի որակի վրա: Քանի որ գյուղատնտեսությունը համայնքների և հատկապես ԱԵՏՏ-ների համար հանդիսանում է հենարան, հետազայում հողակտորների չափերի նվազեցումը կարող է հանգեցնել զբաղվածության մակարդակի նվազեցմանը:

71. 61%-ից ավելին գյուղատնտեսությունը համարում են որպես առաջնահերթ և հիմնական գործունեություն, ինչպես նաև եկամտի աղբյուր: Անասնապահության հետ միասին այն մոտավորապես կազմում է 63%: Կենսապահովման համար մյուս կարևոր գործունեությունը, որը հետևում է վերջինիս, 84%-ի ընկալմամբ վճարովի աշխատանքն է: Դասակարգելով ըստ կարևորության մեծամասնության համար ապրուստի և եկամտի հիմնական աղբյուրները երեքն են՝ գյուղատնտեսությունը, անասնապահությունը և վճարովի աշխատանքը: Ի լրումն վերոնշյալի՝ մոտ 7.5%-ը որպես իրենց եկամտի հիմնական աղբյուր նույնպես ստանում են կենսաթոշակ և այլ պետական աջակցություն:

72. Ստորև բերված Աղյուսակ Գ8-ում և Գ9-ում, այնուամենայնիվ, երևում է, որ ԱԵՏՏ-ների ոչ գյուղատնտեսական գործունեությունից ստացված կանխիկ/գումարային եկամուտները գերազանցում են գյուղատնտեսական եկամուտներին: Հնարավոր է, որ սա պայմանավորված է հետազոտության մեթոդաբանական սահմանափակումներով: ԱԵՏՏ-ներն ի վիճակի չեն հաշվարկել իրենց սպառման համար օգտագործված գյուղատնտեսական արտադրանքը, ինչպես նաև հաճախ դժվար է ամրագրել գումարները արտադրության ամենամյա տատանումների



պատճառով: Այս ամենի հետ մեկտեղ ֆերմերները չունեն գյուղատնտեսական բյուջեն հաշվելու սովորություն:

73. ԱԵՏՏ-ների եկամուտների մոտ 47.7%-ը գյուղատնտեսական եկամուտներն են, որը չի ընդգրկում սպառված արտադրանքի գումարը: Յուրաքանչյուր տնային տնտեսություն գյուղատնտեսությունից ուղղակիորեն կամ անուղղակի ստանում է որոշակի եկամուտ կամ հողագործության ու անասնապահության, կամ էլ գյուղատնտեսական արտադրանքների վաճառքի միջոցով: Ոչ գյուղատնտեսական եկամուտը կարևոր է տնային տնտեսությունների համար, քանի որ այն համարվում է կայուն կանխիկ եկամուտ և ԱԵՏՏ-ները կարևորում են վճարովի աշխատանքից, կենսաթոշակներից, արտերկրում աշխատող ընտանիքի անդամներից ստացվող եկամուտները, որոնք կազմում են ընդհանուր միջին եկամտի մոտ 52.3%-ը:

74. ԱԵՏՏ-ների շրջանում ընտանիքի միջին տարեկան եկամուտը 1,893,844.1 ՀՀ դրամ է, որը լավ միջին եկամուտ է՝ հաշվի առնելով տվյալ տարածքում աղքատության ցածր մակարդակը: Որոշ համայնքներ ցույց են տալիս շատ բարձր միջին եկամուտներ: Դրանք են Աղձքը և Կոշը 5,779,550, 4,134,881.3 ՀՀ դրամ եկամուտներով՝ համապատասխանաբար, որին հետևում են Ներքին Սասնաշենն ու Ներքին Բազմաբերդը 2,220,000 և 2,089,640.7 ՀՀ դրամ եկամուտներով՝ համապատասխանաբար: Բացի Ներքին Բազմաբերդից, որն ամբողջությամբ կախված է գյուղատնտեսությունից, մյուս երեքն ունեն բարձր միջին եկամուտ ոչ գյուղատնտեսական գործունեությունից:

**Աղյուսակ Գ7. Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական գործունեությունից ստացվող մզին եկամուտը**

Համայնքը	Ոչ գյուղատնտ. գործունեությունից ստացվող միջին եկամուտ՝ ըստ ՏՏ-ի (%)	Ոչ գյուղատնտ. գործունեությունից ստացվող միջին եկամուտ (ՀՀ դրամ)	Գյուղատնտ. գործունեությունից ստացվող միջին եկամուտ՝ ըստ ՏՏ-ի (%)	Գյուղատնտ. գործունեությունից ստացվող միջին եկամուտ (ՀՀ դրամ)	Ընդհանուր միջին եկամուտ՝ ըստ ՏՏ-ի	Ընդհանուր միջին եկամուտ՝ ըստ ՏՏ-ի (ՀՀ դրամ)
1. Ոսկեվազ	46	1,290,195.20	54	917,685.00	19	2,207,880.20
2. Աղձք	43.2	3,912,883.30	56.8	1,866,666.70	4	5,779,550.00
3. Փարպի	29.7	1,463,500.00	70.3	1,200,000.00	4	2,663,500.00
4. Կոշ	42.1	2,711,686.90	57.9	1,423,194.40	33	4,134,881.30
5. Արուճ	48.4	1,084,413.60	51.6	877,114.80	17	1,961,528.40
6. Շամիրամ	91.2	112,105.30	8.8	1,012,580.70	19	1,124,686.00
7. Ագարակ	42.1	961,192.10	57.9	785,969.10	58	1,747,161.20
8. Ուջան	61.4	594,823.10	38.6	999,166.50	143	1,593,989.60
9. Դավթաշեն	40.4	1,134,766.00	59.6	525,356.20	10	1,660,122.20
10. Եղնիկ	46.5	1,010,590.00	53.5	538,222.20	11	1,548,812.20
11. Ներքին Սասնաշեն	0	0.00	100	2,220,000.00	1	2,220,000.00
12. Կաքավաձոր	35	1,026,227.7	65	594,000.00	6	1,620,227.7

		0				0
13. Ներքին Բազմաբերդ	40.6	1,429,222.2 0	59.4	660,418.50	23	2,089,640.7 0
14. Կաթնաղբյուր	41.5	888,092.40	58.5	463,638.90	29	1,351,731.3 0
15. Թալին	24	1,159,845.3 0	76	249,285.70	31	1,409,131.0 0
<b>Ընդամենը</b>	<b>52.3</b>	<b>1,006,962.1 0</b>	<b>47.7</b>	<b>886,882.00</b>	<b>408</b>	<b>1,893,844.1 0</b>

75. Ընդհանուր առմամբ 345-ը պատասխանել են հողագործության, իսկ 196-ը՝ անասնապահության օգտին: Անասնապահությունից ստացվող եկամուտը մեծ մաս է կազմում է գյուղատնտեսական եկամտում: Ներքին Սասնաշենում ԱԵՏՏ-ներն իրենց եկամտի 80%-ից ավելին ստանում են անասնապահությունից: Այնուհետև հետևում են Աղձքն ու Թալինը՝ ավելի քան 70% եկամուտներով, մինչդեռ Շամիրամում ու Եղնիկում այն կազմում է ավելի քան 60% և 50%: ԱԵՏՏ-ների եկամտի աղբյուրները դասակարգելիս ոչ գյուղատնտեսական եկամուտը բոլոր համայնքներում հանդիսանում է կանխիկ եկամտի ամենակարևոր աղբյուրը, որին հետևում են գյուղատնտեսությունն ու անասնապահությունը:

**Աղյուսակ Գ8. Հողագործական և անասնապահական գործունեությունից ստացված միջին եկամուտը**

Համայնքը	Ընդհանուր ԱԵՏՏ-ները (N=413)	Հողագործությունից եկամուտ ստացող տնային տնտեսությունները No. (%)		Հողագործությունից ստացվող միջին եկամուտ՝ ըստ տնային տնտեսության (ՀՀ դրամ)	Անասնապահությունից եկամուտ ստացող տնային տնտեսությունները No. (%)		Անասնապահությունից ստացվող միջին եկամուտ՝ ըստ տնային տնտեսության (ՀՀ դրամ)
		Nos.	%		No	%	
Ոսկեվազ	19	12	97.2	900,185.0	2	16.9	105,000.0
Աղձք	6	2	77.8	2,250,000.0	2	72.	550,000.0
Փարպի	4	1	100.0	1,200,000.0	0	0.0	0.0
Կոշ	33	25	80.6	1,155,835.2	15	32.3	445,598.7
Արուճ	17	15	56.0	443,032.1	14	47.2	465,088.6
Շամիրամ	19	18	39.4	368,610.7	19	62.7	663,370.6
Ագարակ	59	54	88.4	640,524.1	16	45.3	540,000.0
Ուջան	144	137	82.1	783,011.6	65	37.7	455,588.0
Դավթաշեն	10	10	74.5	405,156.2	8	-	150,250.0
Եղնիկ	11	10	67.2	328,995.4	8	-	328,811.3
Ներքին Սասնաշեն	1	1	18.9	420,000.0	1	-	1,800,000.0
Կաքավաձոր	7	5	83.0	506,000.0	4	-	110,000.0
Ներքին Բազմաբերդ	23	23	60.6	365,919.8	18	-	376,303.9
Կաթնաղբյուր	29	27	72.6	326,595.5	20	-	208,190.5
Թալին	31	5	79.2	150,000.0	4	-	248,750.0
<b>Ընդամենը</b>	<b>413</b>	<b>345</b>	<b>-</b>	<b>663,232.5</b>	<b>196</b>	<b>-</b>	<b>425,343.1</b>

**9. ԱՂՔԱՏ ԵՎ ԾԱՅՐԱՀԵՂ ԱՂՔԱՏ ԱԵՏՏ-ներ**

76. Իրավունքների մատրիցայում խոցելի մարդկանց համար սահմանված օժանդակություններին համապատասխան լինելու համար “աղքատ տնային տնտեսությունները” այս գնահատման մեջ դասակարգվեցին որպես Ընտանեկան նպաստի համակարգում գրանցված ԱԵՏՏ-ներ (մանրամասների համար տես Գլուխ Բ՝ Ազդեցության գնահատում, Մաս 5.3-ում): Աղքատ ԱԵՏՏ-ների քանակի վերաբերյալ տվյալները գնահատվեցին ՄՏՀ ընթացքում և այդ տվյալները խաչաձև ստուգվել են համեմատվելով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աղքատության տվյալների բազայի հետ, ինչպես նաև ճշգրտվեցին լրացուցիչ դաշտային այցելությունների միջոցով: Ընդհանուր առմամբ, 54 ԱԵՏՏ-ներ հաստատվեցին որպես “աղքատ” համաձայն վերը նշված սահմանմանը: Դրանցից 48-ը նախապես գրանցված էին Ընտանեկան նպաստի համակարգում, ինչը հաստատեց Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված ցանկը: 3 լրացուցիչ ԱԵՏՏ-ներ բացահայտվել են ԾԻԿ-ի կողմից իրականացված հանրային լսումների և ԱԵՏՏ-ների հետ հանդիպումների ընթացքում, և արդյունքում նրանք գրանցվել են ԸՆՀ-ում: Եվս 3 ԱԵՏՏ-ներ գրանցվել են ԸՆՀ-ում ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ ՄՏՀ արդյունքների ստուգման ընթացքում: Այս 54 ԱԵՏՏ-ները պետք

Է ստանան փոխհատուցումներ նպաստների ձևով որպես «խոցելի և աղքատ

ԱԵՏՏ-ներ”:

**Աղյուսակ Գ9. ԱԵՏՏ տեսակն ըստ աղքատության մակարդակի**

	Ընդամեն	
	No.	% (N=....)
<b>1. Աղքատ</b>	54	10
<b>2. Ոչ աղքատ տնային տնտեսություններ</b>	482	90
<b>Ընդամենը</b>	536	100
<i>Նշում.</i> Հիմնված է ՄՉՀ-ի ժամանակ իրականացված 100% մարդահամարի տվյալների վրա		

**10. ՎԱՐԿԵՐ ԵՎ ՊԱՐՏՔԵՐ**

77. Պարտքերի վերաբերյալ հարցումները ցույց տվեցին, որ մոտավորապես 38%-ն ունի տարբեր տեսակի պարտքեր: Պարտքի նվազագույն գումարը 17,500 ՀՀ դրամ է, իսկ առավելագույնը՝ 37,366,000 ՀՀ դրամ: Մոտ 26.4%-ի պարտքերը մինչև 2,000,000 ՀՀ դրամ են, իսկ 1.2% պարտքերը 6,000,000 - 37,366,000 ՀՀ դրամի սահմանում են:

**Աղյուսակ Գ10. Պարտք ունեցող ԱԵՏՏ-ները՝ ըստ պարտքի աղբյուրի (տեսակի) և գումարի չափի**

Պարտքը (ՀՀ դրամով)		Աղբյուր			
		Բանկ / վարկային կազմակերպություն	Մասնավոր	Այլ	Ընդհանուր
17,500 – 300,000 ՀՀ դրամ	ԱԵՏՏ No	28	27	3	55
	No (413)-ից %-ը	6.8	6.5	0.7	13.3
320,000 – 970,000 ՀՀ դրամ	ԱԵՏՏ No	41	19	-	54
	No (413)-ից %-ը	9.9	4.6	-	13.1
1,000,000 – 2,000,000 ՀՀ դրամ	ԱԵՏՏ No	25	11	-	30
	No (413)-ից %-ը	6.1	2.7	-	7.3
2,200,000 – 4,500,000 ՀՀ դրամ	ԱԵՏՏ No	9	4	-	11
	No (413)-ից %-ը	2.2	1.0	-	2.7
6,000,000 – 37,366,000 ՀՀ դրամ	ԱԵՏՏ No	5	1	-	5
	No (413)-ից %-ը	1.2	0.2	-	1.2

78. Որոշ ԱԵԱ-ներն օգտագործել էին իրենց ազդեցության ենթակա գույքը որպես երաշխիք վերցրած պարտքի դիմաց, ինչպես մանրամասնորեն ներկայացված է Գլուխ E-ում:

**11. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ՎՐԱ**

79. Կանայք ունեն մեծ տնտեսական դերակատարություն ծրագրին առնչվող ոլորտներում և ներգրավված են բազմապիսի եկամտաստեղծ միջոցառումներում գյուղատնտեսական և շուկայական բնագավառներում: Ծրագրի շրջանակներում հատուկ ուշադրություն է դարձվում, որպեսզի կանայք ստանան իրենց գործունեության համար հասանելի փոխհատուցման գումարը, ինչպես նաև, որպեսզի այն կանայք, որոնք փաստացիորեն հանդիսանում են տնային տնտեսությունների գլխավորներ, հստակորեն ներգրավված լինեն վարկի շրջանակներում որպես փոխհատուցման և վերականգնման միջոցառումների շահառու: ՀՕՏՕ մոնիտորինգի և գնահատման ժամանակ հատուկ ուշադրություն կդարձվի կանանց և այլ խոցելի խմբերի տարաբնակեցման

ագդեցությունների վրա: Ծրագիրը դրական ազդեցություն կունենա գենդերային հիմնախնդիրների վրա, քանի որ շինարարական աշխատանքների պայմանագիրը կընդգրկի հատուկ դրույթներ, որոնք կխրախուսեն կանանց ներգրավումը Ծրագրի իրականացման գործընթացում: Ի լրումն,

կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները դիտարկվել են որպես խոցելի խմբեր, ուստի ՀՕՏԾ-ի իրավասությունների շրջանակում նրանց համար նախատեսվում է հատուկ օժանդակություն: (Տես ՄԻԱՎ/ՁԻԱՀ և մարդկային թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկման և կանխարգելման, ինչպես նաև Գենդերային զարգացման ծրագիր, Տրանշ 2՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Աշտարակ-Թալին հատված):

## Դ. ՕՐԵՆՍԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### I. ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԸ

80. ՀՀ Սահմանադրությունը (1995թ.) երաշխավորում է մասնավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը: Համաձայն վերջինի՝ մասնավոր սեփականության իրավունքը կարող է դադարեցվել գերակա հանրային շահի ճանաչման բացառիկ դեպքերում՝ հիմնվելով ընդունված ընթացակարգի վրա և նախնական համապատասխան փոխհատուցման դիմաց: Հողի օտարման և փոխհատուցման խնդիրները քննարկվում են Հողային օրենսգրքի 102, 104 հոդվածների, Քաղաքացիական օրենսգրքի (1998թ.) շրջանակներում, 2006թ. նոյեմբերի 27-ին ընդունված Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին՝ ՀՀ օրենքի 218-221 հոդվածների շրջանակներում: «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Կառավարությունը որոշում կընդունի բացառիկ հանրային և պետական գերակա կարիքների ճանաչման մասին համապատասխան պետական մարմիններից ստացված պահանջի համաձայն: Գերակա հանրային շահ ճանաչելու մասին Կառավարության որոշումով սահմանվում է.

- i. գերակա և բացառիկ հանրային շահը, որի համար կիրականացվի սեփականության օտարում:
- ii. Օտարված գույքը ձեռքբերող կողմը:
- iii. Օտարված գույքի բաղկացուցիչ մասերը (հասցեներ, տեղակայում և/կամ այլ տեղեկատվություն, որը տվյալ գույքը տարբերակում է մյուս ակտիվներից):
- iv. Օտարման գործընթացը սկսելու վերջնաժամկետը:

81. Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին՝ ՀՀ օրենքի շրջանակներում քննարկվում են հողի օտարման ընթացակարգերը և հողի գրանցված և անշարժ գույքի սեփականատերերի փոխհատուցում ստանալու իրավունքները՝ հանրային նպատակով դրանց օտարման դեպքում: Գերակա հանրային շահ ճանաչելու մասին Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո իրավասու մարմնի կողմից պետք է կազմվի արձանագրություն, որտեղ կնկարագրվի օտարված սեփականությունը՝ Կառավարության կողմից սահմանված ընթացակարգերի և վերջնաժամկետների համաձայն, ձեռք բերող կողմը, սեփականատերերը կամ օտարված սեփականության նկատմամբ սեփականության իրավունք ունեցողները կարող են իրենց մասնակցությունը ցուցաբերել նման արձանագրության կազմման գործընթացում, եթե այդ արձանագրությունը չի կազմվել նաև սեփականության նախնական ուսումնասիրության ժամանակ: Օտարված սեփականության նկարագրությամբ արձանագրության մեկ օրինակը կազմելուց հետո ոչ ուշ քան 3 օրվա ընթացքում պետք է հավուր պատշաճի ծանուցվի սեփականատիրոջը կամ սեփականության նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձանց, ովքեր իրավասու են բողոքարկել այն իրավասու մարմնին և/կամ դատարանում՝ արձանագրությունը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում:

82. Հողի/սեփականության օտարման հարցը լուծվում է ՏԿՆ-ի և ԱԵԱ-ների կամ նրանց պաշտոնական ներկայացուցիչների միջև պայմանագրի և համաձայնագրի հիման վրա՝ հաշվի առնելով վերջինիս շուկայական արժեքը և կորուստները, այդ թվում նաև դրանից բխող հետևանքային վնասները և կարող է ներառել հողի/սեփականության փոխարինումը: Պատշաճ փոխհատուցում կվճարվի սեփականատիրոջը՝ իր գույքի օտարման դիմաց: Պատշաճ է համարվում օտարված սեփականության շուկայական արժեքին 15%-ով վրադիր գումարի վճարումը: Անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքների գնահատումը պետք է իրականացվի 2005թ. հոկտեմբերի 4-ին ՀՀ-ում անշարժ գույքի գնահատման մասին ՀՀ օրենքի շրջանակներում սահմանվող ընթացակարգերի համաձայն:



**II. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՐԿԱԴԻՐ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԱԶԲ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

83. Հարկադիր տարաբնակեցման անվտանգության վերաբերյալ ԱԶԲ դրույթները Սոցիալական անվտանգության քաղաքականության շրջանակում հիմնված են հետևյալ սկզբունքների վրա.
- i. խուսափել կամ առնվազն նվազագույնի հասցնել հարկադիր տարաբնակեցման դեպքերը:
  - ii. Փոխհատուցման/վերականգնման դրույթները կապահովեն ԱԵԱ-ների նախքան Ծրագրի իրականացումն ունեցած կենսամակարդակը:
  - iii. ԱԵԱ-ները պետք է լիարժեք տեղեկացված կամ խորհրդակցված լինեն ՀՕՏ փոխհատուցման տարբերակների մասին:
  - iv. Հարկ է հնարավորինս օժանդակել/աջակցել ԱԵԱ-ների սոցիալ-մշակութային ինստիտուտներին:
  - v. Փոխհատուցումը կիրականացվի կանանց և տղամարդկանց հավասարազոր դիտարկմամբ:
  - vi. Սեփականության իրավունքի գրանցման փաստաթղթի բացակայությունը չպետք է խոչընդոտ հանդիսանա փոխհատուցման/վերականգնման համար:
  - vii. Հատուկ ուշադրություն պետք է դարձվի կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսություններին և այլ խոցելի խմբերի, ինչպես օրինակ՝ տեղաբնակների կողմից ղեկավարվող տնային տնտեսություններին, և համապատասխան օժանդակություն պետք է ցուցաբերվի վերջիններին՝ իրենց վիճակը բարելավելու համար:
  - viii. ՀՕՏ-ը պետք է հանդիսանա և իրականացվի որպես նախագծի մի մաս, իսկ ողջ արժեքի փոխհատուցումը պետք է ներառվի Ծրագրի ծախսերի և օգուտների շրջանակներում:
  - ix. Փոխհատուցումը և վերաբնակեցման նպաստները պետք է ամբողջությամբ հատկացվեն նախքան օտարումը և քանդումը:

**III. ՀՕՏ ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՈՒ ԱԶԲ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ**

84. ՀՀ օրենքների/կանոնակարգերի և ԱԶԲ քաղաքականության տարբերությունները ներկայացվում են ստորև՝ Աղյուսակ Դ1-ում:

**Աղյուսակ Դ1: Տարաբնակեցման օրենքների և կանոնակարգերի համեմատություն**

<b>ՀՀ օրենքներ և կանոնակարգեր</b>	<b>ԱԶԲ Սոցիալական անվտանգության քաղաքականության շրջանակ</b>
Հողի փոխհատուցում, միայն սեփականության վկայական ունեցող հողի սեփականատերերին:	Սեփականության վկայականի բացակայությունը խոչընդոտ չէ փոխհատուցման և/կամ վերականգնման համար: Առանց վկայականի հողի սեփականատերերը նույնպես ստանում են վերականգնման նպաստ:
Բոլոր տները/շինությունները փոխհատուցվում են Ծրագրի շրջանակներում վնասված/քանդված շինությունների համար, բացառությամբ չգրանցված առևտրային շինությունների:	ԱԶԲ քաղաքականությունը ներառում է փոխհատուցումը նաև չգրանցված առևտրային շինությունների համար:

ՀՀ օրենքներ և կանոնակարգեր	ԱԶԲ Սոցիալական անվտանգության քաղաքականության շրջանակ
Բերքի կորստի դիմաց փոխհատուցում միայն հողի գրանցված սեփականատերերին:	Բերքի կորստի փոխհատուցումը տրամադրվում է ոչ միայն հողի գրանցված սեփականատերերին, այլ նաև օգտագործողներին:
Հողի գնահատում՝ հիմնված ներկայիս շուկայական արժեք + գնահատված արժեքի 15%:	Հողի գնահատում՝ հիմնված ներկայիս շուկայական գնի/փոխարինման արժեքի վրա:
Նախքան գնահատումը հարկ է ԱԵՏՏ/ԱԵԱ-ներին ներկայացնել ազդեցությունների քանակի և արժեքի, փոխհատուցման գումարների և ֆինանսական օժանդակության վերաբերյալ տեղեկատվություն:	Նույնն է:
Ոչ մի դրույթ չկա եկամտի/ապրուստի վերականգնման միջոցառումների, խիստ ազդեցություն կրած ԱԵԱ-ների և խոցելի խմբերի կամ վերաբնակեցման ծախսերի վերաբերյալ:	ԱԶԲ քաղաքականությունը պահանջում է եկամտի/ապրուստի վերականգնում, լուրջ կորուստների, ինչպես նաև վերաբնակեցման գործընթացի շրջանակներում ԱԵԱ-ների կողմից կրած ծախսերի համար:

85. Ընդհանուր առմամբ, ՀՀ օրենսդրությունն ու ԱԶԲ Սոցիալական քաղաքականությունը ՀՕՏ վերաբերյալ սկզբունքորեն չեն տարբերվում: Այնուամենայնիվ, ՀՀ օրենքներն ու կանոնակարգերը այնքան էլ հստակ չեն սահմանում, թե վերականգնումն ինչ ճանապարհով պետք է իրականացվի: Մեկ այլ խնդիր է ԱԶԲ-ի կողմից առանձնացվող գրանցված և չգրանցված սեփականատերերը, ինչպես նաև գրանցված և չձևակերպված օգտագործողները, այսինքն՝ սեփականության վկայականի բացակայությունը խոչընդոտ չի հանդիսանում փոխհատուցման և վերականգնման համար:

86. ՀՀ օրենքների ու կանոնակարգերի և ԱԶԲ Սոցիալական անվտանգության քաղաքականության միջև անհամապատասխանություններին անդրադարձել է ՀՕՏ-ն <sup>20</sup>, որը կարևորում է փոխհատուցման և իրավասության խնդիրները (օրինակ՝ բոլոր տարբերի փոխհատուցումը փոխարինման ողջ արժեքով, օրինականացման ենթակա ԱԵԱ-ների օրինականացումը, վարձակալների, չգրանցված ԱԵԱ-ների, աշխատողների և բանվորների փոխհատուցումը և այլն) այս ծրագրի համար: ՀՕՏ-ն ապահովում է փոխհատուցում կամ առնվազն վերականգնում անօրինական/առանց վկայականի բնակվողների և չձևակերպված օգտագործողների, չգրանցված բիզնեսների և այլնի համար, ինչպես նաև նախատեսում վերականգնման փաթեթներ խոցելի և խիստ ազդեցության ենթակա ԱԵԱ-ների համար:

#### IV. ԲՖԳ-ի ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀՕՏԸ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

87. ՀՀ օրենքների և ԱԶԲ Սոցիալական անվտանգության քաղաքականության հայտարարագրի (2009թ.) հիման վրա այս ԲՖԳ-ի համար մշակվել են հարկադիր տարաբնակեցման հիմնական հետևյալ սկզբունքները<sup>21</sup>:

<sup>20</sup> Առաջին ՀՕՎՇ-ն հաստատվել է ՀՀ կառավարության No1274-Ն, 16.09.2010թ. որոշումով՝ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակը և դրա փոխհատուցման սկզբունքները», որն այնուհետև փոխվեց ՀՀ կառավարության No961-Ն, 14.07.2011թ. որոշմամբ, «Կառավարության No961-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» No977-Ն 23.06.2011 որոշումը, «Կառավարության No1274-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 16.09.2010թ. որոշումով:

21 Պարբերություն 18, E4 ՀՕՎՇ, այս ԲՖԳ-ի համար ընդունված սկզբունքներն ու իրավունքները, Հողի օտարման և

- Հողի օտարման և այլ հարկադիր տարաբնակեցման ազդեցություններից պետք է խուսափել կամ հասցնել նվազագույնի՝ ուսումնասիրելով բոլոր կենսունակ այլընտրանքային ծրագրի նախագծերը:
- Անխուսափելի լինելու դեպքում, կմշակվի սահմանափակ ժամկետներով ՀՕՏՕ և ԱԵԱ-ները աջակցություն կստանան բարելավելու կամ նվազագույն դեպքում նախքան Ծրագրի իրականացումը վերջիններիս ունեցած կենսամակարդակը վերականգնելու համար:
- Պետք է երաշխավորվի ԱԵԱ-ների հետ փոխհատուցման հարցի շուրջ խորհրդակցությունների հետ փոխհատուցման հարցի շուրջ խորհրդակցությունների կազմակերպումը, տարաբնակեցման հետ կապված տեղեկատվության տրամադրումը, և ենթածրագրերի մշակման/իրականացման շրջանակներում ԱԵԱ-ների մասնակցությունը՝ նախագծի այլընտրանքների վերաբերյալ իրենց տեսակետը արտահայտելու, ինչպես նաև մոնիտորինգի միջոցառումներին մասնակցելու միջոցով:
- Խոցելի և խիստ ազդեցություն կրող ԱԵԱ-ներին կտրամադրվի հատուկ օժանդակություն:
- Սեփականության իրավունք չունեցող ԱԵԱ-ները (օր.՝ ինքնակամ կառույց իրականացրած ԱԵԱ-ներ ապօրինի ապրողներ և զավթողներ, առանց գրանցման ԱԵԱ-ներ) կստանան կենսապահովման նպաստ՝, օժանդակություն՝ հողից բացի այլ ազդեցությունների, կորուստների դիմաց, ինչպես սահմանված է ՀՕՏՕ Իրավունքների մատրիցայում հողի փոխհատուցման համար և ամբողջությամբ կփոխհատուցվի հողից բացի այլ կորուստների դիմաց:
- Օրինականացման ենթակա ԱԵԱ-ները կօրինականացվեն և ամբողջությամբ կփոխհատուցվեն հողի կորստի դիմաց:
- Եկամտի վերականգնման միջոցների ապահովում:
- ՀՕՏՕ-ն կներկայացվի ԱԵԱ-ներին հայերեն լեզվով:
- Փոխհատուցման, վերաբնակեցման օժանդակությունը և վերականգնման միջոցառումներն ամբողջությամբ կտրամադրվեն նախքան կապալառուն ֆիզիկապես կստանա հողը, կամ նախքան որևէ փաթեթի շրջանակներում որևէ շինարարական աշխատանքի նախաձեռնումը:
- ԱԵԱ-ների բողոքների բավարարման համար համապատասխան մեխանիզմի մշակում:
- *(87-րդ կետը լրաց., խմբ. 29.06.17 N 752-Ն)*
-

---

տարաբնակեցման շրջանակ (նորացված), դեկտեմբեր 2010թ.

**Ե. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՄՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ**

88. ՀՕՏ առաջադրանքները Ծրագրի ներքո կիրականացվեն ըստ փոխհատուցման իրավասության և իրավունքների շրջանակի՝ համաձայն Ծրագրի համար պատրաստված և ՀՕՏ-ում ներկայացված հայաստանյան օրենսդրության և կանոնակարգի և ԱԶԲ Սոցիալական անվտանգության քաղաքականության: Իրավունքների մատրիցան (ԻՄ) ներկայացված է Աղյուսակ Ե1-ում:

**Աղյուսակ Ե1: Իրավունքների մատրիցան**

Կորստի տեսակը	Կիրառությունը	ԱԵԱ-ների սահմանումը	Փոխհատուցման իրավունքները
<b>1. Գյուղատնտեսական հողերի կորուստ</b>	ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են գյուղատնտեսական հողերը անկախ ազդեցության աստիճանից	Մեփականատեր լիարժեք գրանցումով	Փոխհատուցում՝ փոխարինման արժեք +15%՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/: Հողի շուկայի բացակայության դեպքում փոխհատուցումը կիրականացվի հիմք ընդունելով հողի տարեկան արտադրողականությունը՝ հաշվարկված տարիների այն բավարար քանակով, որը կապահովի ԱԵՏՏ-ի կորցրած հողի դիմաց վերականգնումը:
		Օրինականացման ենթակա սեփականատերեր	Օրինականացման ենթակա ԱԵԱ-ները կօրինականացվեն և կփոխհատուցվեն վերոնշյալ ձևով:
		Վարձակալ (համայնք, պետություն)	Վարձակալը պետք է ստանա փոխհատուցում որպես լիարժեք սեփականատեր՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/ կամ նրան պետք է տրվի նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ, ապա, ելնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից, նա պետք է ստանա ազդեցության ենթակա հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/՝ գումարած 15%՝ –ին համարժեք փոխհատուցում հետևյալ մասնաբաժիններով՝ մինչև 1տարի՝ հողի արժեքի 5% ;2) մինչև 15տարի՝ հողի արժեքի 14% ;3)մինչև 25տարի՝ հողի արժեքի 20% ;4) 25 և ավել տարի՝ հողիարժեքի 25%
		Օրինական կարգավիճակ ստանալու ոչ ենթակա սեփականատերեր	Այս ԱԵՏՏ-ները կստանան վերականգնման նպաստ ազդեցության ենթարկված հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/՝ հողօգտագործման անցած տարիների հաշվարկով. 1) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%; 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14% ; 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%; 4) 25 և ավել տարի՝ հողի արժեքի 25%:

<b>2. Ոչ գյուղատնտեսական հողերի կորուստ</b>	ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են իրենց առևտրային նշանակության կամ բնակելի հողերը	Մեփականատեր լիարժեք գրանցումով	Փոխհատուցում՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/+15%, կամ փոխանակում ԱԵՏՏ համար ընդունելի մեկ այլ հողակտորով:
		Օրինականացման ենթակա սեփականատեր	Փոխհատուցումը կիրականացվի վերը նշված ձևով:
		Վարձակալ	Այս ԱԵԱ-ները կփոխհատուցվեն որպես լիարժեք

Կորստի տեսակը	Կիրառությունը	ԱԵԱ-ների սահմանումը	Փոխհատուցման իրավունքները
		(համայնք, պետություն)	սեփականատերեր ազդեցության ենթակա հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/ կամ կտրվի նոր վարձակալություն: Եթե սա հնարավոր չէ, ապա նրանք կստանան ազդեցության ենթակա հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/ գումարած 15%” –ին համարժեք փոխհատուցում հետևյալ մասնաբաժիններով՝ 1) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%; 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%; 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%; 4) >25տարի՝ հողի արժեքի 25%:
		Օրինական կարգավիճակ ստանալու ոչ ենթակա ԱԵԱ	Այս ԱԵԱ-ները կստանան վերականգնման նպաստ ազդեցության ենթարկված հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/՝ հողօգտագործման անցած տարիների հաշվարկով. 1) մինչև 1տարի՝ հողի արժեքի 5%; 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%; 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%; 4) 25 և ավել տարի՝ հողի արժեքի 25%:
<b>3. Բնակելի շինություններ</b>		Բոլոր ԱԵՏՏ-ները անկախ իրավական կարգավիճակից	Շինության կորստի դեպքում՝ փոխհատուցման փոխարինման արժեքը + 15% չափով առանց ամորտիզացիոն մասնահատումների, գործարքային ծախսերի և փրկված նյութերի: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի, ինչպես նաև շինության վերանորոգման համար:
		Վերաբնակեցված վարձակալ	Տեղափոխության և էական ազդեցություն կրելու նպաստ՝ նշված սույն աղյուսակի ստորև բերված 9 և 10 կետերում:
<b>4. Ոչ բնակելի շինություններ/ գույք</b>		Իրավական գրանցման կարգավիճակ ունեցող ԱԵՏՏ	Շինության կորստի դեպքում՝ փոխհատուցման փոխարինման արժեքը + 15% չափով առանց ամորտիզացիոն մասնահատումների, գործարքային ծախսերի և փրկված նյութերի: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի, ինչպես նաև շինության վերանորոգման համար:
		Ինքնակամ կառույց իրականացրած քաղաքացիներ կամ իրավաբանական անձ հանդիսացող ԱԵԱ-ներ, որոնք	Ինքնակամ կառույցի կորստի դեպքում՝ դրամական փոխհատուցում՝ ինքնակամ կառույցի փոխարինման ամբողջ արժեքի չափով (ոչ պակաս, քան շուկայական արժեքը)՝ առանց 15% հավելվածարի



		հանդիսանում են հողամասի սեփականատեր	
		Համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնակամ կառույց իրականացրած ԱԵԱ-ին կտրամադրվի վերականգնման օժանդակություն՝ ինքնակամ կառույցի փոխարինման արժեքի չափով՝ հանած օրինականացման ծախսերը:	Համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնակամ կառույց իրականացրած ԱԵԱ-ին կտրամադրվի վերականգնման օժանդակություն՝ ինքնակամ կառույցի փոխարինման արժեքի չափով՝ հանած օրինականացման ծախսերը:
		Վերաբնակեցված վարձակալ	Վերաբնակեցման և էական ազդեցություն կրելու նպատակով՝ սույն աղյուսակի ստորև բերված 9 և 10 կետերում:
<b>5.Շնչհանուր սեփականության միջոցների կորուստ</b>	Համայնքային/հանրային գույք	Համայնք/Պետություն	Կորցրած շինության վերականգնում համայնքի հետ խորհրդակցության պայմաններում և վերջինիս գործառույթների վերականգնում:
<b>6. Մշակարույսերի կորուստ</b>	Ազդեցության ենթակա բերքի զանգված	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական կարգավիճակից (ներառյալ՝ օրինականացման ենթակա	Բերքի փոխհատուցում հաշվարկված շուկայական գներով՝ ակնկալվող համախառն բերքի համար:

Կորստի տեսակը	Կիրառությունը	ԱԵԱ-ների սահմանումը	Փոխհատուցման իրավունքները
		սեփականատերերը և բնակիչները, որոնք չունեն կացության կարգավիճակ)	
<b>7. Ծառերի կորուստ</b>	Ազդեցության ենթակա ծառեր	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական կարգավիճակից (ներառյալ՝ օրինականացման ենթակա սեփականատերերը և բնակիչները, որոնք չունեն կացության կարգավիճակ)	Շուկայական գներով հաշվարկված՝ բերքի արժեքի դրամական փոխհատուցում՝ հիմնված ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության վրա:
<b>8. Բիզնեսի կամ զբաղվածության կորուստ</b>	Բիզնեսի /զբաղվածության կորուստ	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական կարգավիճակից (ներառյալ՝ օրինականացման ենթակա սեփականատերերը և բնակիչները, որոնք չունեն կացության կարգավիճակ)	<p><b>Բիզնեսի սեփականատեր</b> . Հարկային հայտարարագրով բիզնեսի դեպքում ա) (մշտական ազդեցության դեպքում) փոխհատուցում տարեկան զուտ եկամտի չափով; բ) (Ժամանակավոր ազդեցության դեպքում) զուտ եկամտի փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության ընդհատման մինչև 1 տարի ժամանակահատվածի համար:</p> <p>Հայտարարագրի բացակայության դեպքում ա) (մշտական ազդեցության դեպքում) ԱԵՏՏ-ը կստանա վերականգնման նպաստ ամսական պաշտոնական նվազագույն աշխատավարձի 1 տարվա չափով + փոխհատուցում՝ պետական գրանցման վճարների և թույլտվությունների համար, եթե այդպիսիք կան: բ) (Ժամանակավոր ազդեցության դեպքում) վերականգնման նպաստ ամսական պաշտոնական նվազագույն աշխատավարձի չափով ձեռնարկատիրական գործունեության ընդհատվող ամիսների հաշվարկով՝ մինչև 1 տարի:</p> <p><b>Մշտական աշխատողներ</b> -Աշխատանքի մշտական կորստի դեպքում վեց ամսվա կորցրած ամսական միջին աշխատավարձի չափով գումարի միանվագ տրամադրում; բ) Աշխատանքի ժամանակավոր կորստի դեպքում մինչև վեց ամիս ամսական միջին աշխատավարձի չափով գումարի տրամադրում՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամիսների հաշվարկով:</p>

<b>9. Օժանդակության խիստ ազդեցությունների դեպքում</b>	Գյուղատնտեսական եկամտի 10 և ավել տոկոսի կորուստ ունեցող կամ վերաբնակեցման ենթակա ԱԵՏՏ	Խիստ ազդեցության ենթարկված բոլոր ԱԵՏՏ, ներառյալ կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները	<p>1) Ազդեցության ենթակա գյուղատնտեսական հողի մեկ լրացուցիչ տարվա բերքի չափով փոխհատուցում ԱԵԱ-ին գյուղատնտեսական եկամտի կորստի դիմաց կամ (վերաբնակեցվողների համար)</p> <p>2) 6 ամսվա վերականգնման նպաստ վերաբնակեցված ԱԵՏՏ-ներին նվազագույն աշխատավարձի<sup>22</sup> չափով:</p>
---	---	---	--

22 Նվազագույն աշխատավարձը – ՀՀ օրենքը “Նվազագույն ամսական աշխատավարձի” մասին, դեկտեմբերի 17, 2003, հոդված 1, վերանայված՝ 2010թ. դեկտեմբերին, ՀՕ-164՝ նվազագույն աշխատավարձը սահմանելով 32,500 ՀՀ դրամ:

Կորստի տեսակը	Կիրառությունը	ԱԵԱ-ների սահմանումը	Փոխհատուցման իրավունքները
10. Վերաբնակեցման նպաստ	Տրանսպորտային /տեղափոխության ծախսեր	Վերաբնակեցված բոլոր ԱԵՏՏ-ները, ներառյալ՝ վարձակալները	Տրանսպորտային և մեկ ամսվա կենսապահովման ծախսերը հոգալու համար բավարար գումարների տրամադրում:
11. Օժանդակություն խոցելի ԱԵԱ- ներին		Աղքատության սահմանագծից ցածր գրանցված և/կամ կանանց, և/կամ տարեց անձանց կողմից ղեկավարվող ԱԵՏՏ	6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով դրամական օժանդակության տրամադրում և Ծրագրի իրականացման հետ կապված աշխատատեղերի համար ընտրություն կատարելիս այս անձանց պետք է առաջնահերթություն տալ:
12. Ժամանակավոր ազդեցություն		Բոլոր ԱԵՏՏ-ները	Պատշաճ վարձակալություն և վերականգնման աջակցություն կտրամադրվի ժամանակավոր ազդեցություն կրող գույքի/սեփականության համար:
13. ՀՕՏ չնախատեսված ազդեցություններ, եթե այդպիսիք լինեն			Ծրագրի իրականացման ընթացքում ՏԿՆ –ը կանդրադառնա ՀՕՎ չնախատեսված ազդեցություններին և կհոգա դրանց հետ կապված փոխհատուցումը, ըստ վերոհիշյալ պայմանների:

(88-րդ կետը խմբ., լրաց 29.06.17 N 752-Ն)

89. Հետևյալ սկզբունքները հանդիսանում են ուղեցույց ՀՀՃՄՆԾ արդյունքում ազդեցության ենթարկված անձանց փոխհատուցման և իրավասությունների վերաբերյալ.

- i. Հողի օտարումից և հարկադիր վերաբնակեցման այլ հետևանքներից հնարավորինս խուսափելու կամ դրանք նվազագույնի հասցնելու համար ընտրվել են ծրագրի ծրագծերի այլընտրանքային կենսունակ տարբերակները և համապատասխան ինժեներական լուծումները:
- ii. Բոլոր ԱԵԱ-ները, ովքեր բնակվում, աշխատում, զբաղվում են գործարարությամբ, մշակում են հողը ազդեցության ենթակա տարածքում, իրավասու են ստանալ փոխհատուցում իրենց ազդեցության ենթարկված գույքի դիմաց՝ հիմնվելով փոփոխված և վերջնականացված նախագծի, հերթական թարմացված մարդահամարի և կորուստների մանրամասն չափագրման հետազոտության վրա, ինչպես նաև կապահովվեն վերականգնողական միջոցառումներ, որոնք բավարար կլինեն օժանդակելու ԱԵԱ-ներին բարելավելու կամ առնվազն վերականգնելու մինչև ծրագիրն ունեցած կենսամակարդակը, եկամուտ վաստակելու կարողությունը և արտադրական մակարդակը:
- iii. Փոխարինման արժեքի ամբողջական փոխհատուցման սկզբունքը կկիրառվի ազդեցության ենթարկված գույքի կամ եկամտի կորստի նկատմամբ մինչ ազդեցությունը:
- iv. Փոխհատուցման գումարից չպետք է լինեն մասնահանումներ փրկված նյութերի, ամորտիզացիայի, հարկերի, վարձերի և այլ վճարումների առումով:
- v. Ազդեցության ենթարկված բնակչությունն իրավասու է ստանալ փոխհատուցում և վերականգնման օժանդակություն՝ անկախ զբաղվածության, սոցիալ-տնտեսական կարգավիճակից և այլ նման գործոններից, որոնք կարող են խտրականության պատճառ հանդիսանալ վերոնշյալ նպատակային խնդիրներն ապահովելու համար:

- vi. Կորցրած գույքի նկատմամբ օրինական իրավունքների բացակայությունը կամ բացասական ազդեցություն կրած զբաղվածության կարգավիճակը, կամ սոցիալ-տնտեսական կարգավիճակը չպետք է խախտի ԱԵԱ-ի իրավասությունը փոխհատուցման, վերականգնողական միջոցառումների կամ վերաբնակեցման նպատակների նկատմամբ:
- vii. Համաձայն ՀՀ օրենսդրության՝ ԱԵԱ-ներն իրավասու են փոխհատուցվել ոչ միայն հողի անմիջական ազդեցության ենթարկված մասի դիմաց, այլև ազդեցության ենթակա հողի մնացած մասի համար: Վերջինիս վերաբերյալ իրենց որոշման մասին ԱԵԱ-ները կարող են Կառավարությանը տեղեկացնել և արձանագրություններում ներկայացնել

ազդեցությունները Հանրային գերակա շահի մասին Կառավարության որոշումն ուժի մտնելուց 60 օրվա ընթացքում<sup>23</sup>:

- viii. Ժամանակավոր ազդեցության ենթարկված հողերը և կոմունալ ենթակառուցվածքները կվերականգնվեն՝ բերվելով մինչ Ծրագրի իրականացումը եղած կամ ավելի լավ վիճակի:
- ix. ԱԵԱ-ներն ապահովվել են և հետագայում նույնպես կապահովվեն լիարժեք խորհրդատվությամբ, ինչպես նաև կմասնակցեն ՏՕ-ի պատրաստմանը, նորացմանը, իրականացմանը, մոնիտորինգին և գնահատմանը: Ազդեցության ենթարկված անձանց մեկնաբանություններն ու առաջարկները հաշվի են առնվել վերաբնակեցման գործողությունների նախագծային և իրականացման փուլերում: Այս մոտեցումը կշարունակվի նաև հետագայում:
- x. Վերաբնակեցման ծրագրի իրականացման ընթացքում կգործի բողոքները/դժգոհությունները լսելու և դրանց լուծում տալու արդյունավետ մեխանիզմ:
- xi. Առավելագույնս հարգանքով պետք է վերաբերվել և պահպանել գոյություն ունեցող մշակութային և կրոնական կողմնորոշվածությունը:
- xii. Վերականգնողական հատուկ միջոցառումներ կկիրառվեն խոցելի խմբերի և խիստ ազդեցության ենթակա ՏՏ-ների նկատմամբ:
- xiii. ՀՕՏՕ փոխհատուցման/վերականգնողական ծրագրի իրականացման նպատակով ժամանակին կհատկացվեն ֆինանսական միջոցները՝ մինչ ՀՕՏՕ իրականացումը:
- xiv. Որպես վերաբնակեցման կառավարման համակարգի մաս, տեղում կստեղծվեն հաշվետվության, մոնիտորինգի և գնահատման համապատասխան մեխանիզմներ: Հողի օտարման, վերաբնակեցման և վերականգնողական գործընթացի մոնիտորինգն ու գնահատումը վերջնական արդյունքներով կիրականացվի Արտաքին մոնիտորինգի գործակալության (ԱՄԳ) կողմից, որն արդեն նշանակվել է<sup>24</sup>:
- xv. ՏՕ-ն կթարգմանվի հայերեն և կտրվի գյուղապետարաններին, կտեղադրվի այլ համապատասխան վայրերում՝ ի գիտություն ԱԵԱ-ներին ու այլ հետաքրքրված խմբերին:
- xvi. Կապալառուները չեն սկսի շինարարական աշխատանքները ՀՕՏ ազդեցության ենթակա Ծրագրի տարածքում, քանի դեռ (ա) ՀՕՏ-ն իրականացված չէ ամբողջությամբ, (բ) համաձայնեցված փոխհատուցման վճարումը վերականգնողական աջակցությունն առկա չլինի, և (գ) ազդեցության ենթակա տարածքն ազատ չլինի բոլոր տեսակի խոչընդոտներից:

## II. ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

90. Հաստատված ՀՕՏՕ հիման վրա փոխհատուցման կամ առնվազն վերականգնման իրավասություն ունեցող ԱԵԱ-ներն են.

- հողը կորցնող բոլոր ԱԵԱ-ները, ովքեր ունեն հողի սեփականության իրավունք, ենթակա են օրինականացման կամ չունեն իրավական կարգավիճակ;
- չձևակերպված օգտագործողները և վարձակալները՝ անկախ նրանից գրանցված են, թե՛ ոչ;
- շինությունների, բերքի, մշակաբույսերի կամ հողին ամրագրված այլ օբյեկտների սեփականատերերը և, ինքնակամ կառույց իրականացրած անձինք;
- բիզնեսը, եկամուտը և աշխատավարձերը կորցնող ԱԵԱ-ները:
- **(90-րդ կետը լրաց. 29.06.17 N 752-Ն)**
- 

91. Կասեցման ամսաթվից հետո ազդեցության ենթակա տարածքներում բնակություն հաստատող կամ տներ/շինություններ կառուցող/ընդլայնող ԱԵԱ-ները փոխհատուցում ստանալու իրավասություն չեն ունենա: Նրանց համապատասխան ծանուցում կներկայացվի կանխավ, որով վերջիններին կխնդրվի ազատել տարածքները, ապամոնտաժել կառուցված շինությունները նախքան Ծրագրի իրականացումն սկսելը:

23 մինչև 2011թ. հոկտեմբերի 6-ը այն ԱԵԱ-ների համար, որոնց պատկանող հողակտորները ներառված են No 931-Ն որոշման մեջ և մինչև 2012թ. ապրիլի 9-ը այն ԱԵԱ-ների համար, որոնց պատկանող հողակտորները ներառված են S2 Ծրագրի No 70 որոշման մեջ

24 Արտաքին մոնիտորինգի գործակալություն – Տնտեսական զարգացման հետազոտությունների կենտրոն (ՏԶՀԿ)

### III. ՓՈՒՆԶԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

92. ԱԵԱ-ների իրավասությունների վերաբերյալ դրույթները ներառում են հողի, շինության, մշակաբույսերի և ծառերի կորստի և հարկային հայտարարագրի հիման վրա և/կամ միանվագ վճարման տեսքով բիզնեսի կորստի դիմաց, ինչպես նաև խիստ ազդեցության, վերաբնակեցման և խոցելիության նպաստների մասին դրույթներ: Այս իրավունքները մանրամասն ներկայացված են ստորև:

#### □ **Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողերի վրա ազդեցությունը**

- Իրավական կարգավիճակ ունեցող ԱԵԱ-ները կստանան դրամական փոխհատուցում շուկայական կամ կադաստրային արժեքով (որն ավելի բարձր է) գումարած 15% օժանդակություն:
- Վարձակալը կստանա դրամական փոխհատուցում, որը համարժեք է ազդեցության ենթակա հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեքին (որն ավելի բարձր է) գումարած 15% օժանդակություն՝ կախված վարձակալության մնացած տարիների թվից հետևյալ կերպ՝ ա) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%-ը; բ) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%-ը; գ) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%-ը; դ) 25 տարի՝ հողի արժեքի 25%-ը:
- Չձևակերպված օգտագործողները չեն փոխհատուցվի հողի կորստի դիմաց: Միայն կփոխհատուցվեն կարճաժամկետ ներդրումները, եթե այդպիսիք կան:
- Եթե ազդեցության է ենթարկվել ԱԵԱ-ի գյուղատնտեսական նշանակության հողի ավելի քան 10%-ը, ԱԵԱ-ն (սեփականատերերը, վարձակալները և չձևակերպված օգտագործողները) պետք է *խիստ ազդեցության* համար լրացուցիչ նպաստ ստանան, որը համարժեք է կորցրած հողից ստացված տարեկան համախառն եկամտի շուկայական արժեքին (2011թ. համար) կամ միանվագ փոխհատուցում, որը համարժեք է վեց ամսվա աշխատավարձին, եթե 2011թ. որևէ բերք չի եղել, սակայն եղել է 2010թ.:

#### □ **Բնակելի շինություններ**

- Բնակելի շենքերի և շինությունների համար փոխհատուցում պետք է տրամադրվի բոլոր ԱԵԱ-ների և փոխարինման արժեքով + 15% օժանդակություն՝ անկախ ԱԵԱ-ի գրանցման կարգավիճակից: (*Նախադասությունը հանվել է 29.06.17 N 752-Ն*)
- Փոխհատուցումը տրամադրվելու է առանց ամորտիզացիոն մասնահանումների, գործարքի համար ծախսերի և այլն:
- Մասնակիորեն ազդեցություն կրելու դեպքում և այն դեպքում, երբ սեփականատերը չի ցանկանում տեղափոխել շինությունը, ազդեցությունները կընդգրկեն միայն շինության ազդեցության ենթարկված մասը և այդ մասի լիարժեք վերականգնումը շահագործման համար պիտանիության նախկին վիճակին:
- Վերաբնակեցված սեփականատերերին կտրվի վերաբնակեցման և խիստ ազդեցություն կրելու միանվագ նպաստ:
- 

#### **Ոչ բնակելի շինություններ**

ա. ԱԵԱ-ներին սեփականության իրավունքով պատկանող, օրինական շենքի, շինության և ցանկացած այլ ոչ բնակելի անշարժ գույքի կորստի դեպքում՝ սեփականատերերին կտրամադրվի փոխհատուցում՝ կառույցի, շենքի, շինության փոխարինման ամբողջ արժեքի չափով, և օժանդակություն՝ գույքի փոխարինման արժեքի 15 տոկոսի չափով:

բ. Ինքնակամ կառույցի կորստի դեպքում

քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում գտնվող՝ ոչ բնակելի ինքնակամ կառույցների կորստի դեպքում հողամասի սեփականատեր հանդիսացող՝ ինքնակամ կառույց իրականացրած ԱԵԱ-ներին կտրամադրվի դրամական փոխհատուցում՝ շենքի, շինության փոխարինման ամբողջ արժեքի չափով (ոչ պակաս, քան շուկայական արժեքը)՝ առանց 15 տոկոս հավելավճարի:



համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վրա ինքնակամ կառույց իրականացրած անձանց կտրամադրվի վերականգնման օժանդակություն՝ ինքնակամ կառույցի փոխարինման ամբողջ արժեքի չափով (ոչ պակաս, քան շուկայական արժեքը)՝ հանած օրինականացման ծախսերը:

գ. Ինքնակամ կառույցների օրինականացումը սույն ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված դեպքերի համար պարտադիր չէ:

դ. Վերաբնակեցվող վարձակալներին կտրվի վերաբնակեցման և էական ազդեցություն կրելու նպաստ (տես ստորև).

,

#### □ **Մշակաբույսեր**

- Մեկ տարվա բերքի համախառն արժեքի շուկայական ընթացիկ դրույքաչափերին (ներառյալ ներդրումները) համապատասխան լրելյալն դրամական փոխհատուցում: Բերքի կորստի լրացուցիչ տարիները կգնահատվեն զուտ արժեքով (առանց ներդրումների):
- Մշակաբույսերի դիմաց փոխհատուցում պետք է վճարվի վերոնշյալ սահմանումով ինչպես սեփականատերերին, այնպես էլ համայնքային և մասնավոր հողերի վարձակալներին և չձևակերպված օգտագործողներին:

#### □ **Ծառեր**

- Շուկայական դրույքաչափերին համապատասխան դրամական փոխհատուցում՝ հիմնվելով ծառերի տեսակի, բերքատվության (մրգատու և փայտանյութ հանդիսացող ծառերի դեպքում) և վերարտադրության արժեքի վրա:
- Ծառերի դիմաց փոխհատուցումը պետք է տրվի սեփականատերերին և վարձակալներին կամ չձևակերպված օգտագործողներին (երբ նրանք ցուցադրաբար տնկել են ծառեր): Մասնավոր հողերը չձևակերպված օգտագործողները կփոխհատուցվեն մեկ տարվա բերքի արժեքի չափով բերքատվության տարիքի մրգատու ծառերի և խաղողի վազերի դիմաց:

**□ Մշտական և ժամանակավոր ազդեցություններ բիզնեսների վրա**

- Մշտական ազդեցության դեպքում բիզնեսի սեփականատերերը (անհատ ձեռնարկատերեր), ովքեր ներկայացրել են հարկային հայտարարագիր, կփոխհատուցվեն 1 տարվա գնահատված եկամտի չափով, ինչպես նաև այն բոլոր ծախսերի համար, որոնք կատարվել են պետական գրանցում ստանալու և օտարման ենթակա հողակտորների վրա գործունեություն ծավալելու լիցենզիա ստանալու նպատակով:
- Ժամանակավոր ազդեցության դեպքում, փոխհատուցումը բիզնեսների սեփականատերերին (անհատ ձեռնարկատերեր, ովքեր ներկայացրել են հարկային հայտարարագիր) փոխհատուցվում է նույն ընթացակարգով, սակայն հաշվարկվում է բիզնեսի դադարեցման ամիսների քանակի հիման վրա: Կիրառելի ամիսների քանակը հաշվարկվում է ճանապարհի տվյալ հատված շինարարական աշխատանքների ժամանակացույցի հիման վրա և հաշվարկվել է վեց ամիս: Եթե իրական դադարն ավելի երկար է, ապա ԱԵԱ-ն կստանա լրացուցիչ փոխհատուցում առավելագույնը մինչև 12 ամիս:
- Մշտական ազդեցության դեպքում բիզնեսի սեփականատերերը (անհատ ձեռնարկատերեր), ովքեր չեն ներկայացրել հարկային հայտարարագիր, կփոխհատուցվեն 1 տարվա պաշտոնական նվազագույն աշխատավարձի չափով և այն բոլոր ծախսերի համար, որոնք կատարվել են պետական գրանցում ստանալու և օտարման ենթակա հողակտորների վրա գործունեություն ծավալելու լիցենզիա ստանալու նպատակով:
- Ժամանակավոր ազդեցության դեպքում, բիզնեսների սեփականատերերը (անհատ ձեռնարկատերեր, ովքեր չեն ներկայացրել հարկային հայտարարագիր) կփոխհատուցվեն հիմնվելով պաշտոնական նվազագույն աշխատավարձի վրա (32,500 ՀՀ դրամ) բիզնեսի դադարեցման ամիսների քանակի համաձայն: Կիրառելի ամիսների քանակը հաշվարկվում է ճանապարհի տվյալ հատված շինարարական աշխատանքների ժամանակացույցի հիման վրա և հաշվարկվել է վեց ամիս: Եթե իրական դադարն ավելի երկար է, ապա ԱԵԱ-ն կստանա լրացուցիչ փոխհատուցում առավելագույնը մինչև 12 ամիս:

**□ Բիզնեսում ընդգրկված աշխատողներ**

- Կազմակերպության կամ ձեռնարկատիրական գործունեության մշտական կամ ժամանակավոր դադարեցման դեպքում աշխատողը կստանա միանվագ փոխհատուցում վեց ամսվա կորցրած աշխատավարձի դիմաց յուրաքանչյուր ամսվա համար միջին ամսական աշխատավարձի չափով:

**□ Վերաբնակեցման նպաստ**

- ԱԵԱ-ները, որոնք պետք է վերաբնակեցվեն, 1 ամսվա կենսապահովման ծախսերի համար կստանան վերաբնակեցման նպաստ նվազագույն աշխատավարձի չափով (32,500 ՀՀ դրամ), և --- ՀՀ դրամ սուբսիդիա տրանսպորտային ծախսերի համար:

- **Օժանդակություն խիստ ազդեցությունների դեպքում (այս օժանդակությունը տրամադրվում է այն ԱԵՏՏ-ներին, որոնք կորցնում են գյուղատնտեսական հողի 10 և ավել տոկոսը կամ վերաբնակեցվող ԱԵՏՏ-ներին)**

- Այն ԱԵՏՏ-ները, որոնք կորցնում են գյուղատնտեսական հողի 10 և ավել տոկոսը, կստանան խիստ ազդեցության նպաստ 1 լրացուցիչ բերքի փոխհատուցման չափով, որը հավասար է 1 տարվա բերքի արժեքին:
- Վերաբնակեցվող ԱԵՏՏ-ները կստանան խիստ ազդեցության նպաստ 6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով (ամսական 32,500 ՀՀ դրամ):
- ԱԵՏՏ-ները, որոնք որևէ բերք չեն ունեցել գույքագրման ժամանակ, սակայն ունեցել են բերք նախորդ տարում, կփոխհատուցվեն 6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով (ամսական 32,500 ՀՀ դրամ) օժանդակությամբ:

□ **Օժանդակություն խոցելի ԱԵՏՏ-ներին**

- ԱԵՏՏ-ներին, որոնք գրանցված են Ընտանեկան նպաստի համակարգում, ինչպես նաև կանանց և տարեցների կողմից ղեկավարվող տնային տնտեսություններին կտրամադրվի 6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով (ամսական 32,500 ՀՀ դրամ) օժանդակություն: *(92-րդ կետը փոփ., լրաց. 29.06.17 N 752-Ն)*

**IV. ՓՈՒՆՉԱՏՈՒՑՄԱՆ ՄԻԱՎՈՐԻ ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

93. Անշարժ գույքի գնահատումն իրականացվել է “Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Միավորի դիմաց փոխհատուցման դրույքաչափերը կգնահատվեն հավատարմագրված անկախ գնահատողի կողմից՝ հիմնվելով ԱԶԲ-ի համար ընդունելի հստակ և թափանցիկ մեթոդաբանության վրա [տես Հավելված E1. **Գնահատման մեթոդաբանության և գնահատման հաշվետվության օրինակը**]: Հաշվի են առնվել հետևյալ ուղղորդող սկզբունքները որոշակի գույքի/կորստի փոխհատուցման դրույքաչափերը գնահատելիս.

- (i) **Հողի** գնահատումը իրականացվել է շուկայական դրույքաչափով՝ ազդեցությունների ուսումնասիրությանը նախորդող տարում անցկացված հողի վաճառքի ուսումնասիրության հիման վրա<sup>25</sup>:
- (ii) **Առանձնատները/շինությունները** գնահատվել են՝ համաձայն շինարարության տեսակի, նյութերի, արժեքի, աշխատուժի, տրանսպորտի և շինարարական այլ ծախսերի, ինչպես նաև հետագա գործարքային ծախսերի: Փոխհատուցման գումարից ամորտիզացիոն/փրկված նյութերի/հարկերի կամ վարձավճարների դիմաց նվազեցում չի կատարվել: Եթե ԱԵԱ-ներից որևէ մեկը չի ցանկանա տեղափոխվել, ապա մասնակի ազդեցությունների դիմաց հնարավոր է վճարել բացառապես շինության վնասված մասնաբաժնի կամ վերջինիս վերանորոգման համար: Ազդեցության ենթակա հողի վրա առկա ինքնակամ շինությունների օրինականացման ծախսերը հաշվարկվում են անկախ գնահատողի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված դրույքաչափերով:
- (iii) **Տարեկան մշակաբույսերը** գնահատվել են շուկայական գների համաձայն (ներառյալ ներդրումները)՝ նախորդ տարվա բերքի մեծածախ առևտրի արժեքի դիմաց: Այն դեպքերում, երբ բերքի դիմաց ավելի քան 1 տարվա փոխհատուցում պետք է վճարվի ԱԵԱ-ներին, ապա դա պետք է փոխհատուցվի շուկայի համախառն արժեքով:
- (iv) Ծառերը գնահատվել են տարբեր մեթոդաբանությունների համաձայն՝ պայմանավորված նրանով պտղատու է, թե ծառայում է որպես փայտանյութ:

ա. **Մրգատու ծառերը** կգնահատվեն տարիքային կատեգորիայի համաձայն (<sup>3</sup> նորատունկ,  $\mu$ . մեծ, սակայն ոչ մրգատու, (հիմնված տարեկան աճի համար պահանջվող ներդրումներ x առավելագույն տարիների քանակը, որն անհրաժեշտ է ծառը լիարժեք բերքատվության տարիքին աճեցնելու համար) և գ. մրգատու ծառեր (հիմնվելով 1 տարվա եկամուտը x տարիների քանակը, որն անհրաժեշտ է ծառը լիարժեք բերքատվության տարիքին աճեցնելու համար): *(93-րդ կետը լրաց. 29.06.17 N 752-Ն)*

---

25 Օգտագործվել են տվյալներ, որոնք տրամադրվել են “Հողշինմունիտորինգ” ՊՈԱԿ-ի կողմից, ինչպես նաև ստացվել են գնահատող կազմակերպության անշարժ գույքի ուսումնասիրությունների արդյունքում:

բ. Փայտանյութ հանդիսացող ծառերը գնահատվել են ըստ տարիքային կատեգորիայի (ա. նորատունկ; բ. միջին տարիք և գ. մեծ ծառեր) և փայտի ծավալի արժեքի:

94. ԱԵԱ-ներին փոխհատուցման ենթակա փոխարինման արժեքը որոշելիս հաշվի չեն առնվում ակտիվների ամորտիզացիոն վճարները, ինչպես նաև փրկված նյութերի գինը և ազդեցության ենթակա ակտիվների գնահատումից հանած Ծրագրից ստացվող օգուտների արժեքը: Այն դեպքում, երբ ՀՀ օրենքներն ու կանոնակարգերը չեն համապատասխանում փոխարինման ամբողջ արժեքի դիմաց փոխհատուցման չափորոշիչին, կկիրառվեն փոխարինման արժեքով փոխհատուցման ԱԶԲ ուղեցույցերն ու տեխնիկական մասնագրերը:

## V. ՀԱՐԿԱԴԻՐ ՕՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

95. ՀՀ հողի օտարման գործընթացների հիման վրա հարկադիր օտարման դեպքերի սահմանումը սույն ՀՕՏՕ համար սկսվել է ԱԵՏՏ-ներին ազդեցությունների և դրանց դիմաց համապատասխան փոխհատուցման մասին ծանուցումով: Հարկադիր օտարման ցուցակում ընդգրկված են այն ԱԵՏՏ-ները, որոնք կրկին մերժել են ծանուցումը պաշտոնական ստուգումից հետո և, եթե երաշխավորված է, ազդեցության չափը և պատշաճ փոխհատուցումը ճշգրտելուց հետո: Ինչպես նաև հարկադիր օտարման ցուցակում ընդգրկված են բոլոր այն դեպքերը, երբ գույքի սեփականատերերը մահացել են առանց ժառանգների, չեն հայտնաբերվել կամ ապրում են արտերկրում և նրանց հետ կապ չի հաստատվել: Ընդհանուր առմամբ հողը հարկադիր կերպով կօտարվի 91 հողը կորցնող ԱԵՏՏ-ներից: Այս թիվն ընդգրկում է՝ a) 31 հողի սեփականատերեր, որոնք մահացել են առանց բացահայտված ժառանգների; 19 անհայտ սեփականատերեր; 32 արտերկրում բնակվող հողի սեփականատերեր, որոնց հետ կապ չի հաստատվել, և 9 հողի սեփականատերեր, ովքեր մերժել են ստորագրել օտարվող սեփականության նկարագրության արձանագրությունը/պայմանագրի նախագիծը: Այս նպատակով իրականացվեցին հետագա խորհրդատվություններ՝ պարզաբանելու ցանկացած թյուրիմացություն, ինչպես նաև կրկին ուսումնասիրվեց և ստուգվեց նրանց գույքի գնահատումը և, համապատասխան դեպքերում, ճշգրտվեց: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, նախաձեռնվեց հարկադիր օտարման գործընթացը: Տեղական համայնքների ղեկավարները հատուկ ջանքեր գործադրեցին՝ բացահայտելու անհայտ սեփականատերերին կամ արտերկրում բնակվող սեփականատերերին և մահացած սեփականատերերի հնարավոր ժառանգներին: Ավելին, ուղարկվեցին պաշտոնական ծանուցագրեր անշարժ գույքի բոլոր սեփականատերերին նրանց գրանցման հասցեներով կամ անշարժ գույքի գտնվելու վայրի հասցեով: Ի վերջո, համոզվելով, որ բոլոր ԱԵԱ-ները տեղեկացված են սույն Ծրագրի շրջանակում հողի օտարման ծրագրի մասին, ՏԿՆ ինտերնետային կայքէջի (06.05.2012) և տեղական ու ազգային զանգվածային լրատվամիջոցների, “Հայաստանի Հանրապետություն” օրաթերթի (N 102 (5431); 01.05.2012) միջոցով հայտարարվեցին հարկադիր օտարման ենթակա հողակտորները:

96. Հարկադիր օտարման վարույթը Ծրագրի համար կնախաձեռնվի միայն ծայրահեղ դեպքերում, երբ բանակցությունները ԱԵԱ-ների և ՏԿՆ միջև ձախողվում են և չկա այլընտրանքային հող Ծրագրի իրականացման համար: Հարկադիր օտարման գործընթացը կիրականացվի երկու փուլով. 1) նախապատրաստական փուլ՝ ՀՕՏՕ մշակման ժամանակահատվածում, որը ներառում է անհրաժեշտ բոլոր առաջադրանքների պլանավորումը և պահանջվող բոլոր փաստաթղթերի պատրաստումը, և 2) հարկադիր օտարման փուլ, որն ընդգրկում է փոխհատուցման գումարի փոխանցումը դատարանի դեպոզիտային հաշվին, մասնակցությունը դատական գործընթացներին և հարկադիր օտարման մասին որոշման կայացումը, որոնք կկատարվեն ՀՕՏՕ իրականացման ընթացքում՝ ՀՀ կառավարության և ԱԶԲ կողմից ՀՕՎԾ հաստատումից հետո: ՏԿՆ-ն չի զբաղեցնի անհրաժեշտ հողակտորները մինչև: (i) օրենքով սահմանված կարգով համապատասխան դատական վարույթ չսկսվի; (ii) ձեռք չբերվի դատարանի որոշումը և ըստ պատշաճին չհաղորդվի ԱԵՏՏ/ԱԵԱ-ներին; և (iii) փոխհատուցման/վերականգնման գումարները չփոխանցվեն էսքրո հաշվին:

97. Համաձայն ՀՀ Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին օրենքի 26` հարկադիր օտարման վարույթը կնախաձեռնվի ըստ հետևյալ գործընթացների.

- Ձեռքբերողը (ՏԿՆ) պետք է փոխանցի Սեփականության օտարման պայմանագրի նախագիծը (ներառյալ` վերագնահատումը, եթե այդպիսին կա) սեփականատիրոջը և օտարվող գույքի նկատմամբ սեփականության իրավունք կամ որևէ այլ իրավասություն ունեցող մնացած բոլոր անձանց:
- Այն դեպքում, երբ Հողի օտարման պայմանագիրը չի ստորագրվել Պայմանագրի նախագիծը տրամադրելուց հետո **3 ամսվա** ընթացքում, ՏԿՆ-ն կարող է սկսել դատական գործընթաց` Ձեռքբերողի սեփականության իրավունքի փոխանցման մասին հաստատող որոշման համար:
- Գործընթացը սկսելու համար ՏԿՆ-ն պետք է ԱԵԱ-ին վճարվելիք փոխհատուցման հաշվարկված գումարը ի պահ տա (կոչվում է “դեպոզիտ”) դատարանին և այդ մասին պետք է ծանուցի սեփականատիրոջը և գույքի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձանց: Եթե ԱԵԱ-ն տիրապետում է տվյալ ֆինանսական միջոցները հաշվից հանելու իրավունքին, ապա դատարանի կողմից դա համարվում է Օտարման պայմանագրի ընդունմանն ու ստորագրմանը համարժեք: ՏԿՆ-ն ունի դատարանի դեպոզիտ հաշվի անհրաժեշտ բոլոր տվյալները: Այս փոխանցումները կատարելու համար կպահանջվի մեկ բանկային օր:
- Եթե Օտարման պայմանագիրը չի ստորագրվում փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելուց հետո 7 օրվա ընթացքում, ապա ՏԿՆ-ն պետք է դատարանին ներկայացնի Սեփականության օտարման հայցադիմում փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելուց հետո 1 ամսվա ընթացքում: Հայցը լսելիս միայն առաջարկվող փոխհատուցման գումարը կարող է վիճարկվել դատարանում: Ձեռքբերողի սեփականության հարկադիր օտարման իրավունքը վիճարկման ենթակա չէ:
- ՏԿՆ-ն բռնագրավված գույքի նկատմամբ կունենա սեփականության իրավունք դատարանի որոշումն ուժի մտնելուց անմիջապես հետո:

98. Հարկադիր օտարման գործընթացը նախապատրաստելիս ԾԻԿ-ի իրավաբանական աշխատախումբը

- որոշել է այն հողակտորները, որոնք պետք է օտարվեն այս գործընթացով: Մա իրականացվել է արձանագրությունները և հողի օտարման պայմանագրերի նախագծերը սեփականատերերին փոխանցելիս, բանակցություններից հետո և ԱԵԱ-ների կողմից կամովին համաձայնության գալու մերժման դեպքում պաշտոնական ստուգման ժամանակաշրջանում: Մանրամասները ներկայացված են Աղյուսակ E2-ում:
- Սահմանել և պատրաստել է յուրաքանչյուր դեպքին աջակցելու համար անհրաժեշտ իրավական փաստաթղթերը<sup>27</sup>
- Ճշտել է <sup>28</sup>, թե որ դատարանը պետք է զբաղվի յուրաքանչյուր դեպքով (տեղական, թե` ազգային),
- Գնահատել և քննարկել է գործընթացի հավանական ժամանակացույցը: Դատարանի հետ այդ քննարկումների եզրակացությունների արդյունքում մոտ 1-2 ամիս կպահանջվի իրականացման ժամանակահատվածում դատարանների միջոցով հարկադիր օտարման գործընթացն ավարտելու համար:

26 Գերակա հանրային շահ ճանաչելու մասին օրենք, հոդված 10.2

27 Օտարված հողակտորների ցուցակը, Կառավարության որոշումը (Բացառիկ` գերակա հանրային շահ 931-Ն, 977, 70-Ն), պայմանագրի նախնական տարբերակի ստացականի կրկնօրինակը,

գնահատման և/վերագնահատման հաշվետվությունը

28 Դատարանում դեպքերի լսումները տեղի կունենան Արագածոտնի Ընդհանուր իրավասության դատարանում, որն ունի իր գրասենյակները մարզի երեք քաղաքներում: Օրինակ՝ Թալին համայնքի հողակտորների առնչությամբ դեպքերը կլսվեն Թալինի դատարանում, իսկ Աշտարակի դեպքերը՝ Աշտարակի դատարանում:

**Աղյուսակ E2: Հարկադիր օտարման դեպքերի ներկա կարգավիճակը**

<b>Դատարանի որոշման համաձայն օտարման ենթակա դեպքերի նկարագրությունը</b>	<b>No</b>
Կատեգորիա 1. Արտերկրում գտնվող սեփականատերեր /անհայտ հասցեներ/	32
Կատեգորիա 2. Մահացած և առանց ժառանգների սեփականատերեր /չունեն բացահայտված ժառանգներ/	31
Կատեգորիա 3. Անհայտ սեփականատերեր	19
Կատեգորիա 4. ԱԵԱ-ներ, ուլքեր մերժել են ստորագրել	9
<b>Ընդամենը</b>	<b>91</b>

99. Համաձայն 1998թ. հունիսի 17-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի Գլուխ 10-ի՝ “Դատավարական ժամկետները” և Գլուխ 19-ի՝ “Արագացված դատաքննություն”, և խորհրդակցելով քաղաքացիական իրավունքի գծով խորհրդատուի հետ՝ միջինում 10-15 աշխատանքային օրը նորմալ է հարկադիր օտարման յուրաքանչյուր դեպքի լսման համար, ներառյալ՝ վճռաբեկ դատարանի որոշումը (մանրամասների համար տես Հավելված E2):

100. Նախնական բացահայտումների համաձայն՝ Տրանշ 2-ի կմ 41.2 –ում Ներքին Բազմաբերդ-Կաթնաղբյուր համայնքներով անցնող 7կմ ճանապարհահատվածում չկան հարկադիր օտարման դեպքեր: Հետևաբար, այս հատվածում շինարարական աշխատանքները կարող են մեկնարկել Օտարման պայմանագրերը այդ հատվածի բոլոր ԱԵԱ-ների հետ ստորագրելուց և նրանց ամբողջական փոխհատուցումից հետո:



**Ձ. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԸ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՑՈՒՄՆԵՐԸ**

101. Սույն գլուխը նկարագրում է ԱԵԱ-ների հետ հանրային լսումների (այսուհետ՝ ՀԼ) գործընթացը: Հարկ է նշել, որ մանրամասն նախագծման փուլում նախագծային փոփոխությունների հետևանքով համայնքներում ԱԵԱ-ների հետ կազմակերպվել են փուլային հանրային լսումներ.

- հանրային լսումների առաջին փուլն իրականացվեց 2010թ. մարտին,
- հանրային լսումների երկրորդ փուլը՝ 2010թ. սեպտեմբերին,
- հանրային լսումների երրորդ փուլը՝ 2011թ. օգոստոսին:

**I. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ**

102. 2010թ. մարտ ամսվա ընթացքում երկու քննարկումներ են կայացել Արագածոտնի և Շիրակի մարզերի մարզպետարաններում ազդեցության ենթակա համայնքների ղեկավարների, տարածքային իշխանությունների և տարածքային կադաստրի գրասենյակների ներկայացուցիչների մասնակցությամբ: Այնուհետև, 2010թ. օգոստոսի 5-ին ՀՀ կառավարության կողմից Հանրային գերակա շահ ճանաչելու մասին որոշման հրապարակումից և 2010թ. օգոստոսի 15-ին վերջինիս ուժի մեջ մտնելուց հետո 2010թ. սեպտեմբերին պաշտոնական ծանուցագրեր ուղարկվեցին ցուցակում ընդգրկված բոլոր ԱԵԱ-ներին: ՀՀ կառավարության կողմից Հանրային գերակա շահ ճանաչելու մասին որոշման օրինակը և ԱԵԱ-ներին պատկանող հողի մանրամասն տվյալները՝ կադաստրային լտրը և օտարման ենթակա հողակտորի կոդը, փոստով ուղարկվեցին ԱԵԱ-ներին: Սրան հետևեցին հետագա ՀԼ-ները՝ նախապես որոշված օրով և ժամով, որոնց նպատակն էր պատասխանել ԱԵԱ-ների կողմից բարձրացված հարցերին:

103. 2011թ. հուլիսի 19-ին ՀՀ կառավարության կողմից Հանրային գերակա շահ ճանաչելու մասին որոշման հրապարակումից և 2011թ. օգոստոսի 6-ին վերջինիս ուժի մեջ մտնելուց հետո 2011թ. սեպտեմբերին ԾԻԿ-ի ՍՊՎԲԲ նախաձեռնությամբ և նախագծային խորհրդատուի աջակցությամբ ու մասնակցությամբ կազմակերպվեց ՀԼ երրորդ փուլը: Ստորև բերված Աղյուսակ F1-ում ամփոփված են համայնքների անվանումները, որտեղ տեղի են ունեցել հանրային լսումները, վերջիններիս ամսաթվերը և մասնակիցների քանակը (Հավելված Ձ1. Հանդիպումների արձանագրությունը):

**Աղյուսակ Ձ1: Հանդիպումների մասնակիցները**

No.	Ազդեցության ենթակա համայնքները	Ամսաթիվը 2011թ.	Մասնակից ԱԵԱ-ների և ԱԵՏՏ անդամները
1	Ոսկեվազ	Օգոստոսի 17	19
2	Աղձք	Օգոստոսի 17	9
3	Կոշ	Օգոստոսի 18	24
4	Ուջան	Օգոստոսի 19	49
5	Արուճ	Օգոստոսի 19	13
6	Շամիրամ	Օգոստոսի 20	7
7	Կաքավաձոր	Օգոստոսի 20	2
8	Ագարակ	Օգոստոսի 18	29
9	Ներքին Բազմաբերդ	Օգոստոսի 22	22
10	Դավթաշեն	Օգոստոսի 22	13
11	Ներքին Սասնաշեն	Օգոստոսի 22	1
12	Վերին Սասնաշեն	Օգոստոսի 22	1
13	Կաթնաղբյուր	Օգոստոսի 23	24
14	Եղնիկ	Օգոստոսի 23	11
15	Թալին	Օգոստոսի 24	7
16	Փարպի	Օգոստոսի 24	4
	Ընդամենը		235

104. Մասնակից ԱԵԱ-ները թվում է բավարարված էին հանրային լուսմների գործընթացից: Ազդեցության ենթակա համայնքների ԱԵԱ-ների մեծ մասը կամ նրանց հարազատները/ներկայացուցիչները մասնակցեցին հանրային լուսմներին: Շատ տեղերում, որտեղ հաճախելիությունը ցածր էր, պայմանավորված էր տվյալ համայնքում ազդեցության ենթակա անձանց փոքր քանակով: Բոլոր համայնքապետերը ներկա էին իրենց համայնքներում կազմակերպված ՀԼ-ներին:

105. Հանդիպումների ժամանակ ներկայացվեցին տարաբնակեցման գործընթացի հիմնական փուլերը, ներառյալ՝ իրավունքների մատրիցան, ԱԵԱ-ների իրավունքները, բողոքների և դժգոհությունների լուծման մեխանիզմները, ինչպես նաև զանազան առանձին դեպքեր, որոնք քննարկվեցին ԱԵԱ-ների և համայնքային ղեկավարության հետ: Քննարկված հիմնական հարցերն ու պատասխանները, ինչպես նաև առանցքային խնդիրներն ու մտահոգությունները ներկայացված են Աղյուսակ Զ2-ում և Աղյուսակ Զ3-ում:

**Աղյուսակ Զ2. ՀԼ-ների ընթացքում քննարկված խնդիրները**

Հարց	Պատասխան
Ո՞վ է հաշվարկելու հողերի, գույքի և այգիների գինը:	Փոխհատուցման գումարը կհաշվարկվի լիցենզավորված անկախ գնահատողի կողմից՝ համաձայն ԱԶԲ ուղեցույցերի և ՀՀ օրենսդրության:
Ինչպե՞ս կփոխհատուցվեն գյուղատնտեսական հողատարածքները:	Գյուղատնտեսական հողատարածքների փոխհատուցումը կհիմնվի ՀՕՏԾ-ով սահմանված սկզբունքների վրա, մասնավորապես՝ ազդեցության ենթակա գյուղատնտեսական հողերը կփոխհատուցվեն շուկայական արժեքով + 15% օժանդակություն: Օրինականացման խնդիրը և ընթացակարգը բացատրվեց մասնակիցներին: Նշվեց, որ խիստ ազդեցության նպաստ կտրվի այն SS-ներին, որոնք կորցնում են իրենց գյուղատնտեսական եկամտի 10% -ը կամ ավելին, և այն SS-ներին, որոնք կվերաբնակեցվեն (ներառյալ վարձակալները/օգտագործողները/բնակվողները):
Ինչպե՞ս կփոխհատուցվեն ոչ գյուղատնտեսական հողատարածքները:	Ոչ գյուղատնտեսական հողատարածքների փոխհատուցումը կհիմնվի ՀՕՏԾ-ով սահմանված սկզբունքների վրա, մասնավորապես՝ ոչ գյուղատնտեսական հողերի (բնակելի, առևտրային) սեփականատերերը կստանան փոխհատուցում շուկայական արժեքով + 15% օժանդակություն: Օրինականացման խնդիրը և ընթացակարգը բացատրվեց մասնակիցներին: Նշվեց, որ խիստ ազդեցության նպաստ կտրվի խիստ ազդեցության ենթակա տնային տնտեսություններին: (ԽԱԵՏՏ)

<p>Ինչպե՞ս կփոխհատուցվեն ազդեցության ենթակա շենքերը/շինությունները:</p>	<p>Շենքերի և շինությունների համար փոխհատուցումը պետք է հիմնվի ՀՕՏԾ-ով սահմանված հետևյալ սզբունքների վրա. բնակելի շինությունները կփոխհատուցվեն անկախ ԱԵԱ-ի գրանցման կարգավիճակից՝ փոխարինման արժեքով + 15% օժանդակություն: Այնուամենայնիվ, տան սեփականատերերը, որոնք գրանցում չունեն, պետք է օրինականացվեն փոխհատուցում ստանալու նպատակով: Փոխհատուցումը տրամադրվելու է առանց ամորտիզացիոն մասնահանումների, գործարքի համար ծախսերի և փրկված նյութերի: Օտարման ենթակա շենքերը և շինությունները կգնահատվեն ըստ շինարարական նյութերի: Ոչ բնակելի շենքերի և շինությունների համար փոխհատուցում կտրամադրվի ինչպես բնակելի շինությունների դեպքում միայն այն ԱԵԱ-ներին, որոնց պատկանող գույքը օրինականորեն գրանցված է: Այնուամենայնիվ, գրանցում չունեցող ԱԵԱ-ները կփոխհատուցվեն օրինականացումից հետո: Շինություններն օրինականացնելու համար ԱԵԱ-ները պետք է վճարեն գրանցման համար պահանջվող գումարները: Վերաբնակեցվող վարձակալներին կտրվի վերաբնակեցման և խիստ ազդեցություն կրելու նպաստ:</p>
<p>Արդյոք նախատեսվում է փոխհատուցում մշակաբույսերի և ծառերի կորստի դիմաց:</p>	<p>Մշակաբույսերի դեպքում նախատեսվում է մեկ տարվա բերքի համախառն արժեքի շուկայական ընթացիկ դրույքաչափերին համապատասխան լրելայն դրամական փոխհատուցում: Մշակաբույսերի փոխհատուցման գումարը կվճարվի հողի սեփականատիրոջը և վարձակալներին իրենց բնավարձակալության պայմանագրերի հիման վրա: Ծառերի դեպքում դրամական փոխհատուցումը կտրվի շուկայական դրույքաչափերին համապատասխան՝ հիմնվելով ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության վրա:</p>
<p>Ինչպե՞ս կհաշվարկվի բիզնեսի</p>	<p>Բիզնեսի մշտական կորստի դեպքում փոխհատուցումը կկազմի ֆիզիկական անձի մեկ</p>

փոխհատուցումը:	տարվա գուտ եկամտին համարժեք գումարը՝ հարկերի մասին հայտարարագրերի հիման վրա: Ժամանակավոր կորստի դեպքում փոխհատուցումը կկազմի ըստ հարկերի մասին հայտարարագրերի ամսական եկամտի գումարը՝ բիզնեսի դադարեցման ամիսների քանակի համաձայն: Հարկերի մասին հայտարարագրերի բացակայության դեպքում այս ԱԵԱ-ները կփոխհատուցվեն վերոնշյալ ձևով, սակայն հիմնվելով օրենքով թույլատրելի առավելագույն չհարկվող աշխատավարձի վրա:
Ի՞նչ կպատահի համայնքային ենթակառուցվածքների հետ ազդեցության ենթակա տարածքներում:	Համայնքային ենթակառուցվածքները, որոնք ազդեցության են ենթարկվել ծրագրի ընթացքում, ամբողջությամբ պետք է փոխարինվեն կամ վերականգնվեն այնպես, որ կարողանան իրականացնել ծրագրից առաջ ունեցած գործառնությունները:
Ինչպե՞ս կարող է ԱԵԱ-ն բողոքարկել որոշումները, որոնց հետ համաձայն չէ և ստանալ իր բողոքի լուծումը՝ կապված հողի/գույքի օտարման փոխհատուցման հետ:	ԱԵԱ-ները պատշաճ կերպով կտեղեկացվեն իրենց իրավունքների և բողոքները ներկայացնելու գործընթացի մասին: Բողոքների լուծման գործընթացը, որը նկարագրված է ՀՕՏ-ում, բացատրվել է մասնակիցներին մանրամասնորեն: Հաստատվել է նաև, որ բողոքարկման մեխանիզմը չի սահմանափակում ԱԵԱ-ի դատարան դիմելու իրավունքը բողոքների լուծման գործընթացից գոհ չլինելու դեպքում:
Ուշան համայնքի ԱԵԱ-ները մտահոգված էին առաջարկվող ծրագրի վերաբերյալ, որը կբաժանի իրենց այգիները երկու մասի:	Մասնակիցներին բացատրվեց, որ քննարկումներ են տեղի ունեցել նախնական նախագծով առաջարկվող ծրագրի վերաբերյալ: Հաստատվեց նաև, որ նրանց մտահոգությունը կհաղորդվի համապատասխան իշխանություններին:

**Աղյուսակ 93. Բարձրացված և քննարկված մտահոգությունները**

<b>Մտահոգություններ</b>	<b>Քննարկումներ</b>
Այս պահի դրությամբ ԱԵԱ-ները չեն կարողանում վերջնական որոշում կայացնել ամբողջ հողի կամ միայն վերջինիս օտարման ենթակա մասից հրաժարվելու վերաբերյալ:	Քննարկվել է, որ ԱԵԱ-ներին հնարավորություն կընձեռվի ներկայացնել իրենց վերջնական որոշումը արձանագրությունը ստորագրելիս: Օրենքը թույլատրում է ԱԵԱ-ին օտարման մասին Կռավարության համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 2 ամսվա ընթացքում որոշում կայացնել հողն ամբողջությամբ կամ միայն դրա ազդեցության ենթակա մասը վաճառելու վերաբերյալ:
ԱԵԱ-ների համար խիստ մտահոգիչ են խնդիրները՝ կապված պայմանագրի ստորագրման, վճարումները ստանալու, բանկային հաշիվները բացելու և այլնի հետ:	ԱԵԱ-ներին կտրվի հնարավորություն ստուգել իրենց գույքը նկարագրող արձանագրությունները դրանք ստորագրելիս: Այնուհետև, դրանց և մանրամասն գնահատման տվյալների հիման վրա կպատրաստվեն պայմանագրերի նախնական տարբերակները և կուղարկվեն բոլոր ԱԵԱ-ներին: ԱԵԱ-ները կարող են չհամաձայնել պայմանագրի նախնական տարբերակի պայմաններին և կարող են ուղարկել իրենց գրավոր մեկնաբանությունները վերջիններիս վերաբերյալ պայմանագրի նախնական տարբերակը ստանալուց հետո: Պայմանագրի նախնական տարբերակի ժամանակ ԱԵԱ-ները կարող են ՕԻԿ-ին ներկայացնել իրենց բանկային հաշիվները փոխհատուցման գումարների փոխանցման համար: Եթե ԱԵԱ-ն չունի բանկային

	<p>հաշիվ, ապա ԾԻԿ-ը կաջակցի բացել նոր բանկային հաշիվ ԱԵԱ-ի անունով:</p>
<p>ԱԵԱ-ները մտավախություն ունենին, որ հողի շուկայական գինը՝ հաշվարկված հիմնվելով վերջին գործարքների վրա, չի արտացոլի շուկայի իրական իրավիճակը, քանի որ գրանցված գներն ավելի ցածր են, քան շուկայական գինը:</p>	<p>Գնահատող ընկերության ներկայացուցիչները ներկայացրեցին գնահատման գործընթացը՝ մասնավորապես նշելով, որ գնահատման գործընթացում հաշվի են առնվել ոչ միայն գոյություն ունեցող գործարքային ծախսերը, այլև շուկայի ներկայիս պայմանները՝ ըստ առաջարկի և պահանջարկի և գովազդի/հայտարարությունների: Անշարժ գույքի գործակալության կողմից տրամադրված տվյալների վերլուծությունը նույնպես հաշվի է առնվել:</p>
<p>Մշակաբույսերի/ծառերի գնահատումը ևս մտահոգության առարկա էր ԱԵԱ-ների համար:</p>	<p>Բոլոր ԱԵՏՏ-ները կփոխհատուցվեն՝ անկախ իրենց իրավական կարգավիճակից: Մշակաբույսերի դեպքում նախատեսվում է մեկ տարվա բերքի համախառն արժեքի շուկայական ընթացիկ դրույքաչափերին համապատասխան լրելային դրամական փոխհատուցում: Դրամական փոխհատուցումը կտրվի շուկայական դրույքաչափերին համապատասխան՝ հիմնվելով ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության վրա:</p>
<p>Մարդիկ կարծում էին, որ հողի վրա ժամանակավոր ազդեցությունները հստակորեն չեն սահմանված:</p>	<p>Որոշվեց, որ բոլոր ժամանակավոր ազդեցությունները, որոնք կհայտնաբերվեն շինարարական աշխատանքների ժամանակ, կգրանցվեն և պատշաճ կփոխհատուցվեն ծրագրի կողմից:</p>
<p>ԱԵԱ-ները հարցրեցին, թե արդյոք նրանք կարող են աշնանը ցանել հողը:</p>	<p>ԱԵԱ-ները կարող են ցանել հողի այն մասը, որը օտարման ենթակա չէ: Ցանկացած բարելավում ազդեցության ենթակա հողի վրա չի փոխհատուցվի:</p>

Մտահոգություններ	Քննարկումներ
ԱԵԱ-ներն առաջարկեցին, որ իրենց թույլատրվի օգտագործել օտարված կտրված ծառերը, մշակաբույսերը, շինությունների նյութերը և այլն:	ՀՕՏ-ն թույլատրում է ապամոնտաժված շինություններից փրկված նյութերի յուրացումը, մինչդեռ կտրված ծառերի օգտագործման հարցը ենթակա է քննարկման ՀՀ կառավարության հետ:
ԱԵԱ-ները բարձրացրեցին հողի օրինականացման/գրանցման հարցը ժառանգությունը փոխելիս: Որոշ դեպքերում նրանք երկար տարիներ օգտագործել են հողը առանց փոխելու սեփականատիրոջ անունը իրենց նախնիների և բարեկամների մահից հետո:	ԾԻԿ-ը անհրաժեշտության դեպքում կաջակցի և կօժանդակի գրանցման գործընթացին:
Մարդիկ բարձրացրեցին ստորգետնյա անցումների հարցը ճանապարհի երկու կողմից հողատարածքներ մուտք գործելու համար:	Ներկայացվեցին S2 ճանապարհի նախագծի որոշ ասպեկտներ: Մասնավորապես, նախատեսված են 8 գյուղատնտեսական ստորգետնյա անցումներ (3մ բարձրությամբ և 5մ լայնությամբ) կենդանիների և հետիոտների համար, և 10- ը՝ գյուղատնտեսական մեխանիզմների և սարքավորումների համար (4.5մ բարձրությամբ և 6մ լայնությամբ): Ինը տարամակարդակ փոխհատումները կապահովեն կապը նոր մայրուղու և տեղական ճանապարհների ու համայնքների միջև: Այս փոխհատումներից երեքը հանդիսանում են ուղենացեր, իսկ վեցը՝ ստորգետնյա անցումներ:
Որոշ ԱԵԱ-ներ պահանջեցին աշխատանք՝ որպես այլընտրանքային կենսապահովման միջոց:	ԱԵԱ-ները, մասնավորապես խոցելի ԱԵԱ-ները, առավելություն կունենան ճանապարհի շինարարական աշխատանքների ընթացում:
Որոշ ԱԵԱ-ներ ունեն վարկի դիմաց գրավ դրված հողեր և վերցրած վարկեր: Նրանց հետաքրքրում էր, թե ինչպիսի ազդեցության կենթարկվեն իրենք և ինչպիսին կլինի փոխհատուցման գործընթացը:	Բացատրվեց, որ պայմանագիր կստորագրվի ԱԵԱ-ի և բանկի հետ: ԾԻԿ-ը կմշակի մանրամասն մեխանիզմ յուրաքանչյուր դեպքի համար:
Կան մի շարք դեպքեր, երբ ԱԵՏՏ- ները խոցելի են մի շարք խոցելիության կատեգորիաներով: Նրանց հետաքրքրում էր, թե ինչպես	Բոլոր խոցելի ԱԵՏՏ-ները կստանան 195 000 ՀՀ դրամ փոխհատուցում (6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով):

<p>իրենց կփոխհատուցեն:</p>	
----------------------------	--

**II. ՀՕՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ**

106. ՀՕՏ՝ պատրաստման ընթացքում տեղեկատվական նյութեր են պատրաստվել և փոստի միջոցով բաժանվել ԱԵԱ-ներին Հանրային գերակա շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշումից հետո, որպեսզի ԱԵԱ-ներն իրագեկվեն իրենց իրավունքների, փոխհատուցման գործընթացի և բողոքների լուծման մեխանիզմի մասին: Հայերեն լեզվով պատրաստվել է և ՀԼ վերջին փուլերում համայնքներին է բաժանվել նաև նախնական բրոշյուր, որը բացատրում է Ծրագրի նպատակն ու շրջանակը, ինչպես նաև ԱԵԱ-ների իրավունքներն ու փոխհատուցման գործընթացը, բողոքների լուծման մեխանիզմը:

107. Վերջնական ՀՕՏ-ն թարգմանվել է հայերեն: ՀՕՏ անգլերեն տարբերակը կտեղադրվի ԱԶԲ և ՏԿՆ կայքէջերում: ՀՕՏ հայերեն տարբերակը կտեղադրվի միայն ՏԿՆ կայքէջում:

108. Ծրագրի իրականացման վերջնական պամֆլետը, որը կամփոփի ազդեցությունները, իրականացման միջոցառումները և ՀՕՏ փոխհատուցման քաղաքականությունը, կուղարկվի բոլոր ԱԵԱ-ներին վերջնական ՀՕՏ-ի հաստատումից անմիջապես հետո (Հավելված B. Ծրագրի

իրականացման պամֆլետ):

## **Է. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**

109. Տրանսպորտի և կապի նախարարությունը (ՏԿՆ) հանդիսանում է Գործադիր մարմին (ԳՄ), իսկ ԾԻԿ-ը հանդիսանում է Իրականացնող գործակալություն (ԻԳ) Ծրագրի համար: ԾԻԿ-ն ունի Սոցիալական պաշտպանության, վերաբնակեցման և բնապահպանական բաժին (ՍՊՎԲԲ), որը մշակում և իրականացնում է ՀՕՏԾ-ն՝ հիմնվելով ՀՕՏԾ-ում սահմանված քաղաքականության և ընթացակարգերի վրա: ՀՕՏԾ-ում նկարագրված փոխհատուցման/վերականգնման առաջադրանքները ներառում են հստակ գործընթացներ և գործողություններ, որոնց իրականացումը ենթադրում է տարբեր կառույցների ներգրավումը:

110. Մի քանի այլ պետական գործակալություններ իրենց կարևոր դերերը կունենան ՀՕՏԾ-ի իրականացման գործում: ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն և իր տարածքային գրասենյակները պատասխանատու կլինեն անշարժ գույքի սեփականության գրանցման և սեփականության իրավունքների մասին տեղեկությունը տրամադրելու համար: Սերտորեն կներգրավվեն նաև տեղական ինքնակառավարման մարմինները: Վերոնշյալ որոշ կառույցների դերը նկարագրվում է ստորև:

### **I. ՏԿՆ/ԾԻԿ**

111. ՏԿՆ-ն կրում է ամբողջական պատասխանատվություն Ծրագրի համար: Դա ներառում է ՀՕՏ-ի բոլոր առաջադրանքների նախապատրաստումը, իրականացումը և ֆինանսավորումը, ինչպես նաև գործակալությունների փոխհամագործակցության և փոխկապվածության համակարգումը: ՏԿՆ-ն կիրականացնի իր պարտավորությունները ԾԻԿ-ի միջոցով: ԾԻԿ-ը պատասխանատու կլինի ՀՕՏ-ի բոլոր առաջադրանքների պլանավորման և իրականացման համար:

112. ԾԻԿ-ը պատասխանատու է (i) կադաստրի գրասենյակի և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքի համակարգման համար; (ii) կադաստրային քարտեզների և հողատարածքների տվյալների ձեռք բերման համար; (iii) խորհրդատուներին քարտեզավորման, հետազոտման և ճշգրտման գործունեություններում աջակցության համար; (iv) Խորհրդատուներին գույքի անկախ գնահատողներ վարձելու; (v) խորհրդատուների և տեղական ինքնակառավարման մարմինների աջակցությամբ հանրային լուսմների կազմակերպման և իրականացման համար; (vi) ՀՕՏԾ-ի ներկայացումը ԱԶԲ-ին ընթերցման համար; (vii) ՀՕՏԾ-ն տեղեկատվական ձեռնարկ հրատարակելու համար; (viii) ՀՕՏԾ-ի իրականացումը պլանավորելու և կառավարելու և փոխհատուցումը բաշխելու համար; (ix) վերջնական բռնագրավման գործընթացները նախաձեռնելու և ըստ անհրաժեշտության դատարանների հետ համակարգելու համար; (x) անհատական բողոքարկումների դեպքում աջակցություն ցուցաբերելու համար; (xi) պատշաճ ներքին մոնիտորինգը ապահովելու համար; (xii) Արտաքին մոնիտորինգի գործակալությունը (ԱՄԳ) վարձելու համար; (xiii) ԱԵԱ-ների տեղեկատվական բազան պահպանելու համար; և (xiv) անհրաժեշտ փաստաթղթերը տրամադրելու և ԱԵԱ-ներին ՀՕՏ բյուջեներից փոխհատուցումների արագ տրամադրումն ապահովելու նպատակով համապատասխան պետական գործակալությունների հետ աշխատանքը համակարգելու համար, ինչպես նաև ՀՕՏ-ին վերաբերվող բոլոր գործունեությունների համակարգումը իրականացնելու համար; և ցանկացած այլ խնդիրների համար, որոնք կապված են ԱԵԱ-ների տարաբնակեցման և վերականգնման հետ:

113. ԾԻԿ-ի ՍՊՎԲԲ-ն կունենա համապատասխան աշխատակազմ ՀՕՏԾ-ն իրականացնելու համար: ԾԻԿ-ը կհավաքագրի և կստեղծի Իրականացնող թիմ (ԻԹ), որը կներառի 4 մասնագետներ՝ 2 իրավաբան և 2 սոցիալական զարգացման մասնագետ գործողությունների իրականացման



համար: ԻԹ-ն աշխատանքի կանցնի և կմոբիլիզացվի ՀՀ կառավարության կողմից համապատասխան որոշմամբ ՀՕՏՕ-ն հաստատվելուց և ՀՕՏ ֆինանսական միջոցների հատկացումից անմիջապես հետո: ՄՊՎԲԲ ղեկավարը կհանդիսանա նաև ԻԹ ղեկավար: ԻԹ հիմնական առաջադրանքներն ընդգրկում են հետևյալը.

- աջակցել ՄՊՎԲԲ-ԾԻԿ-ին նախաձեռնելու հանրային իրազեկման արշավներ ազդեցության ենթակա համայնքներին Տարաբնակեցման քաղաքականությանը և իրավունքների փաթեթներին տեղեկացնելու նպատակով:
- Հանդիսանալ կապող օղակ ՄՊՎԲԲ-ԾԻԿ և ԱԵԱ-ների միջև կանոնավորապես կազմակերպվող հանդիպումների միջոցով, մասնավորապես՝ Բողոքների լուծման խմբի (ԲԼԽ) միջոցով:
- Աջակցել ԱԵԱ-ներին իրենց բողոքները ՀՕՏՕ-ով սահմանված բողոքների լուծման մեխանիզմի միջոցով լուծելիս և աջակցել այն ԱԵԱ-ներին, ովքեր իրենց բողոքների համար հետամուտ են լինում հարմար լուծումների:
- Անհրաժեշտության դեպքում դիտարկել և լուծում տալ պայմանագրերի նախնական օրինակների վերաբերյալ ԱԵԱ-ների ուղարկված մեկնաբանություններին և արձագանքել դրանց:
- Կազմակերպել պայմանագրերի ստորագրման գործընթացը:
- Բանկային հաշիվներ բացելիս աջակցել այն ԱԵԱ-ներին, ովքեր դեռևս չեն բացել բանկային հաշիվներ:
- Օրինականացման գործընթացում աջակցել և խորհրդատվությամբ ապահովել օրինականացման ենթակա ԱԵԱ-ներին, եթե կան այդպիսիք:
- Աջակցել ԱԵԱ-ներին ստանալ փոխհատուցում Ծրագրի նպատակներով օտարված իրենց հողերի և գույքի դիմաց:
- Աջակցել ԱԵԱ-ներին ստուգել ըստ իրենց իրավունքների իրենց հատկացված փոխհատուցման համապատասխանությունը: Որևէ անհամապատասխանության դեպքում ԻԹ-ն պարտավոր է օգնել ԱԵԱ-ին խնդիրը բողոքների լուծման մեխանիզմի միջոցով կարգավորելու համար:
- Աջակցել ՄՊՎԲԲ-ԾԻԿ-ին սահուն կազմակերպելու ԱԵԱ-ների և նրանց բիզնեսների տեղափոխությունը:
- Աջակցել ԱԵԱ-ներին աշխատանք ձեռք բերել Կապալառուի մոտ շինարարության ընթացքում՝ ունեցած հմտությունների համապատասխան և ըստ Կապալառուի պահանջի:
- Անհրաժեշտության դեպքում այլ առաջադրանքներ:

114. Հավելված G1-ը նկարագրում է ԻԹ Պարտականությունների շրջանակը ՀՕՏՕ իրկանացման համար:

115. ԱԶԲ միջազգային խորհրդատուների կողմից ԱԶԲ Սոցիալական անվտանգության քաղաքականության վերաբերյալ կազմակերպվեց մեկօրյա ուսուցում ԾԻԿ-ի, ՄՉՀ և գնահատող խորհրդատուի, վերահսկող խորհրդատուների համար:

116. Ծրագրի կառավարման խորհուրդը (ԾԿԽ), որը կազմված է ՀՀ վարչապետի նախագահությամբ շահառու կողմ հանդիսացող նախարարությունների ներկայացուցիչներից, ստեղծվել է Ծրագիրը վերահսկելու և բարձրաստիճան որոշումներ կայացնելու, ներառյալ՝ ԱԵԱ-ների բողոքարկումները լուծելու կամ ԱԵԱ-ների բողոքների վերաբերյալ վերջնական որոշում կայացնողի դերը ստանձնելու համար, ԱԵԱ-ների կողմից դատարան դիմելու նախադեպերից խուսափելու նպատակով:

## II. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

117. Համայնքային իշխանությունները տրամադրեցին և կշարունակեն տրամադրել տեղեկատվություն ԱԵԱ-ների վերաբերյալ: Համայնքային իշխանություններն աջակցում էին սոցիալական հետազոտությունների իրականացմանը, հողի չափագրումներին և հողի տեսակի

որոշմանը և աջակցում էին համայնքային և ԱԵԱ-ների հետ խորհրդակցությունների կազմակերպմանը: Անհրաժեշտության դեպքում նրանք կաջակցեն նաև բողոքների և այլ խնդիրների լուծման գործում: Չնայած փոխհատուցման գումարն անմիջապես կվճարվի ԱԵԱ-ների բանկային հաշվին՝ տեղական իշխանությունների աջակցությունը կպահանջվի ԱԵԱ-ներին փոխհատուցումների մասին տեղեկացնելու համար:

### III. ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ

118. ԱԶԲ-ն պարբերաբար կստուգի Ծրագրի և ՀՕՏ-ի իրականացումը:

### IV. ԱՅԼ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ


119. Մի քանի գերատեսչություններ արդեն մասնակցել են և կմասնակցեն ՀՕՏ առաջադրանքների պատրաստմանը և իրականացմանը: Դրանցից են.

- i. **Ֆինանսների նախարարություն.** ՀՕՏ-ի իրականացման համար բյուջեները տրամադրվելու են ՏԿՆ-ին Ֆինանսների նախարարության կողմից վերջնական ՀՕՏ-ի պաշտոնական հաստատումից հետո:
- ii. **ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե.** պատասխանատու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի մասին տեղեկությունը տրամադրելու համար, ինչպես նաև սեփականության իրավունքի պետական գրանցման համար:
- iii. **Տեղական դատարաններ մարզերում.** բռնագրավման խնդիրների դեպքում ՏԿՆ-ն ստիպված է հենվել մարզերում տեղական դատարանների վրա, որոնք պատշաճ դատական կարգով պետք է ուսումնասիրեն բռնագրավման հետ կապված դեպքերը, իրականացնեն դատական լսումներ և որոշեն՝ արդյոք հողերը կարող են բռնագրավվել և ինչ գնով:
- iv. **Խորհրդատուներ՝ ընդգրկված ՀՕՏ առաջադրանքներում.**
  - Նախագծող խորհրդատուներ. ՀՕՏ միջազգային և տեղական մասնագետներն են, որոնք կվերանայեն և կամփոփեն Տրանշ 2-ի ՀՕՏ-ն:
  - Գույքի անկախ գնահատողներ. Դրանք հավաստագրված մասնավոր կազմակերպություններն են, որոնք վարձվում են ԾԻԿ-ի կողմից ազդեցությանը ենթարկվող գույքը գնահատելու համար:
  - Արտաքին մոնիտորինգի գործակալություն (ԱՄԳ). Գործակալություն, որը վարձվում է Տրանշ 2-ի ՀՕՏ-ի իրականացման արտաքին մոնիտորինգը և գնահատումը կատարելու համար: ԱՄԳ-ն կհանձնի անկախ մոնիտորինգի և գնահատման հաշվետվություն ՀՕՏ իրականացման վերաբերյալ ՏԿՆ-ի ԾԻԿ-ին (ՄՊՎԲԲ) և ԱԶԲ-ին:
  - Կնշանակվի Ծրագրի կառավարման խորհրդատու (ԾԿԽ) Ծրագրի իրականացումը մոնիտորինգի ենթարկելու և ՏԿՆ-ին ու ԱԶԲ-ին հաշվետվություն ներկայացնելու համար՝ ապահովելով սոցիալական և բնապահպանական պահանջների և նախագծային լուծումների համապատասխանությունը: ԾԿԽ-ն կմշակի Ծրագրի իրականացման մոնիտորինգի համակարգ (ԾԻՄՀ): ԾԻՄՀ-ն կներառի աղքատության և սոցիալ-տնտեսական առանցքային ցուցանիշները և համապատասխանությունը Ծրագրի երաշխիքներին: ԾԿԽ-ն կներառի միջազգային և տեղական մասնագետներ, ովքեր կաջակցեն ՀՕՏ իրականացման ընդհանուր վերահսկողությանը և կապահովեն ճիշտ մեթոդոլոգիաների և փորձի կիրառությունը ՀՕՏ իրականացման գործընթացում: Մասնագետները խորհուրդ կտան աշխատանքների իրականացման փոփոխությունները մշակելիս:

### V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

120. Արդյունավետ կազմակերպումը կարևոր է հարկադիր տարաբնակեցումն արդյունավետորեն իրականացնելու և կառավարելու համար: Վերոնշյալ մարմինների/կազմակերպությունների/գերատեսչությունների մասնակցությունը կարևոր է հողի օտարման, տարաբնակեցման, հանրային լսումների և մասնակցության ժամկետային սահմանափակում ունեցող պլանների իրականացման համար: **Պատկեր Է1**-ը ստորև ներկայացնում է ծրագրի իրականացման համակարգը.

**Պատկեր Է1. ՀՕՏ կառուցվածքային սխեման և գործողությունները**



## Ը. ԲՈՂՈՔՆԵՐ ԵՎ ԴԺԳՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

121. Բողոքների լուծման մեխանիզմը պետք է հասանելի դառնա, որպեսզի ԱԵԱ-ն հնարավորություն ունենա բողոքարկելու ցանկացած անախորժ որոշում, գործելակերպ կամ գործունեություն, որն առաջանում է հողի կամ այլ ակտիվների փոխհատուցման արդյունքում: Հիմնական նպատակն է տեղում լուծել տարաբնակեցման վերաբերյալ որևէ դժգոհություն, խորհրդակցելով տուժող կողմի հետ, ՀՕՏԾ-ի սահուն իրականացմանը նպաստելու համար: Մյուս կարևոր խնդիրն է ժողովրդավարացնել զարգացման գործընթացը տեղական մակարդակում և ազդեցության ենթակա անձանց հանդեպ պատասխանատվություն սահմանել:

122. Բողոքների լուծման գործընթացը սկսվեց որպես ոչ պաշտոնական գործընթաց այն պահից, երբ ԱԵԱ-ները ներկայացրեցին բողոքները գրավոր ձևով հողի / շենքի / բիզնեսի վերաբերյալ նկարագրական արձանագրությունների ստորագրման ընթացքում: ԾԻԿ-ը պատշաճ, առանձին կարգով անդրադարձել է դրանց՝ միջանձնային հաղորդակցության և հեռախոսազանգերի միջոցով իրականացնելով տեխնիկական պաշտոնական ստուգում: ԾԻԿ-ը բողոքների գրանցման հետագա հնարավորություն է ընձեռել ԱԵԱ-ներին՝ ազդեցությունների վերաբերյալ ծանուցումները/պայմանագրերի նախնական տարբերակները ուղարկելու միջոցով: ՀՕՏԾ-ի պատրաստման այս փուլում ԱԵԱ-ները դեռ կարող են գրանցել բողոքները գրավոր ձևով ԾԻԿ-ում՝ նախքան պայմանագրի ստորագրման օրը:

123. Բացի այդ, ՀՕՏԾ-ի պատրաստման ընթացքում իրականացվել է պաշտոնական ստուգումը, և տվյալ ՀՕՏԾ-ն սահմանում է նաև բողոքների և դժգոհությունների լուծման ֆորմալ գործընթաց, որը կկիրառվի ՀՕՏԾ-ի իրականացման փուլում, իսկ եթե հարկ լինի, նաև ավելի ուշ: Բողոքների լուծման այդ գործընթացում ներգրավված կլինեն մի քանի կողմեր, դրանցից են՝ ՏԿՆ-ն, ԾԻԿ-ը և ԿԽ-ն: Ջանքեր կգործադրվեն Բողոքների լուծման խմբի<sup>29</sup> աջակցությամբ և համայնքային մակարդակով լուծել ներկայացված բողոքները: Ծրագրի իրականացման արդյունքում ազդեցությանը ենթարկված անձանց բողոքների լուծման գործում ԲԼԽ-ն կապահովի օրինականություն և թափանցիկություն:

124. ԲԼԽ-ն բաղկացած է լինելու ՏԻՄ ներկայացուցիչներից, ծրագրի գյուղերում ազդեցության ենթակա անձանց ներկայացուցիչներից, բոլոր այն կարևոր անձանցից, ում ներկայությունն անհրաժեշտ է և կին ԱԵԱ-ից, մասնակցային գործընթացի ապահովման և ազդեցության ենթակա համայնքների ձայնի լսելիության և լուծման համար: ՏԿՆ-ԾԻԿ (ՄՊՎԲԲ) ներկայացուցիչը ԲԼԽ-ի նիստերը հրավիրողն է լինելու և աշխատելու է ՄՊՎԲԲ-ի ղեկավարության ներքո: ԲԼԽ-ն ունենալու է հետևյալ կազմը՝

- ՄՊՎԲԲ -ԾԻԿ ներկայացուցիչ (Նիստեր հրավիրող անձ)
- Համապատասխան ՏԻՄ անդամ
- Ազդեցության ենթակա գյուղի ԱԵԱ-ներից մեկ կին ներկայացուցիչ
- Ազդեցության ենթակա գյուղի ԱԵԱ-ներից մեկ տղամարդ ներկայացուցիչ

125. Հանդիպումների ժամանակացույցը պատրաստվելու և հայտարարվելու է ԲԼԽ-ի ձևավորման պահից:<sup>30</sup>

- Շաբաթական առնվազն մեկ հանդիպում է կազմակերպվելու յուրաքանչյուր համայնքում:
- Որոշ լրացուցիչ հանդիպումների անհրաժեշտություն կարող է առաջանալ բազմաթիվ

---

<sup>29</sup> ԲԼԽ-ի այս կառուցվածքը հաջողությամբ գործարկվել է բազմաթիվ նախկին ծրագրերում, օր.՝ Բանգլադեշում Հարավարևմտյան ճանապարհային ցանցի զարգացման ծրագրի դեպքում: Ծրագրից հետո իրականացվող գնահատումները ցույց են տալիս, որ ԲԼԽ-ներն արդյունավետ գործարկվել և հաջողվել են վեճերի լուծման հարցում՝ մասնակցային եղանակով և որոշումների ընդունման գործընթացի արդարությամբ:

30ԲԼԽ-ները կձևավորվեն ՏԿՆ-ի և ԱԶԲ-ի կողմից ՀՕՏԾ-ի հաստատումից անմիջապես հետո: ՏԻՄ ներկայացուցիչների և ԾԻԿ-երի միջև նախնական քննարկումներ են տեղի ունեցել ԲԼԽ-ների և այս խմբերում տեղական իշխանություններին ներգրավելու մասին:

խնդիրներ ունեցող համայնքներում:

- ԲԼԽ-ն իրենց ներկայության ժամանակացույց է սահմանելու դժգոհությունների լուծման համար:
- Տեղական իշխանությունները ԱԵԱ-ներին ու ԱԵՏՏ-ներին կտեղեկացնեն ժամի և վայրի մասին, ինչպես նաև հայտարարություններ կփակցնեն հասարակական վայրերում:
- ԲԼԽ-ի հանդիպումները տեղի կունենան համապատասխան ՏԻՄ գրասենյակում, ծրագրի տարածքում կամ այլ վայրում (վայրերում)՝ համաձայնեցնելով խմբի բոլոր անդամների հետ:
- ԲԼԽ անդամները տեղանքային այցելություններ կնախաձեռնեն, որպեսզի ճշտեն և ուսումնասիրեն վիճահարույց խնդիրները, այդ թվում՝ իրավական հիմքերը/բաժնետոմսերը, վճարումների կամ համապատասխան այլ գործարքների հետաձգման պատճառները:
- Ստացված և քննարկված բոլոր բողոքները փաստաթղթերով կձևակերպվեն, անկախ նրանից դրանք լուծվել են թե ոչ:
- ԲԼԽ-ների կազմավորվելուց հետո դժգոհությունները կարող են ուղղվել այդ խմբերին: Դժգոհությունների լուծման քայլերը հետևյալն են՝


- i. Տուժած ԱԵԱ-ն կամ ՏՏ-ն կարող է իր բողոքը ներկայացնել ԲԼԽ-ին:
- ii. Բողոքը պետք է ներկայացվի գրավոր ձևով ԱԵԱ-ի կամ նշանակված ներկայացուցչի կողմից:
- iii. ԲԼԽ նիստերը հրավիրող անձը պատասխանատու կլինի ԲԼԽ-ի քննարկած բոլոր բողոքների փաստաթղթային ձևակերպման և ֆայլերի պահպանման համար:
- iv. ԲԼԽ-ի կայացրած վճիռը կուղարկվի համապատասխան ԱԵԱ-ին գրավոր ձևով:
- v. Եթե հարցը մնում է չլուծված ԲԼԽ-ի հետ քննարկումից հետո, ԱԵԱ-ն բողոքն այնուհետև կարող է ներկայացնել ՍՊՎԲԲ-ԾԻԿ: Բողոքը պետք է վերահասցեագրվի ՏԿՆ-ին լուծման համար: Կարգավորումը տեղի կունենա ԲԼԽ-ի հետ վերջնական քննարկման օրվանից 15 - օրյա ժամկետում:
- vi. Ինչպես նաև տեղական ԲԼԽ-ները և՛ լուծված, և՛ չլուծված գործերի արձանագրությունները կփոխանցեն ՍՊՎԲԲ-ԾԻԿ-ին՝ ՍՊՎԲԲ-ԻԹ-ի (ԾԻԿ-ի) միջոցով, գործի վերաբերյալ գրառումների պահպանման համար<sup>31</sup>:
- vii. Եթե դժգոհությունները չեն կարգավորվում սույն գործընթացով, ՏԿՆ-ից սկզբնական բողոքի վերաբերյալ պատասխանը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում ԱԵԱ-ն կարող է բողոքը ներկայացնել և պետք է տրամադրի համապատասխան փաստաթղթեր, որոնք կհիմնավորեն իր պահանջը ՏԿՆ-ից:
- viii. ՏԿՆ-ն կխորհրդակցի ԾԿԽ-ի հետ իր որոշման առնչությամբ: ԾԿԽ-ն պատասխան կտրամադրի բողոքի գրանցման պահից 15 օրվա ընթացքում: ԾԿԽ -ի որոշումը պետք է համապատասխանի ՀՕՏԾ-ի դրույթներին:

126. Եթե դժգոհության լուծման համակարգը չի բավարարում ԱԵԱ-ին, նա կարող է հետամուտ լինել իր բողոքին՝ հանձնելով գործը համապատասխան ընդհանուր իրավասության դատարան: Այնուհանդերձ, դժգոհությունների վերոնշյալ մեխանիզմը չի սահմանափակում քաղաքացու՝ գործը ընդհանուր իրավասության դատարան ներկայացնելու իրավունքը դժգոհության քննարկման գործընթացի ցանկացած պահին:

---

<sup>31</sup>ԲԼԽ վարույթները հասանելի կլինեն ԱԶԲ-ի, ԱԵԱ-ների, ԱՄԳ-ի, Ծրագրի կառավարման խորհրդատուի և այլ շահագրգիռ կողմերի ծանոթության համար:

Գծապատկեր Հ1: Բողոքների լուծման մեխանիզմը



**Թ. ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԸ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

127. Վերաբնակեցման պլանի իրականացման ժամանակացույցը հիմնվել է S 2 Ծրագրի ընդհանուր իրականացման ծրագրի վրա: Հողի օտարմանը և տարաբնակեցմանը վերաբերող բոլոր միջոցառումները պլանավորվել են՝ քաղաքացիական աշխատանքների նախաձեռնումից և տեղահանումից առաջ փոխհատուցման վճարումն ապահովելու համար: Ժամանակացույցը ենթակա է փոփոխության՝ կախված S 2 Ծրագրի միջոցառումների առաջընթացից և որևէ խիստ անհրաժեշտությունից:

128. Ծրագրի՝ իրականացման ենթակա ՀՕՏ միջոցառումները և իրականացման ժամկետները ներկայացված են **Աղյուսակ Թ1-ում**:

**II. ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼ**

129. ԾԻԿ-ը կատարել է հետևյալ գործողությունները և նախապատրաստական առաջադրանքները ՀՕՏ-ի իրականացման նպատակով:

- Ծրագրի իրականացման կազմակերպությունը (ԾԻԿ-ը) կազմավորվել է և տեղում ՍԱԲԲ ունի:
- Անկախ մոնիտորինգի գործակալությունը (ԱՄԳ-ն) նշանակվել է:
- Նախագծող խորհրդատուն փոփոխել է տեղակայումը/դիրքը:
- ՄՉՀ-ն, ակտիվների գույքագրումը և մանրամասն գնահատման հետազոտությունները, ինչպես նաև ՄՏՀ-ն ավարտվել են՝ հիմք ընդունելով վերջնական մանրամասն ճարտարագիտական նախագծումը:
- Արձանագրությունների մեծ մասը ստորագրվել են ԱԵԱ-ների կողմից: Երբ դա տեղի չի ունեցել, գործն առաջադրվել է ազդարարական վարույթների համար:<sup>32</sup>**[Հավելված: I 1 ԱԵԱ-ի հետ կնքվող պայմանագրի նմուշը]**
- ՀՕՏ-ի իրականացման թիմի հավաքագրման գործընթացը նախաձեռնվել է:
- Ավարտված, իրականացման պատրաստ ՀՕՏ-ը փոխանցվել է ՀՀ կառավարության և ԱԶԲ-ի հաստատմանը 2012 թ. սեպտեմբերին: Հաստատումից հետո ՀՕՏ-ն հրապարակվել է ծրագրի վեբ կայքում:

**III. ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼԸ**

130. ՀՕՏ-ի հաստատումից հետո կիրականացվեն փոխհատուցումների և հատկացումների ամրագրմանը վերաբերող բոլոր կարգավորումները: Դրանք ներառում են՝

ա. ԻԹ-ի նշանակումը,

---

<sup>32</sup> Յուրաքանչյուր նախնական պայմանագրին կից ուղարկվել է նամակ՝ որ նկարագրում է բանկային հաշիվ ունենալու անհրաժեշտությունը և հաշիվ բացելու գործընթացը, այդ թվում՝ հաշիվ բացելու ընթացքում ներկայացվող փաստաթղթերի ցուցակը: Առերես հանդիպումներ են կազմակերպվել ԾԻԿ-ՍԱԲԲ-ի և համայնքի ղեկավարների միջև ԱԵԱ-ներին ուղարկված նախնական պայմանագրի, ինչպես նաև բանկային հաշիվ բացելու վերաբերյալ բացատրությունների



նպատակով: Այնուհետև համայնքի ղեկավարները բացատրել են ԱԵԱ-ներից ակնկալվող սույն պահանջները նրանց համապատասխան համայնքներում:

- բ. Օտարման պայմանագրերի ստորագրումը,
- գ. Առգրավման ընթացակարգերի ավարտը՝ անհրաժեշտության դեպքում,
- դ. Վճարումը բոլոր իրավասու անձանց,
- ե. ԱԵԱ-ների տեղափոխումը՝ ըստ անհրաժեշտության,
- զ. Շինհրապարակի նախապատրաստումը, հողամասը շինարարության նպատակով կապալառուներին հանձնելու համար,
- է. Համապատասխանության վերանայումը և ԱՄԳ-ի կողմից հաշվետվությունների ներկայացումը,
- ը. Վերջապես քաղաքացիական աշխատանքի ձեռնարկումը:

131. Փոխհատուցման վճարումը ՀՕՏՕ-ի իրականացման ընթացքում կարևորագույն փուլերից մեկն է: Նախատեսված քայլերն են՝

- ա. Տեղափոխման և վերաբնակեցման բյուջեի հատկացումը պետական գանձապետարանին ՖՆ-ի կողմից: Դա կտևի մոտավորապես 1 շաբաթ՝ ՀՀ կառավարության և ԱԶԲ-ի կողմից ՀՕՏՕ-ի հաստատումից հետո:
- բ. ԱԵԱ-ների համար լավագույն պայմաններ ապահովող առևտրային բանկերի ընտրությունը (աշխարհագրական դիրքը և ցածր գործարքային վճարները/կամ այդպիսի վճարների բացակայությունը): ԱԵԱ-ները կարող են նաև գործել իրենց առկա բանկային հաշիվների միջոցով:
- գ. Փոխհատուցման գումարի փոխանցումը Ֆինանսների նախարարությունից:
- դ. Փոխհատուցման և նպաստների փոխանցումը ԱԵԱ-ների բանկային հաշիվներին:
- ե. Սեփականության տարածքի ազատումը փոխհատուցման վճարման պահից 14 օրվա ընթացքում:
- զ. Հողի/կառույցի սեփականատեր դառնալը ՏԿՆ-ի կողմից:

132. Այն դեպքերում, երբ սեփականության վրա կալանք կա, *Կադաստրի պետական* կոմիտեն հայտնաբերում է հողակտորները, որոնց վրա վարկային կազմակերպության կալանք կա, երբ սեփականատերը վարկ է ստացել՝ օգտագործելով ազդեցության ենթակա հողակտորը որպես գրավ վարկի կամ վարկառության համար: Որոշ ԱԵԱ-ներ, ում պարտապանի գույքի վրա կալանք դնելու իրավունքը գրանցված չէ կադաստրային քարտեզներում, տրամադրել են սույն տեղեկատվությունը տեղանքային այցելությունների ընթացքում: Բացի այդ, երբ նախնական պայմանագրերն ուղարկվում են ԱԵԱ-ներին, նրանցից Օրենքով<sup>33</sup> պահանջվում է բացահայտել օտարվող սեփականության նկատմամբ ցանկացած տեսակի իրավունքներ կամ իրավասություններ ունեցող բոլոր անձանց կամ կողմերին, ովքեր չեն բացահայտվել նախնական պայմանագրում: Ընդհանուր առմամբ հինգ ԱԵԱ-ներ են հաստատվել՝ որպես օտարվող գույքին կից պարտապանի գույքի վրա կալանք դնելու իրավունք ունեցող:

133. Ներգրավված են <<ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ>> (3 ԱԵԱ-ների համար), <<ԷյչԷսԲիՍի>> (1 ԱԵԱ-ի համար) և <<Յունիբանկ>> (1 ԱԵԱ-ի համար) բանկերը:

134. Գործերի մեծ մասի դեպքում, ծրագրի համար օտարվող հողի տարածքը փոքր է՝ ԱԵԱ-ների ընդհանուր հողային սեփականատիրության համեմատությամբ, և մնացյալ հողամասը բավարար է չմարված վարկի գրավի ապահովման շարունակության համար՝ ինչը բխում է պարտատիրոջ շահերից: Նման դեպքերում վարկատուն Հողի օտարման պայմանագիր կստորագրի, որպես ազդեցության ենթակա կողմ, ով նույնպես իրավունքներ ունի հողի նկատմամբ: Օտարման պայմանագիրը հաստատում է, որ բոլոր ԱԵԱ-ները, այդ թվում պարտատերերը, հրաժարվում են օտարվող հողի նկատմամբ բոլոր իրավունքներից, իսկ սեփականատիրության իրավունքը փոխանցվում է Օտարողին: Հողի սեփականատիրության ամբողջական փոխհատուցումը կփոխանցվի սեփականատիրոջ հաշվին և որևէ կերպ չի նվազեցվի սույն ընթացակարգով:

<sup>33</sup> Գերակա հանրային շահ ճանաչելու մասին օրենք, Հոդված՝ 10.1

135. Այն դեպքերում <sup>34</sup>, երբ վարկը տրամադրվել է ազդեցության ենթակա սեփականությունը գնելու միակ նպատակով և / կամ գույքի օտարումը վերացնում է սեփականատիրոջ՝ վարկը մարելու կարողությունը, և / կամ եթե վարկատուն պնդում է վարկի կամ դրա մի մասի վճարման մասին, սեփականության օտարման համար վճարվող փոխհատուցումը կներառի վճարվող և/կամ վճարման ենթակա տոկոսները, որ պետք է վճարի սեփականատերը վարկի կամ վարկի համապատասխան մասի առնչությամբ:

#### **IV. ԳՆԱՀԱՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ**

136. Համապատասխանության վերանայումը կձեռնարկվի ՀՕՏԾ-ի իրականացմանը զուգահեռ, իսկ հաշվետվությունը կպատրաստի ԱՄԳ-ն՝ ՀՕՏԾ-ի իրականացման ավարտից անմիջապես հետո: Իրականացմանը հաջորդող գնահատումը կկատարվի ՀՕՏԾ-ի իրականացման ամբողջական ավարտից հետո:

#### **V. ՀՈՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ**

137. ՀՕՏԾ-ի իրականացման մանրամասն ժամանակացույցը ներկայացված է ստորև գետեղված Աղյուսակ Թ 1 –ում:

##### **Աղյուսակ Թ 1. ՀՕՏԾ-ի իրականացման ժամանակացույց**

---

<sup>34</sup> Իրականում նման դեպքեր նկարագրված չեն սույն պարբերությունում: Այնուհանդերձ, քանի որ մանրամասն չափազրման հետազոտությունն իրականանցվել է 2011 թ. ամռանը/աշնանը և թեպետ ԾԻԿ-ը շարունակում է աշխատել ԱԵԱ-ի հետ հետազոտության ավարտից հետո, այստեղ

բացատրվում է թե ինչպես վարվել նման գործերի դեպքում:



## **Ժ. ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԲՅՈՒՋԵՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ**

### **I. ԸՆԴՀԱՆՈՒՐ**

138. Սույն ծրագրի համար տարաբնակեցման ծախսերի նախահաշիվն ընդգրկում է իրավասությունների շրջանակում փոխհատուցումները, վերականգնման նպաստները և ՀՕՏ իրականացման համար օժանդակ ծախսերը: Օժանդակ ծախսերը, որոնք ներառում են վարչական ծախսերը, հանդիսանում են ամբողջ ծրագրի ծախսերի մի մասը: Չնախատեսված ծախսերը (ընդհանուր ծախսերի 20%-ը) նույնպես հաշվի են առնվել որպես հնարավոր փոփոխություն սույն նախահաշվարկում: Լրացուցիչ ծախսերի առաջացման դեպքում ՏԿՆ-ն համապատասխան ժամանակահատվածում կապահովի լրացուցիչ ֆինանսավորում: Սույն ՀՕՏ նախահաշվի որոշ ծախսերը ներկայացված են ստորև.

- i. Փոխհատուցում գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողերի համար իրենց փոխարինման արժեքով;
- ii. Փոխհատուցում շինությունների և շենքերի համար իրենց փոխարինման արժեքով;
- iii. Փոխհատուցում մշակաբույսերի և ծառերի համար;
- iv. Փոխհատուցում բիզնեսի և աշխատատեղի կորստի համար;
- v. Աջակցություն չափազանց մեծ բացասական ազդեցությանը ենթարկվող ՏՏ-ներին;
- vi. Աջակցություն վերաբնակեցման և տրանսպորտով տեղափոխման համար;
- vii. Աջակցություն խոցելի խմբերին կենսապահովման միջոցների վերականգնման համար, և
- viii. ՀՕՏ իրականացման ծախսեր:

139. Փոխհատուցումը և համապատասխան ֆինանսավորումը ներկայացված են դաշտային հետազոտությունների ժամանակ ԾԻԿ-ի կողմից վարձված անկախ գնահատողի կողմից: Սկզբնական ծանուցումները ստանալուց հետո Ազդեցությանը ենթակա անձանց (ԱԵԱ) կողմից ներկայացվեցին բողոքներ հողի, այլ ակտիվների և գնահատման դրույքաչափերի վերաբերյալ, ինչից հետո ԱԶԲ-ի կենտրոնական և արևմտյան Ասիայի տրանսպորտի և կապի վարչությունը (ԿԱՏԿ) որոշեց իրականացնել պաշտոնական ստուգում բողոքների իրավացիությունը գնահատելու նպատակով: Պաշտոնական ստուգումը իրականացվեց ԱԶԲ-ի կողմից վարձված անկախ հավատարմագրված գնահատողի կողմից: Առաջադրանքի նպատակն էր ստուգել անկախ գործակալության կողմից իրականացված ՀՕՏ գնահատման հիմնավորվածությունը: Բողոքների իրավացիությունը գնահատելու նպատակով խորհրդատուները վերագնահատեց բողոքատու հայցվոր-սեփականատերերի 13 բողոքարկվող հողակտորները և համեմատեց բացահայտումները սկզբնական անկախ գնահատողի կողմից պատրաստված 82 բողոքարկվող հողակտորների վերաբերյալ հաշվետվությունների հետ (53-ը Աշտարակի շրջանում և 29-ը Թալինի շրջանում): Արդյունքում, ազդեցությանը ենթակա հողերի, ծառերի և մշակաբույսերի փոխհատուցումը վերանայվեց (մանրամասները ներկայացվում են ստորև համապատասխան ենթագլուխներում):

### **II. ՓՈՒՆՀԱՏՈՒՑՈՒՄ**

#### **1. Փոխհատուցում հողի համար**

140. Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողերի դիմաց փոխհատուցումը սահմանվել է հիմք ընդունելով անկախ գնահատողի գնահատման հաշվետվությունների տվյալները:

Փոխհատուցումը սեփականատերերին հաշվարկված էր շուկայական կամ կադաստրային արժեքին (որն ավելի բարձր է) գումարելով 15%, որը համարվում է փոխարինման արժեք:

141. ԱԶԲ կողմից վարձված անկախ հավատարմագրված գնահատողի հաշվետվության համաձայն սկզբնական անկախ գնահատող կազմակերպության (Մար-Մոս ՄՊԸ) իրականացված գնահատումը Աշտարակի տարածաշրջանի վարելահողերի համար (ինչպես ոռոգվող, այնպես էլ չոռոգվող), 2 անգամ ցածր է 35 (Հավելված Ժ1): Ըստ ԱԶԲ - ի առաջարկությունների Աշտարակի տարածաշրջանի վարելահողերի գինը 80% - ով բարձրացվել է: Գնահատման ստուգման արդյունքում պարզվել է, որ Թալինում հողատարածքները ճիշտ են գնահատված:

142. Հողի դիմաց փոխհատուցման գումարները ներկայացված են ստորև բերված աղյուսակում ըստ հողի տեսակի: Ընդհանուր առմամբ օտարվող հողի համար փոխհատուցումը կազմում է 630,048,872 ՀՀ դրամ: Փոխհատուցումը հողի սեփականատերերին հողի համար կազմում է 421,332,149 ՀՀ դրամ օտարվող 647,182 մ<sup>2</sup> հողի դիմաց:

**Աղյուսակ Ժ1: Փոխհատուցում մասնավոր, համայնքային և պետական հողերի համար ըստ տեսակի**

Հողի տեսակը	Հողը		Միավորի միջին արժեքը (1)	Հողի ընդհանուր արժեքը	Հողի ընդհանուր փոխհատուցումը (ներառյալ 15%)
	Քանակը	Մակերեսը (մ <sup>2</sup> )	ՀՀ դրամ/մ <sup>2</sup>	ՀՀ դրամ	ՀՀ դրամ
<b>(Ա) Գյուղատնտեսական</b>					
Ոռոգելի	297	432,183	420	181,576,251	208,812,689
Ոչ ոռոգելի	34	83,393	193	16,109,545	18,525,976
Մրգատու այգի	98	101,464	1,119	113,493,626	130,517,670
Խաղողի այգի	10	19,446	882	17,145,238	19,717,024
Արոտավայր	108	718,071	67	48,110,060	55,326,569
Խոտհարք	2	560	727	406,946	467,988
Այլ	197	288,480	164	47,370,079	54,475,591
<b>I. Ենթաընդհանուրը (Ա)</b>	<b>746</b>	<b>1,643,597</b>		<b>424,211,745</b>	<b>487,843,506</b>
<b>(Բ) Ոչ գյուղատնտեսական</b>					
Արտադրական	9	24,401	856	20,882,319	24,014,667
Բնակավայր	83	66,146	1,554	102,782,185	118,199,513
<b>II. Ենթաընդհանուրը (Բ)</b>	<b>92</b>	<b>90,547</b>		<b>123,664,504</b>	<b>142,214,180</b>
(Գ) Պետական	2	3,540	29,380 <sup>1</sup>	58,760	58,760
<b>Ընդհանուր</b>	<b>838</b>	<b>1,734,144</b>		<b>547,876,249</b>	<b>630,048,872</b>
<b>Ընդհանուրն ըստ հողի սեփականատերերի</b>					
Մասնավոր	484	647,182	566	366,375,782	421,332,149
Համայնքային	352	1,083,422	167	181,441,707	208,657,963

---

35 Անկախ գործակալության և ԱԶԲ-ի խորհրդատուի գնահատումները տարբերվում էին ոռոգվող և չոռոգվող վարելահողերի համար ՀՀ Կադաստրի պետական կոմիտեի Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնից (ՏՏԿ) ստացված բազային վաճառքների տարբերության պատճառով: Անկախ գործակալությանը տրամադրված վարելահողի արժեքները (միջինում 216 ՀՀ դրամ/քառ.մ) բավականին ցածր էին (2,5 անգամ) քան ԱԶԲ-ի խորհրդատուին տրամադրված արժեքները (610 ՀՀ դրամ/ քառ. մ):



Հողի տեսակը	Հողը		Միավորի միջին արժեքը (1)	Հողի ընդհանուր արժեքը	Հողի ընդհանուր փոխհատուցումը (ներառյալ 15%)
	Քանակը	Մակերեսը (մ <sup>2</sup> )	ՀՀ դրամ/մ <sup>2</sup>	ՀՀ դրամ	ՀՀ դրամ
Պետական	2	3,540	29,380 1	58,760	58,760
<b>Ընդհանուրը (Ա+Բ)</b>	<b>838</b>	<b>1,734,144</b>		<b>547,876,249</b>	<b>630,048,872</b>

1. Պետական հողերի համար փոխհատուցման հաշվարկը հիմնված էր ոչ թե շուկայական գների վրա, այլ միայն գրանցման համար վճարների:

## 2 Փոխհատուցում վարձակալության համար

143. Փոխհատուցում վարձակալների համար հաշվարկված էր ազդեցության ենթակա հողի շուկայական կամ կադաստրային արժեքին (որն ավելի բարձր է) գումարելով 15%-ի չափով՝ հիմնվելով վարձակալությանը մնացած տարիների քանակի վրա հետևյալ համամասնությամբ. i) < 1 տարի 5%; 2) < 15 տարի 14%; 3) < 25 տարի 20%; >25% 25տարի:

Բոլոր հաշվարկները կատարվել են համաձայն Իրավասությունների մատրիցայի (տես Աղյուսակ Ժ 2 ծախսերի մանրամասն նկարագրության համար) և արտացոլում են ռոռզվող չռոռզվող վարելահողերի համար փոխհատուցման դրույքաչափերում կատարված փոփոխությունները:

### Աղյուսակ Ժ2 Վարձակալությունների փոխհատուցումը

Հողի տեսակը	Հողը		Միավորի միջին արժեքը	Հողի ընդհանուր արժեքը	Հողի փոխհատուցումը (ներառյալ 15%)	Վարձակալության փոխհատուցումը
	Քանակը	Տարածքը (մ <sup>2</sup> )	ՀՀ դրամ/մ <sup>2</sup>	ՀՀ դրամ	ՀՀ դրամ	ՀՀ դրամ
<b>Ա &lt; 25 տարի վարձակալություն (ընդհանուր արժեքի 20% -ը)</b>						
Ոռոգելի	1	4,043	271	1,097,555	1,262,189	252,438
Ոչ ոռոգելի	1	25,392	65	1,646,956	1,893,999	378,800
Մրգատու այգի	1	591	1,602	946,942	1,088,983	217,797
Խաղողի այգի	1	1,773	320	566,667	651,667	130,333
Արոտավայր	1	1,636	391	639,290	735,184	147,037
Այլ	6	14,102	108	1,524,810	1,753,532	350,706
Արտադրական	1	130	1,678	218,140	250,861	50,172
<b>Ենթարնդհանուրը</b>	<b>12</b>	<b>47,667</b>	<b>4,435</b>	<b>6,640,360</b>	<b>7,636,414</b>	<b>1,527,283</b>
<b>Բ &gt; 25 տարի վարձակալություն (ընդհանուր արժեքի 25% -ը)</b>						
Այլ	1	5,879	123	722,220	830,553	207,638
Արտադրական	1	4,394	109	480,938	553,079	138,270
<b>Ենթարնդհանուրը</b>	<b>2</b>	<b>10,273</b>	<b>232</b>	<b>1,203,158</b>	<b>1,383,632</b>	<b>345,908</b>
<b>Ընդհանուրը (Ա+Բ)</b>	<b>14</b>	<b>57,940</b>	<b>4,667</b>	<b>7,843,518</b>	<b>9,020,046</b>	<b>1,873,191</b>

### **3. Շինությունների փոխհատուցումը**

144. Շինությունների փոխհատուցումը հիմնված է հողի/շինությունների լիցենզավորված գնահատողի գնահատման հաշվետվության տվյալների վրա: Անկախ տան գրանցման կարգավիճակից շենքերի/շինությունների համար բոլոր ԱԵԱ-ները կստանան գումարային փոխհատուցում

փոխարինման 36 արժեքի չափով՝ գումարած 15% փոխարինման արժեք: Ոչ բնակելի գրանցված շենքերը և շինությունները փոխհատուցվում են նույն կերպ 37 : Մասնակի ազդեցության և սեփականատիրոջ կողմից վերաբնակեցվելու ցանկություն չցուցաբերելու դեպքում, շինության փոխհատուցումը կլինի միայն շենքի ազդեցության ենթարկված մասի և դրա հնարավորինս օգտագործման նշանակությամբ ամբողջական վերականգնման համար անհրաժեշտ գումարի չափով: Սույն Տրանշ 2 Ծրագրի շրջանակներում նմանօրինակ դեպքեր չկան: (Տես հաշվարկման մանրամասն մեթոդաբանություն **Հավելված Ե1-ում՝ Գնահատման մեթոդաբանությունը և Գնահատման հաշվետվության նմուշը**):

**145.** Շենքերի փոխհատուցման ընդհանուր գումարը կազմում է **458,665,955 ՀՀ դրամ**:

146. Այս կորուստների մեջ կան բնակելի շենքեր և բիզնես շինություններ: Մասնավորապես ազդեցության կենթարկվեն 2 բնակելի տներ, որոնց 2 ԱԵՏՏ-ները կվերաբնակեցվեն և նրանց կվճարվի վերաբնակեցման նպաստ:

Շինությունների մի մասը հանդիսանում է 7 բիզնեսներից 6-ի սեփականությունը: Մանրամասների համար տես Աղյուսակ **Ժ3**–ը:

**Աղյուսակ Ժ 3. Շենքերի/ Շինությունների փոխհատուցումը**

	Շինություններ			Միավորի միջին արժեքը <sup>38</sup>	Շինության ընդհանուր արժեքը	Ընդհանուր փոխհատուցումը (ներառյալ 15%)
	Քանակը	մ <sup>2</sup>	գմ			
<b>I. Բնակելի</b>						
Քարե շենք՝ բետոնե նկուղով	2	174	-	272,139	47,352,247	54,455,084
<b>II. Ոչ բնակելի</b>						
Քարե շինություն բետոնե նկուղով	20	2167.5	-	175,499	330,701,755	380,307,018
Քարե և թեթև մետաղե՝ բետոնե նկուղով	1	8	-	144,801	1,158,405	1,332,166
Մետաղե՝ բետոնե նկուղով	4	349.4	-	53,556	18,712,586	21,519,474
Քարե պատ (գծամետր)	1	-	70	13,071	914,968	1,052,213
<i>Միջանկյալ ընդհանուրը II.</i>	<i>26</i>	<i>2524.9</i>	<i>70</i>	<i>-</i>	<i>371,299,795</i>	<i>404,210,871</i>
<b>Ընդամենը</b>	<b>28</b>	<b>2,698.9</b>	<b>70</b>	<b>-</b>	<b>398,839,961</b>	<b>458,665,955</b>

**4. Մշակաբույսերի և ծառերի համար փոխհատուցում**

**4.1 Մշակաբույսերի փոխհատուցումը**

147. ԱԵՏՏ-ներին մշակաբույսերի դիմաց գումարային փոխհատուցումը կտրվի շուկայական արժեքով՝ հիմք ընդունելով սպասվող բերքի համախառն արժեքը: Միավոր արժեքը որոշվել է հիմք ընդունելով հիմնական մշակաբույսերի բերքատվությունը 2011թ. ընթացքում:

148. Բերքի գնահատման արդյունքների վերաբերյալ մի քանի ԱԵԱ-ների կողմից ստացված բողոքների հիման վրա ԱԶԲ կողմից վարձվել է անկախ հավատարմագրված գնահատող, որի եզրակացության համաձայն գնահատման տարբերությունները երկու գնահատողների միջև աննշան

36 Փոխարինման արժեքը գնահատվում է շինության տեսակի, նյութի արժեքի, աշխատուժի, տրանսպորտային և այլ շինարարական արժեքներից առանց մաշվածության նվազեցումների  
37 Համաձայն իրավունքների մատրիցայի չգրանցված ոչ բնակելի շենք/շինությունները կարող են փոխհատուցվել միայն գրանցումից հետո: S2 շրջանակներում նման դեպքեր չեն իդենտիֆիկացվել:

38 Բոլոր շինությունները գնահատվել են անհատապես: Այստեղ ներկայացված են միջինացված արժեքները:

են. որոշ դեպքերում բարձր են ԱԶԲ-ի կողմից վարձված գնահատողի, երբեմն էլ սկզբնական գնահատողի կողմից իրականացված գնահատման արժեքները (Հավելված Ժ1): ԱԶԲ - ի առաջարկությունների հիման վրա բերքի գնահատման արժեքները վերանայվել են՝ հիմք ընդունելով երկու կողմերի ամենաբարձր գնահատված արժեքները:

149. Ծրագրի ազդեցության միջանցքում (ԱՄ) հիմնականում աճեցվում են տարբեր հացազգիներ: Դրանք մասնավորապես ընդգրկում են ցորենը, գարին, ինչպես նաև առվույտը: ՀՀ դրամի արժեքով ցորենը կազմում է ընդհանուր կորստի 25%-ը, իսկ գարին՝ 39%-ը: Այդ երկու հացահատիկային մշակաբույսերը միասին ներկայացնում են ընդհանուր կորստով **8,461,443** ՀՀ դրամի չափով գումար (ամբողջի 59 %-ը): Ազդեցության ենթակա տարածքի (219,566 մ<sup>2</sup>) մշակաբույսերի ընդհանուր փոխհատուցման գումարը կազմում է **14,351,766** ՀՀ դրամ: Մանրամասների համար տես ստորև բերված **Աղյուսակ Ժ4**-ը:

**Աղյուսակ Ժ4: Մշակաբույսերի փոխհատուցումը**

Անվանումը	Ազդեցության ենթակա	Բերքը	Ընդհանուր կորուստներ	Շուկայական արժեքը	Կորուստներ
	մ <sup>2</sup>	Կգ/ մ <sup>2</sup>	կ գ	ՀՀ դրամ/կգ	ՀՀ դրամ
1. Ցորեն	50,179	0.29	14,552	195.0	2,837,622
2. Գարի	89,267	0.21	18,746	300.0	5,623,821
3. Առվույտ	67,998	0.73	49,639	30.0	1,489,156
4. Կորնզան	4,646	0.70	3,252	30.0	97,566
5. Կարտոֆիլ	200	2.00	400	250.0	100,000
6. Լոլիկ	1,056	2.50	2,640	250.0	660,000
7. Սմբուկ	500	2.10	1,050	250.0	262,500
8. Բանջարեղեն	300	2.20	660	275.0	181,500
9. Լոբի	300	2.60	780	300.0	234,000
10. Ելակ	5,110	0.80	4,088	700.0	2,861,600
11. Հաղարջ	10	0.80	8	500.0	4,000
<b>Ընդհանուր</b>	<b>219,566</b>	-	-	-	<b>14,351,766</b>

150. Վերը ներկայացված մշակաբույսերի փոխհատուցման թվերը ներառում են չգրանցված վարձակալներին տրվող փոխհատուցումը և համայնքային և մասնավոր հողի դեպքում: Չգրանցված վարձակալների դեպքում փոխհատուցումը մշակաբույսերի համար տրվում է վերջիններին, այլ ոչ թե հողի սեփականատիրոջը:

#### 4.2 Մրգատու ծառերի փոխհատուցումը

151. Մրգատու ծառերի համար տրվող փոխհատուցումը տարբերվում է բերքատու, դեռ ոչ բերքատու և նորատունկ ծառերի համար տրվող փոխհատուցումից հետևյալ կերպ.

- **Բերքատու ծառեր.** փոխհատուցումը հիմնված է փոխարինման արժեքի վրա, որը հաշվարկվել է 1 տարվա եկամտի կորստի զուտ շուկայական արժեքը բազմապատկելով այն տարիների թվով, որն անհրաժեշտ է նոր ծառը լիարժեք պտղատվության տարիքին աճեցնելու համար:
- **Ոչ բերքատու ծառեր.** անկախ ծառերի տարիքից՝ փոխհատուցումը հիմնված է պտղատվության միավորների ներդրման փոխարինման արժեքի վրա այն տարիների թվով, որն անհրաժեշտ է նոր

ծառը լիարժեք պտղատվության տարիքին աճեցնելու համար:

- **Նորատունկ ծառեր.** տնկիների շուկայական արժեքի փոխհատուցում:

Կրկին անգամ ծառերի գնահատման արդյունքների վերաբերյալ մի քանի ԱԵԱ-ների կողմից ստացված բողոքների հիման վրա ԱԶԲ կողմից վարձվել է անկախ հավատարմագրված գնահատող, որի եզրակացության համաձայն երկու գնահատողների իրականացրած գնահատման արդյունքների միջև տարբերությունները էական են՝ ինչպես պտղատու ծառերի բերքատվության ցուցանիշների, այնպես էլ գնահատման արժեքների մասով: Բերքատվությունը 13.3 (սալոր) մինչև 2.6 (խնձոր) անգամ ավելի բարձր է ԱԶԲ –ի կողմից վարձված գնահատողի մոտ: Փոխհատուցման արժեքները 26.5 (սալոր) մինչև 1.9 (խնձոր) անգամ ավելի բարձր է ԱԶԲ –ի կողմից վարձված գնահատողի մոտ 39 : ԱԶԲ խորհրդատու գնահատողի և անկախ գնահատող կազմակերպության արդյունքների միջև նման մեծ տարբերությունների պատճառները, ՕԻԿ-ի կողմից վարձվել է անկախ գյուղատնտես՝ գնահատելու համար Արագածոտնի մարզի ծառերի փոխհատուցման արժեքները ըստ ծառերի տեսակի և շուկայական գների (Հավելված Ժ2): Անկախ գյուղատնտեսի կողմից իրականացված գնահատման արդյունքները ներկայացվել են ԱԶԲ-ին: Ի վերջո, ԱԶԲ - ի առաջարկությունների հիման վրա պտղատու ծառերի փոխհատուցման արժեքները բարձրացվել են գրեթե բոլոր տեսակի ծառերի համար:

152. Աղյուսակներ Ժ5 և Ժ6-ը ստորև արտացոլում են փոխհատուցման արժեքները՝ հաշվարկված նորատունկ, դեռ ոչ բերքատու և բերքատու ծառերի համար՝ համապատասխանաբար:

Աղյուսակ Ժ5. Մրգատու ծառերի փոխհատուցում, նորատունկեր և դեռ ոչ բերքատու ծառեր

Անվանումը	Նորատունկ			Դեռ ոչ բերքատու							Ընդհանուր
	No	Միավորի արժեքը	Ընդհանուր	No	Նորատունկի միավորի արժեքը	Մեկ տարվա ներդրումը		Տարիների քանակը	Մեկ ծառի միավորի արժեքը	Ընդհանուր	
						1ին տարին	Հաջորդ տարիները				
Խնձոր	199	2000	398,000	53	2,000	1,710	1,175	5	8,400	445,200	843,200
Տանձ	52	2000	104,000	7	2,000	1,710	1,175	5	8,400	58,800	162,800
Ծիրան	21	2000	42,000	16	2,000	1,930	1,370	5	9,400	150,400	192,400
Դեղձ	85	2000	170,000	12	2,000	150	50	2	2,200	26,400	196,400
Ընկույզ	67	2000	134,000	16	2,000	2,896	2,250	5	13,900	222,400	356,400
Բալ	12	2000	24,000	0	0	0	0	0	0	0	24,000
Կեռաս	25	2000	50,000	2	2,000	637	140	3	2,900	5,800	55,800
Սալոր	65	2000	130,000	0	0	0	0	0	0	0	130,000
Մերկևիլ	20	2000	40,000	0	0	0	0	0	0	0	40,000
Նուռ	3	2000	6,000	0	0	0	0	0	0	0	6,000
Տխիլ	9	2000	18,000	0	0	0	0	0	0	0	18,000
<b>Ընդամենը</b>	<b>558</b>		<b>1,116,000</b>	<b>106</b>					<b>45,2</b>	<b>909</b>	<b>2,025,000</b>

39 ՕԻԿ-ի կողմից վարձված անկախ գործակալության և ԱԶԲ-ի խորհրդատուի գնահատումները կտրականապես տարբեր են, քանի որ յուրաքանչյուր գնահատողին Արագածոտնի մարզպետարանի

գյուղատնտեսական վարչության (ԱՄԳՎ) կողմից ներկայացված տվյալներում բերքատու ծառերի պտղաբերության վերաբերյալ մեծ տարբերություններ կան: Այլ աննշան գործոններ, որոնց պատճառով կարող էին առաջանալ տարբերություններ հետևյալն են. ա) անկախ գնահատող գործակալությունը հաշվարկել է բերքատու ծառերի և մշակաբույսերի պտղաբերությունը հիմնվելով միայն մեկ տարվա բերքատվության վրա, իսկ Խորհրդատուն կատարեց հաշվարկը միջինացնելով տվյալները 3 տարվա համար; բ) անկախ գնահատող գործակալությունը հաշվարկել է բերքատու ծառերի/տարեկան մշակաբույսերի արժեքները 2010թ. շուկայական գներով, իսկ Խորհրդատուն՝ 2011թ. (ազդեցությունից մեկ տարի առաջ):



**Աղյուսակ Ժ6: Մրգատու ծառերի փոխհատուցումը**

Անվանումը	Քանակը	Տարեկան բերքը (կգ)	Տարեկան ընդհանուր բերքը (կգ)	Բերքի միավորի շուկայական արժեքը (ՀՀ դրամ/կգ)	Ընդամենը ՀՀ դրամ/տարի	Պտղատվության համարանիքների քանակը	Ընդհանուրը
Խնձոր	651	110	71,610	790	56,571,900	5	282,859,500
Տանձ	49	60	2,940	283	832,020	5	4,160,100
Ծիրան	1,062	70	74,340	315	23,417,100	5	117,085,500
Դեղձ	1,475	40	59,000	227	13,393,000	4	53,572,000
Ընկույզ	132	50	6,600	1000	6,600,000	6	39,600,000
Բալ	60	87	5,220	500	2,610,000	3	7,830,000
Կեռաս	32	30	960	240	230,400	5	1,152,000
Սալոր	85	25	2,125	217	461,125	5	2,305,625
Սերկևիլ	96	50	4,800	500	2,400,000	5	12,000,000
Թթենի	20	20	400	300	120,000	5	600,000
Մասրենի	11	1,5	17	500	8,250	3	24,750
Մոշ	1	1,5	2	500	750	3	2,250
Նուշ	1	10	10	1000	10,000	4	40,000
Նուռ	4	10	40	800	32,000	4	128,000
Սև սալոր	1	5,3	5	400	2,120	5	10,600
Տխիլ	17	10	170	800	136,000	3	408,000
Փշատ	17	10	170	600	102,000	3	306,000
<b>Ընդամենը</b>	<b>3,714</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>106,926,665</b>	<b>-</b>	<b>522,084,325</b>

153. Մրգատու ծառերի ընդհանուր փոխհատուցումն արտացոլված է **Աղյուսակ Ժ7-ում**: Ընդհանուր փոխհատուցումը մրգատու ծառերի համար կկազմի 524,109,325 ՀՀ դրամ:

**Աղյուսակ Ժ7. Մրգատու ծառերի փոխհատուցման ընդհանուր ամփոփում**

Տեսակը	Ընդամենը (ՀՀ դրամ)
Բերքատու	522,084,325.0
Նորատունկ	1,116,000.0
Դեռ ոչ բերքատու	909,000.0
<b>Ընդհանուր</b>	<b>524,109,325.0</b>

154. Ծառերի մեկ տարվա բերքի համար լրացուցիչ փոխհատուցում կտրամադրվի մասնավոր հողը չգրանցված օգտագործող (ուզուֆրուկտ օգտագործողներ), որոնք բացահայտվեցին հետազոտության արդյունքում (մանրամասները տես Գլուխ Ե-ի՝ Փոխհատուցում ստանալու իրավունքներն ու իրավասությունների մաս II-ում և Գլուխ Ե-ի՝ Ազդեցության գնահատում, մաս 3.3-ում): Ընդհանուր փոխհատուցման գումարը մրգատու ծառերի բերքի համար կազմում է **10,870,755** ՀՀ դրամ:

**Աղյուսակ Ժ8. ԱԵԱ-ներ կարգավիճակին համապատասխան մեկ տարվա բերքի փոխհատուցում**

ԱԵԱ-ի կարգավիճակը	Ընդամենը (ՀՀ դրամ)
Մասնավոր հողի չգրանցված վարձակալները	10,870,755

#### 4.3. Փայտանյութ ծառերի փոխհատուցումը

155. Տնկիների համար փոխհատուցումը տարբերվում է միջին տարիքի ծառերից և հասունացած ծառերից հետևյալ կերպ.

- **Նորատունկեր.** պտղատվության միավորների ներդրման փոխարինման արժեքի փոխհատուցում:
- **Միջին տարիքի և հասունացած.** Ծառի փայտանյութի արժեքը փոխարինող արժեքի փոխհատուցումը կհաշվարկվի՝ հիմք ընդունելով ծառի տարիքային դասակարգումը: Միջին տարիքի ծառեր համարվում են այն ծառերը, որոնք ունեն 12-24 սմ շառավիղ և հասունացած ծառեր համարվում են այն ծառերը, որոնք ունեն 24 սմ-ից ավել:

156. Փայտանյութ ծառերի փոխհատուցումը տնկիների համար կազմում է 858,000 ՀՀ դրամ, միջին տարիքի ծառերի համար 2,562,897 ՀՀ դրամ, իսկ հասունացած ծառերի համար 1,155,601 ՀՀ դրամ, և ընդհանուր փոխհատուցումը կազմում է 4,576,498 ՀՀ դրամ, ինչպես ցույց է տրված Աղյուսակ Ժ9-ում ստորև:

**Աղյուսակ Ժ9: Ազդեցության ենթակա նորատունկ, միջին տարիքի և հասունացած փայտանյութ ծառերը**

Անվանումը	Նորատունկ			Միջին տարիքի ծառ 12-24 սմ			Հասունացած ծառ 24 սմ-ից ավել			Ընդամենը (ՀՀ դրամ)
	Քանակը	Միավորի արժեքը 1 ծառ (ՀՀ դրամ)	Ընդհանուր (ՀՀ դրամ)	Քանակը	Միավորի արժեքը 1 ծառ (ՀՀ դրամ)	Ընդհանուր (ՀՀ դրամ)	Քանակը	Միավորի արժեքը 1 ծառ (ՀՀ դրամ)	Ընդհանուր (ՀՀ դրամ)	(ՀՀ դրամ)
Բարդի	737	1000	737,000	17	4,620	78,540	13	9,600	124,800	940,340
Ուռենի	4	1000	4,000	56	4,620	258,720	51	13,177	672,027	934,747
Թեղի	108	1000	108,000	471	3,960	1,865,160	23	10,205	234,715	2,207,875
Դեկորատիվ	3	1000	3,000	33	8,469	279,477	3	23,853	71,559	354,036
Տույա	4	1500	6,000	5	9,000	45,000	3	17,500	52,500	103,500
Վայրի խաղող	0	1000	0	24	1,500	36,000	0	0	0	36,000
<b>Ընդամենը</b>	<b>856</b>		<b>858,000</b>	<b>606</b>		<b>2,562,897</b>	<b>93</b>		<b>1,155,601</b>	<b>4,576,498</b>

#### 4.4 Խաղողի այգիների փոխհատուցում

157. Խաղողի այգիների փոխհատուցման հաշվարկը, ինչպես մրգատու ծառերի դեպքում, նախևառաջ հիմնվում է օտարվող խաղողի այգու կգ/մ<sup>2</sup> բերքատվությունը բազմապատկելով այն տարիների քանակով, որն անհրաժեշտ է նոր խաղողի այգին լիարժեք պտղատվության տարիքի հասցնելու համար: **19.506 մ<sup>2</sup>** օտարվող խաղողի այգիների դիմաց փոխհատուցումը կկազմի **18,043,957** ՀՀ դրամ: Ի լրումն, փոխհատուցումը կհատկացվի՝ ներառելով այն խաղողի այգիների օժանդակ կառույցները, որը կհաշվարկվի խաղողի վազերի գծամետրով: Ազդեցության ենթակա **6.485** գծամետր

օժանդակ կառույցի համար փոխհատուցման գումարը կկազմի **9,777,000 ՀՀ** դրամ: Խաղողի այգիների համար ընդհանուր փոխհատուցման գումարը կկազմի **27,820,957 ՀՀ** դրամ, ինչպես արտացոլված է **Աղյուսակ Ժ10**-ում ստորև:

**Աղյուսակ Ժ10. Խաղողի այգիների փոխհատուցումն ըստ բերքատվության և օժանդակ կառույցի արժեքի**

Անվանումը	Ընդհանուր	Ընդհանուր	Տարեկան բերքը	Ընդհանուր բերքը	Բերքի շուկայական արժեքը	Ընդամենը	Բերքատվության տարիքին հասնելու տարիների թիվը	Օժանդակ կառույցի արժեք	Ընդամենը
	գմ	մ <sup>2</sup>	կգ/մ <sup>2</sup>	կգ	ՀՀ դրամ/կգ	ՀՀ դրամ	քանակը	ՀՀ դրամ X գմ	ՀՀ դրամ
Խաղողի այգիներ	-	19,506	0.77	15,037	300	4,510,989	4	-	18,043,957
Օժանդակ կառույցներ	6,485	-	-	-	-	-	-	1507,64	9,777,000
<b>Ընդհանուր</b>	-	-	-	-	-	-	-	-	<b>27,820,957</b>

**158.** Խաղողի այգիների մեկ տարվա բերքի համար լրացուցիչ փոխհատուցումը կտրամադրվի մասնավոր հողը չգրանցված օգտագործողներին (ուզուֆրուկտ օգտագործողներ), որոնք բացահայտվել են հետազոտության արդյունքում (մանրամասները տես Գլուխ Ե-ի՝ Փոխհատուցում ստանալու իրավունքներն ու իրավասությունների մաս II-ում և Գլուխ Բ-ի՝ Ազդեցության գնահատում, մաս 3.3-ում): Ընդհանուր փոխհատուցման գումարը խաղողի այգիների համար կազմում է **98,514 ՀՀ դրամ**:

**Աղյուսակ Ժ11: ԱԵԱ-ներ կարգավիճակին համապատասխան մեկ տարվա բերքի փոխհատուցում**

ԱԵԱ-ի կարգավիճակը	Ընդամենը ՀՀ դրամ
Մասնավոր հողի չգրանցված վարձակալները	98,514

**5. Փոխհատուցում բիզնեսի և եկամտի կորուստների դիմաց**

**5.1. Բիզնեսի կորուստներ**

**159. Մշտական ազդեցությունները.** Բիզնես կորուստների միավորի գինը հաշվարկվել է մեկ տարվա գուտ եկամտի հիման վրա: Գնահատումը պետք է հիմնվի հարկային հայտարարագրի վրա: Հարկային հայտարարագրի բացակայության դեպքում ԱԵՏՏ-ն կստանա վերականգնման նպաստ՝ առավելագույն չհարկվող աշխատավարձի հիման վրա: Բիզնեսների այդ բոլոր սեփականատերերը կստանան փոխհատուցում պետական գրանցման և լիցենզավորման համար անհրաժեշտ ծախսերի չափով:

**160. Ժամանակավոր ազդեցությունները.** Այն բիզնեսների համար, որոնք ունեն հարկային հայտարարագրեր, կստանան փոխհատուցում բիզնեսի դադարեցման ամիսների համար ամսական գուտ եկամտի չափով՝ առավելագույնը մեկ տարվա համար: Այն բիզնեսները, որոնք չունեն հարկային հայտարարագիր կստանան վերականգնման նպաստ՝ բիզնեսի դադարեցման ամիսների համար ամսական առավելագույն չհարկվող աշխատավարձի չափով՝ մինչև մեկ տարի ժամանակահատվածի համար: Ամիսների քանակը հաշվարկվել է՝ ընդունելով շինարարական փուլի ժամանակահատվածը 6 ամիս:

161. Բիզնեսների համար փոխհատուցման հաշվարկները իրականացվել են բիզնեսը բիզնեսով փոխարինելու հիմունքով և հիմնված են ՄՉՀ հետազոտության և գնահատման հաշվետվությունների վրա՝ հիմք ընդունելով ՀՀ հարկային ծառայության կողմից տրամադրած տվյալները: Բիզնեսների համար փոխհատուցումը կազմում է 39,578,404 ՀՀ դրամ:

**Աղյուսակ Ժ12: Բիզնեսների կորուստների փոխհատուցումը**

Բիզնեսի տեսակը	Բիզնես	Եկամտի ամիսներ	Ամսական եկամուտը	Տարեկան եկամուտը	Պետական գրանցման և լիցենզավորման վճար	Ընդհանուր փոխհատուցումը
	Քանակը	Քանակը	ՀՀ դրամ	ՀՀ դրամ	ՀՀ դրամ	ՀՀ դրամ
<b>Մշտական ազդեցությանը ենթարկվող, հարկային հայտարարագրով</b>						
Բիզնես 1	1	12	n.a.	2,252,000	40,000	2,292,000
Բիզնես 2	1	12	n.a.	27,269,440	40,000	27,309,440
Բիզնես 3	1	12	n.a.	350,000	40,000	390,000
Բիզնես 4	1	12	n.a.	1,104,000	40,000	1,144,000
Բիզնես 5	1	12	n.a.	7,661,866	40,000	7,701,866
<b>Մշտական ազդեցությանը ենթարկվող, Առանց հարկային հայտարարագրի</b>	1	12	32.500*	n.a.	40,000	430,000
<b>Ժամանակավոր ազդեցությանը ենթարկվող, Հարկային հայտարարագրով</b>	1	6	45183	n.a.	40,000	311,098
<b>Ընդամենը</b>	<b>7</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>39,578,404</b>

*\* Այն բիզնեսների համար, որոնք ենթարկվում են մշտական ազդեցությանը և չունեն հարկային հայտարարագիր, փոխհատուցումը կտրվի հիմնվելով նվազագույն աշխատավարձի վրա:*

**5.2. Եկամուտի կորուստներ**

162. Մշտական և ժամանակավոր ազդեցության ենթարկվող բիզնեսների աշխատողները կստանան վերականգնման նպաստ 6 ամսվա համար միջին աշխատավարձի չափով:

163. Առկա են 19 աշխատողներ, ովքեր կկորցնեն իրենց աշխատանքային զբաղվածությունը մշտապես, իսկ 1 աշխատող կկորցնի իր աշխատանքը ժամանակավորապես: Նրանք կփոխհատուցվեն **5,271,000** ՀՀ դրամի չափով: Մանրամասների համար տես Աղյուսակ Ժ13:

**Աղյուսակ Ժ13: Աշխատատեղի կորստի փոխհատուցում**

	Ազդեցության ենթակա աշխատողները	Ամիսները	Միավորի միջին արժեքը*	Ընդամենը ՀՀ դրամով
Աշխատատեղի կորուստը	19	6	277,421	<b>5,271,000</b>

*\*Նշում. Ամսական միջին աշխատավարձը հաշվարկվել է խորաքանցուր անհատի համար: Միջին թիվը ներկայացված է:*

**III. ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ**

**1. Նպաստներ խիստ ազդեցության դիմաց**

164. Ընդհանուր առմամբ 227 ԱԵՏՏ-ներ ենթարկվում են խիստ ազդեցության՝ կորցնելով գյուղատնտեսական հողի 10%-ից ավելին, որի համար կփոխհատուցվեն համապատասխանաբար: Մեկ լրացուցիչ մշակաբույսի փոխհատուցումը, որը ծածկում է մեկ տարվա բերքատվությունը, կտրամադրվի խիստ գյուղատնտեսական ազդեցություն կրած ԱԵԱ-ներին: Այն ԱԵՏՏ-ները, որոնք չեն ունեցել մշակաբույսեր գույքի գնահատման ընթացքում, բայց ունեցել են դրանք անցյալ տարում,



կստանան նպաստ 6 ամսվա համար ամսական նվազագույն աշխատավարձի չափով: Երկու (2) վերաբնակեցված ԱԵՏՏ-ներ ևս կստանան նպաստ 6 ամսվա համար ամսական նվազագույն աշխատավարձի չափով: Փոխհատուցումը բոլոր խիստ ազդեցության ենթակա ԱԵՏՏ-ների համար կազմում է **62,798,,126** ՀՀ դրամ: Մանրամասները ներկայացված են **Աղյուսակ Ժ14-ում** ստորև:

**Աղյուսակ Ժ14 Խիստ ազդեցության ենթակա ԱԵՏՏ-ներ**

	ԱԵՏՏ-ների քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը
ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են գյուղատնտեսական հողի >10% -ից ավելին, կփոխհատուցվեն հիմք ընդունելով 1 տարվա բերքը:	252	191,937*	48,368,126
ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են գյուղատնտեսական հողի >10% -ից ավելին, բայց չունեն մշակաբույսեր, կստանան միանվագ գումարի չափով փոխհատուցում:	72	195,000	14,040,000
Վերաբնակեցված ԱԵՏՏ-ներ	2	195,000	390,000
<b>Ընդհանուր</b>	<b>326</b>		<b>62,798,126</b>
<i>*Նշում. Նպաստը հաշվարկվել է անհատականորեն, այստեղ ներկայացված է միջին թիվը:</i>			

**2. Նպաստներ խոցելի խմբերի համար**

165. Լրացուցիչ նպաստներ են նախատեսվել խոցելի խմբերի համար<sup>40</sup>, մասնավորապես կանանց, տարեցների կողմից ղեկավարվող ԱԵՏՏ-ների, ինչպես նաև Ընտանեկան նպաստի համակարգում (ԸՆՀ) գրանցված ԱԵՏՏ-ների համար: Նպաստը համարժեք է 6 ամսվա նվազագույն աշխատավարձին (32,500 ՀՀ դրամ) ինչպես նաև վերջիններիս առաջնահերթություն կտրվի ծրագրի շրջանակում աշխատանքի ընդունվելիս: Ընդհանուր նպաստը, որը պետք է տրվի խոցելի ԱԵՏՏ-ներին, կազմում է **18.330.000** ՀՀ դրամ:

**Աղյուսակ Ժ14 Փոխհատուցումը սոցիալապես խոցելի անձանց համար**

Տեսակը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը
ա. ԸՆՀ-ում գրանցված ԱԵՏՏ-ներ	54	195,000	-
բ. Կանանց / տարեցների կողմից ղեկավարվող ԱԵՏՏ- ներ	49	195,000	-
Միջանկյալ ընդհանուրը (ա+բ)	103	-	-
<b>Խոցելի ԱԵՏՏ-ների ընդհանուր քանակը առանց կրկնակի հաշվարկի</b>	<b>94</b>	<b>195.000</b>	<b>18,330,000</b>

**3. Վերաբնակեցման նպաստ**

166. Վերաբնակեցման նպաստները սահմանվել են՝ հաշվի առնելով օտարման արդյունքում առաջացած կահույքի կամ այլ շարժական սեփականության տեղափոխման համար անհրաժեշտ տրանսպորտային ծախսերը բնակելի/ոչ բնակելի շենքերի և շինությունների համար: Ծախսերը հաշվարկվել են որպես ամբողջական ծախս բեռնատարների և բանվորական ուժի, որը անհրաժեշտ է բարձելու համար (կամ հատուկ մեքենաներ բարձելու համար): Տրանսպորտային տարածությունը 15 կմ երկարությամբ սահմանվել է որպես միջին տրանսպորտային տարածություն: Փոխհատուցման

---

<sup>40</sup> Բոլոր խոցելի ԱԵՏՏ-ները, ներառյալ սեփականատերերին, վարձակալներին և չգրանցված օգտագործողներին, կփոխհատուցվեն:

գումարը տատանվում է տեղափոխվող սեփականության ծավալից և իրական տարածությունից: Ի լրումն, տեղափոխվող ԱԵՏՏ-ների համար նախատեսված է նաև մեկ ամսվա համար կենսապահովման նպաստ տեղափոխության ժամանակամիջոցում կենսապահովման ծախսերը հոգալու համար: Ստորև բերված **Աղյուսակ Ժ15-ն** ամփոփում է նպաստների բյուջեն, որը կազմում է **4,130,000** ՀՀ դրամ:

**Աղյուսակ Ժ15. Տրանսպորտային ծախսերը և կենսապահովման նպաստ**

<b>Նպաստի տեսակը</b>	<b>ԱԵՏՏ-ների քանակը</b>	<b>Նպաստի միավոր արժեքը</b>	<b>Ընդամենը</b>
Տրանսպորտային ծախսերը	13	-	4,065,000
1 ամսվա կենսապահովման նպաստ	2	32,500	65,000
<b>Ընդհանուր</b>			<b>4,130,000</b>

**IV. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՂԻՆԵՐ**

167. Հաղորդողիներն ամբողջությամբ կտեղափոխվեն կամ կվերականգնվեն՝ ապահովելով մինչև S 2 Ծրագրի իրականացումն ունեցած աշխատանքային վիճակը: Ճանապարհը նախագծող խորհրդատուն նախագծել է նաև հաղորդողիների տեղափոխումը/վերականգնումը, և ՏԿՆ-ի ԾԻԳ-ը 2011թ. ձմռանը սկսել է վերջիններիս շիանարարական աշխատանքները: Քանի որ այդ առաջադրանքը ավելի շուտ սկսվեց, այն ներառված չէ ՀՕՏԾ-ի բյուջեում:

**V. ԾԱԽՍԵՐԻ ԱՍՓՈՓԱԳԻՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ**

168. Տրանշ 2-ի Ծրագրի ՀՕՏԾ իրականացման համար հաշվարկված արժեքը կազմում է **2,304,484,560** ՀՀ դրամ, որը համարժեք է **5,620,694** ԱՄՆ դոլարին և մանրամասն ներկայացված է ստորև բերված Աղյուսակ Ժ14-ում: ՏԿՆ-ն կապահովի հողի օտարման և տարաբնակեցման դիմաց փոխհատուցման գումարների վճարումը: Այն կհաստատվի Ֆինանսների նախարարության կողմից և կհատկացվի ժամանակին ՀՕՏԾ իրականացման նպատակով:

169. Նախատեսվել են նաև այլ վարչական ծախսեր, որոնք կարող են առաջանալ ՀՕՏԾ իրականացման ընթացքում: Սա հաշվի է առնվել միանվագ վճարման հիմունքներով:

**Աղյուսակ Ժ16. Ամփոփ բյուջեի ծախսերը**

<b>Միավորը</b>	<b>Ընդամենը</b>
<b>I. ՓՈՒՆՉԱՏՈՒՑՄԱՆ ԲՅՈՒՋԵՆ (ՆԵՐԱՌՅԱԼ ՆՊԱՍՏՆԵՐԸ)</b>	
Հող (ներառում է 15% փոխարինման արժեք)	630,048,872
Շենքեր և շինություններ (ներառում է 15% փոխարինման արժեք)	458,665,955
Մշակարույսեր	14,351,766
Մրգատու ծառեր	524,109,325
Փայտանյութ հանդիսացող ծառեր	4,576,498
Խաղողի այգիներ	27,820,957
Վարձակալության փոխհատուցում	1,873,191
Բիզնեսներ	39,578,404
Աշխատատեղի կորստի փոխհատուցում	5,271,000
Նպաստներ	95,881,993
Գրանցման ծառայության վճարներ	26,778,039
<p>5. Ինչպե՞ս են հաշվարկվում բերքի և ծառերի փոխհատուցումները:</p>	<p>Բոլոր ԱԵՏՏ-ները պետք է փոխհատուցվեն բերքի և ծառերի համար՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից: Բերքի կանխիկ փոխհատուցումը հաշվարկվում է շուկայական գներով՝ ակնկալվող տարեկան համախառն բերքի համար:</p> <p>Ծառերը կփոխհատուցվեն շուկայական արժեքով՝ հիմնված ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության վրա:</p>
<p>6. Ինչպե՞ս կարող ենք արտահայտել մեր</p>	<p>Դժգոհությունների բավարարման գործընթացը կիրականացվի մի քանի փուլով.</p>

<p>բողոքը անհամաձայնության դեպքում:</p>	<p>Նախ՝ բողոքներն անհրաժեշտ է փորձել լուծել համայնքի մակարդակով՝ համայնքային ղեկավար մարմինների և ոչ պաշտոնական միջնորդների ներգրավմամբ:</p> <p>Եթե այդպիսով բողոքները չեն լուծվում, դիմում–բողոք կարող է ներկայացվել Տրանսպորտի և կապի նախարարություն/ՏԿՆ/, որն էլ իր հերթին կհասցեագրի դրանք Իրականացնող գործակալությանը/ԻԳ/: 15 օրվա ընթացքում ՏԿՆ պետք է հայցը մերժի կամ առաջարկի ԻԳ դրա լուծումը ԱԵԱ կողմից ներկայացված պայմաններով:</p> <p>Եթե ՏԿՆ և ԻԳ միջամտությունից և աջակցությունից հետո բողոքը չի լուծվել, ապա ՏԿՆ այն պետք է ներկայացնի Ծրագրի Կառավարման Խորհրդին /ԾԿԽ/՝ բողոքի լուծման կամ դատարան դիմելու վերաբերյալ նրանց կարծիքը ստանալու նպատակով: Ընդ որում ԱԵԱ իր բողոքը պետք է ներկայացնի ՏԿՆ-ից նախնական բողոքի վերաբերյալ պատասխան ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում և պետք է իր պահանջը հիմնավորող փաստաթղթեր ներկայացնի: ԾԿԽ-ն պետք է պատասխանի բողոքին դրա գրանցումից հետո 15 օրվա ընթացքում: ԾԿԽ որոշումը պետք է համապատասխանի ՀՕՏ-ի դրույթներին:</p> <p>Եթե բողոքների քննարկման համակարգը չի բավարարում ԱԵԱ բողոքը, նրանք կարող են հայցով դիմել համապատասխան դատարան:</p>
---	---

**ԹԱԼԻՆ համայնք 24**

**օգոստոսի, 2011թ.**

ՀԱՐՑ	ՊԱՏԱՍԽԱՆ
<p>1. Ինչպե՞ս պետք է փոխհատուցվեն գյուղատնտեսական հողերը:</p>	<p>Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողերի դեպքում նախատեսվում է կանխիկ փոխհատուցում՝ փոխարինման արժեք +15%՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/:</p> <p>Գնահատումը իրականացվելու է անհատական յուրաքանչյուր հողի համար՝ հաշվի առնելով հողի տարբեր բնութագրիչները, հաստատված գին քմ-ի համար չկա:</p>
<p>2. Կա՞րողյոք հաստատված գին քմ-ի համար: Արդյոք հնարավոր է ստանդարտ գին որոշել բոլոր</p>	<p>Յուրաքանչյուր հող/գույք գնահատվում է անհատապես՝ կախված հողի բնութագրիչներից, այլ ոչ թե միայն հողի կարգից: Գնահատումն իրականացվում է լիցենզավորված անկախ գնահատող կազմակերպության կողմից՝ համաձայն Գնահատման մասին ՀՀ օրենքի նորմատիվների:</p>

<p>միատեսակ կարգ ունեցող հողերի համար:</p>	
<p>3. Ի՞նչ են փոխհատուցվելու բիզնեսի սեփականատերերը և նրանց աշխատողները:</p>	<p><b>Բիզնեսի/ձեռնարկատիրական գործունեության փոխհատուցումը կիրականացվի հետևյալ կերպ. ա)</b> (մշտական ազդեցություն) միանվագ փոխհատուցում տարեկան զուտ եկամտի չափով; բ) (Ժամանակավոր ազդեցություն) զուտ եկամտի փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության ընդհատման մինչև 1 տարի ժամանակահատվածի համար: Փոխհատուցումը հիմնված է հարկային հայտարարագրի վրա: Հայտարարագրի բացակայության դեպքում ԱԵՏՏ-ը կստանա վերականգնման նպաստ առավելագույն չհարկվող աշխատավարձի չափով՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատվող ամիսների հաշվարկով՝ մինչև 1 տարի: Առավելագույն չհարկվող աշխատավարձը հավասար է նվազագույն աշխատավարձին:</p> <p><b>Մշտական աշխատողներ/ աշխատակիցներ. ա)</b> (մշտական ազդեցություն) վեց ամսվա կորցրած միջին ամսեկան աշխատավարձի չափով գումարի տրամադրում; բ) (Ժամանակավոր ազդեցություն) մինչև վեց ամիս միջին ամսեկան աշխատավարձի չափով գումարի տրամադրում՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամսիների հաշվարկով:</p>
<p>4. Արդյո՞ք նախատեսված է փոխհատուցում վարձակալների կամ չգրանցված հողօգտագործողների համար:</p>	<p>ՀՕՏԾ շրջանակներում նախատեսվում է փոխհատուցում ինչպես օրինական սեփականատերերի, այնպես էլ վարձակալների և չգրանցված հողօգտագործողների դեպքում:</p> <p>Վարձակալը պետք է ստանա փոխհատուցում որպես լիարժեք սեփականատեր՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/ կամ նրան պետք է տրվի նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ, ապա, ելնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից, նա պետք է ստանա ազդեցության ենթակա հողի “շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/՝ գումարած 15%” –ին համարժեք փոխհատուցում հետևյալ մասնաբաժիններով՝ &lt; 1 տարի՝ հողի արժեքի 5%; 2) &lt; 15 տարի՝ հողի արժեքի 14%; 3) &lt; 25 տարի՝ հողի արժեքի 20%; 4) &gt;25 տարի՝ հողի արժեքի 25%:</p> <p>Իրավական կարգավիճակ ստանալու ենթակա</p>

	<p>սեփականատերերը հնարավորության դեպքում պետք է ստանան օրինական կարգավիճակ և լիարժեք փոխհատուցվեն:</p> <p>Առանց սեփականության իրավունքի կամ վարձակալության իրավունքի ԱԵԱ-ները կստանան վերականգնման նպաստ ազդեցության ենթարկված հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/՝ հողօգտագործման անցած տարիների հաշվարկով. 1) &lt; 1 տարի՝ հողի արժեքի 5%; 2) &lt; 15 տարի՝ հողի արժեքի 14%; 3) &lt; 25 տարի՝ հողի արժեքի 20%; 4) &gt;25 տարի՝ հողի արժեքի 25%:</p>
<p>5. Ինչպե՞ս է գնահատվում հողի կարգը. Փաստացի, թե ըստ կադաստրային կարգի:</p>	<p>Հողի գնահատումը կատարվում է ըստ փաստացի օգտագործման կարգի/կարգավիճակի:</p>
<p>6. Ինչպե՞ս կարող ենք արտահայտել մեր բողոքը անհամաձայնության դեպքում:</p>	<p>Դժգոհությունների և բողոքների բավարարման գործընթացը կիրականացվի մի քանի փուլով.</p> <p>Նախ՝ բողոքներն անհրաժեշտ է փորձել լուծել համայնքի մակարդակով՝ համայնքային ղեկավար մարմինների և ոչ պաշտոնական միջնորդների ներգրավմամբ:</p> <p>Եթե այդպիսով բողոքները չեն լուծվում, դիմում–բողոք կարող է ներկայացվել Տրանսպորտի և կապի նախարարություն/ՏԿՆ/, որն էլ իր հերթին կհասցեագրի դրանք Իրականացնող գործակալությանը/ԻԳ/: 15 օրվա ընթացքում ՏԿՆ պետք է հայցը մերժի կամ առաջարկի ԻԳ դրա լուծումը ԱԵԱ կողմից ներկայացված պայմաններով: Եթե ՏԿՆ և ԻԳ միջամտությունից և աջակցությունից հետո բողոքը չի լուծվել, ապա ՏԿՆ այն պետք է ներկայացնի Ծրագրի Կառավարման Խորհրդին /ՕԿԽ/՝ բողոքի լուծման կամ դատարան դիմելու վերաբերյալ նրանց կարծիքը ստանալու նպատակով: ՕԿԽ-ն պետք է պատասխանի բողոքին դրա գրանցումից հետո 15 օրվա ընթացքում: ՕԿԽ որոշումը պետք է համապատասխանի ՀՕՇ-ի դրույթներին:</p> <p>Եթե բողոքների քննարկման համակարգը չի բավարարում ԱԵԱ բողոքը, նրանք կարող են հայցով դիմել համապատասխան դատարան:</p>

**ՓԱՐՊԻ համայնք 24**

**օգոստոսի, 2011թ.**

ՀԱՐՑ	ՊԱՏԱՍԽԱՆ
------	----------

<p>1. Ինչպե՞ս պետք է փոխհատուցվեն գյուղատնտեսական հողերը:</p>	<p>Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողերի դեպքում նախատեսվում է կանխիկ փոխհատուցում՝ փոխարինման արժեք +15%՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/:</p>
<p>2. Արդյո՞ք նախատեսված է փոխհատուցում վարձակալների կամ չգրանցված հողօգտագործողների համար:</p>	<p>ՀՕՏԾ շրջանակներում նախատեսվում է փոխհատուցում ինչպես օրինական սեփականատերերի, այնպես էլ վարձակալների և չգրանցված հողօգտագործողների դեպքում: Վարձակալը պետք է ստանա փոխհատուցում որպես լիարժեք սեփականատեր՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/ կամ նրան պետք է տրվի նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ, ապա, ելնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից, նա պետք է ստանա ազդեցության ենթակա հողի “շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/՝ գումարած 15%” –ին համարժեք փոխհատուցում հետևյալ մասնաբաժիններով՝ &lt; 1 տարի՝ հողի արժեքի 5%; 2) &lt; 15 տարի՝ հողի արժեքի 14%; 3) &lt; 25 տարի՝ հողի արժեքի 20%; 4) &gt;25 տարի՝ հողի արժեքի 25%:</p> <p>Իրավական կարգավիճակ ստանալու ենթակա սեփականատերերը հնարավորության դեպքում պետք է ստանան օրինական կարգավիճակ և լիարժեք փոխհատուցվեն:</p> <p>Առանց սեփականության իրավունքի կամ վարձակալության իրավունքի ԱԵԱ-ները կստանան վերականգնման նպաստ ազդեցության ենթարկված հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/՝ հողօգտագործման անցած տարիների հաշվարկով. 1) &lt; 1 տարի՝ հողի արժեքի 5%; 2) &lt; 15 տարի՝ հողի արժեքի 14%; 3) &lt; 25 տարի՝ հողի արժեքի 20%; 4) &gt;25 տարի՝ հողի արժեքի 25%:</p>
<p>3. Ինչպե՞ս են փոխհատուցվելու համայնքային հողերը:</p>	<p>Համայնքային հողերի փոխհատուցումն իրականացվում նույն սկզբունքով, ինչ մասնավոր սեփականություն հանդիսացող հողերինը:</p>
<p>4. Ինչպե՞ս է գնահատվում հողը. փաստացի, թե ըստ կադաստրային կարգի:</p>	<p>Հողի գնահատումը կատարվում է ըստ փաստացի օգտագործման կարգի/կարգավիճակի:</p>
<p>5. Ինչպե՞ս են հաշվարկվում</p>	<p>Բոլոր ԱԵՏՏ-ները պետք է փոխհատուցվեն բերքի և</p>



<p>բերքի և ծառերի փոխհատուցումները:</p>	<p>ծառերի համար՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից:  Բերքի կանխիկ փոխհատուցումը հաշվարկվում է շուկայական գներով՝ ակնկալվող տարեկան համախառն բերքի համար:  Ծառերը կփոխհատուցվեն շուկայական արժեքով՝ հիմնված ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության վրա:</p>
<p>6. Ինչպե՞ս կարող ենք արտահայտել մեր բողոքը անհամաձայնության դեպքում:</p>	<p>Դժգոհությունների բավարարման գործընթացը կիրականացվի մի քանի փուլով.</p> <p>Նախ՝ բողոքներն անհրաժեշտ է փորձել լուծել համայնքի մակարդակով՝ համայնքային ղեկավար մարմինների և ոչ պաշտոնական միջնորդների ներգրավմամբ:</p> <p>Եթե այդպիսով բողոքները չեն լուծվում, դիմում–բողոք կարող է ներկայացվել Տրանսպորտի և կապի նախարարություն/ՏԿՆ/, որն էլ իր հերթին կհասցեագրի դրանք Իրականացնող գործակալությանը/ԻԳ/: 15 օրվա ընթացքում ՏԿՆ պետք է հայցը մերժի կամ առաջարկի ԻԳ դրա լուծումը ԱԵԱ կողմից ներկայացված պայմաններով:</p> <p>Եթե ՏԿՆ և ԻԳ միջամտությունից և աջակցությունից հետո բողոքը չի լուծվել, ապա ՏԿՆ այն պետք է ներկայացնի Ծրագրի Կառավարման Խորհրդին /ԾԿԽ/ բողոքի լուծման կամ դատարան դիմելու վերաբերյալ նրանց կարծիքը ստանալու նպատակով: Ընդ որում ԱԵԱ իր բողոքը պետք է ներկայացնի ՏԿՆ- ից նախնական բողոքի վերաբերյալ պատասխան ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում և պետք է իր պահանջը հիմնավորող փաստաթղթեր ներկայացնի: ԾԿԽ-ն պետք է պատասխանի բողոքին դրա գրանցումից հետո 15 օրվա ընթացքում: ԾԿԽ որոշումը պետք է համապատասխանի ՀՕՏԾ-ի դրույթներին:</p> <p>Եթե բողոքների քննարկման համակարգը չի բավարարում ԱԵԱ բողոքը, նրանք կարող են հայցով դիմել համապատասխան դատարան:</p>

Հավելված Զ2. Ծրագրի տեղեկատվական բրոշյուր



ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ ԾՐԱԳՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲՐՈՇՅՈՒՐ

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

1. Ծրագրի պատմությունը
2. Ծրագրի ազդեցությունների ամփոփագիրը
3. Քաղաքականությունը և սկզբունքները
4. Փոխհատուցման իրավասություններ և իրավունքներ
5. Փոխհատուցման դրույքաչափերը
6. Բողոքների լուծումը
7. Հաճախ տրվող հարցերը
8. Ծախսերի ամփոփագիրը և ֆինանսավորման աղբյուրը
9. Կոնտակտային տվյալները

**ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ**

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԱԵՏՏ	Ազդեցության ենթակա տնային տնտեսություն
ՀՀ դրամ	Հայաստանի Հանրապետության դրամ
ԱԵԱ	Ազդեցության ենթակա անձ
ԲԼԽ	Բողոքների լուծման խումբ
ՀՕՏԵ	Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակ
ՀՕՏԾ	Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր
ՏԿՆ	Տրանսպորտի և կապի նախարարություն
ՀՀՃԱՄԼԾ	“Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք” ներդրումային ծրագիր
ԾԻԿ	Ծրագրի իրականացման կազմակերպություն

**ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ**

<b>Ազդեցության ենթակա տնային տնտեսություն (ԱԵՏՏ)</b>	Ազդեցության ենթակա տնային տնտեսությունը որպես ամբողջական մաս: ԱԵՏՏ-ն գործում է որպես մեկ տնտեսական և ընտանեկան միավոր և կարող է բաղկացած լինել մեկ անձից, նույնիսկ ընտանիքից կամ ընդլայնված ընտանիքից: Դա փոխհատուցում ստացող/վերականգնման ենթակա կարևորագույն միավոր է:
<b>Ազդեցության ենթակա անձ /մարդիկ (ԱԵԱ)</b>	Ցանկացած անձ (անհատ) որը Ծրագրի իրականացման հետ կապված փոփոխությունների պատճառով ազդեցության է ենթարկվում հողի, ջրի, բնական պաշարների օգտագործման առումով, կամ եկամտի կորստի առումով:
<b>Իրավասություն</b>	Ազդեցության ենթակա անձանց կրած կորուստների բնույթով պայմանավորված միջոցառումների շրջանակ՝ ներառյալ փոխհատուցումը, եկամտի վերականգնումը, օժանդակությունը վերաբնակեցմանը, եկամտի փոխհատուցմանը և տեղափոխմանը, որն ապահովում է վերջիններիս տրամադրումը ԱԵԱ-ներին իրենց տնտեսական և սոցիալական բազան վերականգնելու համար:
<b>Օտարում</b>	Սեփականության իրավունքները վերցնելու կամ դրանք փոխելու կառավարության գործողությունը՝ Գերակա հանրային շահ ճանաչելու մասին օրենքի համաձայն:
<b>Չձևակերպված օգտագործող</b>	ԱԵԱ-ն, որն օգտագործում է ազդեցության ենթակա հողակտորը կամ գույքը բացակայող սեփականատիրոջ կամ համայնքի հետ չձևակերպված/բանավոր համաձայնության հիման վրա, ինչը գրավոր հաստատված է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

<b>Վերականգնում</b>	Ոչ կամավոր տարաբնակեցման քաղաքականության շրջանակներում նախաձեռնվող փոխհատուցման միջոցառումներ, որոնք այլ են, քան օտարված ակտիվների փոխարինման արժեքի վճարումը:
<b>Վերաբնակեցում</b>	ԱԵԱ-ների կամ ԱԵՏՏ-ների ֆիզիկական տեղափոխում իրենց մինչ Ծրագիրն իրականացնելը բնակավայրից, որը պահանջում է կացության կամ ակտիվների

	վերակառուցումը այլ վայրում:
<b>Վերաբնակեցման արժեք</b>	Արժեք, որը պարտադիր պետք է փոխարինի ազդեցությանը ենթակա ակտիվը/առարկան նույն արժեքը և որակը ունեցող համարժեք ակտիվով առանց գործարքային և այլ ծախսերի: Վերաբնակեցման արժեքը կարող է որոշվել տարբեր եղանակներով ելնելով ազդեցությանը ենթակա առարկայի տեսակից և ծրագրում գործող պայմաններից հետևյալ կերպ. ա) հող՝ գործող շուկայական գինը, որը որոշվել է հողի հետ կապված գործարքների հետազոտության հիման վրա, կամ, եթե հողի շուկան բացակայում է, ազդեցությանը ենթակա հողակտորի մթերատու արժեքը/վերականգնման գինը; բ) շենքեր՝ ազդեցությանը ենթակա շենքի ամբողջական վերականգնման գինը, ներառյալ շինարարական նյութերը, բանվորական ուժը և տրանսպորտային ծախսերը առանց ամորտիզացիոն/փրկված նյութերի; գ) մշակաբույսեր՝ գործող շուկայական գինը և դ) ծառեր՝ շուկայական գործակցով եկամտի կորուստներ (բերքատու/փայտանյութ հանդիսացող ծառեր) և վերականգնման գինը (ոչ բերքատու ծառեր/տրատունկեր):
<b>Տարաբնակեցման պլան/ծրագիր</b>	Գործողությունների ժամանակացույց՝ տարաբնակեցման ռազմավարությունը, նպատակները, իրավունքները, գործողությունները, պարտավորությունները, մոնիտորինգը և գնահատումը հստակեցնող բյուջեի բաշխմամբ:
<b>Խոցելի ԱԵՏՏ-ներ</b>	Խոցելի են համարվում հետևյալ ԱԵՏՏ-ները. ա) աղքատ ԱԵՏՏ-ներ, որոնք գրանցված են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ընտանեկան նպաստի համակարգում; բ) ԱԵՏՏ, որը ղեկավարվում է կնոջ կողմից առանց եկումուտ ունեցող ԱԵՏՏ այլ անդամի, կամ գ) ԱԵՏՏ, որը ղեկավարվում է տարեց թոշակատուի կողմից առանց եկումուտ ունեցող ԱԵՏՏ այլ անդամի:

## ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) տրամադրեց Հայաստանի Հանրապետության կառավարությանը (ՀՀ կառավարություն) Բազմափուլային ֆինանսավորման գործիք (ԲՖԳ) “Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք” ներդրումային ծրագիրը (ՀՀՃՄՆԾ) ֆինանսավորելու համար: Սկզբնական փուլը, որը ներառում է Արարատից դեպի Երևան, Աշտարակ, Թալին և Գյումրի մայրուղին: Ծրագիրը ներառում է գոյություն ունեցող 2 երթուղիների գոտիով Մ1 մայրուղու բարելավումը՝ դարձնելով այն միջազգային չափանիշներին համապատասխան 4 երթուղիների գոտիով 1-ին կարգի ճանապարհ: Ծրագրի Տրանշ 2-ում՝ Աշտարակից դեպի Թալին ճանապարհում նախատեսվում է կառուցել 18 ստորգետնյա գյուղատնտեսական անցումներ, որոնցից 8-ը հետիոտների և ընտանի կենդանիների համար 3.0 մ բարձրությամբ x 5.0մ լայնությամբ և 10 ստորգետնյա անցումներ գյուղատնտեսական տեխնիկայի համար 4.5մ բարձրությամբ x 6.0մ լայնությամբ: Ինը տարամակարդակ փոխհատումները ապահովում են կապը մայրուղու, տեղական ճանապարհների և համայնքների միջև: Փոխհատումներից 3-ը կամուրջներ են, իսկ մնացած 6-ը՝ ստորգետնյա անցումներ: Ծրագրային մայրուղու երկայնքով յուրաքանչյուր տարանջատված փոխհատման համար նախատեսված է էլեկտրական լուսավորություն 250մ երկարությամբ մուտքի իջատեղերից սկսած մինչև փոխհատումը և փոխհատումից 250մ երկարությամբ մինչև ելքի իջատեղը: Ապահովված է նաև ճանապարհային զծանշում և ազդանշանային համակարգ տեղական ստանդարտներին համապատասխան, որոնք որտեղ անհրաժեշտ է համալրված են միջազգային ստանդարտներով: Ճանապարհային անվտանգության տարրերը և սկզբունքները նախագծում ևս ներառված են:

### Նկար Ա1 Տրանշ 2 Ծրագրի տեղակայվածությունը



Նոր ծրագրի ճանապարհային միջանցքում է հիմնականում գոյություն ունեցող մայրուղով՝ ընդհանուր բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով, սակայն ներառում է նաև գոյություն ունեցող համայնքների կանաչ դաշտերով անցնող շրջանցիկ ճանապարհներ: Դա պահանջում է մեծածավալ հողի օտարում և տարաբնակեցում (ՀՕՏ):

### Ծրագրի ազդեցությունների ամփոփագիրը

Ծրագրի շրջանակներում ազդեցությանը ենթարկվում են 838 հողակտորներ որոնցից.

- 1,186 սեփականատերեր և համասեփականատերեր ունեցող 484 մասնավոր հողակտոր,

- 16 համայնքների սեփականություն հանդիսացող 352 համայնքային հողակտորներ,
- 2 հողակտորներ, որոնք հանդիսանում են ՀՀ սեփականություն:

Որոշ մասնավոր և համայնքային հողակտորները տրված են վարձակալության կամ եկամուտ ստանալու իրավունքով ազատ օգտագործման (ուզուֆրուկտ) երրորդ կողմի օգտագործողների համար: Երրորդ կողմի օգտագործողները հետևյալն են.

- Համայնքային հողակտորների 14 ձևակերպված վարձակալներ,
- Մասնավոր հողակտորների 23 չձևակերպված վարձակալներ և
- Համայնքային հողակտորների 4 չձևակերպված վարձակալներ:

Ծրագրի շրջանակներում պահանջվում է 1,734,144 մ<sup>2</sup> հողի օտարում: Դրանցից 746 հողակտոր (1,643,777 մ<sup>2</sup>) օգտագործվում են գյուղատնտեսական նպատակներով, իսկ 92 (90,547 մ<sup>2</sup>)՝ ոչ գյուղատնտեսական (83 բնակելի և 9 արտադրական նշանակության հողակտոր): Գյուղատնտեսական նշանակության հողերը ներառում են. 297 ոռոգելի վարելահող (432,183 մ<sup>2</sup>) և 34 ոչ ոռոգելի վարելահող (83,393 մ<sup>2</sup>); 2 խոտհարք (560 մ<sup>2</sup>); 98 պտղատու այգիներ (101,464 մ<sup>2</sup>); 10 խաղողի այգիներ (19,446 մ<sup>2</sup>); 108 արոտավայրեր (718, 071 մ<sup>2</sup>) և 197 այլ գյուղատնտեսական նշանակության հողակտորներ (գյուղական ճանապարհներ, գետի հուններ, այն հողակտորները, որոնք կարող են օգտագործվել, բայց չեն օգտագործվում) (288,480 մ<sup>2</sup>).

Ծրագրային տարածքի հիմնական մշակաբույսերը հացահատիկայիններն են, հիմնականում ցորենը և գարին; ազդեցության ենթակա ընդհանուր տարածքը կազմում է 219,566 մ<sup>2</sup>: Դրանցից ազդեցությանը կենթարկվեն 4,378 մրգատու և 1,555 փայտանյութ տվող ծառեր: Ազդեցությանը ենթարկվող խաղողի այգիների մակերեսը կազմում է 6,485 զծամետր:

Ազդեցությանը կենթարկվեն ընդհանուր առմամբ 28 շենքեր, որոնց մակերեսը կազմում է 2,699 մ<sup>2</sup> (2 բնակելի և 26 ոչ բնակելի շենքեր): 2 բնակելի շենքերի սեփականատերերը պետք է վերաբնակեցվեն:

Ազդեցությանը ենթարկվում են 7 բիզնեսներ (6-ը՝ մշտապես): Ազդեցությանը ենթարկվող աշխատողները 19-ն են:

Ընդամենը ազդեցությանը ենթարկվում են 536 ԱԵՏՏ-ներ և 2,263 ԱԵԱ-ներ, ներառյալ՝ հողի/շենքերի սեփականատերերը, վարձակալները, ինչպես նաև մասնավոր և համայնքային հողակտորների չձևակերպված օգտագործողները: Ծրագրի իրականացման ընթացքում ազդեցությանը կենթարկվեն 91 խոցելի ԱԵՏՏ-ներ, ներառյալ կին և/կամ տարեց ՏՏ ղեկավարներ և աղքատ ԱԵՏՏ-ներ: Ծրագիրը խիստ ազդեցություն կունենա 326 ԱԵԱ-ների վրա, ներառյալ վերաբնակեցման ենթակա 2 ԱԵԱ-ներ:

**Աղյուսակ 1. Ծրագրի ազդեցությունների ամփոփագիրը**

Ազդեցության տեսակը	Հողակտորներ/ միավորներ	ԱԵՏ Տ- ներ	Մակեր ես, մ <sup>2</sup>	Մեկնաբանություն/ միավորի նկարագրություն
<b>Ա. Հող</b>				
Ա1. Գյուղատնտեսական (մասնավոր հող)	449	441	619,594	
Ա2. Գյուղատնտեսական (համայնքային հող)	296	16	1,022,270	
Ա3. Բնակելի/արդյունաբերական (մասնավոր հող)	35	36	27,588	



Ա4. Բնակելի/արդյունաբերական (համայնքային հող)	56	10	61,152	
Ա5. Պետական հող	2	0	3,540	
<b>Միջանկյալ ընդհանուրը (Ա)</b>	<b>838</b>	<b>493</b>	<b>1,734,144</b>	
<b>Բ. Շինություններ</b>				

Ազդեցության տեսակը	Հողակտորներ/ միավորներ	ԱԵՏ Տ- ներ	Մակեր ես, մ <sup>2</sup>	Մեկնաբանություն/ միավորի նկարագրություն
Բ1. Բնակելի	2	2	3,693	Ա-ում ներառված հողակտորների քանակը և ԱԵՏՏ- ները
Բ2. Ոչ բնակելի	11	11	44,031	
<b>Միջանկյալ ընդհանուրը (Բ)</b>	<b>13</b>	<b>13</b>	<b>47,724</b>	
<b>Գ. Միամյա մշակաբույսեր</b>	174	198	219,566	Ա-ում ներառված հողակտորների քանակը, ԱԵՏՏ- ները և մակերեսը
<b>Դ. Բերքատու ծառեր</b>	110	128	4,37 8 (միավ որ)	
<b>Ե. Փայտանյութ տվող ծառեր</b>	40	40	1,55 5 (միավ որ)	
<b>Զ. Բիզնեսի/եկամտի կորուստներ</b>				
Զ1. Ժամանակավոր կորուստներ կրող հարկային հայտարարագիր ներկայացրած	5	5	չ/կ	Բիզնեսների քանակը
Զ2. Մշտական կորուստներ կրող հարկային հայտարարագիր ներկայացրած	1	1	չ/կ	
Զ3. Մշտական կորուստներ կրող հարկային հայտարարագրի	1	1	չ/կ	
<b>Միջանկյալ ընդհանուրը (Զ)</b>	<b>7</b>	<b>7</b>	<b>չ/կ</b>	
<b>Է. Աշխատատեղի կորուստ</b>	19	19	չ/կ	Աշխատողների քանակը
<b>Ը. Վարձակալներ/ չգրանցված վարձակալներ</b>				
Ը1. Վարձակալություն (համայնքային հող)	14	13	57,940	Ա-ում ներառված հողակտորների քանակը և մակերե սը
Ը2. Ուզուֆրուկտ օգտագործող (մասնավոր հող)	23	23	21,776	Ա-ում ներառված հողակտորների քանակը և մակերե սը
Ը3. Ուզուֆրուկտ օգտագործող (համայնքային հող)	4	4	29,543	Ա-ում ներառված հողակտորների քանակը և մակերե սը
<b>Թ. Խոցելի/խիստ ազդեցության ենթակա տնային տնտեսություններ</b>				
Թ1. Խոցելի ԱԵՏՏ-ներ	չ/կ	94	չ/կ	Ներառված են Ա-ում և Ը-ում

Թ2. Խիստ ազդեցության ենթակա SS-ներ	չ/կ	326	չ/կ	Ներառված են Ա-ում և Ը-ում
<b>Ժ. Ընդհանուր ԱԵՏՏ-ներ</b>	չ/կ	<b>536</b>	չ/կ	Առանց կրկնահաշվարկի
<b>Ի. Ընդհանուր ԱԵԱ-ներ ներառյալ համայնքները</b>	չ/կ	<b>552</b>	չ/կ	Առանց կրկնահաշվարկի

**ՕՐԵՆՄԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ Սահմանադրությունը (1995թ.) երաշխավորում է մասնավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը: Համաձայն վերջինի՝ մասնավոր սեփականության իրավունքը կարող է դադարեցվել գերակա հանրային շահի ճանաչման բացառիկ դեպքերում՝ հիմնվելով ընդունված ընթացակարգի վրա և նախնական համապատասխան փոխհատուցման դիմաց: Հողի օտարման և փոխհատուցման խնդիրները քննարկվում են Հողային օրենսգրքի 102, 104 հոդվածների, Քաղաքացիական օրենսգրքի (1998թ.) շրջանակներում, 2006թ. նոյեմբերի 27-ին ընդունված «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 218-221 հոդվածների շրջանակներում:

Հողի/սեփականության օտարման հարցը լուծվում է ՏԿՆ-ի և ԱԵԱ-ների կամ նրանց պաշտոնական ներկայացուցիչների միջև պայմանագրի և համաձայնագրի հիման վրա՝ հաշվի առնելով վերջինիս շուկայական արժեքը և կորուստները:

Պատշաճ փոխհատուցում կվճարվի սեփականատիրոջը՝ իր գույքի օտարման դիմաց: Պատշաճ է համարվում օտարված սեփականության շուկայական արժեքին 15%-ով վրադիր գումարի վճարումը: Անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքների գնահատումը պետք է իրականացվի 2005թ. հոկտեմբերի 4-ին ՀՀ-ում անշարժ գույքի գնահատման մասին ՀՀ օրենքի շրջանակներում սահմանվող ընթացակարգերի համաձայն:

Հարկադիր տարաբնակեցման անվտանգության վերաբերյալ ԱԶԲ դրույթները Սոցիալական անվտանգության քաղաքականության շրջանակում հիմնված են հետևյալ սկզբունքների վրա.

- խուսափել կամ առնվազն նվազագույնի հասցնել հարկադիր տարաբնակեցման դեպքերը:
- Փոխհատուցման/վերականգնման դրույթները կապահովեն ԱԵԱ-ների նախքան Ծրագրի իրականացումն ունեցած կենսամակարդակը:
- ԱԵԱ-ները պետք է լիարժեք տեղեկացված կամ խորհրդակցված լինեն ՀՕՏ փոխհատուցման տարբերակների մասին:
- Հարկ է հնարավորինս օժանդակել/աջակցել ԱԵԱ-ների սոցիալ-մշակութային ինստիտուտներին:
- Փոխհատուցումը կիրականացվի կանանց և տղամարդկանց հավասարազոր դիտարկմամբ:
- Սեփականության իրավունքի գրանցման փաստաթղթի բացակայությունը չպետք է խոչընդոտ հանդիսանա փոխհատուցման/վերականգնման համար:
- Հատուկ ուշադրություն պետք է դարձվի կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսություններին և այլ խոցելի խմբերի, ինչպես օրինակ՝ տեղաբնակների կողմից ղեկավարվող տնային տնտեսություններին, և համապատասխան օժանդակություն պետք է ցուցաբերվի վերջիններին՝ իրենց վիճակը բարելավելու համար:
- ՀՕՏ-ը պետք է հանդիսանա և իրականացվի որպես նախագծի մի մաս, իսկ ողջ արժեքի փոխհատուցումը պետք է ներառվի Ծրագրի ծախսերի և օգուտների շրջանակներում:
- Փոխհատուցումը՝ վերաբնակեցման նպաստները պետք է ամբողջությամբ հատկացվեն նախքան օտարումը և քանդումը:

ՀՀ օրենքների ու կանոնակարգերի և ԱԶԲ Սոցիալական անվտանգության քաղաքականության միջև անհամապատասխանություններին անդրադարձել է ՀՕՏ-ն, որը կարևորում է փոխհատուցման և իրավասության խնդիրները այս ծրագրի համար (*տես համառոտ նկարագրություն “Փոխհատուցման իրավասություններ և իրավունքներ” ստորև*): ՀՀ օրենքների և ԱԶԲ Սոցիալական անվտանգության քաղաքականության հայտարարագրի (2009թ.) հիման վրա այս ԲՖԳ-ի համար մշակվել են հարկադիր տարաբնակեցման հիմնական հետևյալ սկզբունքները<sup>52</sup>:

- Հողի օտարման և այլ հարկադիր տարաբնակեցման ազդեցություններից պետք է խուսափել կամ հասցնել նվազագույնի՝ ուսումնասիրելով բոլոր կենսունակ այլընտրանքային ծրագրի նախագծերը:

<sup>52</sup> Պարբերություն 18, E4 ՀՕՎՇ, այս ԲՖԳ-ի համար ընդունված սկզբունքներն ու իրավունքները, Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակ (նորացված), դեկտեմբեր 2010թ..

- Անխուսափելի լինելու դեպքում, կմշակվի սահմանափակ ժամկետներով ՀՕՏԾ և ԱԵԱ-ները աջակցություն կստանան բարելավելու կամ նվազագույն դեպքում նախքան Ծրագրի իրականացումը վերջիններիս ունեցած կենսամակարդակը վերականգնելու համար:
- Պետք է երաշխավորվի ԱԵԱ-ների հետ փոխհատուցման հարցի շուրջ խորհրդակցությունների հետ փոխհատուցման հարցի շուրջ խորհրդակցությունների կազմակերպումը, տարաբնակեցման հետ կապված տեղեկատվության տրամադրումը, և ենթածրագրերի մշակման/իրականացման շրջանակներում ԱԵԱ-ների մասնակցությունը՝ նախագծի այլընտրանքների վերաբերյալ իրենց տեսակետը արտահայտելու, ինչպես նաև մոնիտորինգի միջոցառումներին մասնակցելու միջոցով:
- Խոցելի և խիստ ազդեցություն կրող ԱԵԱ-ներին կտրամադրվի հատուկ օժանդակություն:
- Սեփականության իրավունք չունեցող ԱԵԱ-ները (օր.՝ ապօրինի ապրողներ և զավթողներ, առանց գրանցման ԱԵԱ-ներ) կստանան կենսապահովման նպաստ՝ հողի փոխհատուցման համար և ամբողջությամբ կփոխհատուցվի հողից բացի այլ կորուստների դիմաց:
- Օրինականացման ենթակա ԱԵԱ-ները կօրինականացվեն և ամբողջությամբ կփոխհատուցվեն հողի կորստի դիմաց:
- Եկամտի վերականգնման միջոցների ապահովում:
- ՀՕՏԾ-ն կներկայացվի ԱԵԱ-ներին հայերեն լեզվով:
- Փոխհատուցման, վերաբնակեցման օժանդակությունը և վերականգնման միջոցառումներն ամբողջությամբ կտրամադրվեն նախքան կապալառուն ֆիզիկապես կստանա հողը, կամ նախքան որևէ փաթեթի շրջանակներում որևէ շինարարական աշխատանքի նախաձեռնումը:
- ԱԵԱ-ների բողոքների բավարարման համար համապատասխան մեխանիզմի մշակում:

**ՓՈՒՆՉԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**

Բոլոր ԱԵԱ-ները, ովքեր բնակվում, աշխատում, զբաղվում են գործարարությամբ, մշակում են հողը ազդեցության ենթակա տարածքում, իրավասու են ստանալ փոխհատուցում իրենց ազդեցության ենթարկված գույքի դիմաց՝ հիմնվելով փոփոխված և վերջնականացված նախագծի, հերթական թարմացված մարդահամարի և կորուստների մանրամասն չափագրման հետազոտության վրա, ինչպես նաև կապահովվեն վերականգնողական միջոցառումներ, որոնք բավարար կլինեն օժանդակելու ԱԵԱ-ներին բարելավելու կամ առնվազն վերականգնելու մինչև ծրագիրն ունեցած կենսամակարդակը, եկամուտ վաստակելու կարողությունը և արտադրական մակարդակը:

Կորցրած գույքի նկատմամբ օրինական իրավունքների բացակայությունը կամ բացասական ազդեցություն կրած զբաղվածության կարգավիճակը, կամ սոցիալ-տնտեսական կարգավիճակը չպետք է խախտի ԱԵԱ-ի իրավասությունը փոխհատուցման, վերականգնողական միջոցառումների կամ վերաբնակեցման նպատակների նկատմամբ:

Կասեցման ամսաթվից հետո ազդեցության ենթակա տարածքներում բնակություն հաստատող կամ տներ/շինություններ կառուցող/ընդլայնող ԱԵԱ-ները փոխհատուցում ստանալու իրավասություն չեն ունենա: Ծրագրի կասեցման ամսաթիվը 2011թ. հունիսի 17-ն է: Նրանց համապատասխան ծանուցում կներկայացվի կանխավ, որով վերջիններիս կխնդրվի ազատել տարածքները, ապամոնտաժել կառուցված շինությունները նախքան Ծրագրի իրականացումն սկսելը:

Ստորև բերված Իրավունքների մատրիցան դասակարգում է կորուստների տեսակները և փոխհատուցման իրավունքները, ինչպես նաև նպաստներ տարբեր խմբերի համար, որոնցից են խիստ ազդեցության ենթարկված, աղքատ, տարեցների, կանանց կողմից ղեկավարվող և այլ ԱԵՏՏ-ներ և/կամ ԱԵԱ-ներ:

**Աղյուսակ 2: Իրավունքների մատրիցան**

Կորստի տեսակը	Կիրառությունը	ԱԵԱ-ների սահմանումը	Փոխհատուցման իրավունքները
<p><b>1. Գյուղատնտեսական հողերի կորուստ</b></p>	<p>ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են գյուղատնտեսական հողերը անկախ ազդեցության աստիճանից</p>	<p>Սեփականատեր լիարժեք գրանցումով</p>	<p>Փոխհատուցում՝ փոխարինման արժեք +15%՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/: Հողի շուկայի բացակայության դեպքում փոխհատուցումը կիրականացվի հիմք ընդունելով հողի տարեկան արտադրողականությունը՝ հաշվարկված տարիների այն բավարարքանակով, որը կապահովի ԱԵՏՏ-ի կորցրած հողի դիմաց վերականգնումը:</p>
		<p>Օրինականացման ենթակա սեփականատերեր</p>	<p>Օրինականացման ենթակա ԱԵԱ-ները կօրինականացվեն և կփոխհատուցվեն վերոնշյալ ձևով:</p>
		<p>Վարձակալ (համայնք, պետություն)</p>	<p>Վարձակալը պետք է ստանա փոխհատուցում որպես լիարժեք սեփականատեր՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/ կամ նրան պետք է տրվի նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ, ապա, ելնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից, նա պետք է ստանա ազդեցության ենթակա հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/ գումարած 15%՝ –ին համարժեք փոխհատուցում հետևյալ մասնաբաժիններով՝ մինչև 1 տարի՝ հողարժեքի 5%; 2) մինչև 15 տարի՝ հողարժեքի 14%; 3) մինչև 25 տարի՝ հողարժեքի 20%; 4) 25 և ավել տարի՝ հողարժեքի 25%</p>
		<p>Օրինական կարգավիճակ ստանալու ոչ ենթակա սեփականատեր</p>	<p>Այս ԱԵՏՏ-ները կստանան վերականգնման նպաստ ազդեցության ենթարկված հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/՝ հողօգտագործման անցած տարիների հաշվարկով. 1) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%; 2) մինչև 15 տարի՝</p>

			հողի արժեքի 14% ; 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%; 4) 25 և ավել տարի՝ հողի արժեքի 25%:
<b>2. Ոչ գյուղատնտեսական հողերի կորուստ</b>	ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են իրենց առևտրային նշանակության կամ բնակելի հողերը	Սեփականատեր լիարժեք գրանցումով	Փոխհատուցում՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/+15%, կամ փոխանակում ԱԵՏՏ համար ընդունելի մեկ այլ հողակտորով:
		Օրինականացման ենթակա սեփականատեր	Փոխհատուցումը կիրականացվի վերը նշված ձևով:
		Վարձակալ (համայնք, պետություն)	Այս ԱԵՏ-ները կփոխհատուցվեն որպես լիարժեք սեփականատերեր ազդեցության ենթակա հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/ կամ կտրվի նոր վարձակալություն: Եթե սա հնարավոր չէ, ապա նրանք կստանան ազդեցության ենթակա հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/ գումարած 15%՝ –ին համարժեք փոխհատուցում հետևյալ մասնաբաժիններով՝ 1) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%; 2) մինչև 15 տարի

Կորստի տեսակը	Կիրառությունը	ԱԵԱ-ների սահմանումը	Փոխհատուցման իրավունքները
			հողի արժեքի 14% ; 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%; 4) >25տարի՝ հողի արժեքի 25%:
<b>3. Բնակելի շինություններ</b>		Օրինական կարգավիճակ ստանալու ոչ ենթակա ԱԵԱ	Այս ԱԵԱ-ները կստանան վերականգնման նպաստ ազդեցության ենթարկված հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/՝ հողօգտագործման անցած տարիների հաշվարկով. 1) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%; 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14% ; 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%; 4) 25 և ավել տարի՝ հողի արժեքի 25%:
		Բոլոր ԱԵՏՏ-ները անկախ իրավական կարգավիճակից	Շինության կորստի դեպքում՝ փոխհատուցման փոխարինման արժեքը + 15% չափով առանց ամորտիզացիոն մասնահատումների, գործարքային ծախսերի և փրկված նյութերի: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի, ինչպես նաև շինության վերանորոգման համար:
<b>4. Ոչ բնակելի շինություններ/ գույք</b>		Իրավական գրանցման կարգավիճակ ունեցող ԱԵՏՏ	Շինության կորստի դեպքում՝ փոխհատուցման փոխարինման արժեքը + 15% չափով առանց ամորտիզացիոն մասնահատումների, գործարքային ծախսերի և փրկված նյութերի: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի, ինչպես նաև շինության վերանորոգման համար:
		Իրավական գրանցման կարգավիճակ չունեցող ԱԵՏՏ	Փոխհատուցումը կիրականացվի վերոհիշյալ սկզբունքով, շինության օրինականացումից/գրանցումից հետո:
	Վերաբնակեցված վարձակալ		Վերաբնակեցման և էական ազդեցություն կրելու նպաստ՝ սույն աղյուսակի ստորև բերված 9 և 10 կետերում:
<b>5. Ընդհանուր սեփականության միջոցների կորուստ</b>	Համայնքային/ հանրային գույք	Համայնք/Պետություն	Կորցրած շինության վերականգնում համայնքի հետ խորհրդակցության պայմաններում և վերջինիս գործառույթների վերականգնում:



<p><b>6. Մշակաբույսերի կորուստ</b></p>	<p>Ազդեցության ենթակա բերքի զանգված</p>	<p>Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական կարգավիճակից (ներառյալ՝ օրինականացման ենթակա սեփականատերերը և բնակիչները, որոնք չունեն կացության կարգավիճակ)</p>	<p>Բերքի փոխհատուցում հաշվարկված շուկայական գներով՝ ակնկալվող համախառն բերքի համար:</p>
<p><b>7. Ծառերի կորուստ</b></p>	<p>Ազդեցության ենթակա ծառեր</p>	<p>Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական կարգավիճակից</p>	<p>Շուկայական գներով հշվարկված՝ բերքի արժեքի դրամական փոխհատուցում՝ հիմնված ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության վրա:</p>

Կորստի տեսակը	Կիրառությունը	ԱԵԱ-ների սահմանումը	Փոխհատուցման իրավունքները
		(ներառյալ՝ օրինականացման ենթակա սեփականատերերը և բնակիչները, որոնք չունեն կացության կարգավիճակ)	
<b>8. Բիզնեսի կամ զբաղվածության կորուստ</b>	Բիզնեսի /զբաղվածություն և կորուստ	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական կարգավիճակից (ներառյալ՝ օրինականացման ենթակա սեփականատերերը և բնակիչները, որոնք չունեն կացության կարգավիճակ)	<p><b>Բիզնեսի սեփականատեր</b> . Հարկային հայտարարագրով բիզնեսի դեպքում ա) (մշտական ազդեցության դեպքում) փոխհատուցում տարեկան զուտ եկամտի չափով; բ) (Ժամանակավոր ազդեցության դեպքում) զուտ եկամտի փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության ընդհատման մինչև 1 տարի ժամանակահատվածի համար: Հայտարարագրի բացակայության դեպքում ա) (մշտական ազդեցության դեպքում) ԱԵՏՏ-ը կստանա վերականգնման նպաստ ամսական պաշտոնական նվազագույն աշխատավարձի 1 տարվա չափով + փոխհատուցում՝ պետական գրանցման վճարների և թույլտվությունների համար, եթե այդպիսիք կան: բ) (Ժամանակավոր ազդեցության դեպքում) վերականգնման նպաստ ամսական պաշտոնական նվազագույն աշխատավարձի չափով ձեռնարկատիրական գործունեության ընդհատվող ամիսների հաշվարկով՝ մինչև 1 տարի:</p> <p><b>Մշտական աշխատողներ</b> -Աշխատանքի մշտական կորստի դեպքում վեց ամսվա կորցրած ամսական միջին աշխատավարձի չափով գումարի միանվագ տրամադրում; բ) Աշխատանքի ժամանակավոր կորստի դեպքում մինչև վեց ամիս ամսական միջին աշխատավարձի չափով գումարի տրամադրում՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամիսների հաշվարկով:</p>
<b>9. Ժամադակություն և խիստ ազդեցությունների դեպքում</b>	Գյուղատնտեսական եկամտի 10 և ավել տոկոսի կորուստ ունեցող կամ վերաբնակեցման ենթակա	Խիստ ազդեցության ենթարկված բոլոր ԱԵՏՏ, ներառյալ կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչներ	<ol style="list-style-type: none"> <li>1) Ազդեցության ենթակա գյուղատնտեսական հողի մեկ լրացուցիչ տարվա բերքի չափով փոխհատուցում ԱԵԱ- ին գյուղատնտեսական եկամտի կորստի դիմաց կամ (վերաբնակեցվողների համար)</li> <li>2) 6 ամսվա վերականգնման նպաստ վերաբնակեցված ԱԵՏՏ-ներին նվազագույն աշխատավարձի 53 չափով:</li> </ol>

	ԱԵՏՏ	ը	
<b>10.Վերաբնակեցման նպաստ</b>	Տրանսպորտային և /տեղափոխության ծախսեր	Վերաբնակեցված բոլոր ԱԵՏՏ-ները, ներառյալ՝ վարձակալները	Տրանսպորտային և մեկ ամսվա կենսապահովման ծախսերը հոգալու համար բավարար գումարների տրամադրում:
<b>11. Օժանդակություն խոցելի ԱԵԱ-ներին</b>		Աղքատության սահմանագծից ցածր գրանցված և/կամ կանանց,	6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով դրամական օժանդակության տրամադրում և Ծրագրի իրականացման հետ կապված աշխատատեղերի համար ընտրություն կատարելիս այս անձանց պետք է

53 Նվազագույն աշխատավարձը – ՀՀ օրենքը “Նվազագույն ամսական աշխատավարձի” մասին, դեկտեմբերի 17, 2003, հոդված 1, վերանայված՝ 2010թ. դեկտեմբերին, ՀՕ-164՝ նվազագույն աշխատավարձը սահմանելով 32,500 ՀՀ դրամ:

Կորստի տեսակը	Կիրառությունը	ԱԵԱ-ների սահմանումը	Փոխհատուցման իրավունքները
		և/կամ տարեցանձանց կողմից դեկավարվող ԱԵՏՏ	առաջնահերթություն տալ:
12. Ժամանակավոր ազդեցություն		Բոլոր ԱԵՏՏ-ները	Պատշաճ վարձակալություն և վերականգնման աջակցություն կտրամադրվի ժամանակավոր ազդեցություն կրող գույքի/սեփականության համար:
13. ՀՕՏ չնախատեսված ազդեցություններ, եթե այդպիսիք չեն			Ծրագրի իրականացման ընթացքում ՏԿՆ –ը կանդրադառնա ՀՕՎ չնախատեսված ազդեցություններին և կհոգա դրանց հետ կապված փոխհատուցումը, ըստ վերոհիշյալ պայմանների:

### Փոխհատուցման դրույքաչափերը

#### Փոխհատուցում կորուստների համար

#### Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողերի վրա ազդեցությունը

- Իրավական կարգավիճակ ունեցող ԱԵԱ-ները կստանան դրամական փոխհատուցում շուկայական կամ կադաստրային արժեքով (որն ավելի բարձր է) գումարած 15% օժանդակություն:
- Վարձակալը կստանա դրամական փոխհատուցում, որը համարժեք է ազդեցության ենթակա հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեքին (որն ավելի բարձր է) գումարած 15% օժանդակություն՝ կախված վարձակալության մնացած տարիների թվից հետևյալ կերպ՝ ա) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%-ը; բ) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%-ը; գ) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%-ը; դ) 25 տարի՝ հողի արժեքի 25%-ը:
- Չձևակերպված օգտագործողները չեն փոխհատուցվի հողի կորստի դիմաց: Միայն կփոխհատուցվեն կարճաժամկետ ներդրումները, եթե այդպիսիք կան:
- Եթե ազդեցության է ենթարկվել ԱԵԱ-ի գյուղատնտեսական նշանակության հողի ավելի քան 10%-ը, ԱԵԱ-ն (սեփականատերերը, վարձակալները և չձևակերպված օգտագործողները) պետք է *խիստ ազդեցության* համար լրացուցիչ նպաստ ստանան, որը համարժեք է կորցրած հողից ստացված տարեկան համախառն եկամտի շուկայական արժեքին (2011թ. համար) կամ միանվագ փոխհատուցում, որը համարժեք է վեց ամսվա աշխատավարձին, եթե 2011թ. որևէ բերք չի եղել, սակայն եղել է 2010թ.:

#### Բնակելի և ոչ բնակելի շինություններ

- Բնակելի շինքերի և շինությունների համար փոխհատուցում պետք է տրամադրվի բոլոր ԱԵԱ- ներին փոխարինման արժեքով + 15% օժանդակություն՝ անկախ ԱԵԱ-ի գրանցման կարգավիճակից: Ոչ բնակելի շինությունների դեպքում, ԱԵԱ-ները, որոնք գրանցում չունեն, կփոխհատուցվեն միայն գույքի օրինականացումից հետո:
- Փոխհատուցումը տրամադրվելու է առանց ամորտիզացիոն մասնահանումների, գործարքի համար

ծախսերի և այլն:

- Մասնակիորեն ազդեցություն կրելու դեպքում և այն դեպքում, երբ սեփականատերը չի ցանկանում տեղափոխել շինությունը, ազդեցությունները կընդգրկեն միայն շինության ազդեցության ենթարկված մասը և այդ մասի լիարժեք վերականգնումը շահագործման համար պիտանիության նախկին վիճակին:

- Վերաբնակեցված սեփականատերերին կտրվի վերաբնակեցման և խիստ ազդեցություն կրելու միանվագ նպաստ:

### **Մշակաբույսեր**

- Մեկ տարվա բերքի համախառն արժեքի շուկայական ընթացիկ դրույքաչափերին (ներառյալ ներդրումները) համապատասխան լռելյայն դրամական փոխհատուցում: Բերքի կորստի լրացուցիչ տարիները կգնահատվեն գուտ արժեքով (առանց ներդրումների):
- Մշակաբույսերի դիմաց փոխհատուցում պետք է վճարվի վերոնշյալ սահմանումով ինչպես սեփականատերերին, այնպես էլ համայնքային և մասնավոր հողերի վարձակալներին և չձևակերպված օգտագործողներին:

### **Ծառեր**

- Շուկայական դրույքաչափերին համապատասխան դրամական փոխհատուցում՝ հիմնվելով ծառերի տեսակի, բերքատվության (բերքատու և փայտանյութ հանդիսացող ծառերի դեպքում) և վերարտադրության արժեքի վրա:
- Ծառերի դիմաց փոխհատուցումը պետք է տրվի սեփականատերերին և վարձակալներին կամ չձևակերպված օգտագործողներին (երբ նրանք ցուցադրաբար տնկել են ծառեր): Մասնավոր հողերը չձևակերպված օգտագործողները կփոխհատուցվեն մեկ տարվա բերքի արժեքի չափով բերքատվության տարիքի մրգատու ծառերի և խաղողի վազերի դիմաց:

### **Մշտական և ժամանակավոր ազդեցություններ բիզնեսների վրա**

- Մշտական ազդեցության դեպքում բիզնեսի սեփականատերերը (անհատ ձեռնարկատերեր), ովքեր ներկայացրել են հարկային հայտարարագիր, կփոխհատուցվեն 1 տարվա գնահատված եկամտի չափով, ինչպես նաև այն բոլոր ծախսերի համար, որոնք կատարվել են պետական գրանցում ստանալու և օտարման ենթակա հողակտորների վրա գործունեություն ծավալելու լիցենզիա ստանալու նպատակով:
- Ժամանակավոր ազդեցության դեպքում, փոխհատուցումը բիզնեսների սեփականատերերին (անհատ ձեռնարկատերեր, ովքեր ներկայացրել են հարկային հայտարարագիր) փոխհատուցվում է նույն ընթացակարգով, սակայն հաշվարկվում է բիզնեսի դադարեցման ամիսների քանակի հիման վրա: Կիրառելի ամիսների քանակը հաշվարկվում է ճանապարհի տվյալ հատված շինարարական աշխատանքների ժամանակացույցի հիման վրա և հաշվարկվել է վեց ամիս: Եթե իրական դադարն ավելի երկար է, ապա ԱԵԱ-ն կստանա լրացուցիչ փոխհատուցում առավելագույնը մինչև 12 ամիս:
- Մշտական ազդեցության դեպքում բիզնեսի սեփականատերերը (անհատ ձեռնարկատերեր), ովքեր չեն ներկայացրել հարկային հայտարարագիր, կփոխհատուցվեն 1 տարվա պաշտոնական նվազագույն աշխատավարձի չափով և այն բոլոր ծախսերի համար, որոնք կատարվել են պետական գրանցում ստանալու և օտարման ենթակա հողակտորների վրա գործունեություն ծավալելու լիցենզիա ստանալու նպատակով:
- Ժամանակավոր ազդեցության դեպքում, բիզնեսների սեփականատերերը (անհատ ձեռնարկատերեր, ովքեր չեն ներկայացրել հարկային հայտարարագիր) կփոխհատուցվեն հիմնվելով պաշտոնական նվազագույն աշխատավարձի վրա (32,500 ՀՀ դրամ) բիզնեսի դադարեցման ամիսների քանակի համաձայն: Կիրառելի ամիսների քանակը հաշվարկվում է ճանապարհի տվյալ հատված շինարարական աշխատանքների ժամանակացույցի հիման վրա և հաշվարկվել է վեց ամիս: Եթե իրական դադարն ավելի երկար է, ապա ԱԵԱ-ն կստանա լրացուցիչ փոխհատուցում առավելագույնը մինչև 12 ամիս:

### **Բիզնեսում ընդգրկված աշխատողներ**

- Կազմակերպության կամ ձեռնարկատիրական գործունեության մշտական կամ ժամանակավոր դադարեցման դեպքում աշխատողը կստանա միանվագ փոխհատուցում վեց ամսվա կորցրած աշխատավարձի դիմաց յուրաքանչյուր ամսվա համար միջին ամսական աշխատավարձի չափով:

### **Նպաստներ խիստ ազդեցություններին ենթարկված խմբերի**

#### **համար Վերաբնակեցման նպաստ**

- Ի լրումն ազդեցության ենթարկված գույքի համար ամբողջական փոխհատուցմանը՝ ԱԵԱ- ները կստանան հատուկ վերաբնակեցման նպաստ կանխիկով իրենց տրանսպորտային ծախսերի համար գումարած 1 ամսվա կենսապահովման ծախսերի համար կստանան վերաբնակեցման նպաստ նվազագույն աշխատավարձի չափով (32,500 ՀՀ դրամ) և, քանի որ վերաբնակեցման ենթակա անձինք ևս խիստ ազդեցության ենթարկվող ԱԵՏՏ-ներ են, նրանք կստանան կենսապահովման նպաստ՝ 6 ամսվա նվազագույն ամսական աշխատավարձի չափով (195,000 ՀՀ դրամ):

#### **Խիստ ազդեցություններին ենթարկված տնային տնտեսություններ**

- Այն ԱԵՏՏ-ները, որոնք կորցնում են գյուղատնտեսական հողի 10 և ավել տոկոսը, կստանան խիստ ազդեցության նպաստ 1 րազուցիչ բերքի փոխհատուցման չափով, որը հավասար է 1 տարվա բերքի արժեքին:
- ԱԵՏՏ-ները, որոնք որևէ բերք չեն ունեցել գույքագրման ժամանակ, սակայն ունեցել են բերք նախորդ տարում, կփոխհատուցվեն 6 ամսվա նվազագույն ամսական աշխատավարձի չափով (195,000 ՀՀ դրամ):

### **Նպաստներ խոցելի ԱԵՏՏ-ների համար**

- ԱԵՏՏ-ներին, որոնք գրանցված են Ընտանեկան նպաստի համակարգում, ինչպես նաև կանանց և տարեցների կողմից ղեկավարվող տնային տնտեսություններին կտրամադրվի 6 ամսվա նպաստ նվազագույն ամսական աշխատավարձի չափով (195,000 ՀՀ դրամ):

### **ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԴԺԳՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ**

Բողոքների լուծման մեխանիզմը պետք է հասանելի դառնա, որպեսզի ԱԵԱ-ն հնարավորություն ունենա բողոքարկելու ցանկացած անախորժ որոշում, գործելակերպ կամ գործունեություն, որն առաջանում է հողի կամ այլ ակտիվների փոխհատուցման արդյունքում: Մի քանի կողմեր կներառվեն դժգոհությունների լուծման գործընթացում, ինչպիսիք են՝ ՏԿՆ-ն, ԾԻԿ-ը, ԾԿԽ-ն: Բողոքները համայնքային մակարդակում լուծելու փորձեր կկատարվեն Բողոքների լուծման խմբի (ԲԼԽ) օգնությամբ՝ ներգրավելով կարևոր շահագրգիռ կողմերին: ԲԼԽ-ն թափանցիկություն և արդարություն կսահմանի ծրագրի ազդեցությանը ենթարկված անձանց բողոքների լուծման գործում:

ԲԼԽ-ն ունենալու է հետևյալ կազմը՝

- ՍՊՎԲԲ -ԾԻԿ ներկայացուցիչ (Նիստեր հրավիրող անձ)
- Համապատասխան ՏԻՄ անդամ
- Ազդեցության ենթակա գյուղի ԱԵԱ-ներից մեկ կին ներկայացուցիչ
- Ազդեցության ենթակա գյուղի ԱԵԱ-ներից մեկ տղամարդ ներկայացուցիչ

Հանդիպումների ժամանակացույցը պատրաստվելու և հայտարարվելու է ԲԼԽ-ի ձևավորման պահից:

- Տեղական իշխանությունները ԱԵԱ-ներին ու ԱԵՏՏ-ներին կտեղեկացնեն ժամի և վայրի մասին, ինչպես նաև հայտարարություններ կփակցնեն հասարակական վայրերում:
- ԲԼԽ-ի հանդիպումները տեղի կունենան համապատասխան ՏԻՄ գրասենյակում, ծրագրի

տարածքում կամ այլ վայրում (վայրերում)՝ համաձայնեցնելով խմբի բոլոր անդամների հետ:

- Շաբաթական առնվազն մեկ հանդիպում է կազմակերպվելու յուրաքանչյուր համայնքում:
- Որոշ լրացուցիչ հանդիպումների անհրաժեշտություն կարող է առաջանալ բազմաթիվ խնդիրներ ունեցող համայնքներում:
- ԲԼԽ անդամները տեղանքային այցելություններ կնախաձեռեն, որպեսզի ճշտեն և ուսումնասիրեն վիճահարույց խնդիրները, այդ թվում՝ իրավական հիմքերը/բաժնետոմսերը, վճարումների կամ համապատասխան այլ գործարքների հետաձգման պատճառները:
- Մտացված և քննարկված բոլոր բողոքները փաստաթղթերով կձևակերպվեն, անկախ նրանից դրանք լուծվել են թե ոչ:


ԲԼԽ-ների կազմավորվելուց հետո դժգոհությունները կարող են ուղղվել այդ խմբերին: Դժգոհությունների լուծման քայլերը հետևյալն են՝

- Տուժած ԱԵԱ-ն կամ ՏՏ-ն կարող է իր բողոքը ներկայացնել ԲԼԽ-ին:
- Բողոքը պետք է ներկայացվի գրավոր ձևով ԱԵԱ-ի կամ նշանակված ներկայացուցչի կողմից:
- ԲԼԽ նիստերը հրավիրող անձը պատասխանատու կլինի ԲԼԽ-ի քննարկած բոլոր բողոքների փաստաթղթային ձևակերպման և ֆայլերի պահպանման համար:
- ԲԼԽ-ի կայացրած վճիռը կուղարկվի համապատասխան ԱԵԱ-ին գրավոր ձևով:
- Եթե հարցը մնում է չլուծված ԲԼԽ-ի հետ քննարկումից հետո, ԱԵԱ-ն բողոքն այնուհետև կարող է ներկայացնել ՍՊՎԲԲ-ԾԻԿ: Բողոքը պետք է վերահասցեագրվի ՏԿՆ-ին լուծման համար: Կարգավորումը տեղի կունենա ԲԼԽ-ի հետ վերջնական քննարկման օրվանից 15 - օրյա ժամկետում:
- Ինչպես նաև տեղական ԲԼԽ-ները և՛ լուծված, և՛ չլուծված գործերի արձանագրությունները կփոխանցեն ՍՊՎԲԲ-ԾԻԿ-ին՝ ՍՊՎԲԲ-ԻԹ-ի (ԾԻԿ-ի) միջոցով, գործի վերաբերյալ գրառումների պահպանման համար<sup>54</sup>:
- Եթե դժգոհությունները չեն կարգավորվում սույն գործընթացով, ՏԿՆ-ից սկզբնական բողոքի վերաբերյալ պատասխանը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում ԱԵԱ-ն կարող է բողոքը ներկայացնել և պետք է տրամադրի համապատասխան փաստաթղթեր, որոնք կհիմնավորեն իր պահանջը ՏԿՆ-ից:
- ՏԿՆ-ն կխորհրդակցի ԾԿԽ-ի հետ իր որոշման առնչությամբ: ԾԿԽ-ն պատասխան կտրամադրի բողոքի գրանցման պահից 15 օրվա ընթացքում: ԾԿԽ -ի որոշումը պետք է համապատասխանի ՀՕՏԾ-ի դրույթներին:

Եթե դժգոհության լուծման համակարգը չի բավարարում ԱԵԱ-ին, նա կարող է հետամուտ լինել իր բողոքին՝ հանձնելով գործը համապատասխան ընդհանուր իրավասության դատարան: Այնուհանդերձ, դժգոհությունների վերոնշյալ մեխանիզմը չի սահմանափակում քաղաքացու իրավունքը դժգոհության քննարկման գործընթացի ցանկացած պահին գործը ընդհանուր իրավասության դատարան ներկայացնելու վերաբերյալ:



**Գծապատկեր Շ1: Բողոքների լուծման մեխանիզմը**



- **Հնարավոր է արդյոք, որ շինարարությունը սկսվի մինչ փոխհատուցումների տրամադրումը:**  
Կապալառուն չի սկսելու շինարարություն Օրագրի ՀՕՏ ազդեցությունների շրջանակում գտնվող որևէ հատվածում մինչև ա) ՀՕՏՕ ամբողջական իրականացումը; բ) համաձայնեցված փոխհատուցման տրամադրումը և վերականգնման օժանդակության ապահովումը և գ) ազդեցության ենթակա տարածքների գրավներից/պարտքերից ազատումը:
- **Եթե ես չունեմ բանկային հաշիվ, պարտավոր եմ արդյոք փոխհատուցումը ստանալու համար վճարել նոր բանկային հաշվի բացման համար:**

Դուք կարող եք ստանալ փոխհատուցում անմիջապես ձեր անձնական բանկային հաշվեհամարի վրա: Այդ հաշվեհամարը պետք է նշված լինի հողի օտարման պայմանագրում: Եթե դուք չունեք բանկային հաշվեհամար, ապա այն կբացվի անվճար ԾԻԿ-ի կողմից:

- **Եթե սեփականատերը գտնվում է Հայաստանից դուրս, ինչպե՞ս նա կարող է ստանալ փոխհատուցումը:**

Եթե սեփականատերը գտնվում է Հայաստանից դուրս, ապա նա կարող է ուղարկել լիազորագիր իր հարազատին կամ մոտ ընկերոջը հողի օտարման պայմանագիրը ստորագրելու և փոխհատուցումը ստանալու համար: Կարող էք խորհրդակցել նոտարների կամ ԾԻԿ-ի իրավաբանների հետ լիազորագրի ձևի վերաբերյալ: Որևէ մեկին լիազորելուն պես, խնդրում ենք տեղեկացնել ԾԻԿ-ին և համապատասխան աշխատակիցներին տրամադրել այդ անձնավորության կոնտակտային տվյալները: Եթե լիազորված անձ նշանակված չէ, ապա գույքը կօտարվի դատական կարգով և փոխհատուցումը կփոխանցվի դատարանի դեպոզիտային հաշվեհամարին: Դատարանը իր հերթին կարող է վճարել փոխհատուցման գումարը այն անձնավորությանը, որը կներկայացնի փոխհատուցումը ստանալու համար համապատասխան օրինական լիազորագիր:

➤ ***Եթե սեփականատերը մահացած է ինչպե՞ս է տրամադրվում փոխհատուցումը:***

Եթե սեփականատերն ունի ժառանգներ, ապա փոխհատուցումը կվճարվի նրանց համապատասխան ժառանգության փաստաթղթերը ձևակերպելուց հետո: Եթե ժառանգներ չկան, ապա փոխհատուցումը կփոխանցվի դատարանի դեպոզիտային հաշվին: Խնդրում ենք դիմել նոտարներին կամ ԾԻԿ-ի իրավաբաններին փաստաթղթերի ձևակերպման գործընթացի վերաբերյալ:

➤ ***Ինչպե՞ս է վճարվելու փոխհատուցումը:***

Փոխհատուցման վճարումը ՀՕՏԾ-ի իրականացման ընթացքում կարևորագույն փուլերից մեկն է: Նախատեսված քայլերն են՝

- ա. Տեղափոխման և վերաբնակեցման բյուջեի հատկացումը պետական գանձապետարանին ՖՆ-ի կողմից:
- բ. ԱԵԱ-ների համար լավագույն պայմաններ ապահովող առևտրային բանկերի ընտրությունը (աշխարհագրական դիրքը և ցածր գործարքային վճարները/կամ այդպիսի վճարների բացակայությունը): ԱԵԱ-ները կարող են նաև գործել իրենց առկա բանկային հաշիվների միջոցով:
- գ. Հողի օտարման պայմանագրի ստորագրում
- դ. Փոխհատուցման գումարի փոխանցումը Ֆինանսների նախարարությունից:
- ե. Փոխհատուցման և նպաստների փոխանցումը ԱԵԱ-ների բանկային հաշիվներին:
- զ. Սեփականության տարածքի ազատումը փոխհատուցման վճարման պահից 14 օրվա ընթացքում:
- է. Հողի/կառույցի սեփականատեր դառնալը ՏԿՆ-ի կողմից:

➤ ***Ի՞նչ պետք է ես ունենամ հողի օտարման պայմանագիրը ստորագրելիս:***

Բոլոր անձինք, որոնք ունեն անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք պետք է ներկայանան նոտարական գրասենյակ:

Եթե սեփականատերը չի կարող ներկայանալ, ապա պետք է ներկայացվի լիազորագիր մեկ այլ սեփականատիրոջ կողմից:

Պետք է ներկայացվեն ստորև նշված փաստաթղթերի բնօրինակները.

1. Անձնագիրը
2. Սեփականության վկայականը
3. Եթե բացի սեփականատիրոջից կան գույքի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող այլ անձինք, ապա պետք է ներկայացվի սեփականության իրավունքի վկայականը (օրինակ՝ վարձակալության վկայականը, գրավի վկայականը):

Սեփականատիրոջ ամուսինը համարվում է համասեփականատեր, նույնիսկ եթե նրա անունը նշված չէ սեփականության վկայականում:

➤ ***Ի՞նչ կարող է լինել, եթե սեփականատերը հրաժարվում է ստորագրել պայմանագիրը:***

Տվյալ դեպքում կկիրառվի բռնագրավման գործընթաց: Ծրագրի համար հարկադիր օտարումներ կկիրառվեն միայն բացառիկ դեպքերում, երբ ԱԵԱ-ի և ՏԿՆ-ի միջև բանակցությունները ձախողվեն: ՏԿՆ-ն չի զբաղեցնի անհրաժեշտ հողակտորները մինչև.

- օրենքով սահմանված պատշաճ դատական գործընթացի նախաձեռնումը;
- դատարանի որոշման ընդունումը և այդ մասին ԱԵՏՏ-ներին/ԱԵԱ-ներին պատշաճ ձևով տեղեկացումը;
- փոխհատուցման / վերականգնման գումարների մուտքագրումը Էսքրո հաշվին:

Համաձայն «Գերակա հանրային շահ ճանաչելու մասին» ՀՀ օրենքի՝ առգրավման վարույթների նախաձեռնման ընթացակարգերը հետևյալն են՝

- Օտարողը (ՏԿՆ-ն) պետք է փոխանցի սեփականության օտարման համար նախատեսված նախնական պայմանագիրը (ներառյալ վերագնահատումը, եթե կա այդպիսի վերագնահատում) գույքի սեփականատիրոջը և բոլոր մյուս անձանց, ովքեր ձեռք բերվող գույքին առնչվող որևէ իրավունքներ կամ իրավասություններ ունեն:
- Եթե հողի օտարման պայմանագիրը չի ստորագրվում նախնական պայմանագրի փոխանցման օրվանից **3 ամսվա** ընթացքում, ՏԿՆ-ն կարող է սկսել դատարան դիմելու գործընթացը, Օտարողի՝ սեփականության փոխանցման իրավունքի հաստատման մասին որոշում ձեռք բերելու համար:
- Ընթացակարգը սկսելու համար ՏԿՆ-ն պետք է դատարանին ի պահ տա փոխհատուցման հաշվարկված արժեքը, որ պետք է վճարվի ԱԵԱ-ին (այսուհետ՝ «մուտքագրում») և պետք է ծանուցի սեփականատիրոջը և սեփականության նկատմամբ իրավունքներ ունեցող անձանց, առ այն որ մուտքագրված գումարը նման կերպով ի պահ է տրվել: Եթե ԱԵԱ-ն օգտագործում է այդ միջոցները ետ վերցնելու իր իրավունքը, դատարանի կողմից դա համարվում է համարժեք Օտարման պայմանագրի ընդունմանը և ստորագրմանը: ՏԿՆ-ն ունի դատարաններում մուտքագրումների համար պահանջվող մանրամասն տվյալները: Փոխանցումների կատարման համար մեկ բանկային օր կպահանջվի:
- Եթե Օտարման պայմանագիրը չի ստորագրվում փոխհատուցման մուտքագրման պահից 7 օրվա ընթացքում, ՏԿՆ-ն պետք է սեփականության առգրավման հայց ներկայացնի դատարան, մուտքագրման ամսաթվից 1 ամսվա ընթացքում: Հայցը քննելու ընթացքում միայն փոխհատուցման առաջարկվող գումարը կարող է վիճարկվել դատարանում: Օտարողի՝ սեփականության առգրավման իրավունքը չի կարող վիճարկվել:
- ՏԿՆ-ն իրավունք ունի սեփականատիրության իրավունքներ ձեռք բերել առգրավված սեփականության նկատմամբ՝ դատարանի որոշման ուժի մեջ մտնելու պահից:

➤ ***Որտեղի՞ց ես կարող եմ ձեռք բերել Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիրը:***

Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի պատճենը կարող էք վերցնել “Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք” ներդրումային ծրագրի Ծրագրի իրականացման կազմակերպությունից և ձեր տեղական ինքնակառավարման գրասենյակներից կամ մարզային վարչարարական գրասենյակներից: Փաստաթուղթը տեղակայված է նաև ՏԿՆ և ԱԶԲ ինտերնետային կայքերում: Համապատասխան կոնտակտային տվյալները տրված են սույն բրոշյուրի վերջում:

**ԾԱԽՍԵՐԻ ԱՍՓՈՓԱԳԻՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂՔՑՈՒՐԸ**

Տրանշ 2-ի Ծրագրի ՀՕՏՕ իրականացման համար հաշվարկված արժեքը կազմում է 2,304,484,560 ՀՀ դրամ, որը համարժեք է 5,620,694 ԱՄՆ դոլարին և մանրամասն ներկայացված է ստորև բերված **Աղյուսակ 3**-ում: ՏԿՆ-ն կապահովի հողի օտարման և տարաբնակեցման դիմաց փոխհատուցման գումարների վճարումը: Այն կհաստատվի Ֆինանսների նախարարության կողմից և կհատկացվի ժամանակին ՀՕՏՕ իրականացման նպատակով:

Նախատեսվել են նաև այլ վարչական ծախսեր, որոնք կարող են առաջանալ ՀՕՏՕ իրականացման ընթացքում: Սա հաշվի է առնվել միանվագ վճարման հիմունքներով:

**Աղյուսակ 3. Ամփոփ բյուջեի ծախսերը**

<b>Միավորը</b>	<b>Ընդամենը</b>
<b>I. ՓՈՒՀԱՏՈՒՑՄԱՆ ԲՅՈՒՋԵՆ (ՆԵՐԱՌՅԱԼ ՆՊԱՍՏՆԵՐԸ)</b>	
Հող (ներառում է 15% փոխարինման արժեք)	630,048,872
Շենքեր և շինություններ (ներառում է 15% փոխարինման արժեք)	458,665,955
Մշակաբույսեր	14,351,766
Մրգատու ծառեր	524,109,325
Փայտանյութ հանդիսացող ծառեր	4,576,498
Խաղողի այգիներ	27,820,957
Վարձակալության փոխհատուցում	1,873,191
Բիզնեսներ	39,578,404
Աշխատատեղեր	5,271,000
Նպաստներ	95,881,993
Նոտարական ծառայություններ պետական գրանցման համար	26,778,039
<i>Միջանկյալ ընդհանուրը</i>	<i>1,828,956,000</i>
<b>II. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ</b>	
Ուղղակի վարչական ծախսեր [Ընդհանուրի 5% -ը]	91,447,800
<b>Ընդամենը</b>	<b>1,920,403,800</b>
Չնախատեսված 20%	384,080,760
<b>Ընդհանուր ՀՕՏ բյուջեն (ՀՀ դրամ)</b>	<b>2,304,484,560</b>
<b>Ընդհանուր ՀՕՏ բյուջեն (1 ԱՄՆ դոլար= 410ՀՀ դրամ)</b>	<b>5,620,694</b>

## Կոնտակտային տվյալներ

*Եթե Դուք ունեք հարցեր կամ Ձեզ հարկավոր է խորհրդատվություն, խնդրում ենք դիմել ՀՀՃՄՆԾ ԾԻԿ և ԱԶԲ ներկայացուցիչներին*

**“Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք”  
Ներդրումային ծրագիր, Ծրագրի իրականացման կազմակերպչական ընկերություն, Վերաբնակեցման և բնապահպանության բաժին**

Նալբանդյան 28  
0010, Երևան, Հայաստան

+ 374 10 590103  
[www.mtc.am](http://www.mtc.am)



## Ասիական Զարգացման Բանկ

Հայաստանում ռեզիդենտ առաքելություն

Վազգեն Սարգսյան 10; Piazza Grande,  
3 հարկ; գրասենյակներ 79, 80, 81

0010 Երևան,  
Հայաստան

+374 10 546373  
[www.adb.org](http://www.adb.org)



Հավելված Է1. Իրականացնող թիմի պարտականությունների շրջանակը

**Իրականացնող թիմի պարտավորությունների շրջանակը**

**A. Ներածություն**

1. ԱԶԲ-ն համաձայնել է տրամադրել ՀՀ կառավարությանը 500 մլն. ԱՄՆ դոլար բազմափուլային ֆինանսական գործիք (ԲՖԳ) Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի (Ծրագիր) ֆինանսավորման համար: Տրանշ 2-ի սկզբունքային նպատակն է գոյություն ունեցող Մ1՝ Աշտարակ-Թալին մայրուղու երկայնքով ապահովել 4 գոտի և 2 երթևեկելի ուղիով միջազգային ստանդարտներին համապատասխան մոտ 42 կմ ճանապարհ:

2. Տրանշ 2 Ծրագիրը կսկսվի կմ 29+600-ից՝ Աշտարակում և կավարտվի կմ 71+500- ում: Ծրագիրը կվերակառուցի և կբարելավի ճանապարհը՝ այն 2 գոտիով ճանապարհից վերածելով 4 գոտիով ճանապարհի 41.900կմ ընդհանուր երկարությամբ: Ազարակում կկառուցվեն երկու շրջանցիկ ճանապարհներ՝ կմ 29+934-ից մինչև կմ 32+600-ը և Ուջանում՝ կմ 36+600-ից կմ 40+300-ը: Ծրագիրը կունենա նաև նոր ծրագիծ (8.95կմ) Կաթնաղբյուրում՝ կմ 59+950-ից մինչև 68+900-ը, որը կստեղծվի գոյություն ունեցող մայրուղու ձախ կողմում՝ միանալով Թալինի գոյություն ունեցող ծրագծին:

3. Տրանշ 2 Ծրագրի համար ՀՕՏՕ-ն մշակվել է նախագծային խորհրդատուի կողմից պատրաստված վերոնշյալ նախագծերի հիման վրա: Համաձայն միջազգային առաջադեմ փորձի՝ բավականաչափ նշանակություն է տրվել նվազեցնելու բացասական ազդեցությունը համայնքներում հողի օտարման, հնագիտական վայրերի և այլ կարևոր կառույցների վրա: ՀՕՏՕ-ն ապահովում է Տրանշ 2 Ծրագրի ազդեցությունների և արժեքների գնահատումը և մանրամասն գործողությունների պլանը Ծրագրի արդյունքում ազդեցության ենթակա անձանց (ԱԵԱ) և տնային տնտեսությունների (SS) ՀՕՏՕ վերականգնողական միջոցառումների և փոխհատուցումների փոխանցման համար [Տես ՀՕՏՕ]

4. ՏԿՆ ԾԻԿ-ը կընդլայնի ՍՊՎԲԲ-ն՝ ապահովելով աշխատակազմ և մասնագետներ ՀՕՏՕ և հաջորդող աջակցության ծրագրերի իրականացման համար: Իրականացնող թիմը (ԻԹ) ԾԻԿ-ի ՍՊՎԲԲ կազմում պատասխանատու կլինի պլանների ընդհանուր իրականացման համար:

**B. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

5. Վերաբնակեցման պլանի իրականացման համար ԻԹ նպատակները հետևյալն են.

- (i) Վերաբնակեցման պլանի իրականացման նպատակով դաշտային աշխատանքների համար ՍՊՎԲԲ-ԾԻԿ-ին ապահովել հիմնական հմտություններով և կարողություններով;
- (ii) Որոշել շահառուներին և ուսուցանել նրանց իրենց իրավունքներն ու

- պարտականությունները Տարաբնակեցման պլանի շրջանակներում;
- (iii) Երաշխավորել, որ ԱԵԱ-ները ձեռք բերեն իրենց լիարժեք իրավունքները Տարաբնակեցման պլանի շրջանակներում: Որտեղ առկա է ընտրության հնարավորություն, ԻԹ-ն պետք է ԱԵԱ-ների ապահովի խորհրդով յուրաքանչյուր տարբերակի հարաբերական առավելությունների վերաբերյալ և ուղղորդել ԱԵԱ-ներին համապատասխան զբաղվածությանը, ինքնազբաղվածությանը, ուսուցողական և այլ ծրագրերին;
  - (iv) Աջակցել ԱԵԱ-ներին բողոքները լուծելիս ՀՕՏՕ-ով սահմանված համակարգի և մեխանիզմի միջոցով:

## C. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

6. ԻԹ-ն կգործի որպես կապող օղակ ՍՊՎԲԲ-ԾԻԿ և ԱԵԱ-ների միջև և պատասխանատու կլինի վերաբնակեցման և վերականգնման գործընթացներում ԱԵԱ-ներին աջակցություն ցուցաբերելու համար և կերաշխավորի ՀՕՏՕ բոլոր դրույթների պատշաճ և արդյունավետ իրականացումը: ԻԹ-ն պետք է

- i. հանդիսանա կապող օղակ ՍՊՎԲԲ-ԾԻԿ և ԱԵԱ-ների միջև կանոնավորապես կազմակերպվող հանդիպումների միջոցով: Բոլոր հանդիպումները և կայացված որոշումները պետք է փաստաթղթավորվեն:
- ii. Աջակցի ՍՊՎԲԲ-ԾԻԿ-ին նախաձեռնելու հանրային իրազեկման արշավներ ազդեցության ենթակա համայնքներին Տարաբնակեցման քաղաքականությանը և իրավունքների փաթեթներին տեղեկացնելու նպատակով:
- iii. Աջակցի ԱԵԱ-ներին ստանալ փոխհատուցում Ծրագրի նպատակով օտարվող իրենց հողի և գույքի դիմաց:
- iv. ՀՕՏՕ շրջանակներում երաշխավորի ԱԵԱ-ների օգուտները:
- v. Սահմանի յուրաքանչյուր ԱԵԱ-ի իրավունքները և համեմատի դրանք Ծրագրի առաջարկների հետ: Որևէ անհամապատասխանության դեպքում ԻԹ-ն պարտավոր է օգնել ԱԵԱ-ին խնդիրը Բողոքների լուծման մեխանիզմի միջոցով կարգավորելու համար:
- vi. Աջակցի ՍՊՎԲԲ-ԾԻԿ-ին սահուն կազմակերպելու ԱԵԱ-ների և նրանց բիզնեսների տեղափոխությունը: Սա կներառի խորհրդակցություններ ԱԵԱ-ների հետ՝ երաշխավորելով, որ նախաձեռնված միջոցառումներն ընդունելի են նրանց համար:
- vii. Ապահովի վերաբնակեցման փաթեթով նախատեսված տարբեր դրամաշնորհների պատշաճ օգտագործումն ԱԵԱ-ների կողմից: ԻԹ-ն (ՍՊՎԲԲ-ԾԻԿ) պարտավոր է ԱԵԱ- ներին խորհուրդ տալ, թե ինչպես լավագույնս օգտագործել ՀՕՏՕ-ով նախատեսված փոխհատուցումը:
- viii. Աջակցի ԱԵԱ-ներին ստանալ նպաստներ Կառավարության տարբեր զարգացման ծրագրերից: Կան մի շարք կառավարական և ոչ կառավարական դասընթացներ կենսապահովման ծրագրերի վերաբերյալ, որոնք կարելի է կիրառել ԱԵԱ-ների համար:
- ix. ԻԹ-ը կապալառուի հետ կապահովի ԱԵԱ-ների՝ շինարարական աշխատանքներում ներգրավվածության առաջնահերթությունը՝ հիմնված որակավորում պահանջող և չպահանջող աշխատանքների վրա:

- x. Համակարգի ուսուցողական ծրագրերը կայուն կենսապահովման վերաբերյալ և աջակցի զարգացնելու պահանջվող հմտությունները ապրուստի միջոցների վերականգնման և Ծրագրի նպատակներով հողի օտարումից տուժած խիստ ազդեցության ենթակա, աղքատ և խոցելի տնային տնտեսությունների սոցիալ- տնտեսական վիճակի վերականգնման և բարելավման համար: Դասընթացները կներառեն հետևյալ թեմաները.
  - Խիստ ազդեցության ենթակա, աղքատ և խոցելի ԱԵԱ-ների գոյություն ունեցող եկամտի աղբյուրների և կենսապահովման միջոցների վրա Ծրագրի ազդեցության վերլուծությունը:
  - ԱԵԱ-ների տնտեսական ակտիվության գնահատումն ըստ սեռի, տարիքի, խմբի, կրթության, հմտությունների, եկամտի, տնային տնտեսության չափի, նախապատվությունների, նրանց կարիքների գնահատման տարբերակների:
  - Որոշել ԱԵԱ-ների հիմնական սոցիալ-տնտեսական վիճակն ու խնդիրները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով նրանց հիմնական պրոֆիլին, մշակույթին և ներկա կենսամակարդակի նկարագրությանը:
  - Սահմանել ծայրահեղ աղքատ և ամենախոցելի ԱԵԱ-ների առանձնահատուկ կարիքները:
  - Որոշել Կառավարության, ՀԿ-ների և այլ կազմակերպությունների գոյություն ունեցող կամ պլանավորված ծրագրերը Ծրագրի տարածքում՝ համապատասխան ռազմավարություն մշակելու համար դրանք ծրագրի հետ կապակցելու կամ նման ծրագիրն ընդլայնելու նպատակով:
  - Մշակել գենդերային ռազմավարություն՝ ընդգրկելու կանանց մասնակցության ընդլայնման հնարավորություններ և կանանց համար ապահովելով լայն հնարավորություններ սովորելու նոր հմտություններ և մասնակցելու որոշումների կայացման գործընթացներին, ինչպես նաև օգտվել նոր զբաղվածություն ձեռք բերելու և եկամուտ ստեղծելու հնարավորություններից:
- xi. Աջակցել ԱԵԱ-ներին իրենց բողոքները ՀՕՏՕ-ով սահմանված բողոքների լուծման մեխանիզմի միջոցով լուծելիս և աջակցել այն ԱԵԱ-ներին, ովքեր իրենց բողոքների համար հետամուտ են լինում հարմար լուծումների:
- xii. Աջակցել մշակութային ժառանգությունը, համայնքային սեփականությունն ու գույքը տեղափոխելու համար վայրերը որոշելիս: Սա կիրականացվի ազդեցության ենթակա համայնքի և ՄՊՎԲԲ-ԾԻԿ-ի հետ խորհրդակցելով:
- xiii. ԻԹ-ն կհետևի նաև շինարարության ընթացքում պատճառած անհանգստություններին/խաթարումներին և չնախատեսված ազդեցություններին և անմիջապես ձեռնարկի համապատասխան միջոցառումներ դրանք կարգավորելու ինչպես այս փուլում, այնպես էլ հողի օտարման և վերականգնման փուլում:

**D. ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

7. Վերոնշյալ առաջադրանքների իրականացման համար կստեղծվի ԻԹ (ՄՊՎԲԲ-ԾԻԿ): Ելակետային տեղեկատվությունը պարբերաբար թարմացնելու համար բացի ԱԵԱ-ների հետ անհատական հիմունքներով հաղորդակցվելուց, ԻԹ (ՄՊՎԲԲ-ԾԻԿ)-ի կողմից կանոնավոր կերպով կկազմակերպվեն խմբային հանդիպումներ: Այսպիսի հանդիպումների




հաճախականությունը պայմանավորված կլինի ԱԵԱ-ների պահանջով, սակայն պետք է տեղի ունենա շաբաթական/երկու շաբաթը մեկ անգամ՝ հնարավորություն ընձեռելով ԱԵԱ-ներին մշտապես տեղեկացված լինել Ծրագրի զարգացման ընթացքին: Նման մասնակցությունը կհեշտացնի բոլոր ներգրավվածների համար ընդունելի լուծումներ գտնելը: Գրավոր կամ լուսանկարային փաստաթղթերը կպահվեն բոլոր գործողությունների համար:

- i. Թարմացնել ԱԵԱ-ների վերաբերյալ տվյալները;
- ii. ԱԵԱ-ների վերաբերյալ տվյալները հանձնել ՍՊՎԲԲ-ԾԻԿ-ին ազդեցության ցուցանիշների մոնիթորինգի համար;
- iii. Յուրաքանչյուր ԱԵԱ-ի համար մշակել միկրո մակարդակով ծրագրեր և հանձնել ՍՊՎԲԲ-ԾԻԿ-ին ծառայությունների մեկնարկից հետո առաջին ամսվա ընթացքում: Իրականացման ընթացքում փոփոխությունների դեպքում ԻԹ-ն կթարմացնի համապատասխան պլանները և կվերահանձնի դրանք ՍՊՎԲԲ-ԾԻԿ-ին;
- iv. Հանձնարարությունն ավարտելիս ԻԹ-ն (ՍՊՎԲԲ-ԾԻԿ) պետք է հանձնի վերջնական հաշվետվություն՝ ամփոփելով ՀՕՏՕ իրականացման ընթացքում ձեռնարկված գործողությունները, աշխատանքի իրականացման համար օգտագործված մեթոդաբանությունն ու աշխատուժը, ինչպես նաև յուրաքանչյուր ԱԵԱ-ին ցուցաբերված աջակցության ամփոփ նկարագրությունը:

#### **E. Հիմնական աշխատակազմը**

8. ՍՊՎԲԲ ղեկավարը նաև կղեկավարի ԻԹ-ն: Երկու Իրավաբան և երկու Սոցիոլոգ կներգրավվեն գործողությունների իրականացման համար: Հիմնական մասնագետները պետք է ունենան մասնագիտական փորձառություն կենսապահովման և եկամուտ ստեղծող գործողությունների բնագավառում և ուսուցման գործընթացում, սոցիալ-տնտեսական հետազոտությունների, վերաբնակեցման և վերականգնման, շահառուների և համայնքային մասնակցության, համայնքային զարգացման և տնտեսական վերականգնման գործողությունների ուսուցման և գենդերային զարգացման բնագավառներում: Մասնագետները կաշխատեն դաշտային հիմունքներով թիմի ղեկավարի ղեկավարության ներքո: Կադրային պահանջները կդիտարկվեն դաշտային աշխատանքի պահանջների հիման վրա:



**F. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

9. ԻԹ-ն (ՄՊՎԲԲ-ԾԻԿ) կհանձնի սկզբնական հաշվետվություն գործողությունների մանրամասն պլանով, աշխատուժի բաշխումը, ժամանակացույցը և մանրամասն մեթոդաբանությունը առաջադրանքի մեկնարկից հետո 15 օրվա ընթացքում: Այն կհանձնի շաբաթական առաջընթացի հաշվետվություններ իրականացված գործողությունների և հաջորդող շաբաթվա համար առաջարկված գործողությունների վերաբերյալ: Եռամսյակային առաջընթացի հաշվետվությունները կընդգրկեն տվյալներ ցուցանիշների վերաբերյալ՝ համաձայն ՄՊՎԲԲ-ԾԻԿ-ի ԱԶԲ պահանջների:

10. Ավարտական հաշվետվություն. այն կընդգրկի ծրագրի համառոտ պատմությունը և իրականացման կարգավիճակը, դեպքերի ուսումնասիրությունը, եզրակացությունները և քաղած դասերը:

**G. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ**

11. Հաշվարկվել է, որ ԻԹ ծառայությունների համար կպահանջվի 12 ամիս ՀՕՏԾ իրականացման համար: Այնուամենայնիվ, սա կարող է վերանայվել գործողությունների ճշգրիտ բնույթի հիման վրա՝ ավելի շատ ներդրում կատարելով առաջին չորս ամիսների ընթացքում և ավելի սակավ՝ հաջորդող ամիսներին: Մասնագետները կներգրավվեն աշխատանքի պայմանագրային հիմունքներով:

Հավելված Թ1. ԱԵԱ-ի հետ պայմանագրի և համաձայնագրի օրինակ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՍԱՐԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

կնքման վայրը

կնքման ամսաթիվը

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև կնքված վարկային համաձայնագրի \_\_\_\_\_ և ՀՀ կառավարության կողմից \_\_\_\_\_ -ին ընդունված թիվ \_\_\_\_\_, \_\_\_\_\_ -ին ընդունված թիվ \_\_\_\_\_ և \_\_\_\_\_ -ին ընդունված թիվ \_\_\_\_\_ որոշումներով կողմերը կնքեցին սույն

համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Մահմանումներ

1.1 **ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԲ՝** անշարժ գույքը, որը կազմված է \_\_\_\_\_ մարզ, գ. \_\_\_\_\_ -ում գտնվող \_\_\_\_\_ ք.մ. ընդհանուր մակերեսով հողատարածքի (կադաստրային կոդ \_\_\_\_\_) մասը կազմող \_\_\_\_\_ ք.մ մակերեսով հողակտորը և նույն հողակտորի վրա գտնվող \_\_\_\_\_ -ից, և որի նկատմամբ համաձայն ՀՀ կառավարության կողմից \_\_\_\_\_ -ին ընդունված թիվ \_\_\_\_\_, \_\_\_\_\_ -ին ընդունված թիվ \_\_\_\_\_ և \_\_\_\_\_ -ին ընդունված թիվ \_\_\_\_\_ որոշումների ճանաչվել է Բացառիկ՝ գերակա հանրային շահ \_\_\_\_\_ և ենթակա է օտարման:

1.2 **ԱԵԱ՝** ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ օտարման կապակցությամբ համաձայն ՀՀ կառավարության կողմից \_\_\_\_\_ -ին ընդունված թիվ \_\_\_\_\_ որոշման ազդեցության ենթարկված անձիք, որոնք նշված են սույն կետում՝

անուն, ազգանուն/ անվանում	ծննդյան թիվ, անձնագրային տվյալներ/ պետական գրանցման վկայական	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ նկատմամբ իրավունքի տեսակը
		<i>իրավական կարգավիճակ ստանալու ենթակա հողօգտագործող</i>

1.3 **ԱԵԱ-ների ԲԱՆԿԱՑԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐ**

ստացողի անուն, ազգանուն/ անվանում	բանկային վավերապայմաններ	ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱ Ն համապատասխան բաժին
		դրամ
		դրամ

1.4 **ՁԵՈՔԲԵՐՈՂ՝** Հայաստանի Հանրապետություն

1.5 **ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ՝** ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ օտարման կապակցությամբ ԱԵԱ-ին համաձայն ՀՀ կառավարության \_\_\_\_\_ որոշման տրվող լրացուցիչ փոխհատուցում: ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆ ներառում է հատուցում հետևյալի համար.

ա.	հողօգտագործում	դրամ
բ.	Բեքք	դրամ

գ.	Ծառեր	դրամ
դ.	Ձեռնարկատեր/անհատ ձեռներեց	դրամ
ե.	Մշտական աշխատողներ/աշխատակիցներ.	դրամ
զ.	Օժանդակություն էական ազդեցությունների դեպքում	դրամ
է.	Օժանդակություն վերաբնակեցման դեպքում	դրամ
ը.	Օժանդակություն խոցելի անձանց	դրամ
թ.	Ժամանակավոր ազդեցություն	դրամ
ժ.	ՀՕՏ չնախատեսված ազդեցություններ, եթե այդպիսիք լինեն	դրամ

ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ընդհանուր գումարը կազմում է \_\_\_\_\_ դրամ:

2. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

- 2.1 Մույնով Ձեռնթերցողը պարտավորվում է վճարել ԱԵԱ-ին ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ գումարը, սույն համաձայնագիր կետ 1.3-ում նշված բանկային հաշիվներին՝ նշված համապատասխան բաժիններով՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ վերաբերյալ համապատասխան ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ պայմանագիրը կնքելու կամ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ սեփականությունը Ձեռնթերցողին անցնելու մասին համապատասխան դատական որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից բանկային օրվա ընթացքում:
- 2.2 Մույնով ԱԵԱ-ն հաստատում է, որ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ ներառում է ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ օտարման հետ կապված ԱԵԱ-ին հասանելիք բոլոր տեսակի հատուցումները ամբողջությամբ և, որ համաձայն է սույն համաձայնագրի կետ 1.5-ում նշված ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ գումարի հետ և չունի դրա նկատմամբ որևէ առարկություններ կամ բողոքներ:
- 2.3 ԱԵԱ-ն հաստատում է, որ սույն համաձայնագրի կետ 1.3-ում նշված ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ գումարի ստացողները և նրանց բաժինները որոշված են իր կողմից:

3. ԱԵԱ-ի երաշխիքները

- 3.1 ԱԵԱ-ն երաշխավորում է, որ սույն համաձայնագրի կետ 1.3-ում նշված անձանցից բացի չկան որևէ այլ անձիք որոնք ունեն ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ կամ դրա մի մասը ստանալու իրավունք:
- 3.2 ԱԵԱ-ն պատասխանատվություն է կրում իր կողմից տրված կեղծ երաշխիքների համար և պարտավորվում է փոխհատուցել Ձեռնթերցողին բոլոր տեսակի ծախսերը և վնասները, որը կկրի Ձեռնթերցողը ԱԵԱ-ի կողմից կեղծ երաշխիքներ տալու հետևանքով:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ գործողության սահմանները և իրավական հիմքը

- 4.1. Մույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
- 4.2. Մույն համաձայնագիրը կազմված է \_\_\_\_\_ (\_\_\_\_) օրինակից, որոնցից մեկական տրվում է յուրաքանչյուր ԱԵԱ-ին և Ձեռնթերցողի ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁԻՆ:

5. Կողմերի վավերապայմանները

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

6. Կողմերի ստորագրությունները

6. Կողմերի ստորագրությունները

6.1 ՁԵՌՔԲԵՐՈՂԻ անունից`

«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագիր իրականացնող կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, որը գործում է ՁԵՌՔԲԵՐՈՂԻ անունից համաձայն

«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքի և ՀՀ կառավարության կողմից 27 մայիսի 2010 թվականին ընդունված N 931-Ն որոշման: «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագիր իրականացնող կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպության անունից համաձայն լիազորագրի հանդես է գալիս \_\_\_\_\_-ը

\_\_\_\_\_

ստորագրություն

6.2 ԱԵԱ`

\_\_\_\_\_/որի անունից համաձայն  
լիազորագրի/կանոնադրության/օրենքի հանդես է գալիս \_\_\_\_\_-ը/

\_\_\_\_\_

ստորագրություն

\_\_\_\_\_/որի անունից համաձայն  
լիազորագրի/կանոնադրության/օրենքի հանդես է գալիս \_\_\_\_\_-ը/

\_\_\_\_\_

#### ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

\_\_\_\_\_  
կնքման  
վայրը

\_\_\_\_\_  
կնքման ամսաթիվը

Ղեկավարվելով ՀՀ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքով և ՀՀ կառավարության կողմից -ին ընդունված թիվ, -ին ընդունված թիվ \_\_\_\_\_և -ին ընդունված թիվ որոշումներով` ստորև նշված ՁԵՌՔԲԵՐՈՂԸ մի կողմից և ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՔ մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Սահմանումներ

- 1.1 **ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝** սույն պայմանագիրը
- 1.2 **ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՔ՝** ՊԱՅՄԱՆԱԳՐԻ առարկա հանդիսացող անշարժ գույքը (սեփականության իրավունքի գրանցման վկայական(ներ) թիվ\_\_\_\_), որը կազմված է\_\_\_\_մարզ, գ.\_\_\_\_-ում գտնվող\_\_\_\_ք.մ. ընդհանուր մակերեսով հողատարածքի (կադաստրային կոդ\_\_\_\_) մասը կազմող\_\_\_\_ք.մ մակերեսով հողակտորը և նույն հողակտորի վրա գտնվող\_\_\_\_-ից, և որի նկատմամբ համաձայն ՀՀ կառավարության կողմից\_\_\_\_-ին ընդունված թիվ\_\_\_\_,\_\_\_\_-ին ընդունված թիվ\_\_\_\_և\_\_\_\_-ին ընդունված թիվ\_\_\_\_որոշումների ճանաչվել է բացառիկ՝ գերակա հանրային շահ և ենթակա է օտարման: ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ հատակագիծը կցվում է ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ և հանդիսանում է նրա անբաժանելի մասը:

1.3 **ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՔ՝**

անուն, ազգանուն/ անվանում	ծննդյան թիվ, անձնագրային տվյալներ/ պետական գրանցման վկայական	իրավունքի տեսակը

- 1.4 **ՄԵՓԱԿԱՆԱՏԵՐ՝** ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կետ 1.3- ում որպես սեփականության իրավունք ունեցող նշված անձիք բոլորը միասին

1.5 **ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐ**

ստացողի անուն, ազգանուն/ անվանում	բանկային վավերապայմաններ	ՓՈՒՅԱՏՈՒՑՄԱՆ համապատասխան ան բաժին
		դրամ
		դրամ

- 1.6 **ՁԵՈՔԲԵՐՈՂ՝** Հայաստանի Հանրապետություն
- 1.7 **ՓՈՒՅԱՏՈՒՑՈՒՄ՝** ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ օտարման դիմաց ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ տրվող համարժեք փոխհատուցում: ՓՈՒՅԱՏՈՒՑՄԱՆ ընդհանուր գումարը կազմում է\_\_\_\_դրամ:
- 1.8 **ՊԱՐՏՔԵՐ՝** ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կնքման օրվա դրությամբ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ կապակցությամբ բոլոր չկատարված հարկային և էլեկտրամատակարարման, հեռախոսակապի, ջրի, կոյուղու, կոմունալ և այլ ծառայությունների գծով պարտավորությունների գումարը, որը կազմում է.
- հարկերի գծով՝ \_\_\_\_դրամ,
  - կոմունալ և այլ վճարումների գծով՝ \_\_\_\_դրամ,
  - ԸՆԴԱՄԵՆԸ՝ \_\_\_\_դրամ:

2. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ առարկան**

- 2.1 ՄԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ փոխանցում է ՁԵՈՔԲԵՐՈՂԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ առարկա հանդիսացող ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ նկատմամբ սեփականության իրավունքը:
- 2.2 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ իրավունքները դադարում են ՊԱՅՄԱՆԱԳՐԸ անշարժ գույքի գրանցման պետական լիազորված մարմնում գրանցելու պահից:
- 2.3 ՁԵՈՔԲԵՐՈՂԸ ընդունում է ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ որպես սեփականություն և պարտավորվում է վճարել ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ նրանց իրավունքների դադարման դիմաց ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կետ 1.7-ում նշված ՓՈՒՅԱՏՈՒՑՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ նշված պայմաններով, կարգով և ժամկետներում:
- 2.4 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՔ պարտավորվում են ազատել այն ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կետ 5.1-ում նշված վճարումը կատարելուց\_\_\_\_օրվա ժամկետում,

իսկ ՄԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ պարտավորվում է պայմանագրից ծագող իրավունքների պետական



գրանցումից հետո Ձեռնբեբեհո՞ղի պահանջով\_\_\_\_օրյա ժամկետում հանձնման-ընդունման ակտով հանձնել ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ Ձեռնբեբեհո՞ղի:

3. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ նկարագրությունը
- 3.1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ սեփականության իրավունքով պատկանում է ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ, ինչը հաստատվում է ՀՀ կառավարությանը առընթեր Անշարժ գույքի պետական կադաստրի կոմիտեի կողմից տրված ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կետ 1.2-ում նշված սեփականության իրավունքի գրանցման վկայական(ներ)ով:
- 3.2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ հատակագիծը կցվում է ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ և հանդիսանում է նրա անբաժանելի մասը:
  
4. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ երաշխիքները
- 4.1. Մույնով ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՔ հաստատում են, որ համաձայն են ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կետ 1.8-ում նշված ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ գումարի հետ ինչպես նաև իրենց հասանելի ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ համապատասխան բաժնի հետ և չունեն դրանց նկատմամբ որևէ առարկություններ կամ բողոքներ:
- 4.2. ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ հաստատում է, որ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կետ 1.3-ում նշված անձանցից բացի այլ անձիք չունեն որևէ իրավունքներ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ նկատմամբ և, որ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կնքման համար որևէ այլ անձանց համաձայնություն չի պահանջվում:
- 4.3. ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ հաստատում է, որ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կետ 1.8-ում նշված ՊԱՐՏՔԵՐԻՑ բացի չկան որևէ այլ չկատարված հարկային և այլ տեսակի պարտավորություններ կապված ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ տիրապետման կամ օգտագործման հետ:
- 4.4. ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ երաշխավորում է, որ.
  - ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ վաճառված և նվիրված չէ, կալանքի տակ չի գտնվում, ազատ է երրորդ անձանց պահանջներից և այլ տեսակի իրավական ծանրաբեռնվածություններից,
  - բռնագանձում կամ հարկադիր օտարում տարածված չէ:
  
5. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ և վճարման կարգը
- 5.1. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆ ներառում է ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ օտարման հետ կապված ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ հասանելիք բոլոր տեսակի հատուցումները ամբողջությամբ:
- 5.2. Ձեռնբեբեհո՞ղը պարտավորվում է վճարել ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ Պայմանագրի կետ 1.7-ում նշված ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ գումարը՝ նվազեցնելով այն կետ 4.2-ում նշված ՊԱՐՏՔԵՐԻՑ գումարի չափով ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կնքման օրվանից բանկային օրվա ընթացքում ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կետ 1.2.-ում նշված բանկային հաշիվներին, նշված համապատասխան բաժիններով:
  
6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կնքման հետ կապված ծախսերը
- 6.1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կնքման, նոտարական վավերացման և գրանցման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են Ձեռնբեբեհո՞ղի հաշվին:
  
7. Կողմերի պատասխանատվությունը
- 7.1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՔ պատասխանատվություն են կրում իրենց կողմից ՊԱՅՄԱՆԱԳՐԻ բաժին 4-ում տրված կեղծ երաշխիքների համար, և յուրաքանչյուր ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁ պարտավորվում է փոխհատուցել Ձեռնբեբեհո՞ղին բոլոր տեսակի ծախսերը և վնասները, որը կկրի

ՁԵՌՔԲԵՐՈՂԸ տվյալ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ կողմից կեղծ երաշխիքներ տալու հետևանքով:

7.2 Կողմերը պատասխանատվություն են կրում իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար օրենքով սահմանված կարգով:

8. Վեճերի լուծումը և օրենքի ընտրությունը

8.1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ առնչությամբ կողմերի միջև ծագած բոլոր վեճերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.2 ՊԱՅՄԱՆԱԳՐԸ մեկնաբանվում է կնքման պահին ՀՀ գործող օրենսդրությանը համաձայն:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ գործողության սահմանները և իրավական հիմքը

9.1 ՊԱՅՄԱՆԱԳՐԸ ենթակա է նոտարական վավերացման և իրավունքների փոխանցման առումով ուժի մեջ է մտնում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական կադաստրի կոմիտեում գրանցելու պահից: ՊԱՅՄԱՆԱԳՐԻ այլ դրույթները ուժի մեջ են մտնում ստորագրման պահից:

9.2 ՊԱՅՄԱՆԱԳՐԸ կազմված է \_\_\_\_\_(\_\_\_\_) օրինակից, որոնցից մեկական տրվում է յուրաքանչյուր ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆ, ՁԵՌՔԲԵՐՈՂԻՆ, պետական նոտարական գրասենյակին և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանմանը:

10. Կողմերի վավերապայմանները

---

---

---

11. Կողմերի ստորագրությունները

11.1 ՁԵՌՔԲԵՐՈՂԻ անունից՝

«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագիր իրականացնող կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, որը գործում է ՁԵՌՔԲԵՐՈՂԻ անունից համաձայն

«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքի և ՀՀ կառավարության կողմից 27 մայիսի 2010 թվականին ընդունված N 931-Ն որոշման:

«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագիր իրականացնող կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպության անունից համաձայն լիազորագրի հանդես է գալիս \_\_\_\_\_ը

---

ստորագրություն

11.2 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՔ՝

\_\_\_\_\_/որի անունից համաձայն  
լիազորագրի/կանոնադրության/օրենքի հանդես է գալիս \_\_\_\_\_-ը/  
\_\_\_\_\_

ստորագրություն

\_\_\_\_\_/որի անունից համաձայն  
լիազորագրի/կանոնադրության/օրենքի հանդես է գալիս \_\_\_\_\_-ը /  
\_\_\_\_\_

ստորագրություն

Հավելված Ժ1. Բողոքների առարկա դարձած հողակտորների և գույքի գնահատման ուսումնասիրության ստուգման հաշվետվություն

ԲՈՂՈՔՆԵՐԻ ԱՌԱՐԿԱ ԴԱՐՁԱԾ ՀՈՂԱԿՏՈՐՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
“Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր”

ՆԱԽԱԳԻԾ  
30 հուլիսի, 2012թ.

**ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ**

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 208  
2. ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ..... 210  
3. “ՄԱՐ-ՄՈՍ” ՍՊԸ-Ի ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ..... 214  
4. ԸՆՏՐՎԱԾ ՀՈՂԱԿՏՈՐՆԵՐԻ/ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ..... 218  
5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 224

**ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ**

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ ..... 227  
ՀԱՎԵԼՎԱԾ 2 ..... 239

**ՏԵՔՍՏԻ ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐ**

- Աղյուսակ 1. Մտուցման առաջադրանքի համար գրասենյակային փաստաթղթային վերանայման օրինակ ըստ շրջանների և համայնքների
- Աղյուսակ 2. Մար\_Մոսի և Խորհրդատուի կողմից օգտագործված մեթոդոլոգիաների համեմատություն
- Աղյուսակ 3. Պտղատու ծառերի պտղաբերության որոշում (AMAD-ից) Աղյուսակ 4. Պտղատու ծառերի գնահատման համեմատություն
- Աղյուսակ 5. Խաղողի բերքի համար փոխհատուցման գումարի համեմատությունը Աղյուսակ 6. 2008-2010թթ-ի մշակաբույսերի միջին տարեկան արտադրողականությունը
- Աղյուսակ 7. Մեկամյա մշակաբույսերի փոխհատուցման արժեքները
- Աղյուսակ 8. Ազդեցության ենթակա 13 հողակտորների վերագնահատման համար CIT-ի կողմից տրամադրված վաճառքների համեմատությունը
- Աղյուսակ 9. Մար-Մոսի և Խորհրդատուի փոխհատուցման գումարների համեմատություն

**ՀԱՎԵԼՎԱԾ 1-Ի ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐ**

- Աղյուսակ 1. Վերագնահատված ազդեցության ենթակա հողերի համեմատության չափանիշների նկարագրություն
- Աղյուսակ 2. Հողակտորի գնահատում (լրտ 221-027)
- Աղյուսակ 3. հողակտորի գնահատում (լրտ 224-001)
- Աղյուսակ 4. հողակտորի գնահատում (լրտ 218-008)
- Աղյուսակ 5. հողակտորի գնահատում (լրտ 256-007) Աղյուսակ 6 . հողակտորի գնահատում (լրտ 221-029) Աղյուսակ 7. հողակտորի գնահատում (լրտ 224-003)
- Աղյուսակ 8. հողակտորի գնահատում (լրտ 255-003)

Աղյուսակ 9. հողակտորի գնահատում (լրտ 149-007)  
Աղյուսակ 10. հողակտորի գնահատում (լրտ 228-007)

Աղյուսակ 11. հողակտորի գնահատում (լրտ 229-001)  
Աղյուսակ 12. հողակտորի գնահատում (լրտ 218-024)  
Աղյուսակ 13. հողակտորի գնահատում (լրտ 228-004)  
Աղյուսակ 14. հողակտորի գնահատում (լրտ 219-002)

#### **ՀԱՎԵԼՎԱԾ 2-Ի ԱՂՅՈՒՄԱԿ**

Աղյուսակ 1. Մար-Մոս ՍՊԸ-ի և խորհրդատուի համեմատվող վաճառքի արժեքները (CIT-ից)

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

### 1.1 Ծրագրի նախապատմություն

1. Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) տրամադրեց Հայաստանի Հանրապետության կառավարությանը (ՀՀ կառավարություն) Բազմափուլային ֆինանսավորման գործիք (ԲՖԳ) “Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք” ներդրումային ծրագիրը (ՀՀՃՄՆԾ) ֆինանսավորելու համար: Սկզբնական փուլը, որը ներառում է Արարատից դեպի Երևան, Աշտարակ, Թալին և Գյումրի մայրուղին, բաժանվել է երկու Ծրագրերի:
2. Նախնական ՀՕՏՕ-ն պատրաստվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (ՏԿՆ) ՀՀՃՄՆԾ-ի Իրականացնող գործակալության (ԻԳ) կողմից: Տվյալ Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏՕ) առարկան 42 կմ երկարությամբ Աշտարակից դեպի Թալին ճանապարհն է (կմ 29+600 - 71+500)՝ Մ1 միջպետական մայրուղու հատվածը, որն անվանվել է որպես Տրանշ 2 (Տ2) այսուհետ՝ Ծրագիր: Տ2 Ծրագրի շրջանակներում իրականացվելու է գոյություն ունեցող 2 երթուղիների գոտիով Մ1 մայրուղու բարելավումը՝ դարձնելով այն միջազգային չափանիշներին համապատասխան 4 երթուղիների գոտիով 1-ին կարգի ճանապարհ: Հիմնականում նոր ծրագրի շրջանակներում է գոյություն ունեցող ճանապարհով ընդհանուր բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով, սակայն ներառում է նաև համայնքները շրջանցող նոր ճանապարհներ շինարարության համար մինչ օրս երբեք չօգտագործված տարածքներով: Այդ գործողությունը պահանջում է 200-ից ավել խիստ ազդեցության ենթարկված ԱԵՏՏ-ների հողի օտարում և տարաբնակեցում (ՀՕՏ), որի արդյունքում համաձայն ԱԶԲ-ի ուղեցույցի 55 այն դասակարգվել է որպես “կարգ Ա” 56:
3. Ծրագրի շրջանակներում ազդեցության են ենթարկվում 838 հողակտորներ և 536 ԱԵՏՏ-ներ, որոնցից 1,186 սեփականատերեր և համասեփականատերեր 484 մասնավոր հողակտորների վրա, 16 համայնքների սեփականություն հանդիսացող հողակտորներ 352 համայնքային հողակտորների վրա, 2 հողակտորներ, որոնք հանդիսանում են ՀՀ սեփականություն, 28 շենքեր (2 բնակելի և 26 ոչ բնակելի շենքեր) և 7 բիզնեսներ (6-ը՝ մշտապես): Ծրագրային տարածքի հիմնական ազդեցության ենթարկվող մշակաբույսերը ցորենն ու գարին են: Ընդհանուր առմամբ 4,378 պտղատու և 1,555 փայտանյութ հանդիսացող ծառեր և 6,485

---

55 Համաձայն ԱԶԲ Գործառնական ձեռնարկի՝ Ջ1/Գ2 (2009թ.) Ծրագիրը դասակարգվում է որպես Ա կարգի ծրագիր, եթե զգալի ազդեցություններից տուժում է ավելի քան 200 մարդ (վերաբնակեցման կամ արդյունավետ ակտիվների 10%-ից ավելի կորուստ): Ծրագիրը կդասակարգվի որպես Բ կարգի ծրագիր, եթե զգալի ազդեցություններ է կրում 200-ից քիչ մարդ: Գ կարգի ծրագրերի դեպքում ՀՕՏ ազդեցություններ չեն առաջանում:

գծամետր խաղողի այգիներ նույնպես կենթարկվեն ազդեցության:

4. Բողոքներ են ներկայացվել նախնական ՀՕՏՕ-ի շրջանակներում գնահատված հողերի/այլ կորուստների արժեքների վերաբերյալ: ԱԶԲ Կենտրոնական և Արևմտյան Ասիայի Տրանսպորտի և հաղորդակցության Բաժնի կողմից որոշվել է իրականացնել բողոքների առարկա դարձած հողակտորների և գույքի գնահատման ուսումնասիրության ստուգում՝ ստուգելու համար դրանց հուսալիությունը: Հողակտորների և գույքի գնահատման ուսումնասիրությունը իրականացվել է ԱԶԲ-ի կողմից վարձված անկախ հավատարմագրված գնահատողի կողմից:

## **1.2 Առաջադրանքի ընդհանուր նպատակը**

5. Առաջադրանքի նպատակն էր ստուգել ԻԿ-ի խորհրդատու Մար-Մոսի կողմից իրականացված ՀՕՏՕ գնահատման վավերականությունը: ԱԶԲ խորհրդատուն կատարել է հետևյալ գործողությունները՝

- i. Մար-Մոսի գնահատման մեթոդաբանության վերանայում;
- ii. Մար-Մոսի մեթոդաբանության կիրառման վերանայում/տեխնիկական գնահատում՝ հիմնվելով բողոքի առարկա դարձած բոլոր հողակտորներին և որոշ լրացուցիչ հողերին վերաբերող Մար-Մոսի 82 գնահատման հաշվետվությունների վրա;
- iii. Հիմնվելով հստակ սահմանված մեթոդի և կիրառման վրա՝ վերագնահատել 13 պատահականորեն ընտրված բողոքի առարկա դարձած հողակտորներ և դրանց կից պտղատու ծառերն ու բերքը;
- iv. Տրամադրել՝ Մար-Մոսի գնահատման/փոխհատուցման դրույքաչափերի վերջնական գնահատում և գործողություններ առաջարկել՝ ապահովելու համար փոխհատուցում շուկայական և փոխարինման դրույքաչափերով, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ, ՀՕՏՕ-ով, ԱԶԲ ուղեցույցերով և մասնագիտական պրակտիկայով;



**2. ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 57**

6. **Տեղեկատվության աղբյուրները`** Խորհրդատուն իրականացրել է տարբեր տեսակի գույքի գնահատման Մար-Մոսի մեթոդաբանության թղթաբանական ստուգում: Մա հիմնված է եղել Մար-Մոսի 2 Մեթոդաբանական հաշվետվությունների վրա` a) մարտ ամսվա ՀՕՏՕ նախագծի Հավելված Ե1 և b) հունիս ամսվա ՀՕՏՕ նախագծի Հավելված Ե1, որը փոքր ինչ ավելի մշակված է, քան առաջինը: Ելնելով մեթոդաբանության հաշվետվության մեջ առկա բացերից` կիրառվել են լրացուցիչ աղբյուրներ հասկանալու համար, թե մեթոդաբանությունը ինչպես էր կիրառվել: Մասնավորապես, դա արվել է ավելի լավ հասկանալու համար, թե ինչպես է ստացել հողի և բերքի գնահատման տվյալները և որոշել ճշգրտումների համար չափանիշներն ու գործակիցները: Հողի համար այս հավելյալ աղբյուրներն են`

a) համեմատելի հողակտորների վաճառքի գների ցանկը, որը Մար-Մոսը ձեռք էր բերել տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնից; b) Մարմոսի կողմից օգտագործված ճշգրտման գործակիցների ցանկը, որը տրամադրվել էր ԾԻԿ-ի կողմից և c) ընտրված 82 հողակտորների համար Մար-Մոսի կողմից պատրաստված փաստացի գնահատման հաշվետվությունները: Բերքի համար այդ լրացուցիչ տվյալներն են` Արագածոտնի մարզպետարանի գյուղատնտեսության վարչության տվյալները (AMAD)` պտղատու ծառերի և մշակաբույսերի արտադրողականության վերաբերյալ:

7. **Մար-Մոսի գնահատման գրասենյակային վերանայման համար նմուշառում`** Գրասենյակային փաստաթղթերի վերանայումը հիմնված էր 82 հողակտորների (53-ը Աշտարակում և 29-ը Թալինում) օրինակի վրա (տես ստորև Աղյուսակ 1-ը): Ընտրությունը պատահական էր , սակայն հնարավորինս կենտրոնացած էր այն հողերի վրա, որոնք բողոքի առարկա էին դարձել: Հետևյալ միավորող չափանիշներն էին`

- համայնք/տեղակայություն հողի
- օգտագործման տեսակը
- Ընտրված հողակտորում ներառված ազդեցության ենթակա գույքը
- (կառույցներ/շինություններ, ծառեր և մշակաբույսեր)

**Աղյուսակ 1. Ստուգման առաջադրանքի համար գրասենյակային փաստաթղթային վերանայման օրինակ ըստ շրջանների և համայնքների**

No	Համայնք	Ազդեցության ենթակա հողակտորի համարը	Ընտրված հողակտորի համարը

57 Բիզնեսի փոխհատուցման ստուգումը ներառված չէր Խորհրդատուի առաջադրանքի մեջ` հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱԵԱ-ների շահույթների/եկամուտների մասին տեղեկատվությունը տրամադրվել էր ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից, և գնահատողը պետք է միայն հաշվարկներ աներ` ՀՕՏՕ հավելվածում նկարագրված մեթոդաբանությունների համաձայն:

<b>Աշտարակի շրջան</b>			
1	Արուճ	47	4
2	Շամիրամ	49	4
3	Կոշ	120	12
4	Ոջան	146	13
5	Աղձք	32	4
6	Ագարակ	99	10
7	Ոսկեվազ	32	3
8	Փարպի	17	3
	<b>Ընդամենը</b>	<b>542</b>	<b>53</b>
<b>Թալինի շրջան</b>			
9	Թալին	59	5
10	Եղնիկ	19	2
11	Կաթնաղբյուր	41	4
12	Դավթաշեն	30	3
13	Վերին Սասնաշեն	7	1
14	Ներքին Սասնաշեն	15	2
15	Ներքին Բազմաբերդ	71	7
16	Կաքավաձոր	49	5
	<b>Ընդամենը</b>	<b>291</b>	<b>29</b>
	<b>Ընդհանուր</b>	<b>833</b>	<b>82</b>

8. **Ընտրված հողակտորների վերագնահատման համար նմուշառում`** հողերի արժեքների մանրամասն վերագնահատման համար ընտրված ստուգման հողերը պետք է կազմեին ողջ 82 հողակտորների առնվազն 10%-ը: 13 հողակտոր (12-ը Աշտարակում և 1-ը Թալինում) ընտրվեց ` հասցնելով ստուգման նմուշը ամբողջի մոտ 16%-ին: Վերագնահատման օրինակը ներառում էր միայն այն հողերը, որոնք վերաբերում էին բողոքներին:

9. **Նմուշ հողակտորների վերագնահատման համար Խորհրդատուի մեթոդը`** Խորհրդատուն կիրառել է համեմատության մեթոդը որոշելու համար ազդեցության ենթակա հողի շուկայական արժեքը ( ճշգրտման չափանիշները և գործակիցները և 13 հողակտորների գնահատման թերթիկները ներառված են հավելված 1-ում): Սույն մեթոդը կիրառվում է, երբ հասանելի է նմանատիպ հողերի բավարար քանակով (առնվազն 3) վստահելի փաստացի գործարքներ: Գնահատումը հետևեց 3 փոխկապակցված տրամաբանական քայլերի`

i. Առաջինը, ազդեցության ենթակա և համեմատվող հողերը գումարվեցին նշանակալի համեմատական ընդհանուրի մեջ՝ հիմնվելով տեղակայության և հողի գործածման տեսակի վրա:

ii. Երկրորդ, համեմատական հողի արձանագրված վաճառքի արժեքը ստացվել էր ՀՀ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի (CIT) փաստացի գործարքների տվյալների բազայից:

iii. Երրորդ, CIT-ի կողմից տրված արձանագրված վաճառքի արժեքները ճշգրտվել և ստուգվել են համեմատելով Պետական կադաստրի կայքում հրապարակված տվյալների հետ, ինչպես նաև նույն ժամանակաշրջանում տեղական իրավասու մարմինների գրասենյակներում կամ անհատական տվյալների բազայում արձանագրված վաճառքի պայմանագրերի հետ: Կատարվել է ստուգում և պարզվել, որ ճշգրտումներ հարկավոր չեն:

iv. Չորրորդ՝ համեմատվել են համեմատվող և ազդեցության ենթակա հողակտրոնների հատուկ բնութագրիչները/որակը՝ հիմնվելով հետևյալ չափանիշների վրա՝

- Կադաստրային գոտու/շրջանի վրա հիմնված տեղակայությունը
- Հողի տեսակը/օգտագործման նպատակը;
- Թեքության աստիճանը;
- Բնահողի կայունությունը (հող թե ժայռ)
- Ոռոգման հնարավորություն, և;
- Դիրքը ճանապարհի նկատմամբ:

v. Վերջապես, ազդեցության ենթակա հողերը գնահատվել են՝ հիմնվելով համեմատվող հողերի վաճառքի արձանագրված միջին արժեքների վրա: Այնուհետև միջին արժեքը ճշգրտվել է՝ հիմնվելով հատուկ գործակիցների վրա, որոնք սահմանվել են գնահատողի կողմից: Այդ գործակիցները որոշում են արձանագրված վաճառքի արժեքների աղբյուրների կամ ազդեցության ենթակա և համեմատվող հողերի որակի տարբերությունները՝ հիմնվելով վերը նշված չափանիշների վրա:

**10. Մշակաբույսերի և ծառերի վերագնահատման համար Խորհրդատուի մեթոդը և աղբյուրները՝** պտղատու ծառերի և մշակաբույսերի գնահատման համար ԱԶԲ խորհրդատուն կիրառել է AMAD-ից ստացված տվյալներն ու տեղեկատվությունը: Այս ինֆորմացիան ապա ստուգվել է՝ տարբեր գյուղատնտեսական հետազոտությունների հաստատությունների (Բուսաբանական ինստիտուտ, Խաղողագործություն, Գինեգործություն գիտահետազոտական ինստիտուտ) փորձագետների գնահատականների հետ համեմատելով: Լրացուցիչ տեղեկություն ստացվել է “Դիտարկված քաղաքներում սպառողական ապրանքների և ծառայությունների ծախսերը” շուկայական գների տարեկան վիճակագրության

կողմից և “Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները և համախառն բերքը 2011-2012 թթ” կողմից: Ծառերը նորից աճեցնելու համար անհրաժեշտ տարիների քանակը ստացվել է փորձագետների կողմից: Նույնը վերաբերում է խաղողի այգիներին: Գնահատման իրականացման ընթացքում Խորհրդատուն կիրառել է ՀՕՏ-ում սահմանված հետևյալ մեթոդաբանությունը՝

**i. Պտղատու ծառերը** գնահատվել են հիմնվելով տարեկան եկամուտի կորստի վրա, այն տարիների համար, որոնք անհրաժեշտ են ծառը նորից աճեցնելու համար: Եկամուտի կորուստը որոշվել էր՝ հիմնվելով ծառի միջին արտադրողականության վրա ըստ կգ- 3 տարիների ընթացքում<sup>58</sup> ՝ բազմապատկելով տարիների քանակով, որն անհրաժեշտ է ծառը մինչև բերքատու տարիք նորից աճեցնելու համար և հողի օտարումից 1 տարի առաջ (2011թ.) մրգի շուկայական արժեքով: Մար-Մոսի մեթոդաբանության հետ համեմատությունը ավելի դյուրին դարձնելու նպատակով մրգի շուկայական արժեքը հաշվարկվել է Երևանի շուկայի մուտքի մոտ: 59

**ii. Մեկամյա մշակաբույսերը** գնահատվել են ՝ հիմնվելով տարեկան եկամտաբերության վրա (հիմնվելով 3 տարիների ընթացքում միջին եկամտաբերության վրա, ինչպես պտղատու ծառերի դեպքում է): Շուկայական արժեքները հաշվարկվել են Երևանի գներով:

---

58 Փոխհատուցելու համար այն տարիների շեղումները, որտեղ առկա է բացառիկ ցածր կամ բարձր արտադրողականությունը: 59 Փաստորեն Մար-Մոսը հաշվարկել է արժեքները՝ հիմնվելով Երևանի արժեքների վրա:

### 3. “ՄԱՐ-ՄՈՍ” ՄՊԸ-Ի ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

#### 3.1 Հողի գնահատում

11. **Մեթոդաբանություն`** Մար-Մոսը կիրառել է Խորհրդատուի նույն մեթոդաբանությունը, սակայն դա չի բխում Մեթոդաբանության հաշվետվություններից, որտեղ չկա հստակություն և մանրամասներ, որոնք անհրաժեշտ են կիրառման համատեքստն ու պայմանները և, թե ինչ է իրականում արվել: Հաշվետվություններում Աշտարակի և Թալինի շրջանների շուկայական պայմանները չեն մանրամասնվում, և ոչ էլ գնահատման քայլերը, կամ հողակտորների միավորման մոտեցումը և բանաձևերի թվային տվյալները (այսինքն` CIT վաճառքի արձանագրումները կամ ճշգրտման գործակիցները): Լիովին հասկանալու և Մար-Մոսի մեթոդաբանությունը գնահատելու համար Խորհրդատուն պետք է խնդրեր Մար-Մոսից կամ ԾԻԿ-ից լրացուցիչ տեղեկատվություն , որը վերը նշված է պարբերություն 6-ում:

12. **Մեթոդաբանություն: Կիրառություն`** հետևելով Մար-Մոսի գնահատման հաշվետվությունների և դրանցում կիրառված նվազեցման

չափանիշների/գործակիցների վերլուծությանը` Խորհրդատուն նշում է, որ (առնվազն վերանայման ընթացքում դիտարկված հողակտորների համար) Մար-Մոսը կիրառել է ճշգրտման գործակիցները որոշ անճշտությամբ: Մի քանի օրինակ ներկայացված են ստորև`

(i) **Ճշգրտում` կատարված ըստ տեղակայության (ճշգրտման քայլը` 0-10, 0-25%)**. Վերանայված հաշվետվություններում այս առումով կան մի քանի սխալներ/անհամապատասխանություններ: Հաշվետվությունում լոտ/կոդ 228- 007-ի համար Ուջան համայնքի այգին համեմատվել է Փարպի և Կարբի համայնքների այգիների հետ: 25% նվազեցում է արվել Կարբի համայնքում համեմատված այգիների համար, սակայն նվազեցում չի արվել Փարպի համայնքում նույնի համար: Փարպի և Կարբի համայնքները գտնվում են կադաստրի նույն գնային գոտում (7-րդ), և գնի նվազեցումները պետք է հավասարապես կատարվեն: Նմանատիպ սխալներ գտնվում են գնահատման հաշվետվության մեջ լոտ/կոդ 128-024-ի համար: Աղձք համայնքում հողը (կադաստրի 11-րդ գոտին) համեմատվել է Փարպի և Կարբի համայնքների հետ (կադաստրային 7-րդ գոտի), և կատարվել են տարբեր նվազեցումներ` Փարպիի համար - 10% և Կարբիի համար - 25%:

(ii) **Ճշգրտում` կատարված ըստ կիրառման նպատակի (ճշգրտման քայլը` 0- 20%)`** Գնահատման հաշվետվությունում լոտ/կոդ 132-013-ի արոտավայրը համեմատվել է հերկելի հողի հետ, սակայն ոչ մի նվազեցում չի արվել: Հերկելի հողը ավելի թանկ է (գյուղատնտեսական հողերի ցանկում երկրորդ թանկ հողն է այգուց հետո), և հարկավոր են համապատասխան ճշգրտումներ: Նմանատիպ սխալներ գտնվել են գնահատման հաշվետվություններում լոտ/կոդ 229-001 և

218-024-ի համար: Նույն տիպի հողերի գնահատման ընթացքում օգտագործվել են տարբեր տոկոսներ ճշգրտման քայլերի համար:

(iii) **Ճշգրտում ըստ հողակտորի դիրքի հիմնական ճանապարհի նկատմամբ (ճշգրտման քայլը՝ 0-15%)**՝ Չնայած Մար-Մոսը ընտրել էր 15% ճշգրտման քայլ, որոշ գնահատման հաշվետվություններում այդ քայլը չի կիրառվել: Գնահատման հաշվետվություններում հիմնական ճանապարհի վրա տեղակայված լոտ/կոդ 217-001-ը (1-ին գոտի) համեմատվել է 2-րդ և 3-րդ գոտիների հողերի հետ, սակայն բոլոր դեպքերում ճշգրտման քայլը 5% է եղել:

(iv) **Ճշգրտում ըստ մակերեսի**՝ բոլոր 13 վերագնահատված դեպքերում Մար- Մոսը ճշգրտումներ է արել մակերեսի համար: Խորհրդատուն կիրառել է այս չափանիշը, քանի որ գյուղատնտեսական հողի համար այն չունի էական ազդեցություն: Այնուամենայնիվ, ստուգման գործընթացի ընթացքում հայտնաբերվել է, որ Մար-Մոսը ճիշտ չէ կիրառել այդ ճշգրտումը: Նրանք համեմատել են համեմատվող հողերի տարածքները ազդեցության ենթակա հողի ողջ տարածքի հետ և կատարել են որոշ ճշգրտումներ, հիմնականում նվազեցումներ: Նույնը պետք է կիրառվեր ազդեցության ենթակա օտարված հատվածի համար, որը հիմնականում ավելի փոքր է լինում, քան համեմատվող հողերի տարածքը, և համապատասխան ճշգրտումներ պետք է արվեին՝ հիմնականում ինդուկցիա/լրացումներ: Այնուամենայնիվ, Մար-Մոսը չի համեմատել ազդեցության ենթակա օտարված մասը: Մա նշանակում է, որ օտարված հողի համար փոխհատուցումը արհեստականորեն իջեցվել է:

13. Մեթոդաբանական հաշվետվություններում մանրամասների պակասի պատճառով, պարզ չէ, թե արդյոք Մար-Մոսը իրականում ստուգել է CIT վաճառքի թվերը պետական կադաստրի կայքի տվյալների հետ: Ճիշտ է, որ հունիս ամսվա ՀՕՏՕ նախագծի հավելվածը ցույց է տալիս, որ կատարվել են ճշգրտումներ “վաճառքի պայմանների և շուկայի վիճակի փոփոխություններ”, սակայն չի նշվում նաև, թե այդ փոփոխությունները ինչ են նշանակում, կամ կատարված վերլուծությունները կամ այդ ճշգրտումների չափանիշները/գործակիցները: Մա էական է հասկանալու համար, թե ինչպես է Մար-Մոսը վարվել գնահատվող հողերի հետ Թալինում, որտեղ, ըստ Խորհրդատուի, հողի շուկաները պակաս հասուն են, քան Աշտարակում և, որտեղ պակաս տվյալներ կան հողի վաճառքների վերաբերյալ:

14. Վերջիվերջո, հարկ է նշել, որ CIT-ի կողմից Մար-Մոսին հաղորդված համեմատվող հողակտորների համար վաճառքի արժեքները էապես ցածր են, քան CIT-ի կողմից Խորհրդատուին հաղորդվածները (տես հավելված 2): Մա Մար-Մոսի աշխատանքի թերություն չէ, սակայն դա որոշիչ ազդեցություն ունի երկու գնահատողների գնահատման միջև խիստ տարբերությունների վրա: Կրկին, մեթոդաբանական հաշվետվությունների մեջ համեմատվող հողերի համար CIT տրամադրած վաճառքի արժեքների բացահայտ ստուգման բացակայությունը էական

է, քանի որ ստուգումը (եթէ այն չի իրականացվել) կարող էր ցույց տալ Մար-Մոսին, որ ճշգրտումների կարիք կա:60

### 3.2 Շինություններ/կառույցներ

15. Շինություններ/կառույցները Մար-Մոսի կողմից գնահատվել են՝ հետևելով ՀՀ

Քաղաքաշինության նախարարության “Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն”-ի առաջարկներին: Ըստ Խորհրդատուի այսպիսի մեթոդաբանությունը ընդունելի է, քանի որ այն հանգեցնում է փոխարինման արժեքի, որը պահանջվում է ՀՕՏ-ով և ԱԶԲ անվտանգության միջոցներով: Սակայն, ըստ ԱԶԲ առաջարկի, հունիս ամսվա ՀՕՏ նախագծի Հավելված Ե1-ը պետք է փոքր ինչ ընդարձակել՝ տեքստում և աղյուսակներում հստակ ցույց տալու համար հետևյալը՝ ա) որ փրկված նյութերի համար հանում չի արվել, բ) գնահատումը ներառում է աշխատուժի արժեքը և նյութերի տեղափոխումը և գ) ուղիղ և անուղղակի ծախսերի տակ ընկնող կետերը:

### 3.3 Մշակաբույսեր /ծառեր

16. Մար-Մոսի մեթոդաբանությունը՝ Մեթոդաբանական հաշվետվությունները արտացոլում են ՀՕՏ պահանջները բանաձևերի տեսքով, սակայն դրանցում չի ասվում բանաձևի կիրառման համատեքստի մասին և, թե ինչպես բանաձևի թվային տվյալները (մասնավորապես արտադրողականության և շուկայական դրույքաչափերը) պետք է ստացվեին կամ հաշվարկվեին: Հասկանալու համար, թե Մար-Մոսը ինչ է արել՝ Խորհրդատուն պետք է դիտարկեր ԾԻԿ-ից կամ Մար-Մոսից ստացված լրացուցիչ ինֆորմացիան: Մար-Մոսի աղբյուրները, որոնք վերաբերում են տարիների քանակին, որն անհրաժեշտ է ծառը աճեցնել մինչև արտադրողական տարիք, պարզ չեն:

17. Մար-Մոսի մեթոդաբանություն, կիրառություն՝ լրացուցիչ տեղեկատվությունը ցույց է տալիս, որ Մար-Մոսը արտադրողականությունը հաշվարկել է՝ հիմնվելով միայն մեկ տարվա գների վրա (2010թ.): Խորհրդատուն դա արել է՝ հիմնվելով միջին արտադրողականության վրա 3 տարիների (2008-2009-2010թթ) և 2011թ-ի արժեքների (ազդեցությանը նախորդող տարի), համաձայն ՀՕՏ-ի 61 : Աղյուսակ 2-ում

---

60 Իրական գործարքների տվյալների բազան պահպանվում և ղեկավարվում է ՀՀ անշարժ գույքի պետական կադաստրի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի (CIT) կողմից: Տվյալների բազայից օգտվելու համար Խորհրդատուները պաշտոնապես դիմում են՝ տեղեկատվություն ստանալու նպատակով: Դիմումի մեջ պետք է նշել համեմատվող հողի բնութագրիչները (տեղակայություն, օգտագործման նպատակը, հողակտորների քանակը, գործարքների ժամկետը, միավոր արժեքները): Տեղեկատվության համար պետական վճար է վճարվում՝ CIT-ի կողմից տրամադրվող յուրաքանչյուր համեմատվող հողի համար: Նախքան այս ինֆորմացիան գնահատողներին տրամադրելը CIT-ը որոշ ճշգրտումներ է անում՝ բացառելով չափազանց ցածր կամ բարձր արժեքներով գործարքները, քանի որ սա կարող է աղավաղել միավոր արժեքները: Այդ իսկ պատճառով, պարզ չէ, թե ինչու Մար-Մոսին և ԱԶԲ Խորհրդատուին համեմատվող հողերի համար միևնույն ժամանակահատվածի համար ներկայացված միավոր արժեքները շատ տարբեր են միմյանցից:

61 ՀՕՏ դրույթները ընդհանրական են և հիմնավորված են այն հանգամանքով, որ արտադրողականությունը կարող է որոշվել միայն անցյալում (նախորդ տարի): Այնուամենայնիվ, սույն ծրագրի համար Խորհրդատուի մոտեցումը ավելի համապատասխան է արդար գնահատման համար, քանի որ 2010թ-ը ցածր արտադրողականությամբ տարի էր: 3 տարիների արտադրողականությունը միջինացնելով՝ Խորհրդատուի գնահատումը ավելի ճշգրիտ է և մոտ է իրական փոխարինման արժեքին, ինչպես պահանջվում է ԱԶԲ անվտանգության միջոցներով և ՀՕՏ սկզբունքներով: Ինչ վերաբերում է շուկայական արժեքներին, ապա 2011-ի տվյալները (ազդեցությանը նախորդող տարի) պետք է կիրառվեն: Սա լիովին համապատասխանում է ՀՕՏ-ին:

ամփոփված են Մար\_Մոսի և Խորհրդատուի կողմից օգտագործված գնահատման մեթոդները և մոտեցումները:

**Աղյուսակ 2. Մար\_Մոսի և Խորհրդատուի կողմից օգտագործված մեթոդաբանության համեմատություն**

	<b>Գույքի տեսակը</b>	<b>Մար-Մոս</b>	<b>Խորհրդատու</b>
1	Հող	Համեմատության մեթոդ	Համեմատության մեթոդ
2	Շինություն/կառույց	Փոխարինման արժեք	Փոխարինման արժեք
3	Մշակաբույսեր/ծառեր	2010թ-ի արտադրողականությունը և 2010թ-շուկայական սակագները Երևանի մուտքի մոտ	3 տարիների միջին արտադրողականություն (2008-2009-2010թթ) և 2011թ-ի շուկայական արժեքներ Երևանի մուտքի մոտ

18. Մար-Մոսի մեթոդաբանության հաշվետվությունները չեն նշում, որ Արագածոտնի մարզպետարանի գյուղատնտեսության վարչության (AMAD) ինֆորմացիան ստուգվել է և համեմատվել այլ փորձագետների աղբյուրների հետ: Ամենակարևորը, գնահատման ստուգման աշխատանքների ընթացքում հայտնաբերվել է, որ Մար- Մոսին տրամադրված պտղատու ծառերի և միամյա մշակաբույսերի արտադրողականության վերաբերյալ AMAD -ի տվյալները էապես ցածր են, քան Խորհրդատուին տրվածները: Կրկին նշենք, որ սա գնահատողներից և ոչ մեկի աշխատանքի թերություն չէ, սակայն այն ունի որոշիչ ազդեցություն երկու գնահատողների ` ծառերի և մշակաբույսերի գնահատման միջև առկա էական տարբերությունների վրա:



**4. ԸՆՏՐՎԱԾ ՀՈՂԱԿՏՈՐՆԵՐԻ/ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ  
ԱՏՈՒԳՈՒՄ**

**19. Ընդհանուր տեղեկություններ**

Բողոքների վավերականությունը ստուգելու համար Խորհրդատուն վերագնահատել է բողոքողներին պատկանող 13 նմուշային հողակտոր և համեմատել է իր արդյունքները Մար-Մոսի 82 գնահատման հաշվետվությունների հետ (53 Աշտարակի շրջանում և 29 Թալինի շրջանում): Ինչպես և Մար-Մոսի համար, Խորհրդատուի՝ համեմատվող վաճառքի արժեքներին և ծառերի/մշակաբույսերի արտադրողականության չափանիշների տեղեկատվության աղբյուրները եղել են CIT և ASAD-ը համապատասխանաբար:

**20. Շինություններ/կառույցներ.** Իրականացվել է միայն շինությունների համար Մար- Մոսի գնահատման հաշվետվությունների ստուգման վերլուծություն: Վերագնահատման կարիք չկար, քանի որ շինությունների վերաբերյալ բողոքներ չկան:

**21. Պտղատու ծառերի/խաղողի այգիների վերագնահատման արդյունքները.** Պտղատու ծառերի համար Մար-Մոսի և Խորհրդատուի թվերը էապես տարբերվում են պտղաբերության առումով: Բերքը 13.3 (սալոր) և 2.6 (խնձոր) անգամ ավելի բարձր են Խորհրդատուի գնահատման մեջ: Փոխհատուցման արժեքները 26.5(սալոր) և 1.9 (խնձոր) ավելի բարձր են Խորհրդատուի գնահատման մեջ: Երկու գնահատողներն էլ հաշվարկել են շուկայական արժեքը ըստ Երևանի սակագների62, սակայն Մար-Մոսը օգտագործել է 2010թ-ի արժեքները, իսկ Խորհրդատուն՝ 2011թ-ի արժեքները: Աղյուսակ 3-ում համեմատվում են Մար-Մոսի և Խորհրդատուի թվերը, որոնք վերաբերում են տարեկան արտադրողականությանը: Աղյուսակ 4-ում համեմատվում են վերջնական հատման ենթակա ծառերի փոխհատուցման դրույքաչափերը: Աղյուսակ 5-ում համեմատվում են խաղողի այգու համար փոխհատուցման վերջնական դրույքաչափերը:

**Աղյուսակ 3. Պտղատու ծառերի պտղաբերության որոշում (AMAD-ից)**

Ծառի տեսակը	Մար-Մոս	Consultant			
	2010թ-ի բերքը	2008թ-ի բերքը	2009թ-ի բերքը	2010թ-ի բերքը	Միջին բերք
Ծիրան	7.8	70	60	90	73
Խնձոր	41.7	110	100	120	110
Բալ	15	80	90	90	87
Սալոր	5.3	60	80	70	70
Դեղձ	7.3	40	70	70	60
Ընկույզ	50.0	60	80	90	77
Տանձ	11.7	80	70	70	73
Սերկևիլ	18.6	40	60	50	50
Կեռաս	8.8	80	90	90	87

**Աղյուսակ 4. Պտղատու ծառերի գնահատման համեմատություն**

62 Սա հակասում է ՀՕՏԷ պահանջներին, սակայն արտացոլում է գերիշխող պրակտիկա ծրագրային ոլորտներում:

	Տեսակ	Մար-Մոս				Խորհրդատու			
		Արտադրող ակնառություն /կգ/ 2010	Միավորի արժեք /ՀՀ դրամ/ 2010 թ	Արտադրողական տարիքի և հասնելու և համար պահանջ վող տարիներ	Փոխհատուցման գումար (ՀՀ դրամ)	Արտադրողականության թիվ (կգ) (2008- 2010թթ)	Միավորի արժեք (1կգ /ՀՀ դրամ ) 2011 թ	Արտադրողականության թիվ և համար պահանջ վող տարիներ	Փոխհատուցման գումար (ՀՀ դրամ)
1	Ծիրան	7.8	700	4	21,840	73	900	6	394,200
2	Խնձոր	41.7	985	6	246,447	110	790	5	434,500
3	Բալ	15	450	5	33,750	87	500	3	130,50
4	Սալոր	5.3	250	5	6,625	70	500	5	175,000
5	Դեղձ	7.3	400	3	8,760	60	640	3	115,200
6	Ընկույզ	50	1,000	6	300,000	77	1,300	8	800,800
7	Տանձ	11.7	450	6	31,590	73	860	5	313,900
8	Սերկևիլ	18.6	500	5	46,500	50	500	5	125,000
9	Կեռաս	8.8	450	3	11,880	70	700	5	269,500

Աղյուսակ 5. Խաղողի բերքի համար փոխհատուցման գումարի համեմատությունը

	Տեսակը	Մար-Մոս				Խորհրդատու			
		Արտադրող ակնառություն /կգ/ 2010	Միավորի արժեք /ՀՀ դրամ/ 2010 թ	Արտադրողական տարիքի և հասնելու և համար պահանջ վող տարիներ	Փոխհատուցման գումար (ՀՀ դրամ)	Արտադրողականության թիվ (կգ) (2008- 2010թթ)	Միավորի արժեք (1կգ /ՀՀ դրամ ) 2011 թ	Արտադրողականության թիվ և համար պահանջ վող տարիներ	Փոխհատուցման գումար (ՀՀ դրամ)
	Խաղող	0.85	300	4	1,020	0.75	450	3	1,013

22. երկու գնահատումների միջև տարբերությունները պայմանավորված են մի քանի գործոններով՝

1. Արդեն նշված տարբերությունը երկու գնահատողներին AMAD-ի կողմից տրամադրված պտղաբերությանը վերաբերող տվյալները 2010 թ-ի համար, որտեղ երկու գնահատումները մասնակի համընկնում են;

2. Ծառերը վերաաճեցնելու համար պահանջվող տարիների տարբերությունը

3. Այն փաստը, որ ԱԶԲ-ի խորհրդատուի՝ արտադրողականությանը վերաբերող տվյալները հիմնված են 3 տարվա միջինի վրա, կարող է ճիշտ փոխհատուցել 2010թ-ի ցածր արտադրողականությունը, և

4. շուկայական արժեքների միջև 2010թ-ի (Մար-Մոսի կողմից օգտագործված) և 2011թ-ի (ԱԶԲ խորհրդատուի կողմից օգտագործված) միջև տարբերությունները

**23. Տարեկան բերքի վերագնահատման արդյունքները.** Մար-Մոսը և Խորհրդատուն կիրառել են նույն մոտեցումը՝ բերքի արժեքները հաշվարկելու համար: Այնուամենայնիվ, առաջինը օգտագործել է 2010թ-ի պտղաբերության տվյալներն ու շուկայական արժեքները, իսկ երկրորդը միջինացրել է պտղաբերության տվյալները 3 տարիների համար (2008, 2009, 2010թթ) և օգտագործել է 2011թ-ի շուկայական արժեքները (ազդեցությանը նախորդող տարի): Չնայած CIT-ի տրամադրած պտղաբերության տվյալների միջև տարբերությունների, թվերը էապես չեն տարբերվում (տես Աղյուսակ 7)

**Աղյուսակ 6. 2008-2010թթ-ի մշակաբույսերի միջին տարեկան արտադրողականությունը**

Տեսակ	Մար-Մոս	ԱԶԲ Խորհրդատու			
	բերք (կգ/մ2) 2010թ	բերք (կգ/մ2) 2008թ	բերք (կգ/մ2) 2009թ	բերք (կգ/մ2) 2010թ	Միջինը (կգ/մ2) 2008-2010թթ
1.ցորեն	0.30	0.23	0.22	0.24	0.22
2.գարի	0.30	0.21	0.22	0.21	0.21
3.առվույտ	0.85	0.18	0.20	0.22	0.20
4.լոլիկ	2.40	2.50	2.40	2.50	2.50
5. Ներկայումս այնպիսի հաղորդակցուղիները, ինչպիսիք են ոռոգման և ջրամատակարարման համակարգերը, Տրանշ-2-ի Կոշի և Շամիրամի 7 կիլոմետրանոց հատվածում (40+000-կմ 47+400 կմ, Աշտարակից ձախ կողմ) դեռևս չեն տեղափոխվել, քանի որ այն կհանգեցնի ՀՕՏ ազդեցությունների, ինչն, իր հերթին, պետք է նախ չափվի, գնահատվի և համապատասխանաբար փոխհատուցվի՝ մինչև դրանց տեղափոխումը: Տրանշի ողջ երկայնքով՝ ՕԳ-ներում կտեղադրվեն կապի մալուխներ հողային աշխատանքների (փորում, հավասարեցում) ավարտից հետո՝ մալուխները չվնասելու երաշխիք ստեղծելու նպատակով: Էլեկտրական սյուները և գազի խողովակները ամբողջովին տեղադրված են:

### 1.3 Ծրջանակը և նպատակները

6. Սույն Լրացում 1-ի հիմնական նպատակն է գնահատել սոցիալական ազդեցությունը և բացահայտել այն անձանց, որոնց վրա ազդեցություն կունենա Փուլ 1-ի շրջանակներում իրականացվող հանրային ենթակառուցվածքների տեղափոխումը (ՏԵՍ Աղյուսակ 1), փոխհատուցել նրանց կորուստները մինչև հանրային հաղորդակցուղիների տեղափոխումը, և օգնել նրանց վերականգնել իրենց կենսապահովման միջոցները՝ համաձայն ԱՉԲ-ի 2009 թվականի ԱՄԲ պահանջների և դրույթների, հաստատված Տրանշ-2-ի ՀՕՏ-ի և ազդեցության ենթարկված անձանց (ԱԵԱ) առանձին խմբերի իրավունքներին առնչվող ՀՀ կառավարության նոր որոշումների:

7. Լրացում 1-ի ծավալները ներառում են. (i) Ամբողջ ազդակիր գույքի և բոլոր ակտիվների մանրամասն չափագրման հետազոտություն (ՄՉՀ), (ii) ԱԵԱ պրոֆիլը՝ բնակչության մարդահամարի միջոցով, (iii) տարաբնակեցման բյուջեն, (iv) ազդեցության ենթարկված անձանց հետ խորհրդակցություններ և տեղեկատվության հրապարակում, (v) բողոքների լուծման մեխանիզմ, (vi) Լրացում 1-ի իրականացման մոնիտորինգի իրականացման միջոցառումներ:

8. Ելնելով Ծրագրի իրականացման նպատակահարմարությունից՝ Տրանշ 2-ի շրջանակներում հանրային ծառայությունների տեղափոխման հետազոտությունը իրականացվելու է, և ազդեցությունները փաստաթղթավորվելու են երեք փուլով (տե՛ս Աղյուսակ 1): Առաջին փուլը ներառված է սույն Լրացում 1-ում: Երկրորդ փուլի գրասենյակային ուսումնասիրությունը արդեն սկսվել է, և կորոշվեն այն ենթահատվածները, որոնց համար կպահանջվի ՏՀՄ-ի և/կամ Լրացում 3-ի մշակումը: Երրորդ փուլի հանրային հաղորդակցուղիներն արդեն ներառված են նոր ուղեանցի ՕԳ-ում, որի համար պատրաստվել է Լրացում 2-ը:

Աղյուսակ 1. Տրանշ 2-ի հաղորդակցուղիների տեղափոխման հատվածները

Փուլ	Հատված	Սկիզբ	Ավարտ	ՀՕՏ Փաստաթուղթ
1.	7կմ (ձախ կողմ)	կմ 40+000	կմ 47+400	Լրացում 1
2.	T2-7կմ (ձախ կողմ)	կմ 37+544- կմ40+000	կմ 47+400-կմ 71+500	Լրացում 3 /ՏՀՄ/
3.	Ագարակի շրջանցի հատված 8կմ	կմ 29+600	կմ 37+544	Լրացում 2

9. Հաշվի առնելով Կապալառուին ՀՕՏ ազատ տարածքի տրամադրման հրատապությունը՝ 7 կմ հատվածի համար Լրացում 1-ի պատրաստումը դարձել է առաջնային խնդիր: Բացի ձախ կողմում հայտնաբերված ազդեցություններից, սույն Լրացում 1-ը ներառում 7 կմ հատվածի աջ կողմում 1 ազդակիր ԱԵԱ (ԱԵԱ-ն բողոք է ներկայացրել ՃԴ խնդրելով փոխհատուցել վնասը: Նշված սեփականության գույքագրումն իրականացվել է 27.12.2017թ.: Գույքագրման արդյունքները փաստաթղթավորվել են, վնասված ծառերի և բարելավումների նկարագրության արձանագրությունը պատրաստվել և ստորագրվել է դաշտային այցելության բոլոր մասնակիցների կողմից: Արձանագրության մեկ օրինակը պաշտոնապես տրամադրվել է սեփականատիրոջը ՃԴ կողմից:) (43+15 կմ 43+180 կմ), որին վնաս է պատճառվել օժանդակ Էլեկտրական սյան տեղադրման արդյունքում:

## 2. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

### 2.1 Մեթոդաբանություն

10. Սույն Լրացում 1-ի ներքո ազդեցության գնահատման նպատակով իրականացվող քայլերը հետևյալն են.
- ա) ՀՕՏ սահմանի որոշումը. կմ 47+400 – կմ 40 + 000 հատվածի ձախ կողմում հաղորդակցուղիների տեղափոխման հետևանքով առաջացած ազդեցությունը որոշելու նպատակով կապալառուի կողմից սահմանվել է ՀՕՏ սահմանը, որը ներառում է ջրի և գազի խողովակաշարերի, կապի մալուխների և ոռոգման համակարգերի համար անհրաժեշտ տարածքները: Էլեկտրական սյուների ՀՕՏ-սահմանն արդեն որոշվել է հաղորդակցուղիների Նախագծողի կողմից: Ճշգրիտ ՕԳ-ի որոշման համար բոլոր տեսակի հաղորդակցուղիների առանձին նախագծերը միացվել են մեկ ֆայլում, որտեղ վերջին հաղորդակցուղու սահմանը նշագրվել է որպես ՀՕՏ-սահման: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ծրագրի ներքո Տրանշ-2-ի ՀՕՏԾ-ի ՕԳ-ն հիմնված էր ճանապարհի նախագծի +1մ լուսանցք՝ ծածկի գագաթնամասից կամ թեքատի վերին մասից ճանապարհային նախագծման վրա, 7կմ հատվածի համար նախատեսված նոր ՕԳ-ն որոշվել է հաղորդակցուղիների և արդեն իսկ իրականացված ՀՕՏԾ-ի վերադիր սահմանների արդյունքներով:
  - բ) Ազդակիր սեփականության ցանկի պատրաստումը. ՀՕՏ սահմանի՝ պաշտոնապես պահանջված կադաստրային քարտեզի հետ համադրման արդյունքում ստացվել է ազդեցության ենթարկված լոտ-ծածկագրերի ցանկ: ՀՕՏ-ի սահմանների հիման վրա ստացված լոտ-ծածկագրերի ցանկը համեմատվել է ՀՕՏԾ-ի շրջանակներում արդեն իսկ օտարված սեփականության ցանկի հետ՝ նպատակ ունենալով պարզել (i) մասնակի, (ii)ամբողջությամբ օտարված, ինչպես նաև ազդեցությանը նոր ենթարկված սեփականության օբյեկտների ցանկը: Ազդակիր սեփականության վերաբերյալ տեղեկատվությունը (իրավական կարգավիճակ, սեփականատիրոջ/վարձակալի անվանում, հողամասի/շինության մակերես և տարածք, նպատակային և գործառնական նշանակություն և այլն) ձեռք է բերվել ՀՕՏ վերաբերյալ փաստաթղթերի լրակազմման ընթացքում համայնքների ղեկավարներից և ԱԵԱ-ներից: Հավաքագրված տեղեկատվությունը համեմատվել է ՃԴ-ին՝ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված պաշտոնական տեղեկատվության հետ:
  - գ) Դաշտային այցելությունները. Գրասենյակային աշխատանքի տվյալների հիման վրա հայտնաբերված ազդեցությունը դաշտային այցելությունների ընթացքում ստուգվել է ուսումնասիրման խմբի ներկայացուցիչների (չափագրման, գույքագրման մասնագետների և գյուղատնտեսի, գնահատողների և այլոց) կողմից, ՃԴ ինժեների մասնակցությամբ, որի հիման վրա էլ Լրացման համար որոշվել են համապատասխան հատվածները:
11. Գույքի և ազդակիր տնային տնտեսությունների հետազոտումը. Սույն Լրացում 1-ում ներառված

ազդեցությունները դեռևս չեն արտացոլում շինարարական աշխատանքների արդյունքում առաջացած վնասները, այլ ճշգրտորեն չափվել, գույքագրվել և գնահատվել են փաստացի պայմանների հիման վրա: Ազդեցության յուրաքանչյուր տեսակի համար նախատեսված փոխհատուցումը հաշվարկվել է Տրանշ-2-ի ՀՕՏԾ-ով հաստատված իրավունքների մատրիցայի հիման վրա: Տվյալներն այս փաստաթղթի համար ձևավորվել են 2018 թվականի ապրիլ-մայիս և օգոստոս ամիսներին, ինչպես նաև 2019 թվականի հունվար ամսին: Ազդեցության աստիճանի պատշաճ և ճշգրիտ գնահատման համար իրականացվել են հետևյալ հետազոտությունները.

ա. Կադաստրային քարտեզի չափագրումներ՝ ազդեցության ենթարկված հողատարածքների, շինության և մշակաբույսերի մակերեսները չափագրելու նպատակով:

բ. ԱԵԱ-ների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ շարունակական խորհրդակցություններ՝ ազդակիր հողերի սեփականատերերին, վարձակալներին և իրական հոգօգտագործողներին պարզելու նպատակով:

գ. Կորուստների գույքագրում՝ օտարվող հողի, շինության, ծառերի, մշակաբույսերի, ցանկապատերի և բարելավումների բնութագրերը պարզելու և գնահատելու նպատակով:

դ. Մարդահամար՝ ԱԵՏՏ և դրանց անդամների, ներառյալ այնպիսի տարրական սոցիալական բնութագրերն, ինչպիսիք են սեռը, տարիքը, կրթությունը, զբաղվածությունը և այլն, ճշգրիտ քանակը պարզելու նպատակով:

ե. Ազդակիր գույքի տեղափոխման ծախսերի գնահատում՝ կորսված գույքի, եկամտի և այլ կենսապահովման միջոցների աղբյուրների և ֆինանսական հոսքերի փոխհատուցման արժեքների պարզում՝ Լրացում 1-ի բյուջեն կազմելու նպատակով:

## 2.2 Ազդեցության գնահատում

12. Փուլ 1-ի շրջանակներում հաղորդակցուղիների տեղափոխման հետևանքով առաջացած ազդեցություններ. Ազդեցության են ենթարկվել ընդհանուր առմամբ 80 հող՝ 20,315.38մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով, որից 6,950.43մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով 29 հողերը մասնավոր են, 12,625.18մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով 49 հողեր համայնքային են, իսկ 739.77մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով 2 հողեր պետության սեփականությունն են հանդիսանում (տե՛ս Աղյուսակ 2):

ա) Մասնավոր հողեր. Բոլոր 29 մասնավոր հողերն իրենց 56 (56 ԵԱՏՏ-ներից 54 ԱԵՏՏ-ները սեփականատեր են, իսկ 2 ԱԵՏՏ-ները՝ 2 մասնավոր պտղատու այգիների չգրանցված օգտատերեր:) ԱԵՏՏ-ներով գտնվում են Կոշ համայնքում: Մասնավոր հողերից 17-ը վարելահողեր են (3,587.59մ<sup>2</sup>), 9-ը հանդիսանում են պտղատու այգիներ (2,535.47մ<sup>2</sup>), որից 2-ն (725.01մ<sup>2</sup>) օգտագործվում են ապօրինի՝ 2 ԱԵՏՏ-ների կողմից, 1-ը հանդիսանում է արոտավայր (680.26մ<sup>2</sup>), 1-ը դասվում է այլ հողերի կարգին (138.11մ<sup>2</sup>), իսկ 1-ն առևտրային/կոմերցիոն նշանակության հող է (9մ<sup>2</sup>), որը ծառայում է որպես բաց տարածք հիմնական ճանապարհի և բիզնեսի (հյուրանոցի) միջև:

բ) Համայնքային հողեր. 49 համայնքային հողակտորներից 39-ը (10,929,14 մ<sup>2</sup>) գտնվում են Կոշ համայնքում, իսկ 10-ը (1,696,04մ<sup>2</sup>) Շամիրամ համայնքում: Շամիրամում գտնվող 10 հողակտորներից 5-ը արոտավայրեր են (1,337.54մ<sup>2</sup>), իսկ մյուս 5-ը դասվում են այլ հողերի կատեգորիային (358.50մ<sup>2</sup>): Համայնքային այս հողակտորներից որևէ մեկը վարձակալության տրված չէ կամ չգրանցված օգտագործողի կողմից ապօրինի չի օգտագործվում: Կոշ համայնքի 39 համայնքային հողակտորներից 16-ը ճանապարհային հողեր են (850.52մ<sup>2</sup>), 15-ը դասվում են այլ հողերի կատեգորիային (8,298.17մ<sup>2</sup>), 2-ն արոտավայրեր են (588.73մ<sup>2</sup>), 3-ը վարելահողեր են (794մ<sup>2</sup>), 1-ն արդյունաբերական նշանակության է (274.33մ<sup>2</sup>), 1-ը՝ ենթակառուցվածքային նշանակության (95.99մ<sup>2</sup>), և 1-ը՝ ջրանցք/ ջրահուն է (27.4մ<sup>2</sup>): Համայնքային 39 հողակտորներից 5-ը վարձակալված են (1,566.83 մ<sup>2</sup>), որից 637.13մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով 2 հողակտոր ապօրինի օգտագործվում է 2 չգրանցված ԱԵԱ-ների կողմից՝ որպես վարելահող

և այլ նշանակության հողեր: Բացի այդ, 4 հողակտոր ապօրինի օգտագործվում է 4 չգրանցված ԱԵԱ-ների կողմից, որոնցից 3-ը հանդիսանում են պտղատու ծառերով այլ հողեր, իսկ 1-ը՝ ճանապարհային հող՝ պտղատու և դեկորատիվ ծառերով (ինչպես նկարագրված է պարբերություն 13-ի (բ)-(դ) կետերում ստորև): գ) Պետական հողեր. Ազդեցության է ենթարկվել 2 պետական հող՝ 739.77մ<sup>2</sup> մակերեսով: Մեկը գտնվում է Շամիրամում (16.5մ<sup>2</sup> արտավայր), իսկ մյուսը՝ Կոշում (723.27մ<sup>2</sup> արդյունաբերական նշանակության հող), որից 203.9 մ<sup>2</sup> ապօրինի օգտագործվում է 1 ԱԵՏՏ կողմից որպես իրավաբանական անձ (ինչպես նկարագրված է պարբերություն 13-ի (ե) կետում ստորև):

13. Ընդհանուր առմամբ, 8 ԱԵՏՏ-ներ ապօրինի օգտագործում են 9 հող, որոնցից.

ա) 2 ԱԵՏՏ օգտագործում են 2 մասնավոր սեփականություն հանդիսացող հող. 1 հողի սեփականատերերը ՀՀ-ից դուրս են, իսկ մյուս հողի 3 սեփականատերերը ՀՀ-ից դուրս են, և 2-ն էլ ապրում են Երևանում: 2 ապօրինի օգտագործողներն էլ սեփականատերերի մտերիմ հարազատներն են (եղբայր և հորեղբայր) և նրանք օգտագործում են հողակտորները որպես պտղատու այգի և խաղողի այգի:

բ) 3 ԱԵՏՏ օգտագործում են 3 համայնքային հող, որոնցից 2-ը այլ նշանակության են՝ պտղատու ծառերով և 1-ը ճանապարհային հող է՝ պտղատու և դեկորատիվ ծառերով:

գ) 1 ԱԵՏՏ օգտագործում է և՛ համայնքային սեփականություն հանդիսացող, և՛ վարձակալված հողեր: Առկա է բանավոր պայմանավորվածություն վարձակալի և ապօրինի օգտագործողի միջև հողօգտագործման վերաբերյալ: Համայնքային հողը այլ նշանակության հող է՝ պտղատու ծառերով, իսկ վարձակալված հողը՝ վարելահող է:

դ) 1 ԱԵՏՏ օգտագործում է 1 վարձակալված այլ նշանակության մշակաբույսերով հող՝ վարձակալի հետ ունեցած բանավոր պայմանավորվածության հիման վրա:

ե) 1 ԱԵՏՏ օգտագործում է 1 պետական սեփականություն հանդիսացող հող: Ապօրինի օգտագործողը իրավաբանական անձ է: «Աշտարակ քարհանք» ԲԲԸ-ն գործում է որպես քարհանք իր մասնավոր սեփական հողի վրա, բայց նրանք ունեն նաև օժանդակ կառույց, որը գտնվում է վարձակալված հողի սահմաններից դուրս և տեղակայված է նշված պետական սեփականություն հանդիսացող հողի վրա:

14. Չգրանցված/ապօրինի օգտագործող հանդիսացող բոլոր ԱԵԱ-ները կստանան վերականգնման նպաստ՝ հիմք ընդունելով հողի զբաղեցման տարիների քանակը:

Աղյուսակ 2. Ազդեցություն հողերի վրա

Օգտագործման տեսակ	Մասնավոր հող		Համայնքային հող				Պետական հող		Ընդամենը		
	Սեփական		Համայնքի սեփ. հողեր		Համայնքի սեփ. և վարձ. հողեր		ՀՀ				
	Հ/կտ	Ազդակիր տարածք	Հ/կտ	Ազդակիր տարածք	Հ/կտ	Ազդակիր տարածք	Հ/կտ	Ազդակիր տարածք	Հ/կտ	Ազդակիր տարածք	ԱԵՏՏ
	N	մ <sup>2</sup>	N	մ <sup>2</sup>	N	մ <sup>2</sup>	N	մ <sup>2</sup>	N	մ <sup>2</sup>	N
<b>Ա. Կոշ</b>											
Արոտավայր	1	680.26	2	588.73	-	-	-	-	3	1,268.99	1
Պտղատու այգի	9	2,535.47	-	-	-	-	-	-	9	2,535.47	25
Վարելահող	17	3,587.59	3	794.00	4	1,292.50	-	-	20	4,381.59	31
Ճանապարհ	-	-	16	850.52	-	-	-	-	16	850.52	1
Այլ	1	138.11	15	8,298.17	-	-	-	-	16	8,436.28	4
Կոմերցիոն/առևտրային	1	9	-	-	-	-	-	-	1	9.00	-
Արդյունաբերական	-	-	1	274.33	1	274.33	1	723.27	2	997.60	1
Ենթակառուցվածք	-	-	1	95.99	-	-	-	-	1	95.99	-
Ջուր	-	-	1	27.40	-	-	-	-	1	27.40	-
<b>Ընդամենը Ա.</b>	<b>29</b>	<b>6,950.43</b>	<b>39</b>	<b>10,929.14</b>	<b>5</b>	<b>1,566.83</b>	<b>1</b>	<b>723.27</b>	<b>69</b>	<b>18,602.84</b>	<b>63</b>
<b>Բ. Շամիրամ</b>											
Արոտավայր	-	-	5	1,337.54	-	-	1	16.50	6	1,354.04	-
Այլ	-	-	5	358.50	-	-	-	-	5	358.50	-
<b>Ընդամենը Բ.</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>10</b>	<b>1,696.04</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>1</b>	<b>16.50</b>	<b>11</b>	<b>1,712.54</b>	<b>-</b>
<b>Ընդհանուր</b>	<b>29</b>	<b>6,950.43</b>	<b>49</b>	<b>12,625.18</b>	<b>5</b>	<b>1,566.83</b>	<b>2</b>	<b>739.77</b>	<b>80</b>	<b>20,315.38</b>	<b>63</b>



15. Ազդեցության են ենթարկված նաև 2 արդյունաբերական հողակտորի վրա տեղակայված 226.52 մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով երկու (2) քարե շինություն, որոնցից 79.09մ<sup>2</sup> օրինական է, իսկ 147.43մ<sup>2</sup> ապօրինի: Նշվածները հանքի օժանդակ կառույցներն են և ազդեցության են ենթարկվում Կոշում 10 ԿՎ էլեկտրահաղորդիչ գծերի էլեկտրասյան տեղադրմամբ պայմանավորված:

Աղյուսակ 3. Ազդեցությունը շինությունների վրա

Կառույցի/շինության տեսակը	Նյութը	Հ/կտ	Ծինություն/Կառույց	Օրինական	Ապօրինի	Ընդամենը
		N	N	մ <sup>2</sup>	մ <sup>2</sup>	մ <sup>2</sup>
Օժանդակ կառույց	Քար	2	2	79.09	147.43	226.52

16. Ազդեցության կենթարկվեն նաև պտղատու այգիներում և վարելահողերում ԱԵԱ-ների կողմից կատարված այլ բարելավումները, մասնավորապես 2 մասնավոր հողամասերում խաղող աճեցնելու նպատակով տեղադրված 6 բետոնե սյուները (պտղատու այգի) և 194 գծ/մ հաղորդալարը բետոնե սյունով 4 հողամասերում, որոնցից 2-ը պտղատու այգիներ են, 1-ը՝ վարելահող, իսկ 1-ը՝ այլ նշանակության հող (տե՛ս Աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Ազդեցությունը բարելավումների վրա

Տեսակը	Նյութը	Հ/կտ	Երկարություն	N
		No	M	
Սյուն	Բետոնե	2	-	36
Լար և սյուն	Երկաթբետոնե	4	194	-
Ընդամենը		6	194	36

17. 2,187.41մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով մշակաբույսեր ազդեցության են ենթարկվում 8 հողերում, որոնցից 1,234.62մ<sup>2</sup> առվույտ է, 588.71մ<sup>2</sup> կորնզան է, իսկ 341մ<sup>2</sup> ելակ: Մշակաբույսերի ընդհանուր կորուստը կազմում է 5,665.29կգ:

Աղյուսակ 5. Ազդեցությունը մշակաբույսերի վրա

Ցանքի/մշակաբույսի տեսակը	Տարեկան արտադրողական.	Ազդակիր տարածք	Ընդհանուր կորուստ
	կգ/ մ <sup>2</sup>	մ <sup>2</sup>	կգ
Ելակ	8.25	341.00	2,813.25
Առվույտ	1.94	1,257.70	2,439.94
Կորնզան	0.70	588.71	412.30
Ընդամենը	-	2,187.41	5,665.29

18. 18 հողամասերում առկա է ազդեցությանը ենթարկված 419 պտղատու ծառ, որոնցից 16-ը տնկիներ են, 65-ը՝ դեռևս ոչ բերքատու, իսկ 338-ը՝ բերքատու ծառեր են: Ամենատարածվածը խաղողն է (208), խնձորենիները (88), ընկուզենիները (58), ծիրանը (14) և տանձը (14):

Աղյուսակ 6. Ազդեցությունը պտղատու ծառերի վրա

Տեսակ	Տնկիներ	Դեռևս ոչ բերքատու	Բերքատու	Ընդամենը
	Ծառեր	Ծառեր	Ծառեր	Ծառեր
	No.	No.	No.	No.
Ա.Պտղատու թփեր				

Մասուր	-	7	-	7
<b>Բ. Պտղատու ծառեր</b>				
Դեղձ	-	-	8	8
Ընկույզ	-	36	22	58
Թուր	6	-	4	10
Խաղող	-	5	203	208
Խնձոր	-	2	86	88
Ծիրան	6	-	8	14
Շյուր	-	-	7	7
Սալոր	1	1	-	2
Սերկևիլ	-	1	-	1
Տանձ	1	13	-	14
Պնդուկ	2	-	-	2
<b>Ընդամենը</b>	<b>16</b>	<b>65</b>	<b>338</b>	<b>419</b>

19. Ընդհանուր առմամբ, 5 հողամասում ազդեցության է ենթարկվել 39 փայտանյութ տվող ծառ, որոնցից 15-ը փոքր են, 13-ը՝ միջին չափսի, իսկ 11-ը՝ ամբողջովին հասուն: Տարբերակվել է փայտանյութ տվող ծառերի երեք տեսակ. ուռենի (35), թեղի (3) և ակացիա (1): Մեկ հողամասում ազդեցության է ենթարկվում երկու (2) վարդի թուփ (դեկորատիվ թփեր) (Տե՛ս Աղյուսակ 7):

Աղյուսակ 7. Ազդեցությունը փայտանյութ տվող ծառերի վրա

Տեսակ	Փոքր (մինչև 12 սմ տրամագիծ)	Միջին (13- 22սմ տրամագիծ)	Ամբողջովին հասուն (22սմ+)	Ընդամենը
	No	No	No	No
Ակացիա	-	1	-	1
Թեղի	1	1	1	3
Ուռենի	14	11	10	35
<b>Ընդամենը</b>	<b>15</b>	<b>13</b>	<b>11</b>	<b>39</b>

### 2.3 Խիստ ազդակիր և խոցելի ԱԵՏՏ-ներ

20. Մարդահամարի արդյունքում հայտնաբերվել են 4 խոցելի ԱԵՏՏ-ներ: Մեկ ԱԵՏՏ աղքատ է, մյուսն՝ աղքատ և ղեկավարվում է կնոջ կողմից, իսկ 2-ը ղեկավարվում են կանանց կողմից: Բոլոր աղքատ ԱԵՏՏ-ները գրանցված են Ընտանիքների ապահովության գնահատման համակարգում (ԸԱԳՀ) (Տեղեկատվությունը ստուգվել է՝ հիմք ընդունելով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայքում տեղադրված խոցելի ԱԵՏՏ-ների ցանկը): Բացի այդ, 7 ԱԵՏՏ-ներ խիստ ազդակիր են, քանի որ նրանք կորցնում են գյուղատնտեսական եկամտի 10-ը կամ ավելի տոկոսը: Բոլոր խիստ ազդակիր ԱԵՏՏ-ները նախկինում նույնպես ենթարկվել են Ծրագրի ազդեցությանը: Խիստ ազդեցությանը ենթարկված ԱԵՏՏ-ներից ոչ մեկը խոցելի չէ:

### 2.4 Ազդեցությունների ամփոփում

21. Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների (ԱԵՏՏ-ներ) տարբեր կատեգորիաների և ազդեցության ենթակա անձանց (ԱԵԱ-ներ) թիվն ըստ ազդեցության տեսակների, ինչպես նաև կրկնակի

հաշվարկից գատ վերջնական թվերը ներկայացված են ԱԵՏՏ-ների/ԱԵԱ-ների ամփոփ Աղյուսակ 8-ում:  
 Աղյուսակ 8. Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների/ Անձանց վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն՝  
 ըստ ազդեցության տեսակների

Ազդեցության կատեգորիա	Ազդեցության տեսակ		ԱԵՏՏ՝ ըստ ազդեց-ն տեսակի	ԱԵԱ՝ ըստ ազդեց-ն տեսակի	ԱԵՏՏ՝ առանց կրկնակի հաշվարկի	ԱԵԱ- ների գուտ քանակ	Նշումներ
	№	մ²/զծ.մ.	№	№	№	№	
Ա1. Մասնավոր հող	29	6,950.43	56	123	56	123	-
Ա2. Համայնքային հող	49	13,917.68	8	27	7	21	1 ԱԵՏՏ ներառված է Ա1-ում
Ա3. Պետական հող	1	723.27	1	1	0	0	1 ԱԵՏՏ ներառված է Ա2-ում
Բ. Շինություն	2	79.09	1	1	-	-	ԱԵՏՏ-ն ներառված է Ա2-ում
Գ. Ցանկապատ	1	2	1	1	-	-	ԱԵՏՏ-ն ներառված է Ա1-ում
Դ. Բարելավումներ	36	214	15	37	-	-	14 ԱԵՏՏ ներառված է Ա1-ում ,1 ԱԵՏՏ ներառված է Ա2-ում
Ե. Մշակարույսեր	-	2,771.97	8	26	-	-	5 ԱԵՏՏ ներառված է Ա1-ում 3 ԱԵՏՏ ներառված է Ա2-ում
Զ. Պտղատու ծառեր	427	-	35	75	-	-	Բոլոր ԱԵՏՏ-
Է. Փայտանյութ տվող ծառեր	39	-	8	25	-	-	ները ներառված են Ա1 և Ա2-ում
Ը. Դեկորատիվ ծառեր	2	-	1	6	-	-	
Թ. Խոցելի ԱԵՏՏ-ներ	-	-	4	12	-	-	Բոլոր ԱԵՏՏ-ները ներառված են Ա-ում
Ժ. Խիստ ազդակիր ԱԵՏՏ-ներ	-	-	7	27	-	-	5 ԱԵՏՏ ներառված է Ա1-ում 2 ԱԵՏՏ ներառված է Ա2-ում
Ընդամենը			-	-	63	144	-

## 2.5 Ազդակիր տնտեսությունների մարդահամար

22. ԱԵՏՏ-ների համընդհանուր պատկերը ստանալու նպատակով 2018թ. սեպտեմբերի 3-ից 26-ը անցկացվել է մարդահամար: ԱԵՏՏ-ների ընդհանուր քանակը կազմում է 63 (144 ԱԵԱ). 63 (35 ԱԵՏՏ-ներ չեն ուսումնասիրվել, քանի որ 26 ԱԵՏՏ-ների անդամները գտնվում էին ՀՀ-ից դուրս և հասանելի չէին մարդահամարի համար, 1 ԱԵՏՏ նույնպես հասանելի չէր ուսումնասիրության համար, 8 ԱԵՏՏ-ների անդամները հրաժարվել էին պատասխանել հարցերին՝ հետևյալ պատճառաբանությամբ. ա) ես չեմ ցանկանում տրամադրել անձնական բնույթի տեղեկություններ, բ) ես կարևորություն չեմ տալիս այս ուսումնասիրությանը, և գ) ընդհանրապես դեմ եմ Ծրագրի իրականացմանը) ԱԵՏՏ-ներից մարդահամարում ընդգրկվել է միայն 28-ը (124 ԱԵԱ): Աղքատ ընտանիքների նույնականացումն իրականացվել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայքում հրապարակված տվյալների հիման վրա: Այսպիսով բոլոր ԱԵԱ-ները, անկախ հետազոտման մեջ ընդգրկված լինելու կարգավիճակից, ստուգվել են հատ առ հատ: Հարցման չմասնակցած 35 ԱԵՏՏ-ներից 26-ը ՀՀ-ից դուրս են, նրանք այն հողերի համասեփականատերերն են, ովքեր իրենց ընտանիքների հետ մշտապես բնակվում են ՌԴ-ում: 8 ԱԵՏՏ հրաժարվել է մասնակցել հարցմանը՝ բանավոր հաստատելով իրենց ոչ խոցելի լինելը և որ չեն ցանկանում տրամադրել որևէ անձնական տեղեկատվություն: Միայն 1 ԱԵՏՏ անհասանելի է եղել հարցման համար: Այսպիսով, առավել խոցելի ԱԵՏՏ հայտնաբերելու հավանականությունը շատ փոքր է: Հենց որ անհասանելի և ՀՀ-ից դուրս գտնվող ԱԵՏՏ-ները հասանելի լինեն իրականացման փուլում, նրանց կտրամադրվի լրացուցիչ խորհրդատվություն: Իրականացման փուլի ընթացքում Խորհրդատուն կնախաձեռնի կոնտակտային տվյալները և պահանջվող տեղեկությունները ձեռք բերելու գործողություններ՝ արտերկրում բնակվող ԱԵԱ-ների լիազորված անձանց միջոցով: Հարկ է նշել, որ ուսումնասիրված բոլոր ԱԵՏՏ-ները գտնվում են Կոշույ, իսկ Շամիրամում ԱԵՏՏ-ներ չկան, քանի որ բոլոր ազդված հողերը համայնքային սեփականություն են հանդիսանում, և վարձակալված չեն կամ չեն օգտագործվում որևէ առանձին ՏՏ կողմից: Բոլոր ԱԵԱ-ները հայ են: Նրանցից մի կեսը կանայք են, իսկ մյուս կեսը՝ տղամարդիկ:

23. 28-ից 21 ԱԵՏՏ-ները ղեկավարում են հիմնականում 56-65, 66 և ավել տարիքային խմբերում ներկայացված տղամարդիկ: Ինչ վերաբերում է այդ տարիքային խմբերին, ապա 5 ԱԵՏՏ-ների ղեկավարները վարձու աշխատողներ են և չեն հասել կենսաթոշակային տարիքի, 6-ը՝ թոշակառուներ են, սակայն դեռ շարունակում են աշխատել, իսկ 6-ը՝ միայն թոշակառուներ: Տղամարդկանց կողմից ղեկավարվող մյուս 4 ԱԵՏՏ-ները ներկայացված են 18-35, 36-45 և 46-55 տարիքային խմբերում և պատկանում են ընտանիքի նուկլեար տեսակին, որտեղ եկամտի հիմնական աղբյուրն ապահովում է տնային տնտեսության ղեկավարը: Մնացած 6 ԱԵՏՏ-ը մեծ ընտանիքներ են՝ այրիացած թոշակառուի կամ գործազուրկ մոր հետ, որը բնակվում է եկամուտ հայթայթող և կերակրող որդիների, հարսների և թոռների հետ, իսկ 1-ը նուկլեար ընտանիք է՝ գործազուրկ մոր և կերակրող որդու հետ:

Աղյուսակ 9. ԱԵՏՏ-ների տարիքային բաժանում՝ ըստ սեռի

Տարիք	Արական	Իգական	Ընդ.
18-35	1	-	1
36-45	2	-	2
46-55	1	-	1
56-65	14	4	18
66 և ավելի	3	3	6
Ընդամենը	21	7	28

24. Ընդհանուր առմամբ, 124 ԱԵԱ-ներից միայն 42-ն են (33,87%) աշխատում, որոնցից 10-ը զբաղվում են գյուղատնտեսական ապրանքների արտադրությամբ և վաճառքով, 26 ԱԵԱ-ները վարձու

աշխատողներ են և կանոնավոր աշխատավարձ են ստանում, 2 ԱԵԱ ձեռնարկատիրական գործունեություն են ծավալում, 1 ԱԵԱ ինքնազբաղված է և 1 ԱԵԱ աշխատում է արտասահմանում: Մնացած 17 ԱԵԱ-ները (13,71%) կենսաթոշակառուներ են, 29 ԱԵԱ (23,39%) գործազուրկներ են, որոնցից միայն 18-ն են աշխատանք փնտրում, 21 ԱԵԱ (16,94%) աշակերտներ են կամ ուսանողներ, և 15 ԱԵԱ (12,10%) չափահաս չեն և աշխատունակ տարիքի չեն:

Աղյուսակ 10. Չբաղվածության կարգավիճակը

Չբաղվածության կարգավիճակ	No.	%
Աշխատող	42	33.87%
Թոշակառու	17	13.71%
Աշակերտ/Ուսանող	21	16.94%
Գործազուրկ (աշխատանք չեն փնտրում)	11	8.87%
Գործազուրկ (աշխատանք են փնտրում)	18	14.52%
Կիրառելի չէ	15	12.10%
Ընդամենը	124	100.00%

25. Թվով 24 ԱԵՏՏ-ների միջին եկամուտը կազմում է 175,675.42 դրամ: 4 ԱԵՏՏ-ներն ունեն զգալիորեն ավելի բարձր եկամուտ, որը տատանվում է 410,000.00-ից 555,000.00 դրամի սահմաններում: Երկու բարձր եկամուտ ունեցող ԱԵՏՏ իրենց եկամուտները ստանում են հիմնականում գյուղատնտեսական գործունեությունից: Երկուսն էլ ունեն մրգատու ծառերով պտղատու այգիներ: Նրանք զբաղվում են միրգ- պտուղների արտադրությամբ և վաճառքով, սակայն նրանցից միայն մեկն է ենթարկվել խիստ ազդեցության՝ կորցնելով գյուղատնտեսական եկամտի 10% - ը: Մնացած 2 բարձր եկամուտ ունեցող ԱԵՏՏ-ներն եկամուտ են ստանում այլ աղբյուրներից (ԱԵՏՏ եկամտի մոտ մեկ երրորդը աշխատավարձի հաշվին է), որը հիմնականում ծառայում է որպես իրենց տնային կարիքները հոգալու միջոց: Հարկ է նշել, որ գյուղատնտեսական եկամուտների համեմատ ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտը մեծ չէ և հավասարվում է աշխատավարձի: 1 ԱԵԱ ունի հացի փուռ և տարբեր տեսակի մրգերից օղի է թորում: Մեկ այլ ԱԵԱ ունի ավտոպահեստամասերի մի փոքր խանութ:

### 3. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎԱԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

#### 3.1 Ընդհանուր նկարագիր

26. ՀՕՏ-ի խնդիրները ՀՕՏԾ-ի սույն Լրացում 1-ի շրջանակներում կիրականացվեն համաձայն փոխհատուցման ստացման իրավագործության և իրավունքների շրջանակի, զուգահեռ Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենսդրության և ԱԶԲ-ի 2009 թվականի ԱՄՔՓ (Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթուղթ)-ի այնպես, ինչպես ներկայացված է Տրանշ 2-ի հաստատված ՀՕՏԾ-ով: Իրավունքների մատրիցան, որը վերաբերում է Լրացում 1-ի ազդեցություններին, բերված է ստորև՝ Աղյուսակ 11-ում: Ազդեցության որոշակի տեսակների և ԱԵԱ-ների որոշակի կատեգորիաների համար լրացուցիչ իրավունքներ, որոնք ավելացվել են ՀՀ Կառավարության կողմից, և ս ավելացվել են և հետևյալն են.

ա) Փոխհատուցման տրամադրում ոչ բնակելի ապօրինի շինության համար (ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի որոշմամբ). Վերականգնման օժանդակություն կտրամադրվի համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողերի վրա ապօրինի շինություն կառուցած ԱԵԱ-ին՝ ինքնակամ կառույցի փոխարինման արժեքի չափով՝ հանած օրինականացման ծախսերը:

Օժանդակությունը տրամադրվում է այն ԱԵԱ-ներին, որոնք ի վիճակի չեն օրինականացնել այդ ազդեցության ենթարկվող շինությունները:

բ) Տրանսպորտային ծախսերի փոխհատուցումը կտրամադրվի այն ԱԵԱ-ներին, որոնք ֆիզիկապես չեն տեղափոխվում, բայց ունեն որոշակի գույք, որը ենթակա է տեղափոխման՝ անկախ այդ գույքի նկատմամբ գոյություն ունեցող ֆորմալ իրավունքներից: Տրանսպորտային ծախսերը ծածկելու համար կտրամադրվի դրամական փոխհատուցում:

գ) Հաշմանդամ ԱԵԱ-ներին որպես խոցելի դիտարկելը. 6 ամսվա նվազագույն աշխատավարձին համարժեք դրամական օժանդակություն և առաջնահերթություն՝ նախագծի հետ կապված աշխատանքի ընդունելիս:

դ) Ոչ բնակելի շենքեր-շինություններից/գույքից օգտվելու իրավունքից բարելավումների առանձնացումը, քանի որ, հայկական դարձվածաբանային ձևակերպմամբ, բարելավումները կառուցվածքային բնույթ չունեն, և դրանց ձևակերպումը չի համապատասխանում Հայաստանի օրենսդրությանը: Այլ բարելավումների դիմաց, որոնք ներառված չեն այդ իրավագործության մատրիցայում, սակայն գոյություն ունեն ազդակիր հողի վրա (բացառությամբ շարժական գույքի), կտրամադրվի դրամական փոխհատուցում՝ փոխարինման արժեքով:

27. Գույքի, ներառյալ հողամասերի, շինությունների, ծառերի, մշակաբույսերի և այլ բարելավումների, գնահատումն իրականացվել է օտարման ամսաթվի դրությամբ՝ համապատասխան դրույքաչափերի և արժեքների հիման վրա:

Աղյուսակ 11. Իրավագործության մատրիցա

Կորստի տեսակ	Նկարագրություն	ԱԵԱ-ների սահմանում	Փոխհատուցում ստանալու իրավունքները	ԱԵՏՏ քանակ
1.Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողի կորուստ	ԱԵՏՏ, որը կորցնում է գյուղատնտեսական հող՝ անկախ խիստ ազդեցությունից:	Սեփականատեր	Դրամական փոխհատուցում՝ փոխարինման արժեքով, գնահատված շուկայական կամ կադաստրային արժեքով (որն ավելի բարձր է) գումարած 15%, կամ փոխանակում ԱԵԱ համար ընդունելի մեկ այլ հողով: Հողի շուկայի բացակայության դեպքում փոխհատուցումը կիրականացվի հիմք ընդունելով հողի տարեկան արտադրողականությունը՝ հաշվարկված տարիների այն քանակով, որը կապահովի ԱԵՏՏ-ի կորցրած հողի դիմաց վերականգնումը:	56
		Օրինականացման ենթակա անձ	Օրինականացման ենթակա ԱԵԱ-ները	0

Կորստի տեսակ	Նկարագրություն	ԱԵԱ-ների սահմանում	Փոխհատուցում ստանալու իրավունքները	ԱԵՏՏ քանակ
			օրինականացվելու են և ստանալու են նույն փոխհատուցումը, ինչ՝ սեփականատերերը:	
		Համայնքային կամ պետական հողի վարձակալ	Վարձակալը կփոխհատուցվի որպես լիարժեք սեփականատեր՝ փոխարինման արժեքով՝ գնահատված շուկայական կամ կադաստրային արժեքով (որն ավելի բարձր է) + 15%, կամ կտրվի նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ, նրանք կստանան փոխհատուցում, որը հավասար է «ազդակիր հողամասի շուկայական կամ կադաստրային արժեքին (որն ավելի բարձր է) + 15%» հետևյալ համամասնություններով՝ ըստ վարձակալության տևողության. 1) <1 տարի 5%; 2) <15 տարի 14%; 3) <25 տարի 20%; 4) > 25 տարի 25%:	2
		Օրինականացման ոչ ենթակա ԱԵԱ	Այս ԱԵԱ-ները կստանան վերականգնման օժանդակություն ազդեցության ենթարկված հողի շուկայական կամ կադաստրային արժեքի վրա (որն ավելի բարձր է)՝ հողի զբաղեցման տարիներին համամասնորեն՝ հետևյալ մասնաբաժիններով. 1) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%-ի չափով, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%-ի չափով, 3)	8

Կորստի տեսակ	Նկարագրություն	ԱԵԱ-ների սահմանում	Փոխհատուցում ստանալու իրավունքները	ԱԵՏՏ քանակ
			մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%-ի չափով, 4) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%-ի չափով:	
2. Բնակելի շինություններ		Բոլոր ԱԵՏՏ-ները անկախ օրինական կարգավիճակից	Ծենք, շինության կորստի դեպքում՝ դրամական փոխհատուցման տրամադրում փոխարինման արժեք գումարած 15%-ի չափով՝ առանց ամորտիզացիոն մասնահանումների և ապամոնտաժված շինանյութի, գործարքի համար ծախսերի նվազեցումների: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի համար, գումարած վերանորոգման արժեքը:	0
		Վերաբնակեցվող վարձակալներ	Վերաբնակեցման և խիստ ազդեցության օժանդակությունները, ինչպես ստորև 9-րդ և 10-րդ իրավունքի կետերը:	0
3. Ոչ բնակելի շինություններ/գույք		ԱԵՏՏ-ներ վավեր գրանցումով	Ծենք, շինության կորստի դեպքում՝ դրամական փոխհատուցման տրամադրում փոխարինման արժեք գումարած 15%-ի չափով՝ առանց ամորտիզացիոն մասնահանումների և ապամոնտաժված շինանյութի, գործարքի համար ծախսերի նվազեցումների: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է	1



Կորստի տեսակ	Նկարագրություն	ԱԵԱ-ների սահմանում	Փոխհատուցում ստանալու իրավունքները	ԱԵՏՏ քանակ
			շինության միայն ազդեցության ենթակա հատվածի համար, գումարած վերանորոգման արժեքը:	
		ԱԵՏՏ-ներ առանց վավեր գրանցման	Ինչպես նշված է վերևում, բայց շենքի օրինականացումից/ գրանցումից հետո շենքի օրինականացման/ գրանցման դեպքերում:	
		Վերաբնակեցվող վարձակալ	Արդեն վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի դրամական փոխհատուցում:	Կիրառելի չէ
4. Հանրային գույքի կորուստ	Համայնքային կամ պետական գույք	Համայնք/ պետություն	Ազդեցության ենթարկված շինության վերակառուցում և դրա գործառույթների վերականգնում համայնքի/ պետության իրավասու մարմնի համաձայնությամբ:	0
5. Մշակաբույսերի կորուստ	Ազդեցության ենթակա մշակաբույսեր	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ հողի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունքներից (ներառյալ իրավաբանական կարգավիճակ ստանալու ենթակա տերերը և բնակության կարգավիճակ չունեցող բնակիչները)	Մշակաբույսի փոխհատուցում՝ հաշվարկված շուկայական գներով՝ ակնկալվող համախառն բերքի համար:	8
6. Ծառերի կորուստ	Ազդեցության ենթարկված ծառեր	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ հողի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունքներից	Դրամական փոխհատուցում՝ հաշվարկված ծառի արժեքի շուկայական գներով՝ հիմնված ծառերի	36

Կորստի տեսակ	Նկարագրություն	ԱԵԱ-ների սահմանում	Փոխհատուցում ստանալու իրավունքները	ԱԵՏՏ քանակ
		(ներառյալ իրավաբանական կարգավիճակ ստանալու ենթակա տերերը և բնակության կարգավիճակ չունեցող բնակիչները)	տեսակի, տարիքի և բերքատվության վրա	
7.Ձեռնարկատիրական գործունեության կամ զբաղվածության կորուստ	Ձեռնարկատիրական գործունեության, զբաղվածության կորուստ	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական կարգավիճակից (ներառյալ իրավաբանական կարգավիճակ ստանալու ենթակա սեփականատերերը և բնակության կարգավիճակ չունեցող բնակիչները)	<p>Ձեռնարկատերեր</p> <p>1) մշտական ազդեցության դեպքում՝ 1 տարվա զուտ եկամտի կանխիկ հատուցում,</p> <p>2) ժամանակավոր ազդեցության դեպքում՝ զուտ եկամտի փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության ընդհատման ամիսների քանակով մինչև 1 տարի ժամանակահատվածի համար: Գնահատումն իրականացվում է հիմնված հարկային հայտարարագրի վրա: Հայտարարագրի բացակայության դեպքում ԱԵՏՏ-ն կստանա վերականգնման օժանդակություն չհարկվող աշխատավարձի մաքսիմումի վրա՝ հաշվարկված ձեռնարկատիրական գործունեության դադարեցման ամիսների քանակով՝ առավելագույնը մինչև 1 տարի: Մաքսիմում չհարկվող</p>	0

Կորստի տեսակ	Նկարագրություն	ԱԵԱ-ների սահմանում	Փոխհատուցում ստանալու իրավունքները	ԱԵՏՏ քանակ
			<p>աշխատավարձը հավասար է նվազագույն աշխատավարձին</p> <p>Մշտական աշխատողներ/ աշխատակիցներ. Փոխհատուցում, որը հավասար է. ա) աշխատանքի մշտական կորստի դեպքում 6 ամսվա նվազագույն աշխատավարձի. բ) Ժամանակավոր կորստի դեպքում՝ ամսական նվազագույն աշխատավարձին՝ աշխատատեղի կորստի ամիսների համար՝ մինչև 6 ամսվա համար</p>	
8. Օժանդակություն իխստ ազդեցությունների դեպքում	ԱԵՏՏ-ներ, որ կրել են գյուղատնտեսական եկամտի 10 և ավելի տոկոսի կորուստ կամ վերաբնակեցում	Իսխստ ազդեցության ենթարկված բոլոր ԱԵՏՏ-ներ, ներառյալ կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները	<p>ա) 1 լրացուցիչ մշակաբույսի փոխհատուցում՝ 1 տարվա բերքի չափով այն ԱԵԱ-ների համար, ովքեր կրել են իսխստ գյուղատնտեսական կորուստ</p> <p>բ) վերականգնման օժանդակություն 6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով՝ վերաբնակեցվող ԱԵՏՏ-ների համար</p>	7
9. Օժանդակություն վերաբնակեցման դեպքում	Տրանսպորտի/ տեղափոխումների ծախսեր	Տեղահանված բոլոր ԱԵՏՏ-ներ, ներառյալ վարձակալները	1 ամսվա տրանսպորտային ծախսերը և կենսապահովման ծախսերը հոգալու համար գումարի տրամադրում	0
10. Օժանդակություն խոցելի անձանց		ԱԵՏՏ-ներ, որոնք աղքատության սահմանագծից	6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով դրամական	4

Կորստի տեսակ	Նկարագրություն	ԱԵԱ-ների սահմանում	Փոխհատուցում ստանալու իրավունքները	ԱԵՏՏ քանակ
		ցածր կենսամակարդակ ունեն կամ կանանց կամ տարեց անձանց կողմից են ղեկավարվում	օժանդակության տրամադրում և Ծրագրի իրականացման հետ կապված աշխատատեղերի համար ընտրություն կատարելիս այս անձանց համար առաջնայնություն	
11. Ժամանակավոր ազդեցություններ		Բոլոր ԱԵՏՏ	Պատշաճ վարձակալություն և վերականգնման աջակցություն կտրամադրվի ժամանակավոր ազդեցություն կրող գույքի համար	0
12. ՀՕՏ չնախատեսված ազդեցություններ, եթե այդպիսիք լինեն			Ծրագրի իրականացման ընթացքում ՏԿԵՆ կանդրադառնա չնախատեսված ազդեցություններին և կհոգա դրանց հետ կապված փոխհատուցումը՝ ըստ վերոհիշյալ պայմանների	Կիրառելի չէ

### 3.2 Կորուստների փոխհատուցում

28. Մասնավոր հողերի սեփականատերերին և համայնքին վճարման ենթակա փոխհատուցումը հաշվարկվել է որպես շուկայական արժեք գումարած 15%, ինչը համապատասխանում է Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին ՀՀ օրենքին և Տրանշի 2-ի հաստատված ՀՕՏԾ-ին: Փոխհատուցման ընդհանուր արժեքը կազմում է 16,238,410.49 դրամ: Կոշի հողամասերի համար փոխհատուցումը կազմում է 15,348,873.19 դրամ, որից 9,435,304.52 դրամ գումարը կվճարվի մասնավոր հողի սեփականատերերին, իսկ 5,913,568.66 դրամ գումարը կտրամադրվի համայնքին: Շամիրամ համայնքին կվճարվի 889,537.31 դրամ:

Աղյուսակ 12. Փոխհատուցում մասնավոր և համայնքային հողերի դիմաց

Օգտագործման տեսակը	Կոշ					Շամիրամ					Ընդամենը				
	Հող	Ազդակիր տարածքը	Միավորի միջին զինը	Ընդհանուր արժեքը	Ընդհանուր փոխհատուցում (ներառյալ 15%)	Հող	Ազդակիր տարածքը	Միավորի միջին զինը	Ընդհանուր արժեքը	Ընդհանուր փոխհատուցում (ներառյալ 15%)	Հ/մ	Ազդակիր տարածքը	Միավորի միջին զինը	Ընդհանուր արժեքը	Ընդամենը փոխհատուցում (ներառյալ 15%)
	N	մ <sup>2</sup>	ՀՀԴր	ՀՀԴր	ՀՀԴր	N	մ <sup>2</sup>	ՀՀԴր	ՀՀԴր	ՀՀԴր	N	մ <sup>2</sup>	ՀՀԴր	ՀՀԴր	ՀՀԴր
<b>Մասնավոր</b>															
Արտավայր	1	680.26	375	255,097.50	293,362.13	-	-	-	-	-	1	680.26	375	255,097.50	293,362.13
Պտղ. այգի	9	2,535.47	2,265	5,742,839.55	6,604,265.48	-	-	-	-	-	9	2,535.47	2,265	5,742,839.55	6,604,265.48
Վարելահող	17	3,587.59	587	2,105,915.33	2,421,802.63	-	-	-	-	-	17	3,587.59	587	2,105,915.33	2,421,802.63
Այլ	1	138.11	375	51,791.25	59,559.94	-	-	-	-	-	1	138.11	375	51,791.25	59,559.94
Կոմերց/Առևտր	1	9.00	5,441	48,969.00	56,314.35	-	-	-	-	-	1	9.00	5,441	48,969.00	56,314.35
Ընդամենը	29	6,950.43	-	8,204,612.63	9,435,304.52	-	-	-	-	-	29	6,950.43	-	8,204,612.63	9,435,304.52
<b>Համայնքային</b>															
Արտավայր	2	588.73	375	220,773.75	253,889.81	5	1,337.54	307	501,577.50	576.8 14.13	7	1,926.27	375	722,351.25	830,703.94
Վարելահող	3	794.00	587	466,078.00	535,989.70	-	-	-	-	-	3	794.00	587	466,078.00	535,989.70
Ճանապարհ	16	850.52	348	295,980.96	340,378.10	-	-	-	-	-	16	850.52	348	295,980.96	340,378.10
Այլ	15	8,298.17	375	3,111,813.75	3,578,585.81	5	358.50	759	271,933.20	312,72 3.18	20	8,656.67	391	3,383,746.95	3,891,308.99
Արդյունաբերական/արհեստական	1	274.33	2,856	783,486.48	901,009.45	-	-	-	-	-	1	274.33	2,856	783,486.48	901,009.45
Ենթակառուցվածք	1	95.99	2,652	254,565.48	292,750.30	-	-	-	-	-	1	95.99	2,652	254,565.48	292,750.30
Ջուր	1	27.40	348	9,535.20	10,965.48	-	-	-	-	-	1	27.40	348	9,535.20	10,965.48
Ընդամենը	39	10,929.14	-	5,142,233.62	5,913,568.66	10	1,696.04	-	773,510.70	889,5 37.31	49	12,625.18	-	5,915,744.32	6,803,105.97
Ընդհանուրը	68	17,879.57	-	13,346,846.25	15,348,873.19	10	1,696.04	-	773,510.70	889,5 37.31	78	19,575.61	-	14,120,356.95	16,238,410.49

29. Վարձակալների փոխհատուցումը հաշվարկվել է՝ ելնելով ազդեցության ենթարկված հողամասի շուկայական արժեքից և ավելացվել 15%-ով՝ ելնելով վարձակալության մնացած տարիների հետ կապված հետևյալ համամասնություններից. 1) < 1 տարի - 5%; 2) < 15 տարի - 14%; 3) < 25 տարի - 20%; 4) > 25 տարի - 25%: Թվով 5 վարձակալներին վճարման ենթակա փոխհատուցման ընդհանուր գումարը կազմում է 347,402.66 ՀՀ դրամ (տե՛ս Աղյուսակ 13):

Աղյուսակ 13. Փոխհատուցում վարձակալված հողերի դիմաց

Տեսակ	Հող	Ազդակիր տարածք	Միավորի գինը	Հողի շուկայական գինը	Շուկայական գին+15%	Վարձակալության մնացած տարիներ	Կիրառված գործակից	Ընդամենը փոխհատուցման գում.
	N	մ <sup>2</sup>	ՀՀԴր/ մ <sup>2</sup>	ՀՀԴր	ՀՀԴր	N	%	ՀՀԴր
Արոտավայր	4	1,292.50	587	758,698	872,502.13	up to 15	14	122,150.30
Արդյունաբերական	1	274.33	2,856	783,486	901,009.45	25 և ավելի	25	225,252.36
Ընդամենը	5	1,566.83	-	758,697.50	872,502.13	-	-	347,402.66

30. Համաձայն Տրանշ 2-ի ՀՕՏԾ-ի համար 2012թ.-ի ՀՕՏԾ դրույթների՝ չգրանցված ԱԵԱ-ների համար նախատեսվում է վերականգնման օժանդակություն, որը հիմնված է ազդակիր հողի շուկայական կամ կադաստրային արժեքի վրա (որն է ավելի բարձր է), հողամասերի զբաղեցման տարիներին համամասնորեն՝ հետևյալ մոտեցմամբ. 1) < 1 տարի - 5%; 2) < 15 տարի - 14%; 3) < 25 տարի - 20%; 4) > 25 տարի - 25%: Յուրաքանչյուր ԱԵԱ-ի կողմից հողամասի զբաղվածության տարիները որոշելու համար հաշվի են առնվելու տեղեկատվության այն հասանելի աղբյուրները, որոնցից հնարավոր է ստանալ անհրաժեշտ տեղեկատվությունը, օրինակ՝ համայնքի ղեկավարը, մասնավոր սեփականատերերը, ապօրինի օգտագործվող հողամասի հարևանները և ապօրինի օգտագործող ԱԵԱ-ները: Այդպիսի տեղեկությունները ենթակա են համաձայնեցման և հաստատման բոլոր կողմերի կողմից՝ գրավոր: Բացի այդ, տրամադրված տեղեկատվության խաչաձև ստուգման համար որպես հիմք կդիտարկվեն Google Earth-ի տվյալները և օգտագործվող հողամասերում գտնվող ծառերի տարիքը: Հաշվի առնելով, որ ներկա ժամանակահատվածում ընթանում է հայցվող տեղեկատվության ստացման գործընթացը՝ բոլոր չգրանցված / ապօրինի օգտագործողների համար վերականգնման օժանդակությունների հաշվարկը կատարվում է՝ ելնելով հողօգտագործման առավելագույն տարիների քանակից: Յուրաքանչյուր չգրանցված/ապօրինի օգտագործողի համար վերականգնման օժանդակության չափը վերահաշվարկվելու է և համապատասխան կերպով փոխհատուցվելու է իրականացման փուլում: Այն կարտացոլվի ԱՄԳ (արտաքին մոնիտորինգի գործակալության) Համապատասխանության հաշվետվություններում: Ընդհանուր առմամբ 8 ապօրինի օգտագործողներին կվճարվի 777,299.82 դրամ (տե՛ս Աղյուսակ 14):

Աղյուսակ 14. Ապօրինի օգտագործվող հողերի համար վերականգնման օժանդակություն

Տեսակ	Հող	Ազդակիր տարածք	Միավորի միջին գինը	Ընդհանուր արժեք (Շուկայական գին)	Վերականգն. օժանդակություն (ներառյալ շուկ. արժեքի 25% -ը)
	N	մ <sup>2</sup>	ՀՀԴր	ՀՀԴր	ՀՀԴր
Վարելահող	1	138.63	587.00	81,375.81	20,343.95
Արդյունաբ.	1	203.90	2,856.00	582,338.40	145,584.60
Պտղ. այգի	2	725.01	2,104.60	1,525,855.95	381,463.99
Այլ հողեր	4	2,069.42	426.07	881,714.50	220,428.63
Ճանապարհ	1	108.95	348.00	37,914.60	9,478.65
Ընդամենը	9	3,245.91	-	3,109,199.26	777,299.82

31. Ծինությունների և կառույցների փոխարինման արժեքը որոշվում է նմանատիպ՝ նույն

նշանակության և նյութերով, նոր շենքերի/կառույցների շինարարության, կամ ժամանակակից պահանջներին համապատասխանող փոխարինող նյութերի արժեքի հաշվարկման միջոցով՝ ելնելով գնահատման ամսաթվի դրությամբ գոյություն ունեցող շուկայական գներից: Օրինական կառույցների համար փոխհատուցումը հաշվարկվում է փոխարինման արժեքի հիման վրա, իսկ ապօրինի շինությունների համար՝ հիմք ընդունելով փոխարինման արժեքը՝ հանած օրինականացման ծախսերը: Հողերի օտարման արդյունքում սեփականատիրոջը/օգտագործողին 226.52 մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով կառույցների համար կվճարվի ընդհանուր առմամբ 29,517,322.00 դրամ (տե՛ս Աղյուսակ 15 և 16):

Աղյուսակ 15. Փոխհատուցում օրինական շինությունների համար

Շինության տեսակը	Նյութը	Հող	Շինություն	Օրինական	Միավորի գինը	Ընդհանուր արժեքը (փոխարինման արժեք)
		N				N
Օժանդակ կառույց	Քար	1	1	79.09	132,000.00	10,439,880.00

Աղյուսակ 16. Վերականգնման օժանդակություն ապօրինի շինության համար

Շինության տեսակը	Նյութը	Հող	Շինություն	Ապօրինի	Միավորի գինը	Ընդհանուր արժեքը (Փոխարինման արժեք)	Օրինականացման արժեք	Ընդամենը փոխհատուցում
		N				N		մ <sup>2</sup>
Օժանդակ կառույց	Քար	1	1	147.43	132,000.00	19,460,760.00	383,318.00	19,077,442.00

32. ԱԵԱ-ների կողմից կատարված բոլոր բարելավումները, անկախ դրանց կարգավիճակից, ենթակա են փոխհատուցման՝ փոխարինման արժեքով: Ընդհանուր առմամբ տարբեր տեսակի բարելավումների համար կվճարվի 163,400.00 դրամ:

Աղյուսակ 17. Փոխհատուցում բարելավումների համար

Տեսակը	Նյութը	Հ/մ-ր	Երկար-նր	N	Միավորի գինը	Փոխհատուցում
		N	Մ		ՀՀԴր	ՀՀԴր
Սյուն	Բետոն	2	-	36	2,000.00	72,000.00
Լար և պլան	Մետաղ/բետոն	4	194	-	471.13	91,400.00
Ընդամենը		6	194	36	-	163,400.00

33. Մշակարույսերի փոխհատուցումը վճարվում է կանխիկ՝ շուկայական գներով՝ ակնկալվող տարեկան բերքի համախառն արժեքի չափով: Միավորի գինը որոշվում է՝ ելնելով 5 տարի ժամանակահատվածի համար հիմնական մշակարույսի բերքատվությունից և գնից: Մշակարույսերի համար փոխհատուցման ընդհանուր գումարը կազմում է 3,871,863.52 դրամ (տե՛ս Աղյուսակ 18):

Աղյուսակ 18. Փոխհատուցում մշակաբույսերի համար

Մշակաբույսի տեսակը	Տարեկան արտադրողականություն	Գինը	Ազդակիր տարածք	Ընդհանուր կորուստ	Ընդամենը փոխհատուցում
	կգ/ մ <sup>2</sup>	ՀՀ դրամ/մ <sup>2</sup>	մ <sup>2</sup>	կգ	ՀՀ դրամ
Ելակ	8.25	10,725.00	341.00	2,813.25	3,657,225.00
Առվույտ	1.94	151.00	1,257.70	2,439.94	189,912.70
Կորնզան	0.70	42.00	588.71	412.30	24,725.82
Ընդամենը	-	-	2,187.41	5,665.29	3,871,863.52

34. Պտղատու ծառերի (թփերի, խաղողի) համար փոխհատուցումը կվճարվի՝ ելնելով ներդրումային արժեքից և տվյալ ծառի (թփի) մեկ տարվա շուկայական արժեքը բազմապատկելով տնկման տարեթից հաշվարկված տարիների քանակով՝ բայց ոչ ավել քան նոր և ամբողջովին (արդյունաբերական) պտղաբեր ծառ (թուփ) անեցնելու համար անհրաժեշտ տարիների քանակը: Պտղատու ծառերի/թփերի համար ընդհանուր փոխհատուցումը ներկայացված է Աղյուսակ 18-ում: Պտղատու ծառերի դիմաց փոխհատուցումն ընդհանուր առմամբ կազմում է 35,417,566.00 դրամ:



Աղյուսակ 19. Փոխհատուցում պտղատու ծառերի համար

Տեսակ	Տնկիներ			Ոչ բերքատու			Բերքատու					Ընդամենը		
	Ծառեր	Միավ. արժեք	Ընդամենը փոխհատուցում	Ծառեր	Միավ. արժեք	Ընդամենը փոխհատուցում	Ծառեր	Տարեկան Բերքատվ.	Միավ. արժեք	Բերքատու տարիքի հասցնելու անհրաժեշտ տարիներ	Միավ. արժեք	Ընդամենը փոխհատուցում	Ծառեր	Ընդամենը փոխհատուցում
	№	ՀՀԴր/ ծառ	ՀՀԴր	N	ՀՀԴր/ ծառ	ՀՀ Դր	N	կգ	ՀՀԴր/ կգ	N	ՀՀԴր/ ծառ	ՀՀ Դր	N	ՀՀԴր
<b>A. Պտղատու թփեր</b>														
Մասուր	-	-	-	7	4,624	32,368.00	-	-	-	-	-	-	7	32,368.00
<b>B. Մրգատու ծառեր</b>														
Դեղձ	-	-	-	-	-	-	8	40	330	3	42,811	342,488.00	8	342,488.00
Ընկույզ	-	-	-	36	145,316	5,366,356.00	22	30	1240	6	240,596	5,293,112.00	58	10,659,468.00
Թուֆ	6	81,200	487,200.00	-	-	-	4	90	420	4	160,140	640,560.00	10	1,127,760.00
Խաղող	-	-	-	5	20,850	104,250.00	203	25	330	5	40,690	8,260,070.00	208	8,364,320.00
Իսնձոր	-	-	-	2	96,010	192,020.00	86	50	350	7	114,960	9,886,560.00	88	10,078,580.00
Ծիրան	6	82,400	494,400.00	-	-	-	8	80	480	6	242,680	1,941,440.00	14	2,435,840.00
Շրթ	-	-	-	-	-	-	7	25	260	6	42,010	294,070.00	7	294,070.00
Սալոր	1	23,260	23,260.00	1	34,010	34,010.00	-	-	-	-	-	-	2	57,270.00
Սերկևիլ	-	-	-	1	70,520	70,520.00	-	-	-	-	-	-	1	70,520.00
Տանձ	1	91,060	91,060.00	13	135,710	1,764,230.00	-	-	-	-	-	-	14	1,855,290.00
Պնդուկ	2	49,796	99,592.00	-	-	-	-	-	-	-	-	-	2	99,592.00
Ընդամենը	16	-	1,195,512.00	65	-	7,563,754.00	338	-	-	-	-	27,532,768.00	419	35,417,566.00

35. Փայտանյութ տվող և դեկորատիվ ծառերը (թփերը) գնահատվել են ըստ հետևյալ խմբերի (փոքր, միջին և խոշոր ծառեր), ծառի տեսակի և այնպիսի գնահատման ցուցանիշների հիման վրա, ինչպիսիք են հետևյալները՝ փայտանյութի (վառելափայտ կամ շինարարական փայտ) ծավալը և ծառի բարձրությունը: Փայտանյութ տվող ծառերի փոխհատուցումը կազմում է 34,650.00 դրամ փոքր ծառերի համար, 116,480.00 դրամ միջին աճի ծառերի համար և 328,900.00 դրամ ամբողջովին հասուն ծառերի համար՝ ձևավորելով 480,030.00 դրամ ընդհանուր փոխհատուցման գումար: Դեկորատիվ թփերի փոխհատուցումը կազմում է 1,200.00 դրամ (տե՛ս Աղյուսակ 20 և 21):

Աղյուսակ 20. Փոխհատուցում փայտանյութ տվող ծառերի համար

Տեսակ	Փոքր (մինչև 12 սմ տրամագծով)			Միջին աճ (13-22սմ)			Ամբողջովին հասուն (22սմ+)			Ընդամենը	
	N	Միավ. արժեք	Ընդամենը	N	Միավ. արժեք	Ընդամենը	N	Միավ. արժեք	Ընդամենը	No	AMD
		ՀՀԴր	ՀՀԴր		ՀՀԴր	ՀՀԴր		ՀՀԴր			
Ակացիա	-	-	-	1	8,960	8,960.00	-	-	-	1	8,960.00
Ուռնեմի	1	2,310	2,310.00	1	8,960	8,960.00	1	29,900	29,900.00	3	41,170.00
Թեղի	14	2,310	32,340.00	11	8,960	98,560.00	10	29,900	299,000.00	35	429,900.00
Ընդհանուր	15	-	34,650.00	13	-	116,480.00	11	-	328,900.00	39	480,030.00

Աղյուսակ 21. Փոխհատուցում դեկորատիվ թփերի համար

Տեսակ	Միջին		
	Միավ. արժեք	Ծառեր	Փոխհատուցում
	ՀՀԴր/ ծառ	N	ՀՀԴր
Վարդաթուփ	600.00	2	1,200.00

36. Բացի այդ, 2,836,750.00 դրամի չափով օժանդակություն կտրամադրվի այն 7 ԱԵՏՏ-ներին, որոնք կորցնում են գյուղատնտեսական եկամտի 10 և ավելի տոկոսը՝ մշակվող պտղատու ծառերից և մշակաբույսերից: Բոլոր խիստ ազդակիր ԱԵՏՏ-ները կրում են այդ ազդեցությունը նույն այն հողերի վրա, որոնք նախկինում արդեն ենթարկվել են ազդեցության Ծրագրի շրջանակներում: Նրանցից ոչ մեկը խոցելի չէ: Չորս (4) խոցելի ԱԵՏՏ-ներին կվճարվի 1,632,000.00 դրամ օժանդակություն, որը համարժեք է ՀՀ նվազագույն աշխատավարձի (68,000 դրամ) 6 ամսվա գումարին (տե՛ս Աղյուսակ 22 և 23):

Աղյուսակ 22. Փոխհատուցում խիստ ազդեցության համար

Կատեգորիա	ԱԵՏՏ-ների քանակը	Միավորի արժեքը*	Ընդամենը
			ՀՀԴր
Գյուղատնտեսական եկամտի 10%-ից ավել կորուստ կրող ԱԵՏՏ-ներ	7	405,250.00	2,836,750.00
* Նպաստի գումարները հաշվարկվել են յուրաքանչյուր ԱԵՏՏ-ի համար առանձին: Ստորև բերված աղյուսակում միավոր արժեքները ներկայացված են միջին գումարներով:			

Աղյուսակ 23. Խոցելիության օժանդակություն

Տեսակ	N	Օժանդակության գումարը	Ընդամենը
ա. Աղքատ ԱԵՏՏ-ներ	2	-	-

բ. Կանանց կողմից ղեկավարվող ԱԵՏՏ-ներ	3	-	-
Ընդամենը	4*	408,000.00	1,632,000.00
*1 ԱԵՏՏ-ն և՛ կարիքավոր է, և՛ ղեկավարվում է կնոջ կողմից:			

#### 4. ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՄՓՈՓ ԲՅՈՒՋԵ

37. Ազդեցության մասով նախագծի իրականացման ընդհանուր արժեքը կազմում է 113,424,925.42 դրամ, որը համարժեք է 237,042.69 ԱՄՆ դոլարին, ինչպես ներկայացված է Աղյուսակ 24-ում: Հողի, շինությունների, մշակաբույսերի համար փոխհատուցումը, ինչպես նաև խիստ ազդեցության համար օժանդակությունները տրամադրվելու են պետական բյուջեի հաշվին:

Աղյուսակ 24. Ամփոփ բյուջե

Միավոր	Ընդամենը/ՀՀԴր
Փոխհատուցում մասնավոր և համայնքային հողերի համար (ներառյալ 15% հավելավճար)	16,238,410.49
Փոխհատուցում վարձակալված հողերի համար	347,402.66
Վերականգնման օժանդակություն ապօրինի օգտագործվող հողատարածքների համար	777,299.82
Փոխհատուցում շինությունների համար	29,517,322.00
Փոխհատուցում ցանկապատերի համար	47,840.00
Փոխհատուցում բարելավումների համար	163,400.00
Փոխհատուցում մշակաբույսերի համար	3,871,863.52
Փոխհատուցում պտղատու ծառերի և թփերի համար	35,417,566.00
Փոխհատուցում փայտանյութ տվող ծառերի համար	480,030.00
Փոխհատուցում ղեկորատիվ ծառերի և թփերի համար	1,200.00
Օժանդակություններ խիստ ազդակիր տնային տնտեսություններին	2,836,750.00
Օժանդակություններ սոցիալապես խոցելի անձանց	1,632,000.00
Պետական գրանցման, նոտարական ծառայությունների (օտարմանը վերաբերող) և կադաստրային հատակագծերի ձևակերպման ծախսերը՝ բոլոր հողամասերի գրանցման ծառայությունները	1,060,500.00
Փոխհատուցում կիրառելի հարկերի դիմաց	2,129,186.69
Ընդամենը փոխհատուցում և օժանդակություններ	94,520,771.18
Զնախատեսված ծախսեր (20%)	18,904,154.24
Ընդհանուրը (ՀՀ դրամով)	113,424,925.42
Ընդհանուրը (ԱՄՆ դոլարով) 27.02.2020թ. դրությամբ 1 ԱՄՆԴ=478.5 ՀՀԴԲ (ՀՀ ԿԲ)	237,042.69

## 5. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ

38. ԱԵԱ-ներին և ազդեցության ենթակա համայնքների ղեկավարներին տեղեկատվության տրամադրումն իրականացվել է 2 աշխատանքային խորհրդակցությունների և մեկ հանրային լսումների միջոցով: 21.04.2018թ. կայացած ԱԵԱ-ների հետ առաջին աշխատանքային հանդիպման նպատակն էր ներկայացնել անհրաժեշտ տարածքում Կապալառուի կողմից շինարարական աշխատանքների մեկնարկի հրատապությունը և քննարկել առանց հողի օտարման ծառերի և բարելավումների համար փոխհատուցման մասին համաձայնագրի կնքման առաջարկությունն առաջին փուլով՝ նախքան հողերի՝ հանրության գերակա շահի ճանաչման մասին որոշման ընդունումը և հողերի օտարման վերջնական պայմանագրերի կնքումը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել ԱԵԱ-ների հետ՝ իրենց հողամասերի վրա ազդեցության գույքագրումը սկսելու վերաբերյալ: Գույքագրումն ավարտելուց հետո 2018թ. մայիսի 17-ին անցկացվեց ԱԵԱ-ների հետ երկրորդ աշխատանքային խորհրդակցությունը: Գույքագրված և չափագրված ազդեցությունների ճշգրիտ քանակների, տեսակների և չափերի եզրակացությունները ներկայացվել են ԱԵԱ-ներին՝ համաձայնագրեր կնքելու նպատակով: Նախքան ստորագրման գործընթաց սկսելը, փոխվել է հաղորդակցուղիների տեղափոխման նախագիծը, և 2018 թ. հունիսի 5-ին, Կապալառուից ՀՕՏ-ի նոր փոփոխված սահմանները ստանալուց հետո, սկսվել է գույքագրման երկրորդ փուլը: ՀՕՏ-ի նոր սահմանին համապատասխան հայտնաբերվել են նոր ԱԵԱ-ներ, որի արդյունքում 2018թ. օգոստոսի 24-ին Կոշում իրականացվել է հաջորդ հիմնական հանրային լսումը բոլոր ԱԵԱ-ների հետ՝ վերջիններիս նոր ազդեցությունների, իրավունքների մատրիցայի, գնահատման մեթոդաբանության և Ծրագրի ԲԼՄ-ի (բողոքների լուծման մեխանիզմի) մասին տեղեկացնելու նպատակով:

39. ՀՀ կառավարության կողմից Լրացման հաստատումից անմիջապես հետո ՃԴ-ն կնխաձեռնի ծանուցման հետևյալ ընթացակարգերը:

ա. Կվերբեռնվի Լրացման անգլերեն տարբերակը ԱԶԲ վերկայքում,

բ. Կհրապարակի Լրացման և ՀՕՏ-ին վերաբերող բոլոր փաստաթղթերը ՃԴ-ի պաշտոնական վեբկայքում;

գ. Համաձայնագրի նախագծերը / փոխհատուցման գումարի ծանուցումները կուղարկվեն ԱԵԱ-ներին: ԱԵԱ-ները համաձայնագրերի նախագծերում պետք է նշեն իրենց բանկային հաշվեհամարները, ստուգեն համաձայնագրերում պարունակվող տվյալները, ինչպես նաև համաձայնագրի նախագիծը ստանալու օրվանից 2 շաբաթվա ընթացքում ներկայացնեն իրենց առաջարկները և/կամ առարկությունները (Տես «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ Օրենքի (2006) Հոդ. 10) ԱԵԱ-ների կողմից համաձայնագրերում ավելացրած լրացուցիչ տեղեկությունների հիման վրա ՃԴ-ն կվերախմբագրի և ավարտուն տեսքի կրերի վերջնական պայմանագրերը:

դ. ՃԴ-ն ԱԵԱ-ներին կտրամադրի վերջնական պայմանագրերը և նրանցից կստանա ստորագրված և նոտարական կարգով վավերացրած օրինակները՝ փոխհատուցումը տրամադրելու համար: ԱԵԱ-ների հետ վերջնական պայմանագրերը ՃԴ-ն պետք է ստորագրի դրանք այդ պայմանագրերի նախագծերի տրամադրման պահից 3 ամսվա ընթացքում, հակառակ դեպքում, օտարման գործընթացը ՃԴ-ի կողմից կնախաձեռնվի օրենքով սահմանված կարգով:

## 6. ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

40. ԱԵԱ-ներին բողոքարկել ցանկացած այնպիսի չբավարարող որոշում, միտում կամ գործունեություն, որը վերաբերում է հողի և/կամ այլ գույքի համար փոխհատուցմանը, կամ ՀՕՏ-ի հետ կապված ցանկացած հարցին: Հիմնական նպատակն է հանդիսանում տարաբնակեցման հետ կապված ցանկացած բողոքի տեղական մակարդակով լուծումը՝ խորհրդակցելով բողոքող կողմի հետ՝ ելնելով Լրացման սահուն իրականացման շահերից:

41. Որպես կանոն, բողոքների լուծումը նախաձեռնվում է ԱԵԱ-ների կողմից, որոնք իրենց բողոքները Լրացման պատրաստման և իրականացման ընթացքում գրավոր ներկայացնում են ՃԴ-ին: Բացի այդ, Լրացման իրականացման ընթացքում և դրանից հետո ՃԴ-ն կսահմանի նաև բողոքների և առարկությունների

լուծման մեխանիզմ: Բողոքների լուծման պաշտոնական մեխանիզմում կներգրավվեն մի քանի կողմեր, այնպիսիք, ինչպիսիք են՝ ՏԿԵՆ-ը, ՃԴ-ն և ՏԻՄ-երը: Չանքեր կգործադրվեն բողոքները համայնքային մակարդակով լուծելու համար՝ ԲԼԱ (բողոքների լուծման անձի) օգնությամբ, կամ, վերջին հաշվով, ՃԴ-ի մակարդակով՝ ԲԼԽ (բողոքների լուծման խմբի) օգնությամբ և բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավմամբ:

42. ԲԼՄ-ի առկայության մասին ԱԵԱ-ները տեղեկացվել են Լրացման պատրաստման փուլում՝ հանրային լուսմների շրջանակներում: Լրացման հաստատումից հետո վերանայված ԲԼՄ-ն կտրամադրվի ԱԵԱ-ներին՝ տեղեկատվական գրքույկի տեսքով:

43. ԲԼՄ-ն կապահովի, որ բողոքող կողմերը ողջամիտ հասանելիություն ունենան այն տեղեկատվության աղբյուրներին, խորհրդատվությանը, և փորձագիտական կարծիքներին, որոնք անհրաժեշտ են բողոքների լուծման գործընթացին արդար և իրավահավասար պայմաններով մասնակցելու համար: Ազդեցության ենթարկված համայնքների ձայները լսելու և ԱԵԱ-ների համար ԲԼՄ-ի հասանելիությունն ապահովելու համար սահմանվել են երկու հասանելի կետեր. ա) տեղական ինքնակառավարման մարմինների գրասենյակ (ՏԻՄԳ) և բ) բողոքների առանցքային անձ (ԲԱԱ):

